This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

B 1,233,749

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

200
3138

ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

(ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ)

Ա.

«Մինչչև խօսեալ իցէ՝ ուսիր»։
Սիր. ԺԸ. 19։

ՆԱԽԱՁԵՌՆԱՐԿ
ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ
ԵՒ
Ս. ԳՐՔԻ ԸՆԹԵՐՑԱՍԷՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թիֆլիզ
Տպարան Մ. Շարաձէի եւ Ընկ., Նիկ. 21.
1900

Digitized by Google

Digitized by Google

ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆ

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

(ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ)

Ա.

«Մինչչև խօսեալ իցէ՝ ուսիր»։
Սիր. ԺԸ. 19։

ՆԱԽԱՁԵՌՆԱՐԿ
ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ
ԵՒ
Ս. ԳՐՔԻ ԸՆԹԵՐՑԱՍԷՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարաձէի եւ Ընկ., Նիկ. 21.
1900

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

6RAD
PEN
766
v.1
BUHR

Дозволено цензурою, Тифлисъ, 9-го Мая 1900 года.

Digitized by Google

Ըստ քարձու Հրամանի Նորին Ս. Օծութեան Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Դիւանս թոյլատրէ զտպագրութիւն սորին:

Դիւանապետ՝ **Կորիւն վարդապետ**

Ի 22 Ապրիլի 1900 ամի
Տփխիս։

Digitized by Google

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՀՈԳԵԼՈՅՍ ԳԷՈՐԳ Դ-Ի

ԻՒՐԱ ՀԱՍՏԱՏ

ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՍԱՆՆԵՒՀԻՆԳԱՄԵԱԿԻՆ (25 ՍԵՊՏ. 1899) ԱՌԹԻՒ

Digitized by Google

ԱՐՁԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ

Հոգեւոյս Հայր.

„Կարող է Աստուած ի քարանցս յայսցանէ յա-
րուցանել որդիս Աբրահամու". ասում էր ճշմարտու-
թեան Կարապետը: Ո՞րչափ եւս առաւել Ս. Գրիգոր
Լուսաւորչի եւ Ս. Սահակի, Մեսրոպի ու իւրեանց
հետեւողների մշակած ու պարարտացրած բանական
անդերից, որոնք խորշակահար լինելով դէպի քարա-
ցումն էին գնում: Ս. Հայրապետների եւ անձնուէր
մշակների երախտագէտ յաջորդ. ստացածդ շնորհաց
հարիւրապատիկ արդիւնաւորող Հոգեւոյս Հայր. Քո
մշտամռունչ աղօթքով կենդանի պահէ՛ կեանքիդ ճա-
նապարհը եւ բարձրացեալ ջահը՝ լուսովդ լուսաւո-
րուած որդիներիդ առաջ: Աղերսական մրմունջդ մի-
ացրու հոգենուագ սրբերի աղօթքի հետ, որ Ս. Լու-
սաւորչեան Աթոռի Տեղակալը մեղմիկ թեւերով հո-
վանի լինի աւետաւոր Լուսաւորանիդ մշտածագ շողման:
Եւ մշտահայեաց բարեխօս եղիր սրբագումար պարի
մէջ երկնաւոր Հօր առաջ, որ նուիրական ճառա-
գայթներով վառուած Սրբարանի շուրջը չքանայ չա-
րիքը, փարատի մռայլը, փախչի խաւարը, սպառի
նախանձն ու հեռը, վերանայ անձնականը եւ տեղի
տայ հանրականին. որպէս զի ճշմարտութեան այդ
Աւանդարանից բնականօրէն ելնեն մի Հօր-Աւետարա-
նի եւ մի Մօր-Հայաստանեայց Ս. Եկեղեցու զաւակներ:

Քո երախտագէտ որդի

ՀԵԳ.ԻՆԱԿԸ:

Digitized by Google

Digitized by Google

ՆԱԽԱԲԱՆ

Ս. Գիրքն առաջին ձեռնարկն է քրիստոնէական ուսման համար և ոչ մի գիրք չպէտք է նորա տեղը բռնէ։

Հրատարակելով այս գրուածքը՝ մենք նպատակ ունինք տալ Ս. Գրքի ուսումնասիրութեան և ընթերցանութեան համար մի նախապատրաստական ուղեցոյց։ Խոյս տալով այն ամեն ամփոփումներից, որոնք կարող են ներկայացնել Ս. Գրքի բովանդակութիւնը, կամեցանք կարևոր ծանօթութեամբ միայն դիւրացնել իւրաքանչիւր ընթերցասէրի հոգևոր զբօսանքը նորա մէջ։ Երբ ընթերցասէրը կունենայ պարագայական ու մատենագրական ծանօթութիւնք և Աստուծոյ յայտնութեան ու կրթական պատմութեան հիմնական սկզբունքների նախապատրաստութիւնն, այն ժամանակ նա դիւրաւ կարող կլինի իւր կարդացածներին խելամուտ ու խելահաս լինել և ճշմարտութեան գաղափարները որոճալ ու իւրացնել։

Այս նախապատրաստութիւնն ևս թեթևացնելու համար աշխատեցանք ոչ թէ աստուածաբանական հետազօտութեանց մանրազնին կէտերը յառաջադրելու,—մանաւանդ որ այդպիսի մանրամասնութիւնները աւելորդ կլինին ընդհանրութեան համար և անմատչելի ևս գրուածքիս ծաւալին,—այլ լաւագոյն համարեցինք գիտութեան հաւաստի արդիւնքը տալու և պարագայական մասերում՝ զորօրինակ աշխարհագրութեան [1]) մէջ՝ համառօտագոյն նկարագրութեան հետևելու։

Նաև իբրև դպրանոցական ձեռնարկ՝ սոյն գրուածքը լրացուցիչ է Ս. Գրքի ընթերցանութեան և ոչ փոխարինող։ Ըստ որում և ուսուցիչը դասարանական ընթերցանելիքը լուսաբանե-

---

[1]) «Աշխարհացոյց Պաղեստինի» կայ ռուսերէն ըստ Կիպերտի, Ֆիշերի, Գութէի և այլոց—հրատարակութիւն Ֆ. Ս. Կոմարովի. Պետերբուրգ 1894։

Digitized by Google

լով, միջոց կտայ աշակերտներին՝ տնային ընթերցանութեամբ ծրագրելու և այդպէս իբրև դաս հաշիւ տալու։ Թէ սոյնպիսի ուսումնասիրութիւնը, թէ Աստուծոյ Ուխտի ու յայտնութեան ամփոփ ու բանաստեղծական կտորների անգիր անելը, թէ օժանդակ գրքերի ընթերցանութիւնը և թէ կարևոր մտքերի ու պատմութեանց վերաբերեալ շարադրութիւնք կրթիչ միջոցներ են Ս. Գիրքը հիմնաւորապէս ուսումնասիրող ուսուցչի ձեռքում, որոնք ոչ միայն յատուկ, այլ և ընդհանուր ուսման անփոխարինելի վարժութիւններ կլինին աշակերտների համար։ Վասն զի Ս. Գիրքն է, որ տալիս է բազմակողմանի նիւթ և Ս. Գրքի Ուսումն է՝ որ անհրաժեշտապէս շօշափում է մարդկային բոլոր գիտութեանց հիմքերն և արդիւնքները։

Հարկ է միայն մեր ժամանակի գիտութեան հմտութեամբ բռնել Աստուծոյ կրթիչ յայտնութեան շաւիղը։

Արշակ Տէր-Միքելեան.

Digitized by Google

ՈՒՍՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Սուրբ Գիրք կամ Աստուածաշունչ Գիրք կոչւում են այն ի մի ժողովուած գրքերն, որ գրել են մարգարէները, առաքեալները և այլ սուրբ մարդիկ Ս. Հոգով, և բովանդակում են իւրեանց մէջ Աստուծոյ յայտնութիւնը՝ թէ ինչպէս Նա տնօրինեց ու հաստատեց իւր եկեղեցին երկրի վրայ։ Ուստի և իւրաքանչիւր քրիստոնեայի առաջին պարտաւորութիւնն է ուսումնասիրել Սուրբ Գիրքը, կարդալ և գիտենալ այն ճանապարհը՝ որ տանում է դէպի Աստուած։ Ուսումնասիրել Սուրբ Գիրքը նշանակում է՝ հասկանալ նորա բովանդակութիւնը և իւրացնել այդ բովանդակութեան իսկական իմաստը՝ մեր փրկութիւնը ձեռք բերելու համար (Տես. Բ. Տիմ. Գ, 15—17. Բ. Պետ. Ա, 19—20)։ Սակայն սկզբնական ժամանակներից սկսած հաւատացեալները բաւականանում էին Ս. Գիրքը միմիայն կարդալով և եկեղեցում լսելով, մինչդեռ այժմ՝ քանի որ Ս. Գիրքը գրուած է հազարաւոր տարիներ առաջ՝ անհրաժեշտ է ունենալ պատմական, աշխարհագրական և լեզուագիտական հմտութիւններ, որպէս զի կարենանք հին անցեալին վերաբերեալ հանգամանքները լաւ հասկանալ և ըստ այնմ ըմբռնել։ Մինչև անգամ առաջին դարերում դժուարութիւններ կային առաքեալների գրուածները ուղղապէս ըմբռնելու համար (Բ. Պետր. Գ, 15—16), ուստի և առաքելոց աշակերտները բացատրում էին այդ թղթերը, որոնք ի հարկէ բացատրութեան կա-

Digitized by Google

րոտ չեն եղել միմիայն ստացող քրիստոնեաների համար։ Պարզ բան է՝ որ մենք հարիւրաւոր տարիներ նոցանից հեռու ապրելով՝ առաւել ևս պէտք ունինք Ս. Գրքի օրինաւոր ուսումնասիրութեան։

Ուրեմն մենք պարտաւոր ենք ուսումնասիրել Ս. Գիրքը մեր այժմեան գիտութեան միջոցներովը թէ ծանօթանալով Ս. Գրքի մէջ եղած իւրաքանչիւր գրուածքի բոլոր հանգամանքներին և թէ խելամուտ լինելով նորա բովանդակութեան։ Այս ուսումնասիրութեան գործը այնքան մեծ է, որ ճիւղաւորւում է մի քանի մասնագիտութեանց. այսպէս՝ Ս. Գրքի պատմութիւնը կամ ներածութիւնը զբաղւում է իւրաքանչիւր գրքի հանգամանքներով թէ երբ և ինչ պարագաների մէջ է գրուել. մեկնութիւնը պարապում է բացատրելով Ս. Գրքի բովանդակութիւնը, մեկնաբանութիւնը տալիս է մեկնութեան եղանակ ու կանոններ, Ս. Գրքի հնաբանութիւնը ցոյց է տալիս Հրէաների նիստ ու կացը և քրիստոնէական հին կեանքի որպիսութիւնը, Սրբազան պատմութիւնը պատմում է Աստուծոյ եկեղեցու կեանքը, վերջապէս Պաղեստինի կամ սուրբ երկրի աշխարհագրութիւնը, Ս. Գրքի դէպքերի ժամանակագրութիւնը և Ս. Գրքի բնագրի ու հին թարգմանութեանց լեզուաբանութիւնը [1]։

Այս բոլոր մասնագիտութիւններից օգտուելով՝ Ուսումն Սուրբ Գրոցը տալիս է այն անհրաժեշտ նախապատրաստութիւնը, որով միայն կարող է ամեն հայ քրիստոնեայ կարդալ Ս. Գիրքը և իւրացնել Աստուծոյ յայտնութիւնը։ Ուրեմն Ուսումն Սուրբ Գրոց է կոչւում այն առարկան, որ ծանօթացնում է մեզ իւրաքանչիւր սուրբ

---

[1]) Տես. իմ «Աստուածաբանական գիտութիւնները». Ս. Էջմիածին 1893. որտեղ նշանակուած են և գլխաւոր աղբիւրները։

Digitized by Google

գրուածքի պատմական հանգամանքներին և միջոց է տալիս ընթերցանութեամբ իւրացնելու նորա բովանդակութիւնը։ Նա նախ տալիս է պատմական տեղեկութիւն գրուածքի ու նորա հեղինակի մասին, յետոյ որոշում է գրուածքի նպատակն ու նիւթը և այդ նիւթի մշակման ընթացքը, հապա այդ գրուածքի զանազան մասերի թէ իրար հետ և թէ գլխաւոր նպատակի հետ ունեցած յարաբերութիւնը և ի վերջոյ տալիս է մի բանալի՝ ամբողջ գրուածքը կարդալու և ըմբռնելու համար։

Այսպիսով մեր պարապմունքն է՝ նախ ծանօթանալ Սուրբ Գրքի ամեն մի գրուածքի հանգամանքներին և հապա յաճախակի ընթերցանութեամբ ուսումնասիրել, հետևելով նոյն իսկ Ս. Գրքի սկզբնական պատուէրին. «Եւ մի՛ մերժիցես զգիր օրինացս այսոցիկ ի բերանոյ քումմէ, և խոկասցես ի դա ի տուէ և ի գիշերի, զի իմասցիս առնել զամենայն գրեալսդ ի դմա, և ապա աջողեսցիս և ուղղեսցես զճանապարհս քո»..։ (Յես. Նաւ. Ա, 8)։ Սակայն գործի յաջողութեան համար նախ քան այս ամենը պէտք է մենք ձեռք բերենք ընդհանուր նախապատրաստութիւն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա.

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԵՒ ՆՈՐԱ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉՈՒԹԻՒՆԸ

Սուրբ Գիրքը Աստուծոյ խօսքն է, Աստուծոյ բանն է։ Սակայն Աստուած ինքն իւր ձեռքով չէ գրել Սուրբ Գիրքը. ուրեմն ինչպէս է այդ աւանդուել մեզ, որ մենք իրաւամբ կոչում ենք Աստուծոյ խօսք։

Ս. Գիրքը գրուած է մարդկանց ձեռքով, միայն թէ Ս. Գրքի այդ հեղինակները բարեմիտ և սուրբ մարդիկ էին, որոնց Աստուած ընտրեց մարդկանց միջից, արժանացրեց նոցա իւր յայտնութեան կամ հաղորդակցութեան։ Ուստի և դոքա գրիչն առնելով գրելու՝ կամենում էին միմիայն ճշմարտութիւնն ասել ու գրել և այլապէս էլ չէին կարող անել, որովհետև նոքա հաղորդակից էին Աստուծուն, գրում էին Աստուծոյ յայտնութեան խոնարհուելով և ուրեմն անկարելի բան էր, որ Աստուծոյ յայտնութեան միջնորդ մնային, եթէ ճշմարտութեան չձգտէին։ Եւ իրաւ, թուելով Ս. Գրքի հեղինակների անունները Մովսէսից սկսած, կտեսնենք, որ դոքա մի ամբողջ շարք են, բոլորն էլ ոգևորուած են ճշմարտութեամբ և բոլորն էլ մի և եթ նպատակ են դնում իւրեանց գործունէութեան՝ այն է՝ աշխատել ճշմարտութեան համար և ամենայն ինչ զոհաբերել աստուածային բարձր նպատակին։ Բայց նոքա էլ մարդիկ են եղել և ուրեմն աստուածային կատարելութիւն չեն ունեցել, այլ սխալական էին. ուրեմն միթէ Ս. Գրքի յայտնութեան մէջ սխալներ կան։ Ո՛չ. աստուածային յայտնութիւնը սխալ

Digitized by Google

չի կարող պարունակել։ Ահա այս կէտի վերաբերմամբ պէտք է հետևեալն ի նկատի ունենանք։

Ս. Գրքի հեղինակները ունեցել են մի պատմական վիճակ, այսինքն մի որոշ պաշտօն, դիրք, բնակատեղի, հանգամանք և այլն, որոնց մէջ ապրել են, իսկ դոցա հետ ունեցել են իբրև Աստուծոյ ընտրեալներ մի հոգևոր առանձին զէնք, որով Աստուած զինել էր նոցա։ Իբրև պատմական դիրք ունեցող մարդիկ նոքա Աստուծոյ յայտնութեան վկաներն են եղել, Աստուծոյ յայտնութեան քարոզողը, որոնք լսել կամ տեսել են Աստուծոյ յայտնածներն ու ժողովրդին աւանդել։ Նոքա ականատես են եղել Աստուծոյ երկրաւոր կերպարանքով երևալուն, ինչպէս օրինակ Մովսէս մարգարէն Սինա սարի վրայ, որին և Աստուած հրամայեց գնալ և յայտնել Իւր պատուէրը. «և արդ երթ, և ես բացից զբերան քո և խելամուտ արարից զքեզ՝ զոր պարտ իցէ խօսել» (Ել. Դ, 12)։ Ոմանք էլ ուղղակի տեսել ու գործակցել են Աստուծոյ Որդուն և սովորել իւրեանց քարոզելիքն, ինչպէս առաքեալները։ Այսպէս Յովհաննէս Աւետարանիչը ասում է. «Եւ Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ, և տեսաք զփառս Նորա...»։ (Ա, 14. տես. և Գործք. Ա, 21). կամ թէ «Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, և ձեռք մեր շօշափեցին ի վերայ Բանին կենաց։ Եւ կեանքն յայտնեցան, և տեսաք և վկայեմք և պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էր առ Հօր և երևեցաւ մեզ։ Զոր տեսաքն և լուաք պատմեմք և ձեզ»։ (Ա. Յովհ. Ա, 1.)։ Իսկ ուրիշ շատերն էլ ընդունել են Աստուածանից առանձին հոգևոր յայտնութիւններ, ինչպէս Եսայի (Գլ. Զ), Երեմիա (Ա) մարգարէները և այլք։ Ուրեմն նոքա այն՝ ինչ որ տեսել են և լսել են, միմիայն այն են մեզ պատմում և վկայում։

Digitized by Google

Նոքա հոգեպէս ցինուած էին, ըստ որում իբրև աստուածային յայտնութեան վկաներ գտնւում էին Ս. Հոգու անմիջական և զօրացուցիչ ներգործութեան տակ և Նորա զգայարանքը կամ միջոցն էին, որով Նա առաջնորդում էր ժողովրդին ճշմարտութեամբ։ Ս. Հոգին նոցա ընդունակ էր դարձնում, որ նոքա իւրեանց անցածները ուղիղ և յայտնութեան նպատակին համաձայն կերպով հաղորդեն այլոց։ Այսպիսով նոքա գրեցին Ս. Գիրքը ոչ թէ սեփական արուեստագործութեամբ, այլ Ս. Հոգու աջակցութեամբ։ Միայն թէ Ս. Հոգին զօրացնելով նոցա հոգեկան կարողութիւնները, բնաւ չէ ոչընչացրել նոցա անհատականութիւնը, այլ իւրաքանչիւրի գրուածքում արտափայլում է հեղինակի բնաւորութիւնն ու հակումները։ Որքան նոքա գրում էին աստուածային բաների մասին, միշտ Ս. Հոգին առաջնորդում էր նոցա ճշմարտութեան ճանապարհով, նոցա մէջ ներքուստ խօսելով ու գրել տալով։ Այս ներքուստ խօսելը սովորաբար ժողովուրդը կոչում է «Սուրբ Հոգու տուն տալ» այսինքն՝ ներսը բնակուիլ. իսկ մեր ս. Հայրերը ասում են՝ «գրեաց Հոգւովն Սրբով»։ Այս միտքը գիտնական գրութեանց մէջ արտայայտւում են «ներշնչումն» բառով, որ պէտք է վերոյիշեալը հասկանանք ըստ Հայաստ. ս. Եկեղեցու վարդապետութեան. ուստի և Ս. Գիրքը կոչւում է «աստուածաշունչ», այսինքն՝ Աստուծոյ ներշնչած։ Ուրեմն Ս. Հոգին իբրև ամենակարող վարդապետ ուսուցել է իւր անձնուէր աշակերտներին ճշմարտութիւնը գրելու, ինչպէս որ Քրիստոս ասել էր և իւր առաքեալներին. «Իսկ մխիթարիչն Հոգին Սուրբ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, Նա ուսուսցէ ձեզ զամենայն, և յիշեցուսցէ զամենայն որ ինչ ասացի ձեզ»։ (Յովհ. ԺԴ, 26)։ Այսպէս և Պետրոս առաքեալն ասում է. «ի Հոգւոյն Սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ յԱստու-

Digitized by Google

ծոյ» (Բ. Պետր. Ա, 21. Գործք. ԻԸ, 25)։ Տես. և Բ. Տիմ. Գ, 16. «Ամենայն գիրք Աստուածաշունչք և օգտակարք ի վարդապետութիւն են»։ (Տես. նաև. Եղք. Դ, 12., Բ. Օր. Դ, 5., Բ. Թագ. ԻԳ, 2., Երեմ. Ա, 9., Մատթ. Ե, 18. Ժ, 19., Ա. Կորնթ. Բ, 13., Ա. Թես. Բ, 13)։

Ս. Գրքի աստուածային ներշնչութեան ապացոյցներ տալիս է նոյն Սուրբ Գիրքը, որ և հետզհետէ պէտք է ուսումնասիրենք. սակայն այժմ ևս կարող ենք համառօտ յիշել։ Նախ որ Աստուած իրագործեց իւր տնօրինութիւնը մի ուղիղ ընթացքով, որի համար թէ ճշմարիտ քարոզիչներ ուղարկեց և թէ նոցա հրաշքներ գործելու իշխանութիւն տուաւ։ Երկրորդ՝ Աստուած իւր անձերքները մարգարէանալ տուաւ իւր ուղարկած անձանց, որոնց մարգարէութիւնն ևս ճշդիւ կատարուեց շարունակ և կատարեալ կատարումը եղաւ Քրիստոս, Աստուծոյ ճշմարիտ Որդին։ Երրորդ՝ Ս. Գրքի բարոյական վարդապետութիւնը ամենակատարեալն է և չի կարող մարդկային մտքի ծնունդ լինել, որովհետև նոյն իսկ ժամանակակից քաղաքակրթուած ազգերը չափազանց ստոր բարոյական աստիճանի վրայ էին և ընկճուեցան քրիստոնէական բարոյականութեան առաջ։ Չորրորդ՝ Ս. Գիրքը տալիս է կատարեալ և կանոնաւոր աստուածաճանաչութիւն, որ երբէք չի կարող մարդկային մտքի ոյժով ձեռք բերուիլ։ Հինգերորդ՝ Ս. Գրքի մատենագիրների ակներև անկեղծութիւնը և ճշմարտասիրութիւնը ոչ մի կասկածի տեղիք չեն տալիս, ըստ որում նոքա միմիայն Աստուծոյ նուիրուած բարեպաշտութեամբ են գրել։ Վեցերորդ՝ Քրիստոս կատարեալ մարդ լինելով՝ կատարեալ աստուածութեամբը փայլեց իւր բոլոր գործերի ու խօսքերի մէջ և նորա առաքեալները հաւատարիմ մնացին նորա բոլոր պատուէրներին թէ քարոզութեամբ և թէ

իւրեանց գործով ու կեանքով։ Եօթներորդ՝ Քրիստոնէութիւնը տուաւ մարդկանց այն ամենը, ինչ որ մարդուն կատարելապէս երջանկացնողն է և ինչ որ մարդ երազել անգամ չէր կարող, ուստի և երջանկացուցիչ կերպով ազդեց ազգերի վրայ ըստ ամենայնի նոցա ճշմարիտ էութեան համապատասխան լինելով։ Ութերորդ՝ Ս. Գիրքը ճշդիւ պատմում է մեզ աշխարհի և մարդու ծագումը, որքան այդ պէտք է մեր փրկութեան համար։ Իններորդ՝ եթէ հարկ է լինում խօսքի մէջ աշխարհի զանազան հանգամանքների վրայ ակնարկներ անել՝ Ս. Գիրքը ըստ ամենայնի ուղիղ է խօսում, մինչդեռ հին աշխարհը իւր բոլոր փիլիսոփայութեամբ հանդերձ շատ ու շատ սխալ կարծիքներ ունէր. օրօր. Յոյն և Հռովմայեցի փիլիսոփաները երկինքը կամար էին համարում, արևելեան ազգերը կրակից էին համարում աստղերը և բնութիւնը չորս տարրից՝ հողից, օդից, կրակից ու ջրից, Հնդիկները երկիրս տափարակ ու եօթնահարկ էին նկատում հաստատուած փղերի գլխին, որոնց շարժումով իբր թէ երկրաշարժ է լինում։ Իսկ Ս. Գիրքն ասում է՝ որ երկիրը ոչնչի վրայ կախուած է (Յովբ. ԻԶ, 7—10. Ես. Խ, 22. Առ. Ը, 27) և իւր բոլոր տեղեկութիւններով ճշմարտութիւն է տալիս, որին համաձայն է և արդի գիտութեան ճշմարիտ հետազօտութիւնը։ Հին աստղագէտներից ամենանշանաւորը՝ Հիպպարքոսը 1022 աստղ էր հաշւում, Պտղոմէոսը 1026, իսկ Ս. Գիրքը անթիւ է համարում։ Այսպիսով Ս. Գրքի 40-ի չափ հեղինակները Աստուծոյ յայտնութեան շնորհիւ ուղիղ և անսխալ են դրել, միութիւնից չեն շեղուել և ժողովրդի զարգացման համեմատ գրել են առանց գիտնական կարգի։

Ամփոփելով մեր ասածները, կգանք որոշ եզրակացութեան, որ Ս. Գիրքն ունի հետևեալ յատկութիւն-

Digitized by Google

ները. նախ որ նա ամենահաւատալի ճշմարտութիւն է, քանի որ Ս. Հոգին չի կարող ստել. երկրորդ՝ սուրբ է, որովհետև աստուածային տնօրինութեանց է վերաբերում, ուստի և Ս. Գիրք է կոչւում, որով և մարդկային սովորական գրքերից տարբերւում է. և երրորդ՝ մի է կամ թէ իւր բոլոր մասերով ներդաշնակ ու համերաշխ է, այսինքն չնայելով որ զանազան հեղինակներ են գրում, այդ հեղինակներն էլ մեծ մասամբ իրարից շատ հեռու ժամանակներում են ապրել, այլ և զանազանակերպ են արտայայտում աստուածային ճշմարտութիւնները, սակայն և այնպէս նոցա մէջ խօսում է մի և նոյն Ս. Հոգին միաբան ու ներդաշնակ։ Ինչ հիմնական վարդապետութիւն բանանք՝ — լինի այդ Աստուծոյ, թէ մարդկային մեղքի, թէ Քրիստոսի մարդեղութեան և թէ առհասարակ մարդկային փրկութեան մասին՝ — միշտ մի և նոյնը կկարդանք առանց հակասութեան և հակառակութեան։ Այլապէս չէր կարող լինել, որովհետև այդ Սուրբ Գիրք է, աստուածաշունչ մատեան է, որի կոչումն է՝ տալ մեզ աստուածային ճշմարիտ յայտնութիւն [1])։

Բ.

ԱՍՏՈՒԾՈՅ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ ՆՊԱՏԱԿԸ

Սուրբ Գիրքը աստուածային այն յայտնութեան արձանագրութիւնն է, որ բղխում է Աստուծոյ Հոգուց։

---

[1]) Ս. Գրքի աստուածաշնչութեան դաւանաբանական հիմունքները և ապացոյցները, նոյնպէս և Հայաստանեայց ս. Եկեղեցու վարդապետութեան այդ նկատմամբ ունեցած տարբերութիւնը կարող է դտնել ընթերցողը իմ «Քրիստոնէականիս» մէջ գլուխ՝ ԼԶ։

Digitized by Google

Աստուած անտեսանելի է իւր ստեղծած մարդկանց առաջ. Նա բնակւում է «ի լոյս անմատոյց, զոր ոչ ոք ետես ի մարդկանէ և ոչ տեսանել կարող է (Ա. Տիմ. Զ, 16). սակայն Նա իւր գործերով ու խօսքերով երևում է մարդկանց և այդ երևումը կամ յայտնութիւնը լինում է կամ արտաքին ու կամ ներքին։ Արտաքին է լինում՝ երբ Աստուած մի իմանալի կերպարանք կամ մարմնաւոր աչքով տեսանելի մի գործ է ցոյց տալիս, ինչպէս երևաց Մովսէսին և Աբրահամին, կամ ինչպէս ամպով խօսեց, այլ և առաջնորդեց Իսրայէլին։ Իսկ ներքին է լինում յայտնութիւնը այն ժամանակ, երբ Աստուած բաց է անում մարդու ներքին աչքը կամ տեսողութիւնը, դիւրալուր է դարձնում նորա ներքին լսողութիւնը, այնպէս որ նա իւր հոգու աչքով տեսնում է Աստուծուն և հոգու կամ սրտի լսողութեամբ լսում է Աստուծոյ ձայնը՝ իբրև սահմանափակ հոգի անսահման Հոգուց։

Այդ արտաքին ու ներքին յայտնութիւնը լինում է նաև ընդհանուր և առանձին։ Ընդհանուր կամ բնական յայտնութիւն կոչւում է այն յայտնութիւնը, որ տրուել է ամեն ժողովրդի և ամեն ժամանակ, որ ուսուցանում է ընդհանրապէս բարոյական օրէնք կամ ընդհանուր ճանաչողութիւն թէ ինչ է չար և ինչ է բարի. Նա ցոյց է տալիս բնական կեանք անցկացնող մարդկանց՝ թէ իւրեանց կեանքը բնական անցական է և ամբողջ աշխարհի զարդերից, կարգերից ու կանոնաւորութիւնից, նոյնպէս և մարդու բանականութիւնից երևում է, որ կայ մի արարչական զօրութիւն, մի ամենազօր բանականութիւն, որ ստեղծել է ու կառավարում է աշխարհս։ Այս բնական յայտնութիւնն է յիշում և Պօղոս առաքեալը ասելով. «Վասն զի գիտութիւնն Աստուծոյ յայտնի է ի նոսա, քանզի Աստուած

Digitized by Google

իսկ յայտնեաց նոցա։ Զի աներեւոյթք նորա ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին. այսինքն է մշտնջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա. զի ոչ գտանիցեն ամենեւին տալ պատասխանի։ Զի ծանեան զԱստուած, և ոչ իբրև զԱստուած փառաւորեցին կամ գոհացան. այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց, և խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա։ Զանձինս առ իմաստունս ունէին, յիմարեցան։ Եւ փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ ի նմանութիւն պատկերի եղծանելի մարդոյ և թռչնոց և չորքոտանեաց և սողնոց»։ (Հռովմ. Ա, 19 - 23)։ Իսկ բարոյական օրէնքի զգացողութիւնը գրուած է մարդու խղճի մէջ, ինչպէս ասում է Պօղոս առաքեալը. «Զի ոչ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ, այլ առնելիք օրինացն արդարասցին։ Այլ յորժամ հեթանոսք որ զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործիցեն, նոքա որ զօրէնս ոչ ունին՝ անձանց իւրեանց իսկ են օրէնք։ Որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց, և յանդիմանել զմիմեանս ի խորհրդոց իւրեանց, կամ թէ պատասխանի իսկ տալ. Յաւուրն յորում դատիցի Աստուած զգաղտնիս մարդկան ըստ Աւետարանիս իմում ի ձեռն Յիսուսի Քրիստոսի». (Հռովմ. Բ, 13—16)։

Առանց իւր անտեսանելի անձը ցոյց տալու Աստուած իւր գործերով ու մարդկանց խղճի ձայնը վառելով տեղեկութիւն է տալիս նոցա Իւր գոյութեան, սրբութեան և բարութեան մասին, որով և զարկ է տալիս նոցա՝ հետամուտ լինել ու ճանաչել իւրեանց Արարչին։ «Զի թերևս զննիցեն զնա և գտանիցեն. նաև ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ ի մէնջ։ Զի նովաւ կեամք և շարժիմք և եմք»..։ (Գործք. ԺԷ, 22—28)։ Բայց ի հարկէ կատարելապէս կարողայանք ճանաչել

Աստուծուն միմիայն առանձին յայտնութեամբ՝ որ է Նորա մարդացեալ Որդու յայտնութիւնը։ Ընդհանուր յայտնութեամբ որոնեցինք Աստուծուն, իսկ առանձին յայտնութեամբ լիապէս ճանաչեցինք, որքան կարևոր է մեր փրկութեան համար։ Այդ առանձին յայտնութիւնը կատարուեց նախ ուղղակի յաւիտենական կեանքի իրական երևալով այս աշխարհում՝ որ է Քրիստոսի կենցաղավարութիւնը, և երկրորդ Նորա քարոզութեամբ։ Այս առանձին յայտնութեան մէջ Որդին Աստուած անձամբ մտնում է պատմական կեանքի մէջ, խօսում է, գործում և ուսուցանում։

Ընդհանուր յայտնութեան մէջ խարխափող մարդկութեան առաջնորդում է Աստուած դէպի իւր ճշմարիտ Որդու փրկարար յայտնութիւնը այն նշանաւոր նախապատրաստութեամբ, որին վիճակուեց Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը՝ այն է՝ Իսրայէլացիք։ Նոցա մէջ ուղարկեց Աստուած նահապետներ, մարգարէներ ու սուրբ մարդիկ, այլ և տուաւ նոցա քահանայութիւն, քահանայապետութիւն և աստուածպետութիւն, հաստատելով նոցա մէջ կարգ ու օրէնք, եկեղեցի ու սրբութիւն։ Ինչպէս որ այդ նախապատրաստութիւնը կատարուեց հազարաւոր տարիների ընթացքում մի ամբողջ ժողովրդի վրայ, այնպէս էլ նոյն նախապատրաստութիւնը իրականանում է մի քանի տարիներում իւրաքանչիւր հաւատացողի վրայ, որով նա մղւում է դէպի Քրիստոսի ճըշմարիտ փրկութիւնը։ Այնուհետև նորա մէջ բացւում է հոգու տեսողութիւնն ու լսողութիւնը, նա լսում է Աստուծոյ ձայնը, տեսնում է Աստուծոյ մեծ փառքը և ապա լուսաւորւում է նորա միտքն ու հարստանում է նորա ճանաչողութիւնը։ Ահա այս նախապատրաստութիւնը և առանձին յայտնութիւնը ստանում ենք մենք Ս. Գրքից։

Digitized by Google

Ուրեմն ի՞նչ է Աստուծոյ յայտնութեան կամ Ս. Գրքի աստուածային նպատակը։

Քանի որ Աստուած կամեցել է, որ գրուի իւր յայտնութիւնը և տրուի ժողովրդին իբրև դէպի ճշմարիտ փրկութիւն տանող գործերի ու քարոզների արձանագրութիւն, պարզ է՝ որ Ս. Գիրքը միմիայն մէկ աստուածային նպատակ ունի։ Աստուած իւր յայտնութիւնը տուել է միայն մէկ նպատակով՝ այն է՝ իւր յաւիտենական կեանքը մեզ տեղեկացնելու, որ մենք էլ արժանապէս ապրենք և այդ կեանքին մասնակից լինինք թէ այստեղ և թէ հանդերձեալում։ Այս յայտնութիւնը այն ամենամեծ բարիքն է, որ Աստուած արել է մարդկանց. այդ յայտնութեամբ պէտք է մէկ հաղորդակցութիւն հաստատուի Աստուծոյ և մարդկանց մէջ, այսինքն՝ այդ յայտնութեամբ մարդիկ սովորում են մտնել այն բարձր հաղորդակցութեան մէջ, որին մասնակից են միմիայն հրեշտակներն ու սրբերը։ Ահա այդ հաղորդակցութիւնը, որի մէջ տիրում է ճշմարտութիւն, խաղաղութիւն, արդարութիւն ու սրբութիւն և որով մարդիկ մասնակից են լինում աստուածային երանութեան, կոչւում է Աստուծոյ արքայութիւն։ Մարդը մեղք գործելով զրկուեց այդ արքայութիւնից, որովհետև մեղքից հեռանում է Աստուած. բայց Աստուած իւր ամենաբարութեամբ և ողորմածութեամբ յայտնեց իւր կամքն ու տնօրէնութիւնը և տուաւ մարդկանց ամենայն՝ ինչ որ կարևոր է, որ մարդիկ վերստին արժանանան այդ երանելի կեանքի մասնակցութեան։ Այդ յայտնութեամբ Աստուած մարդկանց մէջ և մարդու հետ հիմնեց յաւիտենական կեանքի հաղորդակցութիւնը, որ իրականացաւ Քրիստոսի մարդեղութեամբ և Նորա եկեղեցով։

Արդ՝ Ս. Գրքից, աստուածային յայտնութեան այդ ջրաւոր աղբիւրից ուսանելով ամեն ինչ որ կարևոր է

Digitized by Google

և կրթուելով՝ կարող ենք Աստուծոյ արքայութիւնը մեր մէջ հաստատել և նորա ճշմարիտ անդամը լինել։ Ուստի Ս. Գիրքը տալիս է մեզ երկու բան. մէկ՝ ցոյց է տալիս թէ ինչ արաւ Աստուած այդ բարձր նպատակի համար. և մէկ էլ թէ մարդիկ ինչ պէտք է անեն՝ որ իւրացնեն ու պահպանեն Աստուծոյ առաջնորդած կեանքը։ Այսինքն Ս. Գրքով կարող ենք տեղեկանալ Աստուծոյ ողորմած գործին և կրթուիլ՝ Նորան հաղորդակից լինելու համար։ Կարճ ասենք. Ս. Գիրքը մեզ նախ ցոյց է տալիս թէ ինչպէս է Աստուած իւր արքայութիւնը հաստատում, զարգացնում և լրացնում, և երկրորդ՝ թէ ինչպէս կարող են մարդիկ մուտք գործել աստուածային արքայութեան մէջ։ Ուրեմն Ս. Գիրքն ուղեցոյց է նախ մեր հաւատքի և երկրորդ՝ մեր կենցաղի։ Կամ Ս. Գրքի նպատակն է՝ ուսուցանել մեզ աստուածային յայտնութիւնը այնպէս, որ մենք մեր թոյլ ույժերով հանդերձ կրթուենք առաքելական եկեղեցում և առաջնորդուենք Աստուծոյ ցուցած ուղղութեամբ դէպի փրկութիւն։

Այսպիսով Ս. Գիրքը մեզ համար ամենաանհրաժեշտ ուղեցոյց է, որով կարող ենք յաւիտենական կեանքի ճանապարհը գտնել. և որովհետև բոլոր մարդիկ պէտք է Աստուծոյ որդիք դառնան և ճանաչեն Նորան, իսկ այդ առանց Ս. Գրքի չի լինիլ, պարզ է որ Ս. Գիրքը որոշուած է բոլոր մարդկանց համար։ Ուստի ամեն ոք պէտք է երեխայութիւնից կարդայ Ս. Գիրքը, որովհետև կարդալ Ս. Գիրքը, Աստուծոյ հետ խօսել է, առանց որի ոչ մի մարդ չի կարող երջանիկ լինել։ Այս է՝ որ Պօղոս առաքեալը ասում է Տիմոթէոսին. «Ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն ի ձեռըն հաւատոցն որ ի Քրիստոս Յիսուս»։ Ս. Գիրքն է

Digitized by Google

ուղեցոյց դէպի յաւիտենական կեանք, նա է ազատում մեզ սխալ ու չար ճանապարհից և ուղղում դէպի արդարութիւն ու երջանկութիւն և առաքելական եկեղեցում դաստիարակում Ս. Հոգով։ Հայաստանեայց Եկեղեցին Ս. Գիրքն է ճանաչում իւր ամեն որդու փրկութեան հիմնական աղբիւրը։

Գ.

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԳՐԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔԸ

Չկայ մի գիրք, որ պարունակելով իւր մէջ կատարեալ աստուածայնութիւն մի և նոյն ժամանակ ամեն տարիքի ու կեանքի մարդկանց և ազգի սրտին մօտիկ լինի, ինչպէս Ս. Գիրքը։ Թէ մանուկը, թէ պատանին, թէ երիտասարդը, թէ կատարելահասակը, այլ և թէ կանայք ու թէ տղամարդիկ, թէ ուսեալն ու տգէտը միշտ անհամեմատելի սնունդ են ստանում Ս. Գրքից իւրեանց հոգու զօրացման համար։ Ամենքի համար ևս Ս. Գիրքն ունի իւր բաժինը, իւր շնորհը, իւր տալիքը. Նա ամենքի համար է և իւրաքանչիւրի համար։ Նա մատակարարում է իւր առատ գանձից թէ աղքատին, թէ հարուստին և երկուքի համար ևս բաւական գանձ ունի։ Ոչ աղքատը կարող է նորա գանձը իւր համար սպառելի համարել և ոչ հարուստը սպառուած կարծել, վասն զի անսպառ է ըստ իւրաքանչիւրի ընդունակութեան ու կարողութեան։

Ս. Գիրքը իւր գրական գեղեցկութեամբ անհամեմատելի է։ «Մի փոքր, ծածկուած և ուրիշ ազգերից ատուած ազգի մէջ, ասում է Ֆրանսիացի Լակորդեր գիտնականը, գտնւում էր մի գիրք, որ մարդկային մտքի ամենամեծ յուշարձանը պէտք է դառնար, եթէ նոյն

իսկ Աստուծոյ արտադրութիւնը չլինէր և որին մինչև անգամ Թշնամիք ստիպուեցան այդ պատիւը տալ։ Հօմերոսը չունի ոչինչ նման նահապետների կեանքի այն պատմութեան, որ կայ Ծննդոց գրքում։ Պինդարը շատ ցածր է մարգարէների խորին վեհութեան առաջ։ Թիւքիդիտէսը և Տակիտոսը անհամեմատելի են Մովսէսի՝ իբրև պատմչի հետ։ Ելից ու Ղևտացոց գրքի օրէնքների առաջ շատ յետ են մնում Լիկուրգոսի և Նումայի օրէնսդրութիւնները։ Սոկրատից ու Պղատոնից շատ բարձրացաւ նախ քան Աւետարանը երևեցած Սողոմոնը, որ թողեց «Երգերգոցը»՝ արարածական բերանին ներշընչուած՝ աստուածային սիրոյ զարմանալի երգը. և «Ժողովողը»՝ գրկուած մարդկութեան յաւիտենական մելամաղձոտ օրհներգը։ Վերջապէս Աւետարանը կատարումըն տալով այդ միակ Գրքի կոչման, դրաւ վրան գեղեցկութեան կնիքը, որ մինչև այդ ժամանակ անյայտ էր մարդկանց և աննմանելի մնալով չունի երկրում՝ որպէս և ամբողջ քրիստոնէութիւնը՝ ոչ մի արտայայտութիւն համեմատութեան համար»։

Ուստի և Ս. Գիրքը մարդկային հոգևոր կեանքի լիակատար դրախտն է. այն մի ընտիր բուրաստանն է, որի բազմատեսարան հրաշագեղ հովիտներում ու ծաղկոցներում ամեն ոք կարող է իւր ներքին կեանքի համեմատ զբօսանքը գտնել։ Վշտացածին կարեկից է Ս. Գիրքը, սգաւորին մխիթարիչ, սրտաբեկին կազդուրող, խընդացողին ուրախակից, մտատանջուողին խորհրդատու և ամենքին անփոխարինելի մտերիմ ընկեր։

Ս. Գրքի այս մեծ արժանիքի պատճառն այն է, որ մարդկութեան Գիրքն է և ամեն մէկի իսկական Գիրքն է։ Մարդկութեան Գիրքն է, վասն զի մարդկութեան Արարչի Գիրքն է։

Digitized by Google

Գ.

Ս. ԳՐՔԻ ՀՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ

I. Ս. Գրքի հեղինակութեան սկիզբը կամ հիմքը դրել է Մովսէս մարգարէն։ Նորա անունով մնացած հինգ գրքերից առաջին երեքը (Ծննդոց, Ելից ու Ղևտացոցը) գրուել են համարեա թէ աւելի քան 1400 տարի Քրիստոսից առաջ կամ մօտ 3300 տ. մեզնից առաջ։ Յետոյ հետզհետէ գրուեցան Թուոց, Երկրորդումն Օրինաց և Յեսուայ գրքերը։ Սամուէլ մարգարէով նոր կեանք սըկըսուեց Իսրայէլացոց մէջ, որ տևեց գրեթէ 470 տարի, որի ընթացքում գրուել են Դատաւորաց, Հռութի, Ա ու Բ. Թագաւորաց ու մարգարէքը՝ Եսայի, Ովսէ, Յովէլ, Ամովս, Աբդիու, Յովնան, Միքիէ, Նաւում, Ամբակում, Սոփոնիա և Երեմիա։ Այդ շրջանից յետոյ գերութեան ժամանակ գրուեցան Եզեկիէլի ու Դանիէլինը. իսկ դարձից յետոյ՝ Եսթեր, Եզր, Նեեմի, Մնացորդաց, այլ և Անգէոս, Զաքարիա ու Մաղաքիա, նաև Յուդիթ, Տովբիթ, Մակաբայեցոց և Իմաստութեան գրքերը։

Այս համառօտ տեսութիւնը ցոյց է տալիս թէ որքան հին է Ս. Գիրքը գլխաւորապէս իւր այն մասերով, որոնք սկսւում են գրեթէ Աստուծոյ համաշխարհական տնօրէնութեան նախապատրաստական սկզբնաւորութեամբ։ Մարդկութեան մէջ միմիայն Եգիպտոսի պատկերագիր ու Նինուէի սեպագիր արձանագրութիւններն աւելի հին են, մինչդեռ բոլոր հեթանոս աշխարհի գրաւոր յիշատակարաններն առաւել նորագոյն ժամանակի են։ Զորօրինակ՝ Հնդկաստանի Վեդաները՝ այսինքն Հընդիկների սրբազան գրքերը՝ Քրիստոսից 1500 տ. առաջ են գրուած, որ Սամուէլ մարգարէին է նոյնաժամանակ գալիս. նոյնպէս և Չինաց Կինգը Քրիստոսից 500 տ. ա. է գրուած, իսկ Պարսից Զենդ-Աւեստան 600 տ. ա։

Digitized by Google

Հին կտակարանի պատմական գրքերն անգամ ամենահիննն են. ոչ Յունաց Հերոդոտը (440 տ. Ք. ա.) և ոչ Թիւկիդիտէսը (400 տ. Ք. ա.) չեն կարող այդոնց հասնել։ Այդ բոլոր գրուածները իւրեանց արտայայտութեամբ ու յայտնութեան բովանդակութեամբ այնպէս են կազմակերպուած, որ իւր ժողովուրդը տանում է մանկութեան տարիքից մինչև կատարեալ հասակը քայլ առ քայլ և շարունակաբար։

Ռ. Աստուած ինչպէս հող տարաւ, որ ժողովուրդը իւր դաստիարակութեան համար անհրաժեշտ յայտնութիւնն ունենայ, այնպէս էլ խնամեց ու պահպանեց այդ յայտնութիւնը նոր սերնդի համար։ Մովսէս մարգարէն կազմելով օրէնքները, դրաւ Ուխտի տապանակի մօտ (Բ. Օր. ԼԱ, 9, 24, 26. Յես. ԻԴ, 26)։ Նա իւր օրէնքները կարդաց ժողովրդի առաջ (Ել. ԻԴ, 4, 7). իսկ մահուան մէջոցին յանձնելով քահանաներին ու Ղևտացոց պահպանութեան (Բ. Օր. ԼԱ, 24—26), պատուիրեց անհրաժեշտ մասը կարդալ ժողովրդի առաջ ամեն 7 տարին մի անգամ տաղաւարահարաց տօնին, որպէս զի ժողովուրդը երկիւղածութեամբ ներշնչուի դէպի Աստուած։ Նորա օրինակին հետևեց և Յեսուն՝ նորոգելով ու գրելով Աստուծոյ Ուխտը (Յես. ԻԴ, 26). իսկ ապա Սամուէլը գրեց Թագաւորաց գործերը և իրաւունքներն և դրաւ Օրինաց գրքի մօտ. (Ա. Թագ. Ժ, 25)։

Հարկաւ Սողոմոնը շինելով տաճարը և փոխադրելով տապանակը այնտեղ, տեղափոխեց նաև այդ գրքերն և դրաւ տաճարում. (Գ. Թագ. Զ, 19. Դ. Թագ. ԻԲ, 8. Ես. ԼԴ, 16). և երբ մարգարէների գրուածները հետըզհետէ աւելացան, այդոնք ևս կցուեցան հներին թէ նոյն իսկ հեղինակների և թէ հետևեալ ժամանակի հոգէկիր անձանց ձեռքով՝ մինչև անգամ չար կամ անօրէն արքաների հալածանաց տակ ու հակառակ։ Սակայն այս

Digitized by Google

տաճարը այրեց Նաբուքոդոնոսորը գրեթէ իւր շինութիւնից 420 տարի յետոյ, իսկ գրքերը պահուեցան Աստուծոյ յայտնութեան հեղինակների և գուցէ քահանաների մօտ, ինչպէս երևում է Դան. Թ, 2, 11: Բայց երբ Հրէաները գերութիւնից դարձան, տաճարը նորոգեցին, յիսուն տարի յետոյ Եզրը հաւաքեց Աստուծոյ յայտնութեան գրքերն ու խնամքի տակ դրաւ (Նեեմ. Ը, 1–9. Բ. Մակ. Բ, 13): Եզրը աւելացրեց այդոնց վրայ նաև իւր գրքերն և այդպիսով պահպանուեց Հին Կտակարանի ժողովածուն: Այնուհետև մինչև անգամ քրիստոնէութեան ժամանակ Հրէաների ժողովարաններում աշխատում էին պահպանել Հին Կտակարանը, ինչպէս գիտենք առաքեալների ասածից (Մարկ. Ա, 21. Ղուկ. Դ, 16, 17. Գործք. Թ, 2. ԺԳ, 14. 15 և այլն):

Նոր Կտակարանի գրուածներն էլ պահւում էին այն եկեղեցիներում, որոնց այդոնք առանձին առանձին ուղղուած էին կամ որոնք միջոց էին ունեցել առաքեալների գրածից արտագրելու: Եղան և եկեղեցիներ, որոնք արտագրութեամբ հաւաքում պահում էին գրուածքներից շատերն ու կարդում ժողովրդի առաջ. (Բ. Պետ. Գ, 15, 16): Այդպիսով առաջին դարի ս. Հայրերը՝ ինչպէս Իգնատիոս եպիսկոպոսը, Կղեմէս ու Պոլիկարպոսը գործ են ածում այդ գրուածները իւրեանց՝ մեզ յայտնի՝ թղթերի մէջ: Իսկ հետևեալ դարերում, ինչպէս վկայում է Գ դարուց Տերտուղիանոս Կարքեդոնացին, Նոր Կտակարանի գրուածները թէ քրիստոնեաների ու թէ հեթանոսաց առաջ բաց էին:

Ահա ուրեմն Աստուած խնամք է տարել ամբողջ Ս. Գրքի պահպանութեան համար: Աստուծոյ խնամքի նշանակութիւնը մեզ համար բարձրանում է մանաւանդ այնով, որ այդ ամենը նա կատարել տուաւ իւր ընտրեալների կամ իւր յայտնութիւնը կրող անձանց ձեռ-

Digitized by Google

քով, որոնք և հարկ եղած միջոցին դարձեալ Աստուծոյ յայտնութեամբ էին յաւելուածներ անում կամ գրուածների շարքի մէջ նոր կազմութիւն մտցնում։ Դոքա ուրեմն իբրև Աստուծոյ սրբութեան պահապաններ և Աստուծոյ յայտնութիւնը պահողներ՝ հաւաստիք են տալիս հաւատարմութեան. (Եզ. ԼԳ, 17. Գ, 7. Ես. Ը, 16.)։

Ե.

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՀԱՐԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՎԱՒԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ս. *Գրքի հնութեան ու պահպանութեան վրայ խօսելուց յետոյ դեռ ևս մի երկու խնդիր մնում են, որոնց որոշմամբ մենք կարող կլինինք* Ս. *Գրքի մատենագրական բարձր արժէքը ճանաչել։ Նախ մեր խօսքը հարազատութեան վրայ է։*

I *Կանոնական գրքերի հարազատութիւնն այս է՝ որ այդոնք գրուած են իւրեանց անունը կրող այն հեղինակաց ձեռքով, որոնք յայտնի են իբրև երկիւղած, Աստուծոյ յայտնութեան նուիրուած ընտրեալներ և ապրել են իւրեանց գրուածքի բովանդակութեան համեմատ ժամանակում։* Ս. *Գրքի գրուածներից շատերի ճակատին նշանակուած են հեղինակների անունը ճշգրտութեամբ. միւսներից մի մասի հեղինակները յիշուած են բովանդակութեան մէջ, բայց կան և այնպիսիք, որոնց բաղկացուցիչ մասերի հեղինակները յայտնուած են իւրեանց գրուածքի մէջ, իսկ ամբողջութեան խմբագրողները միաժամանակ յիշուած չեն, թէև ընդհանրապէս գիտենք որ աստուածավախ անձինք են եղել։*

Հարազատութեան ապացոյցները կարող են լինել՝ արտաքին ու ներքին։

Digitized by Google

Ներքին ապացոյցներն են՝ գրուածների վկայութիւնն ու բովանդակութիւնը։ Գրուածքի վկայութիւնն ենք համարում՝ երբ ուղղակի գրուածքի վրայ, այլ և յաճախ գրուածքի մէջ ասուած ենք գտնում թէ ո՞վ է հեղինակը. (զորօր. Ել. ԺԷ, 14. ԻԴ, 4. 7. Բ. Օր. ԼԱ, 9. Ես. Ա, 1. Բ, 1. և այլն)։

Իսկ *բովանդակութեան կողմից*՝ նախ բաղդատում ենք մեր այժմեան աստուածաշունչը 1900 գրչագրների հետ, որոնց գրութեան ժամանակը հասնում է մինչև Դ. դար, և տեսնում ենք՝ որ այդոնք ամենքն էլ նոյն են. և եթէ կան տարբերութիւններ, այդոնք ևս շատ սակաւ վերաբերմունք ունին իմաստին և դիւրաւ վերականգնւում են համեմատութեամբ, որպիսի աշխատութեամբ զբաղուել են անգլիացի Կեննիկոտ, իտալացի Ռոսսի և գերմանացի Կ. Տիշենդորֆ։

Երկրորդ՝ Ս. Գրքից բազմաթիւ կտորներ, վկայութիւններ ու մեկնուած մասեր կան քրիստոնէական եկեղեցու առաջին Հայրերի և նոցա հետևորդների գրուածոց մէջ և այդ ամենը համաձայն ու նոյն են մեր այժմեան օրինակի հետ։ Այդ հայրերի թիւը հասնում է մօտ 200-ի, որոնցից շատերը առաքելոց աշակերտներ են կամ մօտիկ ժամանակակիցներ։ Յիշենք և այս, որ մինչդեռ Հին Կտակարանի պէս մեծ գրքում հաշւում են հազիւ 1400 ոչ էական ընթերցուածքներ, նոյնածաւալ մի աշխարհական գրուածքում տարբեր գրութիւնները հասնում են յաճախ 30—50 հազարի։ Եւ

Երրորդ՝ վարը յիշուած հին թարգմանութեանց համեմատութիւնը բնագրի հետ նոյնպէս պարզապէս հաստատում է Ս. Գրքի հարազատութիւնը, քանի որ այդ թարգմանութիւնք ամենահին դարերից են։

Գալով *արտաքին ապացոյցներին* պէտք է ասենք՝

Digitized by Google

որ նոյն իսկ Ս. Գրքի հեղինակներն՝ իւրաքանչիւրը իւր գրուածքում շատ ու շատ անգամ վկայութիւններ է բերում միւսներից, որոնցով և հաստատում է թէ իւր յիշած հեղինակի գիրքը իւր ժամանակ ինչ բովանդակութիւն է ունեցել. այնպէս որ Քրիստոսի առաքեալները հաստատուն փաստեր են տալիս մինչև անգամ Հին Կտակարանի սկզբնական գրքերից, ինչպէս կտեսնենք ստորև։

Երկրորդ՝ յոյն և այլ հեթանոս գրողները յիշում են Ս. Գրքի հեղինակներից շատերի մասին։ Այսպէս Եգիպտոսի Մանեթոն պատմիչը Քրիստոսից 278 տարի առաջ յիշում էր Մովսէս մարգարէին իբրև օրէնսդրի։ Միւս պատմիչն է Հերեմոնը, Քրիստոսի ժամանակակիցն, որ նոյնպէս յիշում է Մովսէսին։ Յոյն Եւպոլեմը Քրիստոսից 200 տ. ա. գրում է թէ Մովսէսը իմաստուն էր և տուաւ Հրէաներին գրեր։ Դիոդոր Սիկիլացին (45 տ. Ք. ա.) գրում է Եգիպտոսի քրմերից ստացած մի տեղեկութիւն՝ թէ Մովսէսը դրաւ Եհովայից ստացած օրէնքները։ Այդպէս և Սանքոնիաթոն Փիւնիկեցին (1200 տ. Ք. ա. ըստ Եւսեբեայ), Հոմեր, Հեսիոդոս (900 տ. Ք. ա.), Հերոդոտոս (450 տ. Ք. ա.), Բերոսոս Քաղդէացի (330 տ. Ք. ա.), Պղատոն և այլք։

Աւելացնենք և այս, որ աշխարհական գրուածներից շատ շատերը հազիւ 1—20 գրչագրներով են հարազատ հաստատուած, թէև չունին և այնքան ապացոյցներ, որոնք տեսանք և նախընթացում։ Մինչդեռ Ս. Գրքի գրչագրները ոչ միայն բազմաթիւ են, այլ և այդոնց մեզ աւանդողները պատկանում են յաճախ իրար հակառակ եկեղեցիների և կուսակցութեանց, ինչպէս Սամարացիք, Հրէաների մէջ յայտնի կուսակցութիւնները և քրիստոնէական աշխարհում զանազան իրար հակառակ եկեղեցիք։

Digitized by Google

II. Ս. Գրքի հարազատութիւնից ինքն ըստ ինքեան բղխում է և նորա վաւերականութեան հաւաստին, ըստ որում ոչ միայն հաւատքով, այլ և քննական տեսակէտից համոզուած ենք, որ նորա բովանդակութիւնը հաստատուն ճշմարտութիւն է։ Այդ պարզ է, քանի որ նորա հեղինակները կամ ականատես վկաներ են եղել իւրեանց պատմած եղելութեանց և կամ ամեն յարմարութիւն ունեցել են ճշդիւ ստուգելու և ապա գրելու, որի համար և կատարեալ պատրաստակամութեամբ և ընդունակութեամբ օժտուած էին։ Այս նկատմամբ մենք արդէն խօսեցանք վերը և կաւելացնենք, որ եթէ այդպէս չլինէին, չէին կամենալ այնքան մանրապատում ներկայացնել մեր առաջ բոլոր իրողութիւնք, չխուսափելով ոչ մի մանր հանգամանքից անգամ։ Ուստի և նոքա գրում են պարզ, հասկանալի և հոգեկան կատարեալ հանգստութեամբ, միշտ հաւատացած և համոզուած լինելով, որ իւրեանց ասածի վրայ ոչ ոք իրաւունք չպէտք է ունենայ կասկածելու։ Եւ ոչ միայն այդքան, այլ և իւրեանց ասածի ճշմարտութեան համար պատրաստ էին մեռնելու և մահուանից չէին փախչում իբրև իսկական վկաներ։ Հետզհետէ կըտեսնենք, որ գրեթէ բոլոր սուրբ հեղինակներն իւրեանց խօսածին ու գրածին հաստատ և հաւատարիմ մնալով՝ յանձն առան ամեն հալածանք և ի վերջոյ մարտիրոսաբար մեռան։

Երկրորդ՝ եթէ նոցա մէջ որ և իցէ անճշտութիւն լինէր, պէտք է որ նոցա ժամանակակիցները մաքառած լինէին և յարձակուէին այդ շեղումների վրայ. մինչդեռ մենք Ս. Գրոց հեղինակների ժամանակից և փոքր ինչ յետոյ բնաւ տարակոյս կամ հերքումն չունինք գրական աշխարհից։ Այլ ընդհակառակն՝ քրիստոնէութիւնը յաղթաբար տարածեց Ս. Գիրքը ամեն տեղ և մարդկանց

Digitized by Google

սրտին ամենամօտիկ ընթերցանելին դարձրեց։ Քրիստոնէութիւնը պատճառ եղաւ շատ հակառակութեանց և պետական սկզբնական շահերի անկման, սակայն ոչ ոք չկարողացաւ հաւատացողների խուռն բազմութեան ցոյց տալ, որ Ս. Գրքի քարոզածը սուտ կամ սխալ է։ Ընդհակառակն՝ նոքա ճշդութեամբ յիշում են Ս. Գրքի ասածները և իբրև ճշմարտութիւններ՝ ոչ թէ հերքում են, այլ ձգտում են ծաղրելով միայն անընդունելի դարձնել իւրեանց համախոհներին։

Երրորդ՝ թէ առաքելոց ընկերները, աշակերտներն ու ժամանակակիցները և թէ զանազան հերձուածողներ հաւասարապէս վկայում են Նոր Կտակարանի գրուածների ճշմարտութեան։ Հերոնիմոսը 392 թուին մօտ 50 այդպիսի ճշմարիտ վկաների անուններ է տալիս, որոնց գրուածները ինքը ունեցել է ու կարդացել։ Այլ և Նոր Կտակարանի ճշմարտութեան վկայում են այնպիսի նշանաւոր պատմիչներ՝ ինչպէս Յովսեպոս (37 – 93), Տակիտոս (100), Սուետոնիոս (117), Յոբնաղ (95), Պլինիոս (103) և այլք իւրեանց տեղեկութիւններով։

Չորրորդ՝ Ս. Գրքի մէջ յիշուած քաղաքական վիճակը կամ զանազան պետական կազմակերպութիւնք և պատմական յիշատակութիւնք ոչ միայն համաձայն են արտաքին մատենագրներին, այլ և յաճախ նոցա լրացնում են, որոնց ճշդութիւնը ստուգւում է նաև զանազան հնութիւններով և մինչև օրերս գտնուող բազմաթիւ արձանագրութիւններով ու սեպագրութիւններով և մեհենադրոշմներով կամ պատկերագիրներով։

Վերջապէս լեզուն ու ոճն էլ մեծ ապացոյց են, ըստ որում Հին Կտակարանի հեղինակների իւրաքանչիւր շրջանը գրեթէ բոլորովին տարբեր լեզու, ոճ, այլ և շատ բառեր ունին, որոնք հետևեալ ժամանակներում կամ չեն գործածւում և կամ հազուադէպ են։ Իսկ Նոր

Digitized by Google

Կտակարանի լեզուն մի այնպիսի յունարէն է, որ միայն եբրայեցի յունագէտների մէջ էր ընդհանրացած և բուն Յոյների գրական լեզուն չէր։

Զ.

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՔՆՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնէութեան տարածման ժամանակներում հեթանոսութեան հակառակութիւնը բաւական էր, որ խաւար հնութիւնը պաշտպանող փիլիսոփայք յարձակուէին քրիստոնեայ քարոզիչների վրայ և աշխատէին Ս. Գրքի հարկը ձգել ժողովրդի աչքում։ Այդպիսի հեթանոս հակառակորդներ էին Կելսոս, Պորփիւրոս և այլք, որոնք ոչ մի հնար չէին մոռանում քրիստոնէական եկեղեցու հայրերի ջատագովութիւնը խորտակելու համար։ Սակայն դոքա չկարողացան յաղթանակ տանել, վասն զի եկեղեցու գիտնական Հայրերն ևս ամեն կերպ միջոցներ էին գտնում և հակառակորդներին հերքում։

Հեթանոսամիտ ուղղութեան հոսանքը նորից զարթնելով զօրացաւ ԺԶ դարում, երբ Հռովմէական եկեղեցականների բռնութեան դէմ դուրս ելան գերման բողոքողները։ Սոքա սկզբում չկարողացան ընդդիմանալ Հռովմէականներին, որոնք իւրեանց եկեղեցական աւանդութիւններով հաստատում էին իւրեանց իշխանութիւնն ու վարդապետութիւնը, լինէին այդ աւանդութիւնները առաքելական, հին թէ նոր։ Բողոքողները այդ տեսնելով, սկսան մերժել դոցա բերած բոլոր փաստերը առանց խտրութեան և միմիայն Ս. Գիրքը ճանաչել ամենայն ճշմարտութեան և իրաւունքի, վարդապետութեան և իշխանութեան հաստատման աղբիւր։ Այս ձգտումը այնքան զօրացաւ, որ ուղղակի գրապաշտութեան հա-

Digitized by Google

տան այդ բողոքողները, միակ ու միակ հեղինակութիւն ճանաչելով Ս. Գիրքն և աստուածացնելով։ Եկեղեցի, քահանայապետական իշխանութիւն, հոգևորականութիւն ու եկեղեցական ամենայն կարգ դոցա աչքում ընկաւ և միմիայն Ս. Գիրքը ամենքի տեղ բռնեց։ Ինչ որ Ս. Գրքում բառացի կար, այն էր դոցա համար հեղինակութիւն. ինչ որ չկար՝ չէր ընդունւում։

Մի որոշ յաղթութիւն տանելուց և ինքնուրոյն դիրք ստանալուց յետոյ արդէն այդ բողոքողները տարաձայնութեանց մէջ ընկան։ Այլ ևս չկար արտաքին թշնամու զօրութիւնը իւրեանց մէջ և այժմ էլ՝ այն է՝ ԺԸ դարում հարց յառաջացաւ դոցա մէջ թէ արդեօք Ս. Գիրքն էլ իրաւ աստուածային հեղինակութիւն է թէ կեղծիք է։ Բոլորն էլ ասում էին թէ Աստուծոյ յայտնութիւն է. ուստի և այժմ սկսան հարցնել թէ որտեղից գիտենք այդ, քանի որ այդ մասին վկայողն է քրիստոնէական եկեղեցին, իսկ ինքեանք բողոքողները մերժել են նորա պատմական փաստերը։ Լութերն ու Կալվինը աշխատում էին ամենքին ընդունել տալ, որ Ս. Գիրքն ինքն ըստ ինքեան ցոյց է տալիս, որ ինքն աստուածաշունչ է։ Բայց սոցա դէմ սկսան տարակոյսներ յայտնուիլ, երբ ԺԷ դարում նախ Հիւգօ Գրօցիոսը հետամուտ եղաւ բացատրել թէ ինչ է նշանակում աստուածաշունչ և ապա Հրէայ Սպինոզան (1632—1677) ուղղակի կասկածելի անուանեց Ս. Գրքի աստուածային յայտնութիւն լինելը։

Թէև սկզբում Սպինոզան իբրև մերժուած Հրէայ և անհաւատ չկարողացաւ ներգործել մտքերի վրայ, սակայն հետզհետէ դուրս եկան Գերմանիայում, Ֆրանսիայում և Անգլիայում գիտնականներ, որոնք իւրեանց բանասիրական ուղղութեամբ ձգտում էին Ս. Գրքի հեղինակութիւնը հերքել և անհաւաստութեան զարկ տալ։

Գոմս Հերբերտ, Լոք, Ջոն Բոլանդ, Սոմմերս, Բուկինգամ և Բոլինբրոկ իրար յետևից հեղհեղեցին Անգլիան գրուածներով Ս. Գրքի դէմ։ ԺԸ դարի սկզբումն էլ Վոլթերը սկսաւ օգտուել դոցա գրուածներից և զանազան սրախօսութիւններով ու կատակներով կերակրել իւր ընթերցողներին։ Բայց շուտով սոցա գրութիւնները մոռացուեցան իբրև անհիմն ցնորքներ։

Գերմանիայում այդ ժամանակ գիտնականք դրականապէս սկսան զբաղուել Ս. Գրքով։ Ամենից նշանաւոր եղաւ Ռայմարուսը, որի հետազօտութիւնք հրատարակեց Լեսսինգը 1774-ից սկսեալ մի շարք գրուածներով և աշխատեց սառեցնել ժողովրդի հաւատքը դէպի Ս. Գրքի ճշմարտութիւնը և մերժել Լիւթերի վարդապետութիւնը Ս. Գրքի աստուածայնութեան մասին։ Սակայն բարձրացաւ աղմուկ նոյն իսկ Ս. Գրքի հակառակորդների մէջ և Զեմլեր անունով գիտնականը արժանի էր համարում Լեսսինգին գժանոց ուղարկելու։ Այդպիսի հեթանոսական տեսութեանց հակառակ շատերը քարոզում էին, որ ամեն ոք պէտք է իւր խղճից հարցնէ թէ Ս. Գրքում ո՞րն է ճշմարիտ և ո՞րը սխալ, և որ Աստուած իւրաքանչիւրի խղճի ձայնով կհասկացնէ թէ ի՞նչպէս պէտք է լինել ու բարոյականութիւն պահել։

Այսպիսի զգացմունքների ներքոյ նոր ուղղութիւն բռնեցին ուրիշ գիտնականք. Այխհորնը (1752—1827) մերժելով առ հասարակ գերբնականը, սկսաւ կամայական բացատրութիւններով հասկացնել Ս. Գրքի հրաշալիքները և այդպիսով այդ գիրքը մի բարձր կրօնական գիրք դարձնել առանց Աստուծոյ յայտնութեան։ Հրաշալիքների բնական բացատրութեանց մէջ յառաջ գնաց աւելի ևս Պաուլուս (+1850), հետևելով Կանտի փիլիսոփայութեան, որ Լեսսինգի ազդեցութեան տակ ձըգտում էր մի «բնական կրօն» կազմել։ Նոյն Լեսսինգի

Digitized by Google

ուղղութեան տակ դուրս ելան և ուրիշ փիլիսոփաներ, ինչպէս համաստուածեան Հեգելը, անաստուած Ֆօյերբախը (+1874) և Շոպենհաուէրը։ Մինչդեռ Պաւլիուսի ձգտումն էր միացնել հրաշալիքն ու բնական կարգի տեսութիւնը խելքի ոյժով բացատրելով։

Բաւական է, որ այդ անձինք Ս. Գրքի հրաշալիքներին ուրիշ միտք էին տալիս և ահա դուրս եկան ուրիշներն, որոնք սկսելով Մովսէսի գրքերից հետզհետէ առասպելական անուանեցին գրեթէ բոլորն էլ։ Այդպիսի մի կասկած յայտնել էր ԺԲ դարում Աբեն Եզրասը Հնգամատեանի մի քանի մասերի վրայ միայն, բայց 1520-ին Կարլշտատը հարց բարձրացրեց թէ արդեօք Հնգամատեանի հեղինակը Մովսէսն ինքն է։ Ապա հետզհետէ կասկածներ յայտնեցին Բելգիացի Անդրէաս Մազիոսը ԺԶ դարում, անգլիացի Թովմաս Հոբբէսը ԺԷ դարում և նոյն ժամանակ Ֆրանսիացի Ի. Պեյրեր և մանաւանդ Սպինոզան, ինչպէս յիշեցինք, որ ասում էր թէ Մովսէսի ժամանակի գրուածները փոփոխել են յետին գրողները։

ԺԸ դարի սկզբում Ժան Աստրուկը ուշադրութիւն դարձրեց Հնգամատեանի զանազան տեղերի վրայ, որտեղ Աստուծոյ անունը զանազանակերպ է յիշուած. այդ տեսնելով նա յայտնեց այն կարծիքը, որ այդ հինգ գրքերը կազմուած են մանր գրքերից, որոնցից իւրաքանչիւրը ուրիշ հեղինակի է, ուստի և յառաջացել են Մովսէսի ժողովածուի մէջ Աստուծոյ տարբեր անունները— Էլոհիմ (Աստուած), Եհովահ (որ Հրէայք երկիւղածութեամբ կարդում էին՝ ադոնայ (տէր)։ Ըստ որում և կան տեղեր, որտեղ Եհովահ է ասուած և այլ տեղեր՝ Եհովահ—Էլոհիմ (կամ Եահվէ—Էլոհիմ)։ Սակայն Աստրուկը բոլոր այդ գրքերի ժողովող հեղինակ է համարում Մովսէսին։ Բայց շատ չանցաւ և Բաուէր ուսուցչապետը

Digitized by Google

(† 1806) սկսաւ պնդել, որ Մովսէսինն են միմիայն մի քանի կտորներ, ըստ որում և իւր բռնած դիրքով ազդեց այդ ուղղութեան հետևողների վրայ, մանաւանդ որ նոյն ժամանակ պատմաբաններն էլ այն կարծիքի էին թէ ազգերի հին պատմութիւնը հիմնուած է առասպելաբանութեան վրայ. (այդպէս Գոտլոբ († 1812), Կրեյցեր († 1858), Գ. Միւլլեր, Վոլֆ (1824), Նիբուհր († 1831) և այլք)։ Ընդհանուր կարգ դարձաւ՝ հին գըրուածները ժողովածու համարել առասպելների պատմական միջուկով։ Իսկ առասպելաբանութիւն էին կոչում «մի եղելութեան կամ մտքի պատմութիւնը միայն թէ այնպիսի ձևով, որ որոշւում արտայայտւում էր հին ժամանակի նշանակական լեզուի ոգով ու լիքը երևակայութեամբ»։ Դոքա սկսան ապա այս չափով նայել Ս. Գըրքի հրաշքների վրայ, ասելով զորօր. որ Աբրահամի խօսիլը Աստուծոյ հետ երազ է եղել. հրեշտակները հասարակ մարդիկ են եղել և երևակայութեամբ այդպէս ընդունուել, Սոդոմ-Գոմորը բնականապէս է քանդուել կործանուել և այլն։

Այս ուղղութեամբ Ֆատեր լեզուաբանը († 1826) սկսաւ մանրամասն ցոյց տալ, որ Հնգամատեանը յետին ժամանակի ժողովածու է և իւր վերջնական կազմութիւնը ստացել է բաբելական գերութիւնից ոչ առաջ։ Այսպիսի բացատրութեան մէջ աւելի ևս յառաջ գնաց Պաւլիուսի աշակերտ Դը՚Վետտէ († 1849), ժխտելով արտաքին աղբիւրների գոյութիւնը և միայն ներքին քննաբանութեան հետևելով։ Սակայն նորա այդ նորութիւնը որքան էլ ազդեց ամենքի վրայ և իշխեց բանապաշտ քննաբաններին մինչև վերջերս, այնով հանդերձ անհիմն է, քանի որ նորա ժամանակից մինչև այժմ բազմաթիւ արտաքին աղբիւրներ գտնուեցան՝ թէ թղթեր ու թէ հնութիւններ և արձանագրութիւններ, որոնք

Digitized by Google

հաստատում են Ս. Գրքի ճշմարտութիւնը։ Լոկ անձնական կարծիքներով չի կարելի քննաբանական տեսութիւններ կազմել և ընթերցողի վզին փաթաթել, անհրաժեշտ են արտաքին վկայութիւններ, որոնք դոցա մէջ չկային։ ԴըՎետտէն ուղղակի Հնգամատեանը չէ համարում Մովսէսինը, այլ անուանում է Հրէաների վիպասանութիւն, նմանեցնելով Հոմերոսի վէպին։ Հնգամատեանը նորա կարծիքով զանազան ժամանակներում գրուած յօդուածների ժողովածու է։

ԴըՎէտտէն իւր այդ տեսութիւնը գրում է մեծ յարգանքով դէպի Ս. Գիրքը, որ և համարում է նուիրական ու գեղեցիկ բանաստեղծութիւն. ուստի և նորա ուղղութիւնը տիրապետող դարձաւ հետագայ բանապաշտ քննաբանների մէջ։ Նոյն ընթացքը բռնեց նա Ս. Գրքի մնացեալ գրուածների վերաբերմամբ, միշտ աշխատելով բոլորն էլ ժողովածուներ ներկայացնել։ Այսպիսով նա մոռացաւ՝ որ Ս. Գիրքը վէպ չէ, առասպելաբանութիւն չէ, այլ Աստուծոյ յայտնութեան և ընտրեալ ժողովրդի հետ դրած ուխտի պատմութիւնն է։ Սակայն իւր վերջին օրերում նա աշխատեց դառնալ դէպի ճշմարիտ հաւատքը, ասելով՝ որ իւր բանապաշտական և անհաւատութեան ուսումնասիրութիւնները և տեսութիւնները չկարողացան խաղաղութիւն տալ իւրեան. և որ ինքը ողորմելի դարձաւ և միմիայն հաւատքի մէջ գտաւ իւր հանգստութիւնը։ «Ես համոզուած էի, գրում է նա, թէ կարելի է լինել բարեգործ առանց պատկանելու մի որևիցէ հաւատքի, բայց շուտով այդ պատրանքը վերացաւ և ես զգացի ինձ ողորմելի։ Զրկուելով մի աննիւթական աշխարհի հաւատքից, ես ինձ զգացի միայնակ, ինքս ինձ թողնուած և իմ բոլոր մարդկութեամբս աննպատակ ձգուած աշխարհի մէջ։ Իմ հոգիս լցւում էր հակասութիւններով և անվստահ մտապատկերներով.

Digitized by Google

կեանքի ոչ մի շնչառութիւն չէր գալիս իմ սրտի սառնութիւնը տաքացնելու համար և մահն իբրև մի չար ոգի՝ տիրապետում էր իմ ամբողջ գոյութիւնը։ Ոչ մի դատողութիւն չկարողացաւ ինձ խաղաղութիւն պատճառել· իմ զգացմունքներս հակառակ էին դուրս գալիս իմ բանականութեան համոզմունքների դէմ»։

Այս մտերմական խոստովանութիւնը պարզ ցոյց է տալիս այդ գիտնականի հոգեկան վիճակը։ Նորա հոգու մէջ երկպառակութիւն էր ընկել և նա չկարողացաւ այդ երկպառակութեան լուծումն տալ, վասն զի խղճի ձայնին հակառակ ընթացքի էր սովորել նորա մտաւոր աշխարհը։ Բայց և այնպէս այս վիճակը կարող է մի օրինակ լինել նոյն դրութեան մէջ ընկնող ամեն մի գիտնականի։ Դժբախտաբար սա և իւր ուսուցիչ Ֆրիզի և նոյն ուղղութեան խիստ հետևող Շլայէրմախերի պէս առաւել մեծ նշանակութիւն տուաւ զգացմունքներին և կրօնը զգացմունքի գործ համարեց, այնպէս որ դարձեալ չկարողացաւ մի եզրակացութեան ու մնայուն հայեացքի հասնել։

Այդպիսի ուղղութեան արձանագրողն ու դպրոց կազմողը եղաւ իսկապէս Շլայէրմախերը (1768 – 1834), որ ասում է՝ «իմ կրօնն ամբողջովին սրտի կրօն է. իմ մէջ տեղ չունի ուրիշ կրօն»։ Այնպէս որ քանի մարդ կայ, այնքան էլ կրօն կայ և հաւատքը անձնական զգացմունք է, որ ոչ մի տեղ չի կարելի գտնել և ամենայն կրօնական զգացմունք ճշմարիտ է։ Շլայէրմախէրն ուրեմն ոչ այլ ինչ է, եթէ ոչ իւր ժամանակի նիւթապաշտական և անաստուած ուղղութեանց ամփոփողը ներքին աշխարհի մէջ։ Նա իւր ժամանակի բոլոր միակողմանի տեսութիւնները աշխատում է կրօնականութեան և գլխաւորապէս խորհրդաւորութեան մէջ սեղմել։ Ուստի և Ս. Գրքի գրուածների վրայ շարունակ

Digitized by Google

կասկածներ յայտնելով և իւր նախորդների ասածները մեծ մասամբ կրկնելով, չկարողացաւ մի որոշ գաղափար կազմել, այլ անգիտութիւնն և անզօրութիւնը համարեց ճշմարիտ քննաբանութեան վերջին խօսքը։ Նա մի հաստատուն ելք չգտաւ, այլ մնաց կասկածոտ ու մըշտաշարժ մի անկայուն զգայարանք։

Նախընթաց բոլոր բացասական քննաբանների մարմնացումն է Շտրաուսը, որ կրօնը երևակայութեան ծընունդ համարեց և առասպելը ամբողջ ժամանակի ու ժողովրդի ձգտմանց, տեսութեանց ու գաղափարների ժողովածու, որի հեղինակն է ոչ թէ մի անձն, այլ ժողովրդի հաւաքական ոյժը։ Այս երկու հիմանց վրայ ըսկսաւ նա հասկանալ ու ներկայացնել մինչև անգամ Յիսուսի կեանքը, որի պատմութիւնը անուանում է գրեթէ Հրէայ ժողովրդի հանճարեղ երևակայութեան արգեանց նկարագրութիւն։ Այդպէս նա ձգտում է Յիսուսի կեանքը ժողովրդի երևակայութեան օրէնքներով ու ցնորական ենթադրութիւններով բացատրել և իբր թէ պատմական մի հասկացողութիւն տալ ընթերցողին։ Սակայն նա չկարողացաւ պատմական հասկացողութիւն տալ, այլ միայն կամայականօրէն ամեն եղելութիւն դարձրեց մտացածին առասպելներ։ Քրիստոսի երևալը ժողովրդի մէջ նա համարում է երևակայեալ և ուրեմն գրեթէ ամեն ինչ առ երևոյթ եղած։ Իսկ այս տեսութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հին երևութականների վարդապետութեան հետևութիւնը։ Հապա ի՞նչպէս Քրիստոս հիմնեց իւր եկեղեցին և ո՞րտեղից եկաւ ինքը․ ահա այս հարցին չկարողացաւ պատասխանել Շտրաուսը, ըստ որում և իւր բոլոր ասածները ոչ մի պատմական հիմք ու հաստատութիւն չունին, այլ միայն անձնական ենթադրութիւններ են։

Շտրաուսի գրութիւնն այնքան ցնորական էր, որ

Digitized by Google

կարճ ժամանակից յետոյ լոյս տեսաւ՝ «Շտրաուսի կեանքը, գրուած 2839 թուին» այսինքն 1000 տարի նորա մահից յետոյ, որում հեղինակը ներկայացնում է նորա կեանքն իբրև իւր ժամանակի ժողովրդի ձգտմանց ու գաղափարների երևակայական արդիւնքը և ցնորական նկարագրութիւնը։ Այս երգիծանութեան հեղինակը հաստատում էր իւր այդ գրուածքով, որ Շտրաուսը գոյութիւն չէ ունեցել։

Շտրաուսի ազդեցութիւնը բաւական ժամանակ զօրեղ էր. դուրս եկան մարդիկ՝ որպէս Ֆօյէրբախ († 1872), Շտիրներ և այլք և սկսան պնդել, որ բացի մարդու եսից ոչինչ չկայ աշխարհում և կրօնը ցնորք է։ Ռուգէն պնդում էր թէ քրիստոնէութիւնը բուդդայականութիւն է, չկայ մեղք, չկայ Աստուած և չկայ անմահութիւն։ Ֆ. Դաումեր ուսուցանում էր թէ դրախտը Աւստրալիայումն է, Թուոց գիրքը պատմում է Աւստրալիայից մարդկանց Ասիա գալը սառած ծովի վրայով, Յիսուս կարգադրեց մարդու մարմին և արիւնը ուտել և Յուդան այդ մատնեց, մահմեդականութիւնը այդ կրօնի յառաջադիմութիւնն է, վասն զի ապագայի կրօնը հաճոյքն է և հեշտասիրութիւնը, և այլ սոյնպիսի ցնորքներ։

Այսպիսի ուղղութիւն բռնեցին և բնական գիտութեանց մէջ Ֆոխտը, Բիւխները, Մոլեշոտը և այլն։ Բացասական ուղղութիւնը ընդհանրացաւ։ Տիւբինգենի համալսարանից ելան Բաուրի աշակերտները և սկսան բացասական ուղղութեամբ վերակազմել աստուածաբանական բոլոր գիտութիւնները, մինչև անգամ Հրէաների պատմութիւնը նորաձևութեամբ թխել, ինչպէս արաւ Էվալդը, ձգտելով վերլուծել ամենը, ջոկել առասպելը և մնացածը բացատրել բնական օրէնքներով։ Թէ սա և թէ իւր հետևորդներն արդէն մի ճանապարհ էին

Digitized by Google

ընթանում՝ առասպել կամ երգիծանութիւն համարելով այն ամենն, ինչ որ իւրեանց խելքով չէր բացատրւում։ Սոցա ազդեցութիւնը շատ կամ սակաւ տարածուեց և ամեն տեղ, նոյն իսկ Գերմանիայից դուրս, որտեղ և յայտնի գրողներ սկսան նոյն կարգով և սկզբունքով վերաբերուել դէպի Ս. Գիրքը, ինչպէս Ռընանն էլ Ֆրանսիայում ձեռք առաւ 1848 թուից սկսեալ Ս. Գրքի թշնամական քննաբանութիւնը և մանաւանդ 1863-ին հրատարակելով իւր «Յիսուսի կեանք» գրուածքը։ Ռընանը ուղղակի անհաւատութեամբ է նայում բոլոր կրօնական գրքերի վրայ, մերժելով ամեն գերբնական կամ աստուածային բան։ Նա պահանջում էր բացի իւր քննաբանութիւնից ոչնչի չհաւատալ, սակայն նորա «Յիսուսի կեանքը» ոչ այլ ինչ է, եթէ ոչ լոկ մի գեղարուեստական վէպ, որ չունի ոչ մի պատմական հիմք, ինչպէս ինքն էլ խոստովանում է թէ իսկապէս Քրիստոսի կեանքի այդպիսի նկարագրութեան համար չունի ոչ մի պատմական աղբիւր։ Նա իւր բոլոր գրութիւնը հիւսել է ուղղակի գերմանական բացասական քննաբանների հայեացքներից, որոնք յիշեցինք վերը։ Նոյն ուղղութեամբ նա հրատարակեց և իւր «Պատմութիւն Իսրայէլացոց» գիրքը 1887 թուին, որով ամենայն ինչ առասպելական է դարձնում և Հրէաների աստուածպաշտութիւնն էլ Եգիպտոսից վերցրած է համարում։ Բայց Ռընանը յաջողութիւն ունեցաւ թերուսների մէջ միմիայն այնքան ժամանակ, որքան ընդունուած էր իբրև հեղինակութիւն. իսկ երբ հետզհետէ նորանոր գիւտերը հերքեցին նորա բազմաթիւ հայեացքները, այնուհետև ընկաւ և նորա գրուածոց հարկը։ Ըստ որում նորա քննադատները գրեթէ բոլորն էլ համաձայն են մի կէտում, որ Ռընանի մանաւանդ վերջին գրութիւնները

Digitized by Google

գիտնական արժէքով գոնէ մի 10 տարով յետ են մնացել գերմանական գիտնականներից։

Ահա այսպէս բացասական քննաբանութիւնը լրացրեց իւր կոչումը՝ մարմնանալով նախ Շտրաուսի և ապա Ռընանի մէջ և ծալուելով ու մի կողմը նետուելով։ Այժմ նորանոր հնաբանական գիւտերն այնքան բազմացել են, որ Ս. Գրքի քննաբանութիւնը վերստին դրական ուղղութիւն է ստանում։ Ուստի կարևոր է մի հայեացք ձգել այդ գիւտերի վրայ։

Է.

ՄԻ ՀԱՅԵԱՑՔ ՀՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՒՏԵՐԻ ՎՐԱՅ

Ս. Գրքի հաստատութեան վկայող հեղինակներից զատ ունինք բազմաթիւ հնաբանական գիւտեր, որոնք դեռ ևս շարունակւում են երևան գալ Եգիպտոսում, Ասորեստանում և Պաղեստինում։ Այդ երկրներն են հին ու վիճակակից Հրէաներին, վասն զի վերջիններս ապրել են Եգիպտոսում և Ասորեստանում և միշտ յարաբերութեան մէջ են եղել այդ երկրների ազգաց հետ։ Այլ և Ասորեստանցիք, որոնցից է տարածուել քաղաքակրթութիւնը դէպի Եգիպտոս, մի ցեղ էին և մի ծագումն ունէին Հրէաների հետ և գերութեան ժամանակ Հրէաների հետ մի սերտ յարաբերութեան մէջ են եղել։ Թէ Ասորեստանցոց և թէ Հրէաների կեանքն ու սովորութիւնները նոյն են, միայն կրօնով տարբեր։ Իսկ պետական ինքնուրոյնութեանց ժամանակ Ասորեստանցիք շարունակ մեծ դեր են խաղացել Հրէաների պատմութեան մէջ, ուստի և շարունակ յիշւում են Ս. Գրքի այդ ժամանակի գրուածքների մէջ և առանց դոցա պատմութեան ծանօթութեան այդ գրքերը մեծ մասամբ անհասկանալի կմնան։ Այլ և Հրէաները երկար ժամանակ ապրած լինելով Ասորեստանում, չեն կարող պատմական ուսում-

Digitized by Google

նասիրութեան նիւթ լինել առանց Ասորեստանցոց պատմութեան գիտութեան։ Հետեւաբար և Ասորեստանի սեպագրութիւնք, որոնք խորհրդաւոր և անվերծանելի գրութիւններ էին համարւում, կարդացուելով մեծ ծառայութիւն մատուցին Իսրայէլի պատմութեան ուսումնասիրութեան։

Եգիպտոսն էլ նշանաւոր է Հրէաների պատմութեան համար, վասն զի Աստուած այդ երկիրը դարձրեց Հրէաների կրթարանը և այնտեղ մեծամեծ հրաշքներ գործեց։ Իսկ յետոյ Հրէաները մօտիկ յարաբերութեան մէջ էին Եգիպտացոց հետ թէ պատերազմներով, թէ թագաւորաց խնամութիւններով և թէ այնտեղ ապաստան գտնելով։ Եգիպտոսում ապրեցան Աբրահամ, Իսահակ, Յակոբ և ապա երկար անապատական կեանքով Իսրայէլացիք եկան Պաղեստին։ Իսրայէլացոց նահապետական և օրէնսդրական կեանքը Եգիպտոսի հետ սերտ կապուած է և Մովսէսն այնտեղ ու Սինայում իւր մարգարէական գործը վերջացրեց։ Հետեւաբար և Եգիպտոսին ու Պաղեստինին մօտ ճանապարհի վրայ գիւտերը կարեւոր լոյս կսփռեն թէ Իսրայէլացոց կեանքի և թէ Ս. Գրքի շատ տեղերի բացատրութեան համար։ Եւ վերջապէս Պաղեստինի հնաբանական գիւտերն անշուշտ նշանաւոր օժանդակներ են Հրէաների կեանքի ուսումնասիրութեան։

Գիւտերի առաջին տեղը Եգիպտոսն է, որ կանխապէս բաց արաւ ուսումնականների առաջ իւր դարաւոր գաղտնիքները։ Մինչև այդ ժամանակ այդ երկիրը յայտնի էր իբրև «սքանչելեաց աշխարհ» իւր բուրգերով և սֆինքսներով և տարօրինակ արձանագրութիւններով, որոնք ուսումնականնաց իմացութեան չէին ենթարկւում։ Անցեալ դարի վերջում շատ աշխատեցան կարդալու այդ արձանագրութիւնները, վասն զի Եգիպտոսը հին գիտ-

Digitized by Google

նականների հայրենիքը լինելով՝ միշտ գրաւում էր ամենքի ուշադրութիւնը, որ այդ արձանագրութեանց մէջ նշանաւոր տեղեկութիւններ կլինին։ Այդոնք մեհենագրութիւններ կամ պատկերագրութիւններ էին, որ գրել էին քրմերը, և ինչպէս կարծւում էր, յետոյ կարդալը մոռացել։ Այդ գրութեանց մէջ տարբերւում էին տառերի նման ձևեր և կենդանիների, թռչունների, սողունների և այլ պատկերներ։ Ուսումնականք չէին կարողանում գտնել թէ այդ գրութիւններ էին թէ ուրիշ բան և կամ ինչ լեզուով էին։ Հին Յոյները կարծում էին թէ այդոնք բնութեան գաղտնիքները, մարդկային գիւտերը պահելու համար էին գրուած, մանաւանդ որ քրմերը միայն յատուկ ընտրեալների էին սովորեցնում այդոնց ընթերցումը, որ դադարեց Փարաւոնների անկմամբ։ Կայսրները վարձատրութիւն էին խոստանում նորան, որը կկարդար այդ գրութիւնները, բայց իզուր։ Միջնադարեան ուսումնականները կարծում էին թէ Քրիստոս այդտեղից է վերցրել իւր վարդապետութիւնը և կարծողներ էլ եղան, որ իբր թէ այդոնք չինականի նըման են և Ս. Գրքի շատ տեղերը այդտեղից են թարգմանուած, ինչպէս ասում էր Ֆրանսիացի Պալենը։ Իսկ Եգիպտոսի գիտնականներից յայտնի էր Գորապոլլո, որ Ե դարում բացատրութիւններ էր տալիս մի քանի ձեւերի մասին միայն և այդ էլ նշանակութիւն չունէր, վասն զի յետին ժամանակում էր ապրում։ Նորա գրուածն էլ յունարէն թարգմանութեամբ է աւանդուած։

Թերևս այդ Գորապոլլոի ջանքերը զարկ տուին ԺԷ դարի սկզբում հետամուտ լինելու այդ արձանագրութեանց ընթերցման։ Եզուիտ Կիրխները 1636-ին հրատարակեց 6 հատոր աշխատութիւն իբրև այդոնց բացատրութեան համար, բայց յաճախ աւելի ևս անհասկանալի խօսելով քան իւր բացատրելին էր։ Սակայն նա

Digitized by Google

մեծ զարկ տուաւ այդ գործին, հաւաքելով բազմաթիւ կարեւոր նիւթեր թէ յոյն ու լատին հեղինակներից և թէ ղփտիների լեզուով գրուած բազմաթիւ գրչագրների վրայ ուշադրութիւն հրաւիրեց։ Նորանից յետոյ այդ հարցով զբաղուեցան 1797-ին դանեմարքացի Գ. Զեօգը և անգլիացի եալիսկ. Վարբուրտոնը, որ յայտնեց թէ Եգիպտոսի արձանագրութիւնք այբուբէն ունին և բովանդակում են պատմական, կրօնական և այլ տեղեկութիւններ։ Բայց կարդալու համար հարկաւոր էր գտնել թէ ինչ լեզուով էին գրուած, վերցնել այդոնց օրինակը գիտնականաց համար և թարգմանել ղփտիերէնը եւրոպական լեզուի, որպէս զի գիտնականք կարենային ուսումնասիրել։ Եւ ահա ֆրանսիացի Կատրմերը մի գրութեամբ ապացուցեց, որ ղփտիերէնն է այդ արձանագրութեանց լեզուն։ Ղփտիների այբուբէնը յունարէն էր բացի եօթը տառերից, որոնք եգիպտական ծագումն ունին. Նոցա կրօնական գրքերն էլ կային թարգմանուած արաբերէն ու յունարէն. ըստ որում և մեծ դիւրութիւն կար այդ ճանապարհով ուսումնասիրելու այն արձանագրութիւնները։ Ապա Նապօլէօն Ա-ը մտնելով Եգիպտոս, տարաւ իւր հետ շատ գիտնականներ այնտեղի յիշատակները քննելու համար, որոնք և հաւաքելով բազմաթիւ տեղեկութիւններ, հրատարակեցին «Եգիպտոսի նկարագրութիւն» անունով մի փառահեղ գիրք։ Այս գրքի նիւթերից սկսան օգտուիլ գիտնականք, որոնք յաճախ ճանապարհորդների խաբէական ու կեղծ օրինակներից էին աշխատում գտնել արձանագրութեանց բանալին։ Բայց բանալու գիւտն ևս եղաւ շնորհիւ Նապօլէօնի։ Նորա մի սպայ Բուսարը իւր աշխատանաց ժամանակ գտաւ չորս ոտնաչափ խորութեան մէջ բասալտեայ մի քառանկիւնի տախտակի կտոր, որի վրայ երեք լեզուով գրութիւն կար. Նախ մեհենագիր, յետոյ դեմո-

Digitized by Google

թեան (ղփտիերէն) և ապա յոյն լեզուով։ Յունարէնից իմացան՝ որ գրութիւնը վերաբերում է Պտղոմէոս Եպիփանոսին, որ ապրում էր 205 տ. Ք. ա։ Ֆրանսիացի Դը Սասի իսկոյն սկսաւ համեմատել յունարէնը դեմոթեանի հետ ու կարդալ, որոնելով զանազան նշանների թիւը, յաճախ կրկնուող նշանները նկատել և արձանագրութեան մտքի համեմատ ըմբռնել իւրաքանչիւր բառի իմաստը։ Այդպէս նա կարդաց 1802-ին երեք անուն՝ Պտղոմէոս, Աղէքսանդր և Վերենիկա։ Նորանից յետոյ անգլիացի գիտնական Իւնգը նորից քննեց և գտաւ, որ մի խումբ նշաններ համապատասխանում են յոյն գրութեան «և» բառին, մի խումբ ևս կրկնւում էր 30 անգամ, որի փոխարէն յունարէնում այդքան անգամ կրկընւում էր (Բազիլէուս) *արքայ* բառը։ Յետոյ գտաւ և երկու գրութեանց մէջ հաւասար թուով պատահող Պտղոմէոս և Եգիպտոս անունները։ Այդ գտնելուց յետոյ նա նման բառերը իրար տակ գրաւ, մնացեալն էլ իրար տակ դասաւորեց, սկսաւ շարունակել քննութիւնը և գտաւ այդպիսով 150 բառ։

Իւնգի թերացածը լրացրեց Շամպոլիոն կրտսերը (1818), որ նախապէս ուսումնասիրեց Եգիպտոսի վերաբերեալ բոլոր գրութիւնք և ղփտիերէնը։ Նա վերցրեց 1816-ին գտնուած մի յուշարձան, որի պատուանդանի վրայ յունարէն գրուած էր Պտղոմէոս և Կղէօպատրա։ Մեհենագրի մէջ էլ գտաւ այդոնց համեմատ ձևերն ու նկատեց, որ այնոնց մէջ կան այդ անուանց տառերի համեմատ նշաններ։ Ապա նա իմացաւ, որ այն նշանները հնչիւններ են, որոնք տառեր են և պէտք է հասկանալ իւրեանց անունն ունեցող բառի առաջին հընչիւնով։ Զորօր. Կլէօպատրա բառի առաջին տառը (Կ) գրուած է *ծունկ*, վասն զի ղփտիերէն «կելի» է և գըրւում է նոյն տառով։ Երկրորդ նշանն է *առիւծ*, վասն

Digitized by Google

զի ղփտիերէն «լաբօ» սկսւում է Լ տառով, ինչպէս այդ «լաբօ» նշանը կար և Պտղոմէոս բառի մէջ։ Այդպէս նա գտաւ և մնացած տառերի նշանները, ինչպէս *տերեւը* Ե է նշանակում, *հանգոյցը* Օ, *քառանկիւնին* Պ, *արծիւը* Ա, *ձեռքը* Տ, *բերանը* Ր և այլն։ Շամպօլիօնը ցոյց տուաւ, որ բոլոր արձանագրութիւնք այդպէս էին գրուած միմիայն այն տարբերութեամբ, որ իւրաքանչիւրի մէջ կարող է տառը նշանակուած լինել ուրիշ անուան սկզբի հնչիւնով։ Գիտնականներն սքանչացան այս գիւտի վրայ, սկսան հետզհետէ կարդալ այդ գրութիւնները, գերեզմաններում գտնուած պապիրոսի (պրտուի) յիշատակարանները և մինչև անգամ ինքեանք էլ նոյնպիսի տառերով արձանագրութիւններ էին քանդակում ապագայ սերնդի համար. այդպիսի մի գրութիւն արաւ եգիպտագէտ Լեպսիուսը 1842-ին, որ կարդաց յետոյ մի չինացի եգիպտագէտ և համարեց 2200—2300 տ. Ք. ա. գրուած։

Եգիպտական բազմաթիւ արձանագրութիւնք հաստատեցին Ս. Գրքի՝ յաճախ կասկածելի դարձրած՝ պատմութիւնք և ծանր հարուած տուին բացասական քննաբանութեամբ. բայց այդ դեռ բոլորը չէ։ Այդ գիւտերից յետոյ գիտնականք մեծապէս հետաքրքիր եղան Ասորեստանի սեպագրութեանց, որոնք աւելի ևս խորհրդաւոր էին։ Այդոնք սեպագրութիւն են կոչւում, վասն զի նշանները սեպերի նման են և վաղուց գրաւում էին ճանապարհորդների ուշադրութիւնը։ Այդ արձանագրութիւնք գրուած էին Պերսեպոլսում Դարիոս Հիստասպի ժամանակից, ինչպէս և զանազան տեղեր զանազան արքաների հրամանով։ Գրութիւնք երեք տեսակի էին իւրեանց ուղղութեամբ և երեք տեսակն էլ լինում է մի արձանագրութեան մէջ, հետևաբար զանազան թարգմանութիւններով, այսինքն զանազան հպատակների հա-

Digitized by Google

մար մի քանի լեզուով։ Ուստի և ենթադրեցին, որ արձանագրութեան առաջին գրութիւնը թագաւորի լեզուով է՝ այսինքն՝ հին պարսկերէն։ Բառերը բաժնւում են նշաններով և տառանման նշանները քառասնից չեն անցնում։ Բայց տեսնելով որ բառերից ոմանց մէջ շատ նըշաններ կան, իմացան՝ որ մի քանի նշաններ պէտք է մի տառ կազմեն։ Ձախ կողմից սկսուածները մի գծում էին, իսկ աջիցը թերատ. ուստի հասկացան՝ որ պէտք է ձախից կարդալ։ Կարդալու բանալին գտաւ գերման գիտնական Գրոտեֆելդը։ Նա գտաւ, որ արձանագրութեանց սկսուածքը լինում էր սովորաբար 3—4 բառ, որոնցից մէկը փոփոխւում էր, իսկ միւսները մնում էին, և նկատեց՝ որ այդ փոփոխուողը թագաւորի անունն էր, իսկ մնացածը արքայական տիտղոսներ։ Նա սկսաւ համեմատել արձանագրութեանց այդ բառերի երկարութիւնը Պարսից թագաւորաց անունների հետ և գտաւ Յունաց գրուածներում՝ որ Դարիոսը շատ արձաններ է կանգնեցրել, ուստի և այդ անունը դրաւ արձանագրութեանց մէջ պարսկական ձևով—Դարայեավուս։ Այդպէս նա գըտաւ վեց սեպագիր տառ և ապա այլ արձանագրութեանց մէջ գտաւ Արտաքսերքս, որի Ր տառը կար և Դարիոս անուան մէջ։ Յետոյ գտաւ և զենդերէն թագաւոր բառըն այդ անունների հետ միասին և հետզհետէ կազմեց կարդալու այբուբէնը։

Նորանից յետոյ սկսան ուսումնասիրել զենդերէնը և կարդալ այդ սեպագրութիւնները՝ Բիւրնուֆ, Լեասսեն և անգլիացի Հ. Ռոլինսոն, որոնք գրեթէ առանձին առանձին կարդացին զանազան գրութիւններ զենդերէնով ու սանսկրիտերէնով և այբուբէն կազմեցին։ Ասորեստանում և Բաբելոնում գիւտեր արին Բոտտա և Լայեարդը և նկատեցին, որ այդոնց լեզուն սեմիտական է։ Ասորեստանցիք ահագին գրականութիւն էին թո-

զել աղիւսների վրայ, որոնք գիտնականներին ընթերցանութեան մեծ նիւթ տուին։ Այդոնց մէջ նոքա գտան բառացուցակներ, նշանների բառարաններ և այլն, որոնց նախկին հեղինակներն էին Ակկադացիք։ Սոցա գրուածներից կային թարգմանուած Ասորեստանցոց լեզուով, ինչպէս և զոյգ լեզուով գրուած են Նինուէինը։ Ջորժ Սմիտը և այլք քանիցս ճանապարհորդեցին Նինուէ և կազմեցին Ասորեստանցոց բառարանը։ Գտնուած գրականութիւնը միմիայն մի փոքրիկ մասն է պեղումներից, բայց և այնպէս շատ աւելի է իւր քանակութեամբ քան Ս. Գիրքը, ըստ որում և անչափ նիւթ է տալիս Ս. Գրքի լեզուի ուսումնասիրութեան համար։ Այդ գրականութիւնը զարգացած է իւր քերականական ձևերով և այժմ գեղեցկապէս կարդացւում է, ինչպէս ուրիշ հին լեզուներով գրուածները։ Այդպիսի մի մեծ գրականութիւնն անշուշտ մեծ լոյս սփռեց Ս. Գրքի ուսումնասիրութեան և հաստատութեան վրայ։

Այս երկու գիւտերի վրայ աւելացան և Պաղեստինի գիւտերն, որոնք ջրեցին բացասական քննաբանների այն կարծիքը, որ իբր թէ Իսրայէլացոց գրականութիւնը բաբելական գերութեան ժամանակից է միայն։ Դոցա հարուած տուաւ նախ Սիլովամի արձանագրութիւնն, որ գտան Երուսաղէմում Կոյսաղբիւրից դէպի Սիլովամի լիճը տարուած ջրանցքի պատի վրայ հողի տակ։ Արձանագրութիւնը պատմում է թէ ինչպէս մշակները 732 սաժէն տարածութիւնը երկու կողմից ջրանցք են փորել և յանկարծ մէջ տեղում իրար հանդիպել։ Այդպիսի մի ջրանցք է յիշուած Դ. Թագ. Ի, 20. Բ. Մնաց. ԼԲ, 30 և ուրեմն այդ ժամանակ այդքան երկրաչափական հմտութիւն են ունեցել Եբրայեցիք։ Գրութեան բոլորակ ձևը ցոյց է տալիս, որ գրողները սովոր են եղել գրելու մագաղաթի վրայ։ Թագաւորի անուն չկայ

Digitized by Google

մէջը և ուրեմն գրողը մի բանուոր է եղել։ Եւ որով-հետև այդ մի կարդալու ու տեսնելու տեղ չէ, հետե-ւաբար մի զուարճութիւն է եղել գրողի համար այդ արձանագրելը. պարզ է, որ այդ ժամանակ գրագիտու-թիւնը շատ տարածուած է եղել ժողովրդի մէջ։ Ուրե-մըն գրագիտութիւնն այնքան ժողովրդական էր, որքան Եգիպտոսում և Ասորեստանում, որտեղ գրադարաններ կային, գրքեր էին տրւում ժողովրդին կարդալու, այլ և «դպիր» անունը մեծ պատիւ ունէր և գիտութիւնն ու արուեստը ծաղկած էր։ Եւ որ Հին Կտակարանի գը-րուածները գրուել են իւրեանց բովանդակութեան հա-մեմատ ժամանակներում, տարակուսել չի լինիլ և այդ ճշմարտութիւնը հաստատւում է այդ և նման արտա-քին փաստերով [1]։

Ը.

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Արդէն տեսանք, որ Ս. Գիրքը գրուած է հազա-րաւոր տարիների ընթացքում։ Իւրաքանչիւր գրուածք մեկնութեան կարօտ չէր և հասկանալի է եղել իւր գը-րութեան ժամանակի այն մարդկանց, որոնց համար

---

1) Թէ ինչպէս են փոխւում գիտնականների անհաստատ կարծիքները նորանոր գիւտերով, երևում է վերջերս գտնուած մի արձանագրութիւնից։ Մինչև այժմ սովոր էին Եգիպտոսից ելքը դնելու Ռամզէս Փարաւոնի ժամանակ, մինչդեռ նորերս գտնուած եգիպտական մի արձանագրութիւն ցոյց է տալիս, որ Իսրայէլացիք Ռամզէսի ժամանակ արդէն վաղուց հաստատա-բնակ էին Աւետեաց երկրում։ Ըստ որում ստուգւում է հին ե-կեղեցական պատմական տեղեկութիւնը, որ ելքը եղել է Թոթ-մէս Դ-ի ժամանակ, ԺԸ. հարստութեան վերջին։

գլխաւորապէս գրուել էր։ Եւ որովհետև հետևեալ ժամանակներում ժողովուրդը չէր կարող գիտենալ իւրեանց հարիւրաւոր ու հազարաւոր տարիներ առաջ ապրող ժողովրդի բոլոր հանգամանքները, դիրքը, կեանքը, կարիքներն ու պատրաստութիւնները, ուստի անհրաժեշտութիւն յառաջացաւ Ս. Գիրքը նոցա համար պարզ և հասկանալի դարձնելու։ Այդ անհրաժեշտութիւնից զարգացաւ այն գիտութիւնն, որ կոչւում է մեկնաբանութիւն։ Ուրեմն մեկնաբանութիւն է կոչւում այն գիտութիւնն, որ մեզ սովորեցնում է Ս. Գրքի իսկական իմաստն ըստ Հայաստանեայց ս. Եկեղեցու առաքելական ճշմարիտ վարդապետութեան հասկանալու և մեկնելու։

Բայց ինչ է Ս. Գրքի իսկական իմաստը։

Մի գրուածքի իմաստն է կոչւում այն միտքը, որ կամենում է յայտնել նոյն իսկ հեղինակը։ Ուրեմն և Ս. Գրքի իմաստ է կոչւում այն միտքն, որ Ս. Հոգին կամեցել է հեղինակների խօսքի միջոցով յայտնել մարդկանց։ Եւ քանի որ Ս. Հոգին յայտնել է իւր կամեցածը իւր ընտրեալ հաւատարիմ մարդկանց միջոցով, ուստի նոյն Ս. Հոգին հովանաւորել է այդ մարդկանց, որոնց ասածներն ևս արտայայտում են Ս. Հոգու ճշմարիտ յայտնութիւնը։ Ս. Գրքի այն միտքը, որ Ս. Հոգին կամեցել է մեզ յայտնել, կոչւում է իսկական իմաստ։ Հետևաբար իսկական իմաստը կարող է միմիայն մէկը լինել, ապա թէ ոչ՝ ամեն ոք ուրիշ կերպ կհասկանայ, ըստ իւր քմաց կբացատրէ և մարդիկ կմոլորուին։ Այս հակառակ է Ս. Հոգու կամքին և ուրեմն չի կարող լինել։

Սակայն խօսքերը միայն նշաններ են, որոնցով մենք արտայայտում ենք որոշ մտքեր. խօսքերն էլ կազմւում են բառերից, իսկ մի բառը շատ անգամ մի քանի իմաստ է ունենում, այնպէս որ նայելով թէ ինչ իմաս-

Digitized by Google

տով ենք այդ բառը գործածում, ըստ այնմ էլ խօսքի իմաստն է փոխւում։ Ուստի եթէ խօսքը հասկանում ենք իւր բառերի իսկական իմաստով—այդ կոչւում է բառացի իմաստ, իսկ եթէ խօսքը պատկերաւոր կերպով է ասուած և մի միտք ուրիշ առարկայի նմանութեամբ կամ այլաբանութեամբ է արտայայտուած, այդպիսի իմաստը կոչւում է *խորհրդաւոր*։ Պարզ պատմութիւնը մենք հասկանում ենք իւր իսկական իմաստով, մինչդեռ մարգարէութիւնը—խորհրդաւոր իմաստով։

Թէև Աստուծոյ յայտնութիւնը տրուել է մարդկանց սեփական լեզուով, այնով հանդերձ մարդկանց լեզուի բառերն ևս միշտ մի և նոյն իմաստով չեն գործածուել։ Մի բառ իւր ծագած ժամանակ կարող էր մի այնպիսի միտք արտայայտել, որի համար այն ստեղծուել է. մի ժամանակ անցնելուց յետոյ այդ բառը սկսւում է գործադրուել ուրիշ մտքով։ Կամ թէ մի բառ գործ է ածուել անշունչ առարկայի համար, իսկ հեղինակը գործ է ածում շնչաւորի համար. մի տեղ յիշարկւում է մի առարկայի համար, իսկ մի ուրիշ տեղ մի հոգևոր իմաստ արտայայտելու նպատակով։ Ահա ուրեմն մի բառ կարող է գործածուել բառացի իմաստով, սակայն իւր իսկական և կամ *փոխաբերական* մտքով։

Ասացինք, որ բացի բառացի իմաստից կայ և խորհրդաւոր իմաստ։ Խորհրդաւոր իմաստ այն ժամանակ է պատահում, երբ հեղինակը մի պատկերաւոր կերպով կամ նմանութեամբ դիւրըմբռնելի է դարձնում մեզ մի բարձր գաղափար կամ ճշմարտութիւն։ Այդպիսի խորհրդաւոր նմանութիւններ մի քանի տեսակ են, այն է՝ առակ, նշանակ, տեսիլ և նախատիպ։

Առակը Ս. Գրքի խորհրդաւոր խօսքերի այն տեսակն է, որ աշխարհի իրական կեանքից վերցրած մի դէպքի նմանութեամբ ներկայացնում է մեզ մի հոգևոր և կամ

մի բարձր ճշմարտութիւն։ Ուստի և լինում են առակներ, որոնք բուսական ու կենդանական աշխարհից են վերցրած, միայն թէ զարդարուած են մարդկային կեանքի երևոյթներով. զորօր. Եզեկիէլի առակը երկու արծիւների մասին (Եզեկ. ԺԷ, 1) կամ Յովնաթանի առակը ծառերի մասին (Դատ. Թ, 8) և այլն։ Լինում են և առակներ, որոնք մարդկային կեանքից վերցրած հնարաւոր իրողութիւններ են, ինչպէս օր. Քրիստոսի առակները։

Նշանակ կոչւում է Ս. Գրքում գործածուած այն տեսակ միջոցը, որով մի կրօնական միտք կամ վերացական գաղափար բացատրւում, արտայայտւում է մի նիւթական ձևով կամ մարդկային մի գործողութեամբ։ Այդպէս են Մովսէսի Հնգամատեանում կարգադրուած աստուածպաշտական գործողութեանց և իրերի մեծ մասը. այդպէս և Եսայեն ապագայ թշուառութիւնները մարդկանց յայտնելու համար տկլոր ու բոբիկ էր ման գալիս (Ես. Ի), իսկ Երեմիան բաբելական գերութիւնը մարգարէացաւ իւր վզի վրայ անուր ու կապանք կրելով (ԻԷ)։

Տեսիլը յայտնութեան այն խորհրդաւոր տեսակն է, որի բովանդակութիւնը իսկապէս կամ եղելութիւն չէ և կամ բնականապէս անկարելի է, միայն թէ Աստուծոյ տնօրինութեամբ երևում է մարդուն արթնութեան կամ քնի մէջ և նա Ս. Հոգու ազդեցութեան տակ հասկանում է ապագայի խորհուրդը։ Քնի մէջ տեսածը երազ է կոչւում. իսկ արթնութեան մէջ—անուրջ, սակայն տեսիլ են կոչւում այնոնք, որոնք բովանդակում են Աստուծոյ յայտնութեան վերաբերեալ խորհուրդ. (զորօր. Ես, Զ. Եզեկ. Ա, 1. և այլն)։

Վերջապէս *Նախատիպ* են կոչւում Ս. Գրքի այն խորհրդաւոր պատմական առարկաները կամ գործողու-

Digitized by Google

թիւններն, որոնք ծառայում են աստուածային տնօրինութեան մի կարևոր միտք կամ գաղափար արտայայտելու համար, այնպէս որ այդոնք իւրեանց ժամանակում բառացի իմաստով նշանակութիւն ունէին իւրեանց ժամանակակիցների համար, մինչդեռ խորհրդաւորապէս վերաբերում են ապագային։ Այսպիսի նախատիպներ շատ կան Հին Ուխտում, որոնց կատարումը Նոր Ուխտումն է եղել և որոնց մասին վկայում են ոչ միայն Ս. Հայրերն ու քրիստոնէական եկեղեցին, այլ և նոյն իսկ Ս. Գիրքը. գործ. Մատթ. ԺԲ, 40. Յովհ. Գ, 14—15. ԺԹ, 36. Բ. Օր. ԺԸ, 15. Սաղմ. ԾԹ, 4. Եբր. Ժ, 1։

Այս բոլոր խորհրդաւոր իմաստների վերաբերմամբ պէտք է ի նկատի ունենալ, որ յայտնութեան խորհուրդը բովանդակւում է միմիայն գլխաւոր մասերի մէջ և այնքան, որքան պէտք է ծառայէ Աստուծոյ ծանուցման նպատակին. ուստի մեկնելիս չի կարելի մեկնել նաև այն մանր մասերն, որոնք պատմուածի միմիայն զարդարանք ու պարագայքն են։ «Գիտեմք զի աստուածային գիրք ա՛յլ ընդ ա՛յլոյ չխօսին, այլ զամենայն պատմեն ճշմարտիւ. բայց է բան, որպէս ասի՝ նոյնպէս և իմանի. այլ պիտոյ է ծածկեալ մտաց բանին յայտնութիւն, որ հաւատովք ընդունին ի փրկութիւն անձանց» (Եղիշէ)։

Թ.

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Սուրբ Գրքի մեկնութեան եղանակ է կոչւում այն շաւիղն, որի կանոնների համաձայն վարուելով կարողանում ենք ըմբռնել նորա որևիցէ կերպով մեզ համար մութ մնացած տեղերի իսկական իմաստը։ Որպէս զի մեր հասկացած իմաստը ճշմարիտ լինի՝ մենք պէտք է մեկ-

Digitized by Google

նենք կամ նոյն իսկ Ս. Գրքով և կամ ուրիշ աղբիւրների օգնութեամբ. ուստի և մեկնութեան այդ երկու տեսակ եղանակներն էլ ունին իւրեանց սկզբունքները։

I Սուրբ Գրքի մեկնութիւնը Ս. Գրքով

Սուրբ Գրքով մեկնելու եղանակը պահանջում է հետևել նախ՝ խօսքի կարգին. երկրորդ՝ բերել զուգադիպութիւնները. երրորդ՝ ճշդել բառերի գործածական իմաստները և չորրորդ՝ մեկնել համաձայն նպատակին։

ա. Հետևելով խօսքի կարգին՝ մեկնիչը պէտք է բացատրէ մեկնութեան կարօտ տեղը հեղինակի նախընթաց կամ յետընթաց խօսքերի կապակցութեամբ և ոչ թէ բոլորովին առանձին և անկապ։ Այսպէս վարուելով՝ մեկնիչը հնար կունենայ հաւատարիմ մնալու հեղինակի խօսքի ընթացքին կամ ուղղութեան և կամայական ու խորթ բացատրութիւններ չի տայ ամբողջ գրուածքի անջատած մասին։ Այլ բան է ի հարկէ՝ եթէ մեկնում ենք իրար հետ կապ չունեցող ասացուածքներ, ինչպէս պատահում է զոյօր. Առակաց գրքի մէջ։ Եւ որպէս զի խօսքի կարգին ճշտութեամբ հետևենք, հարկ է լաւ վերլուծել ամբողջ գրուածքը, այն է՝ որոշել գրուածքի նպատակը, գլխաւոր նիւթը, այդ նիւթի մըշակման ու զարգացման ընթացքը, նկատել մասերը, այդ մասերի իրար հետ ունեցած յարաբերութիւնը և իւրաքանչիւրի կապը ընդհանուր նպատակի հետ և կամ տրամաբանական դիրքը՝ թէ արդեօք հիմունք է, ապացոյց է թէ եզրակացութիւն։ Այս ամենը որոշելուց ու հասկանալուց յետոյ միայն կարելի կլինի մեկնել Ս. Գրքի մի որևիցէ մութ տեղը կամ գրուածքը։

բ. Բերել զուգադիպութիւնները նշանակում է՝ համեմատել մեկնելի տեղին հետ Ս. Գրքի այն բոլոր խօսքերը, որոնք որևիցէ կերպով այնոր հետ նմանութիւն

Digitized by Google

կամ հակադրութիւն ունին։ Խօսքի կարգը մենք ի նկատի ենք ունենում միմիայն մեկնելի գրուածքի մէջ, երբ նախորդ ու յաջորդ խօսքերի մէջ տրամաբանական կապ կայ. մինչդեռ զուգադիպութիւններ գտնելու ու բերելու համար մենք դիմում ենք ոչ միայն մեկնելի գրուածքի հեղինակի միւս գրուածոց, այլ և ամբողջ Ս. Գրքին։ Այդպիսով մենք կարողանում ենք մութ տեղերը պարզել այնպիսի նման և յաճախ գրեթէ նոյնանման տեղերով, որտեղ հեղինակի միտքը առաւել պարզ ու որոշ է արտայայտուած մեզ համար։ Եւ նոյնութիւններ ու նմանութիւններ պատահում են Ս. Գրքում շատ յաճախ այն պատճառով, որ Ս. Գրքի հեղինակները գըրում են Աստուծոյ արքայութեան վերաբերեալ յայտնութիւնները և Ս. Հոգու զգայարանը լինելով՝ մի և նոյն ոգով են գրում ու որոշ կարգով։ Այդպէս չէր լինիլ, եթէ նոքա գրէին բոլորովին սոսկական ինքնուրոյնութեամբ և մարդկային նպատակների ծառայելով։ Ահա այս նշանաւոր իրողութիւնը մեզ միջոց է տալիս Ս. Գրքի զանազան տեղերը իրար հետ բաղդատելով հասկանալ՝ «զհոգևորս ընդ հոգևորս համեմատել» (Ա. Կոր. Բ, 13)։

Այս համեմատութիւնը լինում է *բառերի* մէջ, ինչպէս օր. Ա. Թագ. ԺԳ, 14 և Գործք ԺԳ, 22, Դաւիթը «այր ըստ սրտի իմում» է կոչուած Աստուծոյ համար և այդ պարզւում է Ա. Թագ. Բ, 35, որ ցոյց է տալիս թէ «ըստ սրտի իմում» նշանակում է Աստուծոյ կամքը կատարող։ Այդպէս և Գաղ. Զ, 17. Բ. Կոր. Դ, 10 և 11, Բ. Կոր. ԺԱ, 23—27։ Հարկաւ այդպիսի համեմատութիւնը պէտք է անել նոյն հեղինակի գրուածքում նոյն մտքով գործածուած բառերի մէջ կամ թէ ոչ՝ առաւել ժամանակակից հեղինակների գրուածներից և ոչ թէ զանազան ժամանակ ու զանազան մտքով գործածուած բառերը բաղդատել։

Digitized by Google

Բաղդատութիւնը լինում է նաև մտքերի մէջ, որպէս Բաղաամի պատմութեան նկատմամբ Թիւ. ԻԲ, ԻԵ ու Բ. Պետ. Բ, 15. Յուդայ. 11. Յայտ. Բ, 14. կամ թէ հաւատացեալներին հաղորդելու համար Մատթ. ԻԶ, 27 և Ա. Կոր. ԺԱ, 23—30։ Այսպէս և Գործք. Բ, 21 ասուած է՝ «Եւ եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն կեցցէ». այստեղից այնպէս է երևում թէ Տիրոջ անունը կանչողը կփրկուի. սակայն Մատթ. Է, 21 Տէրըն ասում է. «Ոչ ամենայն որ ասէ ցիս, Տէր, Տէր, մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է». այսինքն որ Տիրոջ անունը կանչել նշանակում է՝ հաւատալ նորա Աստուածութեան և կատարել նորա բոլոր ուսուցածը (տես. և Հռովմ. Ժ, 11—14. Ա. Կոր. Ա, 2)։

Սակայն Բաղդատութեան մէջ պէտք է զգուշանալ սխալներից. նախ պէտք է բառերի բաղդատութիւնը բնագրի վրայ կատարել, վասն զի յաճախ թարգմանութեան մէջ զուգատիպ բառեր են լինում, որոնք բնագրի մէջ տարբեր են։ Երկրորդ՝ միտքը բաղդատելիս պէտք է գիտենալ որ կարող է բառերի նմանութիւն լինել, իսկ մտքերի տարբերութիւն նոյն տեղում։ Երրորդ՝ յաճախ նման պատմութիւններ են պատահում, սակայն նոյնը չեն լինում։ Չորրորդ՝ մութը տեղի հետ պէտք է համեմատել պարզ տեղը և ոչ թէ դարձեալ մութ տեղը և ուրեմն չպէտք է բաւականանալ մի զուգատիպ տեղով. այլ բոլորը պէտք է բաղդատել. ապա թէ ոչ՝ իմաստը կարող է կամ շատ նեղ դուրս գալ կամ շատ լայն զորօր. Ես. ԾԳ, 4 բաղդատել պէտք է ոչ միայն Մատթ. Ը, 16, 17, այլ և Ա. Պետ. Բ, 24։ Հինգերորդ՝ ամեն մի մութ տեղ պէտք է բացատրել առաւելապէս նոյն հեղինակի գրուածքի զուգատիպութիւններով, զի ամենայն գրող ունի իւր առանձնայատկութիւնները։

Digitized by Google

Իսկ երբ այդ անկարելի է, այն ժամանակ միայն դիմել այլ հեղինակների օգնութեան, ինչպէս Հռովմ. Թ, 33 բացատրում ենք՝ Ա. Պետ. Բ, 7—9։

գ. Ճշդել բառերի գործածական իմաստը Ս. Գրքում նշանակում է վերցնել մի բառը կամ խօսքը այն մտքով, ինչ մտքով սովորաբար գործ է ածւում լեզուի և այս ու այն հեղինակի գրուածքի մէջ կամ ամբողջ Ս. Գրքում։ Այս անհրաժեշտ է, վասն զի յաճախ պատահում է, որ Ս. Գրքի հեղինակները մի և նոյն միտքը արտայայտելու համար գործ են ածում զանազան բառեր, կամ մի և նոյն բառով յայտնում են զանազան մտքեր և կամ շատ բառեր գործ են ածում ոչ սովորական իմաստով. զորօր. բան—լօգօս Յովհաննու Աւետարանում, ծնուել ջրից ու Հոգուց (Յովհ. Գ, 3) և այլն։ Ուստի մեկնիչը պէտք է տարբերէ բառերի կիրառութիւնը ամբողջ Ս. Գրքում աշխարհային սովորական գործածութիւնից, այլ և մի հեղինակի գրուածքինը ուրիշ հեղինակի կիրառութիւնից։ Այդոր համար նախ՝ պէտք է լաւ ճանաչել Ս. Գրքի հեղինակների լեզուն ու ոճը և ըստ այնմ ըմբռնել նոցա խօսքը. զորօր. Ես. ԿԶ, 19. «կղզի» բառով պէտք է ըստ մարգարէական ոճին հասկանալ հեթանոս երկրները։ Երկրորդ՝ խօսքի կարգից պէտք է իմանալ թէ մի բառ արդեօ՞ք Ս. Գրքի թէ սովորական մտքով է գործածուած. զորօր. շնորհք բառը Գործք. ԻԵ, 3 այլ միտք ունի և Եփես. Բ, 8 այլ։ Եւ երրորդ՝ պէտք է բերել մեկնելի բառի կամ խօսքի բոլոր զուգատիպութիւնները գլխաւորապէս նոյն գրուածքից և ընտրել այն բացատրութիւնը, որ համապատասխանում է մեկնաբանական կանոններին։

դ. Մեկնել համաձայն գրուածքի նպատակին նշանակում է զգուշանալ հակասութիւնից և մեկնել իւրաքանչիւր տեղն այնպէս, որ համաձայնուի թէ ամբողջ

Ս. Գրքի տնօրինական նպատակին և թէ նոյն իսկ մեկնելի գրուածքի և այնոր բոլոր մասերի նպատակին։ Բայց ի՞նչ է Ս. Գրքի նպատակը։ Ս. Գրքի նպատակ է կոչւում Աստուծոյ այն տնօրինութիւնը, որ նա կամեցել է տալ մարդկանց ճշմարիտ աստուածաճանաչութիւն, սովորեցնել նոցա թէ ի՞նչպէս պէտք է ապրեն ու կատարեն Իւր սուրբ կամքն, որպէս զի վայելեն Քրիստոսի փրկութիւնը, հաղորդակցութիւնն և ուրեմն առատ բարիքները։ Ահա այս նպատակով Աստուած տուել է մարդկանց իւր կամքի յայտնութիւնն, որ է Ս. Գիրքն, ինչպէս արդէն բացատրուեց նախընթացում։ Հարկաւ Ս. Գրքի բոլոր մասերն ու մանրամասները ուղղուած են դէպի այդ նպատակը։ Ս. Գրքի՛ միջի բոլոր պատմութիւններն ու դէպքերը պէտք է հասկանալ ամբողջ Ս. Գրքի աստուածային այդ նպատակի տեսակէտից։ Մեկնիչը պէտք է միշտ ի նկատի ունենայ հաստատապէս, որ Ս. Գրքի մէջ ամեն մի պարագայ, ամեն մի հանգամանօրէն պատմուածք միմիայն մի նպատակ ունի և ծառայում է միմիայն աստուածային մէկ տնօրինական նպատակին։ Ս. Գրքում պատահում են թէ պատմական, թէ բնագիտական, թէ աստղագիտական և թէ այլ գիտական տեղեկութիւններ, սակայն և այնպէս Ս. Գրքի հեղինակների նպատակը չէ այդ տեղեկութիւններ տալը, այլ Աստուծոյ յայտնութիւնը հասկանալի, պարզ ու շօշափելի դարձնելն է։ Այդպէս էլ թէև Ս. Գրքի իւրաքանչիւր գրուածքը ունի իւր առանձին, ժամանակի ու պատմութեան հետ կապ ունեցող նպատակը՝ որ նոյնպէս մեկնութեան միջոցին պէտք է ի նկատի ունենալ, այնով հանդերձ այդ նպատակն ևս ծառայում է Ս. Գրքի ընդհանուր նպատակին։ Այսպիսով թէ ընդհանուր և թէ ստորադաս նպատակը միջոց է տալիս մեզ ամփոփ կերպով ըմբռնել ամբողջ գրուածքը

Digitized by Google

և որքան էլ նա բազմակողմանի լինի՝ լուսաւորում է մեր մտքերը և մենք հեղինակին համամիտ կերպով հասկանում ենք նորա գրածը, և վերջապէս՝ երբ պատահում ենք մի և նոյն բովանդակութիւն ունեցող կտորների զանազան գրուածներում, կարողանում ենք բացատրել ու հասկանալ ըստ նոցա զանազան նպատակներին։ Ուրեմն պէտք է նախ ի նկատի ունենալ Ս. Գրքի ընդհանուր նպատակը և ապա զանազան կտորները, և մանաւանդ այն կտորները, որոնք մի ինքնուրոյն կրօնական բովանդակութիւն չունին, մեկնել ըստ այդ նպատակին։ Երկրորդ՝ ի նկատի ունենալ իւրաքանչիւր գըրուածքի նպատակը, որպէս զի պարզ լինի հեղինակի գրութեան ընդհանուր ուղղութիւնը և նորա գրուածքի զանազան մասերի ու կտորների մասնաւոր նպատակը, միութիւնն և ամփոփումը։

II Սուրբ Գրքի մեկնութիւնը արտաքին աղբիւրների օժանդակութեամբ։

Յաճախ պատահում է, որ Ս. Գրքի տուած բոլոր միջոցներից մենք չենք կարողանում բաւականապէս օգտուել և ըստ այնմ ըմբռնել մեզ համար մութ մնացած տեղերը. այդպիսի դէպքերում մենք ստիպւում ենք դիմել նաև արտաքին աղբիւրների։ Ս. Գրքի մեկնութեան օժանդակ արտաքին աղբիւրներն են. 1. բնագիրը. 2. Հին Թարգմանութիւնք. 3. Հին Հրէաների մեկնութիւնները. 4. քրիստոնէական հին եկեղեցու Ս. Հայրերի ու 5. Հայաստ. Ս. Եկեղեցու Ս. Հայրերի մեկնութիւնները և վերջապէս 6. զանազան գիտութեանց տեղեկութիւնները։

ա. Երբ մենք չենք հասկանում Ս. Գրքի մի խըրթին տեղը, մենք պէտք է դիմենք բնագրին՝ այսինքն

Digitized by Google

եբրայական Հին Կտակարանին ու յունարէն Նոր Կտակարանին. եթէ այդոնք ևս մեզ անհասկանալի են, այն ժամանակ դիմում ենք հին թարգմանութեանց, մեկնութեանց և վերջապէս նոր թարգմանութեանց։ Այսպէս վարուելով մենք ի վերջոյ գտնում ենք մի ոճ, որ առաւել լաւ հասկանալի է լինում մեր հասողութեան, քան թէ մեր կարդացածը։ Ի հարկէ այսպիսի դիմումների մէջ մենք պէտք է առաւելութիւն տանք ոչ թէ թարգմանութեանց, այլ բնագրին կամ եօթանասնից օրինակին։ Իսկ բնագրին դիմում ենք գլխաւորապէս այն ժամանակ, երբ թարգմանութեան մէջ տարբեր միտք է դուրս եկել բնագրի առանձնայատկութեան բառացի թարգմանուելուն պատճառով. զորօր. Մատթ. ԺԶ, 18 Պետրոս անունը թարգմանուած է, ուստի և դուրս է եկել «Դու ես վէմ», մինչդեռ բնագրում «Դու ես Պետրոս» է։

բ. Արտաքին աղբիւրների երկրորդ կարգին պատկանում են Հրէաների և քրիստոնէական եկեղեցու Ս. Հայրերի մեկնութիւնները։ Հրէաների մէջ եղել են երկիւղած գիտութիւններ, որոնք իւրեանց ամբողջ կեանքը նուիրել են Հին Կտակարանի ուսումնասիրութեան և թողել են բաւական աշխատութիւններ, որոնք առատ նիւթեր են պարունակում։ Այդ գիտունները երկու դպրոցի էին պատկանում — Աղեքսանդրեան և Պաղեստինեան։ Առաջնի գրողները յունարէն էին գրում, ուստի և մատչելի լինելով ուրիշ ազգերին աւելի յայտնի եղան, մանաւանդ որ առաւել դաւանաբանական հարցերով էին զբաղւում և փիլիսոփայական ուղղութիւն ունէին։ Այս դպրոցի ուղղութիւնն այն էր, որ ձգտում էր հաշտեցնել փիլիսոփայութիւնը հրէութեան հետ, բացատրելով Ս. Գիրքն այլաբանօրէն, ինչպէս կռապաշտները բացատրում էին իւրեանց առասպելնե-

Digitized by Google

քը։ Այդ գիտուններից առաջինն էր Արիստոբուլոսը, բայց մեծ հռչակ ստացաւ Փիլոնը, որի գրուածները կան և հայերէն։ Սա Պղատոնի գաղափարապաշտութեան էր հետևում, ամեն ինչ գաղափարական դարձնում և առհասարակ պատմականը ժխտում, որպէս օրոր. դրախտի գոյութիւնը, բաբելական լեզուախառնութիւնը, Սառայի վէճը Հագարի հետ, Մովսէսի օրէնքներից շատերը և այլն։ Իսկ Պաղեստինի դպրոցն այդքան միակողմանի չէր և պատմականին առաւել նշանակութիւն էր տալիս, և որի գիտունները ձգտում էին առաւելապէս զբաղուել Մովսէսի օրէնքներով և ամենայն հարցի համար այդտեղից պատասխան հանել. ուստի և ճանաչում էին մեկնութեան երկու եղանակ—բառացի և առխպողական։ Բառացի իմաստի մէջ տարբերում էին և բուն իմաստ ու փոխաբերական։ Սոքա թողել են Միդրաշ՝ այսինքն հետազօտութիւններ (Հընգամատեանի), ուրից մի մասը բուն մեկնութիւն էր (հալակա—շաւիղ) և վերծանութիւն (հագադա—գրական պատմութիւն) [1]։

Գիտունների գրուածոց մէջ նշանաւոր են նախ թարկումները, որոնք եբրայական բնագրի քաղդէական մեկնութիւններ են և թուով տասն են. դոցանից Յովնաթանինը պէտք է գրուած լինի քրիստոնէութեան սկզբներում, իսկ Օնքելոսինը Քրիստոսից 60 տարի առաջ։ Երկրորդ՝ Սոհարը, որ գրուել է Բ. դարում Սիմոն ռաբբու ձեռքով։ Այս գրուածքից է առնուած Հրէաների Կապալա կոչուած գաղտնի գիտութիւնը։ Սոհարի

---

[1]) Միջին դարերում ևս երևան եկան գլխաւորապէս Եւրոպայում Հրէաների մէջ նշանաւոր մեկնողներ, որպէս Ռաշի (1040—1105) Մովսէս Մայմոնիդ (1135—1204), Աբրահամ Բէն Մայեր (1092—1167), Դաւիթ Կիմխի (1160—1235), Մովսէս Նախմանիդ (1195—1270), Իսահակ Աբարբանել (1437—1508)

Digitized by Google

բովանդակութիւնը վերաբերում է Մեսիայի գալստեան ու թագաւորութեան համար եղած մարգարէութեանց, որից տեսնում ենք՝ որ Նոքա և Հին Կտակի մարգարէութիւնք առաքելոց պէս են հասկացել։ Բայց ամենից նշանաւորը Թալմուդն է, որ նշանակում է վարդապետութիւն և տիեզերական գրականութեան մէջ իւր տեսակում մի հատիկ առասպելախառն գրուածք է։

Թալմուդը երկու մաս ունի՝ Միշնա և Գեմարա։ Միշնան (կրկնումն) բովանդակում է այն աւանդական կանոնները, որոնք բերանացի աւանդած պէտք է լինի Մովսէսը իբր յաւելուած իւր գրաւոր օրէնքների վրայ և գրի են առնուել Քրիստոսից յետոյ Գ. դարում։ Իսկ այդոր մեկնութիւնը Գեմարան է (ուսմունք), որ պարունակում է նաև Հրէաների մինչև Ե. դարը ապրող գիտունների զանազան տեսութիւնք ու պատմութիւնները։ Գեմարան ևս նախ բերանացի աւանդութիւն է եղել և գրաւոր ամփոփուել է միայն Դ—Ե դարում։ Բայց այդ ևս երկու հեղինակութիւն է. մէկը գրուած է Պաղեստինի գիտունների աշխատութեամբ և Միշնայի հետ կոչւում է Երուսաղէմեան Թալմուդ մէկ հատոր, իսկ միւսը Բաբելոնի ռաբբիներինն է և դարձեալ Միշնայի հետ կոչւում է Բաբելոնեան Թալմուդ և 12 հատոր է, տասն անգամ մեծ առաջինից։ Թալմուդով մենք տեղեկութիւններ ենք ստանում այն գիտունների տեսութիւններից, որոնք ապրել են Բաբել. գերութիւնից մինչև Քրիստոսի Դ—Ե դարը։ Սոցանից մենք իմանում ենք զօրօր. դպրաց ու փարիսեցոց այն սխալ վարդապետութեանց ոգիխութիւնն, որոնց դէմ մաքառում էր Քրիստոս։

4. Քրիստոնէական հին եկեղեցու ս. Հայրերն իբրև առաքելոց և նոցա յաջորդաց աշակերտներ մեծ օգնական են մեկնութեանց համար, ինչպէս Եփրեմ Ասո-

րի (306—379), Յովհ. Ոսկեբերան (+407), Բարսեղ
Կեսարացի (329—379), Մեծն Աթանաս (296 - 372), Գրի-
գոր Նազեանց (328—389), Գրիգոր Նիւսացի (331—394),
Գրիգոր Սքանչելագործ (+270), Եպիփան Կիպրացի
(310), Կիւրեղ Աղեքսանդրացի (+444), Կիւրեղ Երու-
սաղէմի (Դ դար) և այլք, որոնց հայերէն թարգմանու-
թիւնք մասամբ տպագրուած են՝ թէև հազուագիւտ։ Այս
եկեղեցական հայրերը ըստ իւրեանց ուղղութեանց դպրոց-
ների էին բաժանւում։ Առաջին դարի հայրերը միմիայն
թղթեր ունին թողած, զորօր. Բառնաբաս, Իգնատիոս,
Բ. դարում Յուստին Նահատակ և այլք։ Սոքա առա-
ւելապէս զբաղւում էին Ս. Գրքով և ջատագովում ճըշ-
մարտութիւնը հակառակ գնոստիկ կոչուած հեթանո-
սամիտ գրողների, որպէս Մարկիոնի, Վաղենտինեանո-
սի, Հերակլէոնի և այլոց։ Այնուհետև փայլեցան որոշ
դպրոցներ. Նախ Աղեքսանդրեանը յայտնի էր այլաբա-
նական ուղղութեամբ, ըստ որում բառացի միտքն ըն-
դունելով հանդերձ, զարկ էր տալիս խորհրդաւոր ի-
մաստին։ Այս դպրոցի առաջին յայտնի ուսուցիչն է
Պանթենոսը և հռչակաւոր են մանաւանդ Կղեմէս Ա-
ղեքսանդրացին (+ 217) և Որիգինէսը (185—253),
որ հետևում էր բառացի, բարոյական և խորհրդաւոր
իմաստի և որի գրուածներից սակաւ են մեզ հասել։
Սակայն սորա այլաբանական մեկնութեան հակառակ
էին եկեղեցական հայրերը, ինչպէս Ս. Բարսեղ, Յով-
հան Ոսկեբերան և այլք։ Այդ դպրոցի դէմ կռւում էր
Անտիոքեան դպրոցը, հետամուտ լինելով բառացի ի-
մաստին, որի հետևողք էին Լուկիան (285—312),
Դիոդոր Տարսոնացի (+ 390), Եւսեբիոս Եմեսացի
(+ 360), Թէոդոր Մոպսուեստացի (+ 430), նորա
եղբայր Պոլիխրոնոս, և Ոսկեբերան, Թէոդորետ Կիւրա-
ցի (386—458) և Կիւրեղ Աղեքսանդրացի։ Սոցանից

Digitized by Google

շատերը ընկան նեստորականութեան մէջ, որպէս Թէոդորները, իսկ մեծ հռչակ ստացան ու յարգուեցան քրիստոնէական եկեղեցում Ոսկեբերանն ու Կիւրեղ Աղեքսանդրացին, որոնք ճշգութեամբ մեկնեցին Ս. Գիրքը և բազմաթիւ գրուածներ թողեցին, որոնք թարգմանուած կան հայերէն։

Մեկնութեան հաւատարիմ ճշգութիւն էին պահում և Մծբնի ու Եդեսիոյ դպրոցները, որոնց հռչակաւոր հետևողներն են Եփրեմ Խուրին, որ բազմաթիւ գրուածներ թողեց, և Յակովբ Սրճեցի։ Սոցա գրուածները կան հայերէն։ Ծայրայեղութիւնից փախուստ տալով՝ բառացի իմաստին հաւատարմութեամբ հետևում էր և ըստ Ս. Գրքի ոգուն չափաւոր խորհրդաւորութեամբ հետազօտում Կապադովկեան դպրոցը իւր յայտնի վարդապետներով, որպիսիք էին՝ Ս. Բարսեղ, Ս. Գրիգոր Նազեանց և Ս. Բարսեղի եղբայր Գրիգոր Նիւսացի։ Սոցա գրուածները ունինք հայերէն. և Հայաստանեայց Ս. Եկեղեցու հայրերը այս դպրոցին են պատկանում։ Հայոց Ս. Հայրերից մեկնութիւններ գրել են Ս. Լուսաւորչեան աւանդատու Ս. Սահակից ու Մեսրոպից սկսած գրեթէ բոլոր թարգմանիչներն ու նոցա աշակերտները և ապա մեր Եկեղեցու քարոզիչներից շատերը մինչև գլխաւորապէս Ս. Գրիգոր Տաթևացին ու իւր դպրոցը։ Բացի դոցանից մեզ համար հաստատուն աղբիւրներ են Հայաստ. Ս. Եկեղեցու վարդապետութիւնը, իւր ժողովոց վճիռները, հաւատքի ամփոփումները, շարականք ու երգեր և այլ գրուածներ։ Դոքա բոլորն էլ մեզ համար հեղինակութիւն են, զի գրուել են առաքելոց ժամանակակից կամ աշակերտած, այլ և սուրբ ու երկիւղած մարդկանց միջոցով, որոնք վէմ են դարձել Հայոց Եկեղեցու հիմնադրութեան։ Դոցա մէջ նշանաւոր են և վերծանողները, որոնք բաց

Digitized by Google

կէին անում ժողովրդի առաջ մեկնելի յօդուածի բոլոր հանգամանքները, նկարագրում էին բոլոր եղելութիւնք և գեղեցիկ կերպով պատմում Ս. Գրքի պատմածը․ այդպէս էին Մամբրէ Վերծանող, Եղիշէ և այլք։ Կապադովկեան դպրոցին պատկանելով հանդերձ, մեր Ս. Հայրերից շատերը ուսումնասիրել են նաև վերոյիշեալ ուսումնավայրերը, մանաւանդ Աղեքսանդրիայի վերաբանութեան (անագօգիա)՝ այսինքն՝ բարձր աստուածաբանութեան դպրոցը։ Նոքա հետևում էին այն հայրերի գրուածներին, որոնց անունները յիշեցինք այս հատուածի սկզբում։ (Տես. Քրիստոնէականս. գլ. ԼԷ)։

դ. Վերջապէս արտաքին աղբիւրների կարգումն են զանազան գիտութիւնք, որոնց մէջ հետազօտուած ու ստուգուած փաստերն ու ճշմարիտ եզրակացութիւնք կարող են օժանդակ լինել մեկնիչին։ Այդ օժանդակիչ մասերը վերաբերում են գլխաւորապէս պատմութեան փիլիսոփայութեան և բնական գիտութեանց ճիւղերին, որոնց հաստատուած ճշմարտութիւնները նպաստում են Ս. Գրքի զանազան տեղերի գիտնական բացատրութեանց։ Երբեմն այդ համեմատութեան մէջ յառաջանում են հակասութիւնք, սակայն լաւ խելամուտ լինելով բոլոր պարագաներին, տեսնում ենք որ այդ ամենը առերևոյթ են և ճշմարիտ հայեցակէտը պարզում է բոլոր խրթնութիւնները։ Ուստի և մի առերևոյթ հակասութիւն տեսած միջոցին իրաւունք չունինք թեթևամտութեամբ վերաբերուելու դէպի Ս. Գիրքը և թերահաւատելու, վասն զի յաճախ և շատ յաճախ պատահել է, որ գիտութեան որևիցէ հակասութիւնը ի վերջոյ հաստատուն հետազօտութեամբ փարատուել է։ Եւ ճշմարիտ, չի կարող մի և նոյն ամենակարող Աստուծոյ ստեղծած բնութիւնը հակասել նորա տնօրինութեամբ եղած յայտնութեան։ Մեր անկատարելու-

թիւնն է միայն պատճառ, որ երբեմն չենք կարողանում այդ հակասութիւնները վերացնել կամ հակասութիւն չեղած տեղը հակասութիւն ենք տեսնում։ Ս. Գիրքը լաւ հասկանալու համար հարկաւոր է նախ ճշմարիտ հաւատք, որից բղխած երկիւղածութիւնն ու ճշմարտասիրութեան տրամադրութիւնը միայն կարող է մարդուս միջոց տալ մտաւորապէս լուսաւորուելու և հաւատքի վերաբերեալ աստուածային յայտնութեան հասու լինելու։ Եթէ որևիցէ մարդկային գիրք կամ գիտութիւն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ուղիղ հայեցակէտ, սէր ու տրամադրութիւն դէպի այդ, որքան ևս առաւել այդ կպահանջուի աստուածային յայտնութիւնն ըմբռնելու համար։ Մարմնապէս տրամադրուած մարդը չի կարող աստուածայինը հասկանալ. «Քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա. և ոչ կարէ գիտել՝ քանզի հոգեպէս քննի» (Ա. Կոր. Բ, 14)։ Աստուծոյ ճշմարտութիւնները մեծամտութեամբ չեն ուսումնասիրւում, այլ խոնարհութեամբ ու մտերմութեամբ (Ղուկ. Ժ, 21)։ Աստուած պէտք է ըստ մեր աղօթքին օգնէ մեզ, որպէս զի մենք Ս. Գրքին լաւ հասու լինինք. Նա պէտք է բանայ մեր միտքը, որ հասկանանք Իւր յայտնութիւնը (Ղուկ. ԻԴ, 45)։

Ժ.

Ի՞ՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԿԱՐԴԱԼ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Քանի որ Ս. Գիրքը Աստուծոյ խօսքն է, որ տալիս է մեզ աստուածային ճշմարտութիւններ, հասկանալի է՝ որ մենք էլ որոշ երկիւղածութեամբ պէտք է վերաբերուենք դէպի նորա բովանդակութիւնը։ Մենք պէտք է՝

Digitized by Google

Նախ՝ Ս. Գրքի իւրաքանչիւր խօսքի ճշմարտութեան հաւատանք ամենայն սրտով և ընդունենք իբրև Աստուծոյ և ոչ իբրև մարդկային խօսք։ Այսպէս Պօղոս առաքեալն ասում է. «Գոհանամք զԱստուծոյ անպակաս, զի առեալ զլուր բանին Աստուծոյ առ ի մէնջ ընկալարուք, ոչ իբրև զբան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբան Աստուծոյ, որ և յաջողեալ իսկ է ի ձեզ հաւատացեալդ» (Ա. Թեսաղ. Բ, 13)։

Երկրորդ՝ մենք պարտաւոր ենք ուսանել Ս. Գիրքը, նորա ասածները մեր վերաբերմամբ գործադրել, զգուշանալ մատնացոյց արած մեղքերից ու հետևել նորա պատուիրաններին ամենայն հաւատարմութեամբ և ամեն դէպքում գիտակից լինել, որ նորա իւրաքանչիւր խօսքն իսկապէս մեր անձին է վերաբերում։ Հարկաւ՝ կան պատուէրներ ու կարգեր, որոնք որոշ ժամանակի ու հանգամանքի են վերաբերում, որպէս օրինակ Հին Կտակարանի ծէսերի և անցողական պարագաների մէջ ժամանակաւոր կարգադրութիւնները. սակայն այդոնք ևս կարող են մտածողին օգտակար օրինակներ լինել ուրիշ գործադրութեանց համար և ուրիշ յարաբերութեանց մէջ։ «Ամենայն գիրք աստուածաշունչք և օգտակարք ի վարդապետութիւն են և ի յանդիմանութիւն և յուղղութիւն և ի խրատ արդարութեան. Զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ յամենայն գործս բարութեան հաստատեալ» (Բ. Տիմ. Գ, 16)։

Երրորդ՝ տեսանք որ Ս. Գիրքը գրուած է Ս. Հոգով, ուրեմն և Ս. Գիրքը նա միայն հաւատարմութեամբ կհասկանայ, ով որ գործով ու տրամադրութեամբ ձգտում է Ս. Հոգու տաճար դառնալ, ով որ իւր հոգու տեսողութիւնն ու լսողութիւնը բաց է պահում Ս. Հոգու ձայնը լսելու համար և աշխատում է ուշիմութեամբ աշակերտել Ս. Հոգուն։ Իսկ այս նպատակը իրագործե-

Digitized by Google

լու համար գիտենք որ մեկ ճանապարհ ունինք, այն է՝ սրբութեամբ և աղօթքով միշտ դիմել դէպի Աստուած և Նորա լուսաւորութիւնը խնդրել, ինչպէս աղօթում է սաղմոսերգուն. «Զարթո՛ զաչս իմ, և նայեցայց ի սքանչելիս օրինաց քոց» (Սաղմ. ՃԺԸ, 18. Հմմտ. Ղուկ. ԻԴ, 45)։

Չորրորդ՝ պէտք է նուիրուած սրտով և ջանքով մըտածենք կարդացածի վրայ. եթէ իսկոյն չենք հասկանում, ջանանք գտնել իսկական իմաստը մեր ուսման ու մեր Եկեղեցու ս. Հայրերի օգնութեամբ, խոր թափանցենք իւրաքանչիւր մտքի մէջ, հասկանանք ու իւրացնենք խոհեմութեամբ ու հիմնաւորապէս։ Այդպէս և երբ Փիլիպպոս սարկաւագը հարցրեց ընթերցասէր Եթովպացուն. «գիտեցես արդեօք զոր ընթեռնուդ». նա պատասխանեց «Զիա՞րդ կարիցեմ՝ եթէ ոչ ոք առաջնորդեսցէ ինձ». (Գործք. Ը, 31)։

Եւ հինգերորդ՝ այս ամենը մենք կարող կլինենք կատարել այն ժամանակ, երբ հետևենք Աստուծոյ իւրաքանչիւր պատուիրանին և բռնենք անշեղապէս այն ճանապարհն, որ մեր առաջ բաց է անում Ս. Գիրքը։ Մեր կեանքի նշանաբանը պէտք է լինի Յակոբոս առաքեալի հակիրճ ու բազմիմաստ խօսքը՝ «լինիջիք առնելիք Բանին, և մի լսելիք միայն համարեսջիք զանձինս». (Յակ. Ա, 22)։

ԺԱ.

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

«Բազում մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք. ի վախճան աւուրցս այսոցիկ՝ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն».

Digitized by Google

զօր եդ ժառանգ ամենայնի, որով և զյաւիտեանսն արար» (Եբր. Ա, 1)։ Ըստ որում Ս. Գիրքը մէկ միութիւն է, սակայն բազմակողմանի բովանդակութիւն ունի։ Աստուծոյ արքայութիւնն ոչ թէ միանգամից հաստատուեց մարդկութեան մէջ, այլ հետզհետէ աստիճաններով։ Այդ աստիճանները երկու են՝ Նախապատրաստութիւն և կատարումն.

I. Աստուած ստեղծեց և նշանակեց մարդուն, որ նա արժանի մնայ ու վայելէ Աստուծոյ արքայութեան շնորհները, սակայն նա ընկաւ մեղքի մէջ և զրկուեց այդ շնորհներից։ Ուստի Աստուած գթալով նորա վրայ ուխտ կամ դաշն դրաւ և մի իմաստուն ու երկար նախապատրաստութիւն տնօրինեց վերստին նորան այդ արքայութեան արժանացնելու համար։ Այդ ուխտադրական նախապատրաստութիւնն է որ պատմում է մեզ Հին Կտակարանը։ Կտակարան, որ յունարէն *տիաթեքէ* (պայման, դաշն, ուխտ, կտակ) և եբրայեցերէն *բերիթ* բառի թարգմանութիւնն է, նշանակում է ուխտագրութիւն (Գործք. Գ, 25. Է, 8. Եբր. Թ, 4, 15. 16. Բ. Կոր. Գ. 14). իսկ Հին Կտակարան է կոչւում այն նախապատրաստական ուխտի գրուածքը, որ դրաւ Աստուած՝ պատուէրներ ու խոստումներ տալով մարդուն երկնաւոր արքայութեան մէջ մտնելու համար (Եբր. Թ, 16. Բ. Կոր. Գ, 14)։

II. Ժամանակը լրացաւ, նախապատրաստութիւնը վերջացաւ. Աստուած կատարեց իւր ուխտի միջնակէտն ու առանցքը կազմող խոստումը։ Նա ուղարկեց իւր Միածին Որդուն, որով հիմնադրեց իւր արքայութիւնն այս աշխարհումս, կազմակերպեց իւր եկեղեցին ու տանում է դէպի կատարումն։ Աստուծոյ Որդու բոլոր արածները և Իւր ճշմարիտ եկեղեցին հաստատուն պահելու համար տուած պատուէրների, այլ և առաքեալների ձեռ-

Digitized by Google

քով այդ ամենի իրագործման մասին պատմում է Նոր Կտակարանը։ Այս Կտակարանը Նոր է կոչւում, զի պատմում է այն Նոր Ուխտի մասին, որ ուխտելով գրաւ Աստուած իւր Որդու Հաւատացելոց հետ Նորա արքայութեան շնորհաց ժառանգակից անելու համար. (Մատթ. ԻԶ, 28. Մարկ. ԺԴ, 24. Ղուկ. ԻԲ, 20. Ա. Կոր. ԺԱ, 25. Բ. Կոր. Գ, 6. Եբր. Թ, 15)։

Ուրեմն Հին Կտակարանը նախապատրաստութիւն է. իսկ Նորը կատարումն, ըստ որում և Քրիստոս ասում է. «Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ։ Ամէն ասեմ ձեզ. Մինչև անցցեն երկինք և երկիր, յովտ մի, որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն և ի մարգարէից, մինչև ամենայն եղիցի» (Մատթ. Ե, 17)։ Հնի բովանդակութեան առանցքը Քրիստոսի գալստեան խոստումն է. Նորինը՝ Քրիստոսի գալստեան աւետիքը։ Ուստի և Պօղոս առաքեալը «ստուերք» է անուանում Հին Կտակարանի օրէնքները, իսկ Նոր Կտակարանը «մարմին» (մարմնացումն ստուերագծի), ճիշդ այնպէս, ինչպէս արշալոյսը արեգակի նախաստուերն է։

Բայց մենք գիտենք, որ ինչպէս մի ժողովուրդ է նախապատրաստւում, այնպէս էլ նախապատրաստութեան կարօտ է և ամեն մի մարդ։ Ճշմարիտ է, մենք արդէն քրիստոնեայ ենք, վայելում ենք Քրիստոսի շնորհները և նախապատրաստութեան կարօտ չենք, սակայն որպէս զի լաւ հասկանանք Քրիստոսի փրկագործութիւնը, լաւ ճանաչենք Նորա գալստեան բոլոր հանգամանքները և հաւատքով ու սրտով իւրացնենք Նորա բոլոր շնորհները, պէտք է մեր հոգով անցնենք Իսրայէլացոց կամ ընտրեալ ժողովրդի պատմական ամբողջ կեանքը և ընտրեալ մարդ դառնանք Քրիստոսի որդեգիրը լինելու համար։ Եթէ այս բովի ճանապարհով ու գիտակցաբար

հաստատնանք Աստուծոյ արքայութեան լուսամիտ որդին լինելու համար, այն ժամանակ մենք կզգուշանանք վերստին հին անկեալ վիճակի մէջ ընկնելուց։ Ուրեմն Հին Կտակարանը նախապատրաստութիւն է նաև մեզ համար, որ մեր առաջ բնականապէս ճանապարհ է բաց անում և տանում է դէպի Աստուծոյ Նոր Կտակարանի շնորհաց ժառանգութիւնը։

ԺԲ.

ԿԱՆՈՆՆ ՈՒ ԻՒՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կանոն են կոչւում Ս. Գրքի այն գրուածներն, որոնք բովանդակելով իւրեանց մէջ աստուածային յայտնութիւնը, մի հաստատուն ճանապարհով առաջնորդում են մեզ դէպի ճշմարիտ հաւատք, առաքինի կեանք ու փրկութիւն։ Կանոն բառն է գործածուած այս մտքի համար, զի *կանոն* նշանակում է չափ, ձողաչափ, ուրեմն մեր հոգևորը ճշգապէս որոշող ժողովածու։

Երբայեցոց մէջ կանոնը յայտնի էր երեք գլխաւոր մասերով, որոնք են՝ օրէնք (Թօրա), մարգարէք (Նըբիիմ) և սրբագիրք (քըթուբիմ). հմմտ. Ղուկ. ԻԴ, 44. Մատթ. Է, 12. Ղուկ. ԺԶ, 16. Գործք. ԺԳ, 15. Հռ. Գ, 21. Գաղ. Զ, 16. Բ. Կոր. Ժ, 13—16)։ Այդ մասերը կազմում էին մի գիրք, ուստի և կոչւում է ուղղակի *գիրք* (միկրա) կամ ընթերցանելիք։ Հրէաները այժմ կոչւում են նաև «Թենախ»—երեք մասերի անուանց սկզբնատառերի համեմատ. կոչւում են նոյնպէս «գիրք քսան և երկուց», վասն զի բոլոր գրքերի թիւն ըստ իւրեանց տառերին քսան և երկու հատ էին համարում։ Երբայական այդ անունները մեր *կանոն* բառի նոյնանիշ են, ըստ որում և Ս. Գրքի ժողովածուն այդպէս ամբողջաց-

Digitized by Google

քին է վերջոյ Եզրն ու Նեեմին մօտ 450 տարի Ք. ա., որ և մի տեղ մի յիշւում են Փիլոն Եբրայեցին ու Յովսեպոս Փլաւիոս։

Հին Կտակարանի գրքերը եբրայական բնագրում դասաւորուած են այսպէս. Նախ Հնգամատեանը, յետոյ Յեսուի ու Դատաւորաց գրքերը իբրև մէկ գիրք, Թագաւորաց Ա. ու Բ. գրքերը կոչւում են Սամուէլի և համարւում են մէկ գիրք, Թագաւորաց Գ. ու Դ. իբրև մէկ գիրք, ապա Եսայի, Երեմիայ, Եզեկիէլ, 12 մանր մարգարէք իբր մէկ գիրք, Սաղմոս, Առակ և Յովբ, յետոյ Երգերգոց, Հռութ, Ողբ Երեմիայ, Ժողովող ու Եսթեր, որոնք նոյնպէս Հնգամատեան են կոչւում (մեգիլլոթ), վերջում Դանիէլ, Եզր, Նեեմի ու Մնացորդաց երկեակ գիրքը։ Այնուհետև եօթանասնից, ինչպէս և մեր թարգմանութեան մէջ մտել են և ուրիշ գրքեր, որոնք ժամանակի ընթացքում գրուել և աւելացել են. այդոնք են՝ եօթը հատ. Բարուք, Տովբիթ, Յուդիթ, Իմաստութիւն Սողոմոնի և Սիրաքայ և Ա. ու Բ. Մակաբայեցոց։

Քրիստոնէական եկեղեցին ընդունելով եբրայական բնագրի ժողովածուն և եօթանասնից թարգմանութիւնը, սկսաւ հետամուտ լինել, որ Ս. Գրքի մէջ ուրիշ օտար գրուածներ չլինին մտած։ Այդպէս Սարդիայի եպիսկոպոս Մելիտոնը (+177) ճանապարհորդեց Պաղեստին և Ասորիք Հին Կտակի կազմութեանը լաւ ծանօթանալու համար։ Գ. դարումն էլ Որիգինէսն է այդ մասին խօսում։ Ապա Դ. դարում այդ հարցով զբաղուեցան ս. Կիւրեղ Երուսաղէմացին, ս. Աթանաս Աղեքսանդրացին, Գրիգոր Աստուածաբանն և այլք։ Բիւզանդական եկեղեցում այդ մասին առաջին անգամ որոշումն կայացրեց Լաւոդիկէի ժողովը 364 թուին։ Իսկ արևմըտեան եկեղեցում թէև Հիրոնիմոսը (+420) տարականոն էր համարում մի քանի գրուածներ, նորանից յե-

Digitized by Google

տոյ Օգոստինոսը (+430) կանոնական համարեց անկանոն գրուածները և այդ հաստատուեց Դ. դարի վերջում (Հիպպոնեան ժողովով 393) և Ե. դարի սկզբում Կարթագինէի երրորդ (397) և հինգերորդ (419) ժողովներով։ Այդ պնդեցին և յետոյ Հռոմի քահանայապետները։ Այնուհետև վերջնականապէս Տրիդենտեան ժողովը 1546-ին որոշեց, որ կանոնական համարուին Հրէաների բնագրում 22 գիրք կոչուածները և երկրորդականոն կոչուին այնոնք, որոնք պահուած են միայն Եօթանասնից թարգմանութեան մէջ, որոնցից բացառութիւն են կազմում Մանասէի աղօթքը, Եզրի Գ. ու Դ. գրքերը։ Իսկ Մակաբայեցոց Գ. գիրքը բոլորովին հանուեց Ս. Գրքից։ Առհասարակ քրիստոնէական եկեղեցու հայրերի վէճերը ցոյց են տալիս, որ Ս. Գրքի կանոնը մեծ զգուշութեամբ ու քննութեամբ է ընդունուել (Հմմտ. Եւսեբի, Պատմ. եկեղ. VI, ԻԵ)։

Արդ Ս. Գրքի գրուածները նկատւում են նախականոն, երկրորդականոն, պարականոն ու տարականոն։ Կանոնական են համարում այն գրուածները, որոնք քրիստոնէական եկեղեցում ամեն ժամանակ ընդունուել են իբրև ճշմարիտ աստուածաշունչ գրքեր։ Երկրորդականոն են կոչւում, որոնք այժմ կանոնականի մէջ են, միայն տեղ տեղ կամ երբեմն երբեմն չեն համարել կանոնականաց թւում։ Պարականոն— որոնք թէև կանոնից դուրս են մնացել, սակայն կարդալու համար օգտակար են ճանաչուել և արժանի, իսկ տարականոն — որոնք թէև ամենահները գրուել են Բ. դար Ք. ա. և երկու դար Ք. յ., բայց և այնպէս կանոնից դուրս են և մերժելի ու խոտելի են։

Հին Կտակարանից կանոնական են ի հարկէ Հրէաների մէջ ժողովուած 39 գրքերը, որոնք և սկզբնապէս թարգմանուեցան հայերէնի (քսան և երկու յայտնիուն

Խորենացի, Պատմ. III, ԾԳ)։ Այսոնք գրեթէ բոլորը յի-շուած են Սիոն կաթուղիկոսի կանոնաց մէջ իբրև «պաշ-տելիք» և ուրեմն Հայոց Եկեղեցում ընթերցանելիք։

Երկրորդականոնաց կ՚ուժն են համարուած եօթա-նասնից ու մեր թարգմանութիւնից հինգ գրքեր, որոնք եբրայերէն չկան. Բարուք, Յուդիթ, Իմաստութիւն Սա-ղոմոնի, Ա. ու Բ. Մակաբայեցոց, որոնցից ունինք և ընթերցուածներ։ Այսոնք Եզրի կանոնից դուրս են մնա-ցել, սակայն ընդունելի են հին քրիստոնէական եկեղե-ցում, թէև ոչ ամեն տեղ։

Պարականոն են՝ Տովբիթ, Իմաստութիւն Սիրաքայ, Գ. Մակաբ. և Ա. Եզր։ Վերջին այս երկու կարգի գըր-քերը ըստ Փլաւիոսի հաւասար պատիւ չունէին միւս-ների հետ Հրէաների մէջ, վասն զի գրուել են 400 ա. Ք. ա., երբ մարգարէք չկային, որ այդոնց կանոնակա-նութիւնը հաստատէին։

Նոր Կտակարանում կանոնական են՝ չորս աւետա-րանները, Գործք Առաքելոց և մնացած բոլոր թղթերը, բացի եօթը գրուածներից, որոնք երկրորդականոն են՝ այն է՝ Թուղթ Պօղոսի առ Եբրայեցիսն, Թուղթ Յա-կովբու, Պետրոսի Բ, Յովհաննու Բ ու Գ թղթերը և Յայտնութիւնը։ Իսկ պարականոն են՝ Հանգիստ Յով-հաննու Աւետարանչի, Գ. Թուղթ առ Կորնթացիս և Թուղթ Կորնթացոց առ Պօղոս։

Վերջապէս պարականոն են Հին Կտակարանից՝ Կտակ երկոտասան նահապետաց, Պատմութիւն Յովսէ-փայ և Ասանէթին, Մահ վեշտասան մարգարէից և այլն, որոնք թուով համնում են 115։ Նոյնպէս և Նոր Կտակարանից՝ Մանկութիւն Յիսուսի, Թովմայի, Բար-դուղիմէոսի, Մատաթեայ, Նիկոդիմոսի և այլ աւետա-րանները, Թուղթ Թադէոսի, և այլն, թուով 99։ Կար-դալով պարականոն գրուածները և տեսնելով դոցնոց

ծիծաղելի բովանդակութիւնը, պարզապէս նկատում ենք որ կանոնական գրքերը Աստուծուց են, իսկ այդոնք մարդկանց առասպելներ, ինչպէս ասում է բազմահմուտ գիտնական Տիշենդորֆը։

Հայաստանեայց ս. Եկեղեցում առհասարակ կանոնականի մօտիկ պատիւ ունին միմիայն այն գրքերն [1]), որոնք եկեղեցում կարդացւում են, իսկ մնացեալները, որոնք Ս. Գրքի ժողովածուի մէջ կան, պարականոն են [2]), մինչդեռ անդ չեղածները՝ տարականոն։ Ս. Կիւրեղ Երուսաղէմացին այս նկատմամբ մեզ համար շատ յարմարապէս ասում է. «Յայսցանէ զքսան երկուս գիրս ընթերցիր. այլ ի ծածուկ յայտնութիւնսն ամենևին մի մերձեսցիս, զի զայս կանխիջիր ընթեռնուլ, զոր մանա-

---

[1]) Ս. Գրքի հեղինակները գործ են ածել և ուրիշ գրքեր, որոնք առանձին մեր ձեռքը չեն հասել. 1. Գիր Ուխտին (Ելք. ԻԳ, 7). 2. Գիր պատերազմացն Տեառն (Թիւ. ԻԱ, 14). 3. Գիրք ուղղութեան (Յես. Ժ, 13. Բ. Թագ. Ա, 18). 4. Սամուէլի, Նաթանի, Գադի, Սիմէի, Ադդայի, Աքիայի, Յովէլի տարեգրութիւնք (Ա. Մնաց. ԻԹ, 29. Բ. Մնաց. Թ, 29. ԺԲ, 15. ԺԳ, 22. Ի, 34). 5. Գիրք աւուրց բանից թագաւորացն. 6. Մնացեալ բանք Ոզիայ. (Բ. Մնաց. ԻԶ, 22). 7. Սողոմոնի գրութիւնները. (Գ. Թագ. Դ, 32—33). 8. Մատեան Երեմիայ (Բ. Մակ. Բ, 1). 9. Մատեան քահանայից (Ա. Մակ. ԺԶ, 24). 10. Հինգ գլուխ դպրութեան Յասոնեայ Կիւրենացւոյ (Բ. Մակ. Բ, 24) և այլն։

[2]) Կտորներ ևս կան երկրորդականոն. 1. Աղօթք Մանասէի (Բ. Մնաց. վերջում). 2. Օրհնութիւնք երից մանկանց և պատմութիւնք Շուշանայ և վիշապին (Դան. Գ, 24—91. ԺԳ, ԺԴ). 3. Թուղթ Բարուքայ. 4. Եսթեր Ժ, 4—ԺԶ։ Իսկ Նոր Կտակից՝ Մարկ. ԺԶ, 9—20. ԺԱ, 26. Ղուկ. ԻԲ, 43. 44. Յովհ. Է, 53—Ը, 1—11. Մատթ. ԻԳ, 14. Ա. Յովհ. Ե, 7։ Յովհաննու յայտնութիւնն ևս բոլորովին չէ կարդացւում Հայոց Եկեղեցում և Ե. դարի թարգմանութիւն չէ, այլ ԺԲ դարում Ներսէս Լամբրոնացին թարգմանեց։

Digitized by Google

ւանդ համարձակութեամբ յամենայն եկեղեցիս կարդամք։ Կարի իմաստնագոյնք և լաւագոյնք էին առաքեալքն և առաջին եպիսկոպոսքն՝ որք գլուխք եկեղեցեացն էին, որք զայս հրամանս ետուն։ Արդ դու որդի ես եկեղեցւոյն, մի զօրէնս եղծաներ. և զհնոց կտակարանացն որպէս ասացաւ՝ զքսան և երկու գիրսն ընթեռնուցուս։ Զի թէ ուսումնասէր ոք իցես՝ որպէս ասեմդ յանուանէ ի մտի ունել փութասջիր...։ Իսկ ի Նորոց Կտակարանաց անտի՝ չորք Աւետարան միայն... Այլ դու ընկալջիր և զգործսն երկոտասան առաքելոցն յայսր վերայ. և զեօթն թուղթսն գլխաւորս Յակովբայ, և Պետրոսի երկու, և Յովհաննու երեք, և զՅուդայի գլխաւոր թուղթն։ Ի վերայ ամենայնի իբրև մատանի հաստատութեան ի վերայ եդեալ զՊօղոսի չորեքտասան թուղթսն։ Այլ այլն ամենայն ի բացէ կացցէ, և զոր միանգամ յեկեղեցիս ոչ ընթեռնուլի են, զայն և առանձինն մի ընթեռնուցուս» (Կոչ. Ընծ. 83)։

ԺԳ.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԵԲՐԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՆ

Հին Կտակարանի բնագրի լեզուն եբրայերէնն է և միմիայն մի քանի կտորներ, ինչպէս և Նինուէի սեպագիրները, գրուած են քաղդէարէն (Դան. Բ, 4—Է, 28. Բ. Եզր. Դ, 8—Զ, 18. Է, 12—26. Եր. Ժ, 11). իսկ Իմաստութիւն Սողոմոնի և Բ. Մակաբ. յունարէն է։ Եբրայեցի անունը ծագել է կամ իւրեանց Նախահայր Եբերից (Ծն. ԺԱ, 14) կամ նշանակում է Եփրատի միւս կողմից եկած՝ ըստ Քանանացոց արտայայտութեան (Ծն. ԺԴ, 13)։ Եբրայական լեզուն պատկանում է սեմիտական խմբին, որից արաբական լեզուն տարա-

Digitized by Google

ծուած է հարաւային բաժնում, արամականը հիւսիսային և ուրեմն եբրայականը միջին տեղում։ Այդ խըմբից եթովպերէնը պատկանում է արաբական ճիւղին, իսկ փիւնիկերէնը եբրայականին։

Եբրայերէնը դարձաւ Աստուծոյ յայտնութեան միջոցը և հետզհետէ զարգացման հասաւ Մովսէսի օրէնքի մէջ, սակայն այդ լեզուի ոսկեդարը Դաւթեան-Սողոմոնեան շրջանն է, որում թէ բանաստեղծական և թէ արձակ գրականութիւնը փառաւորապէս ծաղկեց, զատուելով հին ոճերից և հարստանալով մարգարէական ճարտասանութեան մէջ։ Ըստ որում այդ լեզուն ճոխացաւ մարգարէների և մանաւանդ Հին Կտակի ամենանշանաւոր ճարտասան մարգարէի, այն է՝ Եսայու գըրչի տակ։ Իսկ յետոյ այդ լեզուն հետզհետէ ընկաւ, գործածութիւնից դուրս եկաւ և գերութեան ժամանակ արամերէնը կամ քաղդէարէնը սովորական դարձաւ, որ և հետզհետէ փոփոխուելով Ասորոց լեզու կոչուեց։ Սակայն և այնպէս այդ ժամանակներումն էլ ս. գրուածները եբրայերէն էին գրում և այդ լեզուն բոլորի համար սուրբ լեզու էր համարւում. այժմ էլ աստուածպաշտութեան ու դպրութեան լեզուն նոյնն է մնում Հրէաների մէջ։

Այս լեզուն բարձր վսեմութիւն ունի, պարզ է, բայց կարողանում է յայտնութեան ամենավեհ մտքերը հասկանալի և արժանապէս արտայայտել։ Աշխարհային բաների արտայայտութեան համար աղքատ է, սակայն շատ հարուստ է հոգևոր և Աստուծոյ արքայութեան վերաբերեալ արտայայտութեանց համար։ Նախադասութեանց մէջ այս լեզուն շատ հասարակ է, բայց բոլոր յարաբերութիւնք գեղեցիկ արտայայտում է։ Սահուն է ոճը, սակայն վեհ է և ազդու։ Մինչև գերութիւնը այդ լեզուն գրեթէ փոփոխութիւն չկրեց և այս անշարժ

Digitized by Google

մնալու յատկութիւնը սեմիտական լեզուների բնորոշ կողմն է։ Այս գեղեցիկ լեզուն Աստուածանից է պատրաստուած և սրբագործուած, ուստի և պահպանուել է մաքրութեան մէջ այնքան ժամանակ, որքան ժամանակ պէտք է ծառայէր փրկագործական նպատակներին։

ԺԴ.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒՄԸ

Եբրայերէնի տառերը շատ հին են. մենք ունինք պապիւրոս (պրտու) թղթի վրայ գրութիւն, որ Մերենպտահ Փարաւոնի ժամանակ՝ այսինքն Մովսէս մարգարէի օրերումն է գրուած և ցոյց է տալիս, որ եբրայերէնի տառերը շատ հին են։ Եբրայեցիք էլ մինչև անգամ իւրեանց գաղթականութեանց ժամանակ լաւ պահպանեցին իւրեանց դպրութեան փայլը նախ Երուսաղէմում և Բաբելոնի կողմերում և յետոյ հիւս. Աֆրիկէում և Սպանիայում, միշտ ճանաչելով Աստուծոյ յայտնութեան միջոց դարձած լեզուի սրբութիւնը։

Սկզբնական ժամանակներում եբրայական 22 տառերը, որոնք գուցէ Քանանում ու Փիւնիկէումն էլ էին գործածւում լեզուին հետ, առաւել անկիւնաւոր էին՝ քան յետին ժամանակներինը և գրւում էին ձախից յաջ շարունակ ու միայար առանց անջատման ու կէտադրութեան։ Ձայնաւոր տառեր չունէին ու միշտ գրում էին միայն բաղաձայնները, իսկ հիմնական *ա*, *ի* և *ու* երբեմն նշանակում էին որոշ բաղաձայններով (հէ, ալեֆ, յոդ և վավ)։ Ուստի և յաճախ մոռանում էին թէ ինչպէս պէտք է կարդան։ Այս դժուարութեանց նպաստում էին և լեզուի առանձնայատկութիւնները. նախ որ բառերի մեծ մասը եռատառ արմատներ ունին և հոլով-

ներ չունենալով՝ միայն յարաբերական ձև են ստանում և երկրորդ՝ անձնական դերանուանց սեռական ու տրականը կազմւում է վերջում տառ աւելացնելով։ Բայց միւս կողմից էլ այդ լեզուն դիւրահասկանալի է իւր պարզութեան պատճառով։ Ըստ որում նախադասութիւնները շատ պարզ և անպաճոյճ են և անհնար է մեծ մտքեր ամփոփել գիտնական ու գեղեցիկ պարբերութեանց մէջ, այլ բարդ մտքերը արտայայտւում են կտոր կտոր տներով ու միացրած և շաղկապով։ Այսպիսի պարզութիւնը հնարաւորութիւն է տալիս բառացի թարգմանելու։

Հրէաների գրագիտութեան մէջ մի նորոգութիւն մտաւ Եզրից (460 տ. Ք. ա.) սկսած, որից յետոյ Հին Կտակի կարգաւորութեան համար աշխատեցան ծերակոյտի անդամները կամ թէ դպիրները (սոփերներ), որոնց վերջինը ըստ Թալմուդին Սիմէոն I քահանայապետն էր Ք. 300 տ. ա.։ Նորանից յետոյ դպիրները և օրինականները թէև պինդ պահպանում էին օրէնքը, սակայն չունէին նոցա երկիւղածութիւնը և Ս. Գրքի ոգու նախանձախնդրութիւնն, այլ միայն տառապաշտներ էին (Մատթ. Ե, 17—20. ԻԳ, 2—3)։ Եզրը աշխատելով տարածել օրէնքը ժողովրդի մէջ, ուշադրութիւն դարձրեց արտագրութեան գործի հեշտացնելու վրայ, ուստի և եբրայական տառերի հին փիւնիկեան ձևը կերպաւորեց քառակուսի ձևերի և մտցրեց բառերի իրարից անջատ գրելու սովորութիւնը, որ և այժմեան ձևակերպութիւնն ստացաւ Զ—Է դարից։

Բաբելական գերութեան ժամանակ Հրէայք սովորեցան և ազգակից քաղդէարէն կամ արամերէնը, այն էլ այնքան ընտելացան, որ վերադառնալով՝ չէին կարողանում հասկանալ սեփական լեզուն։ Այդ պատճառով Եզրը շատ աշխատեց վերստին մայրենի լեզուն

Digitized by Google

ընդհանրացնել։ Ժողովուրդը մեծ մասամբ չէր կարողանում կարդալ ու հասկանալ (Նեեմի Ը, 3—8), ըստ որում Եզրը մտցնելով նոր տառերը, կարողացաւ այդ դժուարութիւնը վերացնել։ Այդ գիրը վարժ գրողների շնորհիւ հետզհետէ կանոնաւորուեց, իսկ հին տառերը պահեցին Սամարացիք, երբ սեփական տաճար շինեցին Գարիզինի վրայ և սկսան Հնգամատեանն էլ ի նպաստ իւրեանց աղանդին աղաւաղել։ Դոյն այդ տառերով են գրուած և Մակաբայեցոց՝ վերջերս գտնուած՝ դրամները, փիւնիկեան արձանագրութիւնք, Սելովամի արձանագրութիւնը, Մովաբացոց Մեշի արքայի արձանագրութիւնն, որ պահւում է Լուվրում ի Պարիզ և այլն։

Սովորական խօսակցութիւնը տարբերւում էր Ս. Գրքի լեզուից, ուստի և Եզրը աշխատում էր տարածել բաղաձայններով գրուած բառերի կանոնաւոր արտասանութիւնը առանց ձայնաւորներ նշանակելու բնագրի մէջ։ Դպիրները կարդում էին ուրեմն աւանդական սովորութեամբ, միայն իւրեանց տնային օրինակների մէջ հեշտութեան համար սկսան դնել ձայնաւորները, որոնք ոչ թէ տառեր էին, այլ կէտեր տառերի վերը։ Այդպէս շարունակեցին մինչև այժմ։ Դոքա պահպանեցին արտագրելով ամենայն հաւատարմութեամբ մինչև անգամ զանազան ընթերցուածքները և պատահող կրկնութիւնները (զոր. Սաղմ. ԺԳ, ԾԲ.)։ Քրիստոսի ժամանակ Հին Կտակարանի բնագիրը արդէն որոշ հաստատութիւն էր ստացել։

Քրիստոնէութեան յաղթանակը և Երուսաղէմի աւերածը փշրեց Հրէաների կեղծ-մեսիական ակնկալութիւնները և դոցա ռաբբիները տեղափոխուելով՝ ժողովարան հաստատեցին Եամնիում (Եաֆֆայի մօտ) և ապա Գ. դարում Յուդա բեն Սիմոնի օրով անցան Սեպփորիս (Նազարէթի մօտ). և նորանից յետոյ փոխա-

դրուեցան Տիբերիադ։ Եամնի՚ի ծերակոյտի հիմնադիրն է Յոխանան, որ եօթը աւանդապահների հետ սկսաւ նորոգել աւանդութիւնները։ Նորա յաջորդն էր այն Գամաղիէլի որդի Գամաղիէլ Բ., որ մեծ Հիլլելի աշակերտն էր և Պօղոս առաքեալի ուսուցիչը։ Սա աւանդութիւնները կարգի դրաւ և օրէնքի կամայական մեկնութեան վերջ տուաւ։ Սորա ժամանակ Շամմայի դպրոցը կորցրեց իւր նշանակութիւնը։ Նշանաւոր էր և Աքիբա, որ զօրացրեց խորհրդաւոր իմաստի ուղղութիւնը։

Ընդհանրապէս ռաբբիները կատարեալ հեղինակութիւն ձեռք բերին Հրէաների վրայ և սկսան մոլեռանդութեամբ մաքառել քրիստոնէութեան դէմ, չխնայելով ոչ մի միջոց։ Հին եբրայական օրինակից թարգմանուած եօթանասնից բնագիրը առաքեալների մէջ ևս յարգուած էր և գործ էր ածւում, ըստ որում առաքեալք առաւել նախապատուութիւն տալով իմաստի պարզութեան՝ քան թէ բառերին, յիշում են 263 բառացի ու 376 մասնաւոր վկայութիւններ իւրեանց գրուածների մէջ։ Իսկ Հրէաների ժողովը արգելեց գործածել յունախօս Հրէաներին ու նոցա համար նշանակեց Ակիւղասի ու Սիւմմաքոսի թարգմանութիւնները (տես. վարը. գլ. ԺԷ.)։ Ժողովարանը այնտեղ հասցրեց, որ եօթանասնից թարգմանութեան յիշատակին սուգ նշանակեց եբրայեցոց մէջ։ Այդ ծերակոյտը շարունակեց մաքառել մինչև որ վերջապէս ոչնչացաւ կայսերական հրովարտակով 425 թուին։

Քրիստոնէական եկեղեցու Ս. Հայրերը դատապարտում են դոցա կրօնամոլութեան ծայրայեղութիւնը, որ դոքա իւրեանց դէմ կռուելու համար մինչև անգամ եբրայական բնագրի մէջ սկսել էին փոփոխութիւններ մտցնել, որպէս զի հերքեն Քրիստոսի Մեսիակա-

Digitized by Google

նութիւնը։ Այդ կեղծումներից յիշում են օրինակ. Ջրհեղեղից առաջ ու յետոյ եղած նահապետների կեանքի տարիների կրճատումները, որոնց գումարը համարում էին 1386 տարի ըստ ասութեան Եփրեմ Ասորուն, թէ դոքա ձգտում էին սխալեցնել Քրիստոսի գալստեան ժամանակը։ Հրէայք հաւատում էին թէ աշխարհը այս կարգով պէտք է շարունակուէր 6000 ամ ըստ վեցօրեայ արարչութեան, ապա գար Մեսիան վեցերորդ հազարամեակի կիսում, թագաւորէր 400 տարի (Դ. Եզր. Է, 28), նորա մահով մեռելութիւն տիրէր որպէս ստեղծագործութիւնից առաջ և ապա վերստին նորոգուէր յաւիտենական կեանքով։ Ժամանակը լրացաւ, Քրիստոս եկաւ, սակայն դպիրներն ու փարիսեցիք խաչեցին նորան. նոցա ուզած Մեսիան չեկաւ, Երուսաղէմը աւերուեց և նոքա յուսահատուելով՝ փոխեցին թուերը, որ 1000–1500 տարի աւելի սպասեն։ Այդպէս ձևակերպեցին (Սաղմ. ԻԱ, 17. հմմտ. Ա. Կոր. Ա, 23) և այլն։ Իսկ շատ տեղեր թալմուդականք սկսան ըստ իւրեանց մեկնել։

Մեկնութեան համար էլ դոքա դնում են կամայական կանոններ. օրինակ. նոքա ասում են թէ կան բառեր, որոնք պէտք է կարդացուին, բայց չկան բնագրում և երկրորդ՝ կան բառեր, որոնք պէտք է կարդացուին, ոչ այնպէս, ինչպէս գրուած են։ Ուրեմն ըստ իւրեանց քմաց կարող են կարդալ, քանի որ որոշ կանոններ չեն էլ ցոյց տալիս։ Սակայն դոքա օգտակար գործեր էլ են կատարել, օրինակ. համարելով ու նշանակելով տողերի քանակը, միջատողերը, կանոնելով բաց տեղերի չափը և այլն։ Սոցա աշխատութիւնը շարունակեցին Զ դարից մինչև ԺԱ դար այսպէս կոչուած մասորետները, որոնք ապրում էին Տիբերիայում։ Դոցա գլխաւոր ծառայութիւնը այն է, որ հնարեցին կէտադրութիւնը և Մասորայի հեղի-

Digitized by Google

նակութիւնը։ Մինչև նոցա օրերը թէ ձայնաւորով ուղեշտով կարդալը և թէ քննական կերպով ուղղելը սովորաբար բերանացի աւանդութեամբ էր կատարւում, իսկ նոքա գրի առին այդ ամենը թէև ժողովարաններում չէին գործածում այդոնք։ Կէտադրութիւնը, որ գրւում է վերև, ներքև ու մէջերում, ծառայում է թէ իբրև ձայնաւոր, թէ իբրև շեշտ և թէ իբրև առոգանութեան նշան։ Մինչդեռ քննական սրբագրութիւնները հաւաքուեցան ի մի և այդ կոչւում է «մասորա», այսինքն աւանդութիւն. վասն զի նոքա հաւաքել են մինչև իւրեանց ժամանակ գործածուող բոլոր աւանդական կանոնները և սրբագրութիւնները («ջերի»— թուով 848—1171) Ս. Գրքի ընթերցանութեան համար։ Այդ պատճառով և այդ ռաբբիները կոչւում են մազորեթներ և այժմեան ընդունուած եբրայական բնագիրը, որ Թ դարից հին չէ, մասորական է կոչւում և օրինակուած է Երուսաղէմի աւերումից ազատուած միակ գրչագրից։ Մազորեթները տնատեցին և ամբողջ Հին Կտակարանը սաղմոսների մէջ արդէն յայտնի գուբղաների համեմատ։

ԺԵ.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԳՐԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Եբրայեցիք գրում էին մեծ մասամբ ղալամով, ինչպէս այժմ թուրքերը յար և նման իւրեանց թանաքով և թանաքամանով։ Նոքա գրում էին առաջներում աղիւսի, քարի, մետաղի, փղոսկրի և փայտի տախտակի, ապա պրտուի (պապիւրոս) և կաշուց շինած թղթի վրայ (մագաղաթ)։ Գրուածքը ոլորում էին ծայրին ամրացրած ձողի վրայ և այդպէս պահում, որ և ասորերէն

կոչւում է մագաղաթ։ Պրտուն եգիպտական բոյս է, որ եղանկիւնի է, ձողը շերտերով կտրում էին, իրար հետ շարում, Նեղոսի ջրով թրջում, որոնք իրար կպչում էին ու միապաղաղ թերթեր դառնում։ Այս երկարատև չէր լինում, ուստի և այդոր տեղը շուտով բռնեց մագաղաթըն, որ լինում էր սպիտակ, դեղնագոյն ու ծիրանի։ Ս. Հայրերը միմիայն վերջինն էին գործածում Ս. Գրքի համար։ Ցաճախ մագաղաթի գրչագիրը քերում էին և նորից գրում. այսպիսի գրչագրները կոչւում են կրրկնագիր։ Միջին դարերում ընդհանրացաւ Չինաստանից տարածուելով թուղթը, որ և հետզհետէ կատարելագործուեց։ Տախտակի վրայ գրում էին մետաղի գրչով, կտաւի վրայ վրձինով, Զ. դարից սովորական դարձաւ սագի ղալամը և ԺԳ. դարից կապարեայ գրիչը։ Գրչի ու թղթի փոփոխուելով՝ փոփոխուեց և տառերի ձևը—երկաթագրից՝ միջին երկաթագիր (Թ. դար Հայոց մէջ) և բոլորագիր։ Այս փոփոխութիւնը պատճառ եղաւ, որ Ս. Գրքից հնագոյն օրինակներն առհասարակ թանգագին գիւտեր են, լինին դոքա եբրայերէն թէ թարգմանութիւնք։ Այսպէս և մազորեթների մի ամբողջական օրինակ կայ 916 թուից և մնում է Պետերբուրգում. աւելի հինը չկայ նաև այն պատճառով, որ երկիւղածութեամբ այրում էին մաշուած ու հնացած օրինակներն ու նորերը պահում։

Առաջին եբրայական բնագիրը հրատարակուեց 1488 Իտալիայում։ Բնագրի տպագրութեան մէջ այն գլխակարգութիւնը, որ սովորական էր դարձել ԺԳ դարից շնորհիւ Կենտերբերի արքեպ. Ստեփան Լանգտոնի (+1228) կամ կարդինալ Հիւգօին և կամ այլոց, մտցրեց ԺԵ դարում Մուրթքէ Նաթան անունով հրէան, իսկ հրատարակեց Թէոդոր Բեզան 1565-ին։ Այժմ գիտնական գոր-

ծածութեան համար ունինք գերմանական ընտիր տըպագրութիւններ։

ԺԶ.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՅՈՒՆԱՐԷՆ ԼԵԶՈՒՆ

Եբրայերէնը ընկնելով գերութեան ժամանակ, տեղի տուաւ քաղդէարէնին, որ սեմիտական բարբառ էր և ընդհանրապէս սակաւ է տարբերւում եբրայերէնից։ Յիսուսի ժամանակ Եբրայեցիք խօսում էին ասորա քաղդէարէն կամ արամերէն և այս լեզուով է գրուել միմիայն Մատթէոսի Աւետարանը։ Այնուհետև Ս. Գրքի հեղինակների համար ընդհանրական լեզու էր յունարէնը, ըստ որում և յունարէն են գրուած բացի Նոր Կըտակարանից՝ Իմաստ. Սողոմոնի և Բ. Մակ. և այն գըրքերն, որոնց եբրայական բնագրները կորած են։

Ս. Գրքի յունարէնը դասական յունարէնը չէ, այլ Աղեքսանդր Մեծի աշխարհակալութեամբ ընդհանրացած բարբառն է և կոչւում է Աղեքսանդրացոց բարբառ։ Այս մի խառնուրդ է հին յոյն բարբառների և գրական լեզու դարձաւ Աղեքսանդրիայի կողմերը Քրիստոսի Գ. դարում տարածուելով։

Ս. Գրքի յունարէնի առանձնայատկութիւններն են. նախ՝ այդ լեզուի մէջ գործ են ածւում բառեր, որոնք չկան դասական յունարէնում. երկրորդ՝ դասական յունարէնի բառերից շատերին այլ իմաստ է տրուած և երրորդ՝ տարբեր արտասանութիւն և ուղղագրութիւն ունի և տարբերւում է դասականից նաև համաձայնութեան կանոններով։ Բացի այս ամենը այդ բարբառը լիքըն է եբրայաբանութեամբ, որ հետևանք էր այնտեղի եբրայեցոց հելլենագիտութեան (Գործք. Զ, 1. ԻԱ,

37)։ Նոքա չէին կարողանում բաժանուել եբրայերէնի ոգուց, ըստ որում և առաքեալք ստիպուած էին կրօնական գաղափարների ճշգութիւնը պահելու համար եբրայաբանութեան մէջ ընկնել։ Մատթէոս աւետարանիչը ամենից շատ ոգևորուելով եբրայականով, ամենից շատ էլ եբրայաբան է, իսկ ամենից մօտիկ է յունարէնին Թուղթն առ Եբրայեցիս։

Այդ եբրայաբանութեան մէջ նկատում ենք արամական բառեր յունարէն վերջաւորութեամբ (ալելուիա, սատանայ, պասքա և այլն), յունարէն բառեր եբրայական նշանակութեամբ (անաթեմա—անէծք՝ փոխանակ «տուրք»-ի, գլօսսա—ազգ, ցեղ, փոխանակ՝ լեզուի, հեթանոս—կռապաշտ, փոխանակ ժողովրդի և այլն), յունարէն բառերով եբրայական արտայայտութիւնք, եբրայական համաձայնութիւնք, քերականական կազմութիւններ և այլն։ Նոր Կտակարանի բարբառի մէջ աւելանում են և Հռովմայեցոց տիրապետութիւնից յառաջացած լատին բառերի գործածութիւնները։ Անշուշտ Ս. Գրքի յունարէն մասերը լաւ հասկանալու համար անհրաժեշտ են այդ բարբառի յատուկ ուսումնասիրութիւնը։

ԺԷ.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I. *Եօթանասնիցը*։ Որովհետև հին ժամանակ յունարէնը տարածուած լեզու էր, ամենից առաջ պէտք եղաւ Հին Կտակարանը յունարէն թարգմանելու։ Այդ աւելի ևս անհրաժեշտ եղաւ, երբ Հրէայք բաբելական գերութիւնից յետոյ ցրուեցան զանազան երկրներ՝ մանաւանդ Եգիպտոս և Աղեքսանդրիա և ծանօթացրին

Digitized by Google

Հեթանոսներին Աստուծոյ խօսքը։ Աղեքսանդրիայում Հրէայք արտօնութիւններ ստացան Աղեքսանդր Մեծից և Պտղոմէոս Լագից, երբ սա Երուսաղէմը առաւ 320-ին Ք. ա։ Այդտեղ Հրէայք բազմացան, բնակչաց $^2/_5$ մասն էին կազմում, սեփական ազգապետ ունէին և շատ յառաջ գնացին, այնպէս որ Աղեքսանդրիան դոցա կեդրոնը դարձաւ հելլենախօս և մասամբ հելլենակեաց Հրէաների համար մեծ նշանակութիւն ստանալով։ Ուստի կարիք զգացուեց դոցա համար յունարէն Ս. Գրքի, վասն զի եբրայերէնը մոռացուած էր, Ս. Գրքի ընթերցանութիւնը առաջին տեղն էր բռնում աստուածպաշտութեան մէջ կամ ժողովարաններում և պէտք է հասկանալի լինէր ժողովրդին։ Ուստի և յունարէն թարգմանութիւնը մեծ օգնութիւն եղաւ դոցա համար, այնպէս որ մինչև անգամ նոքա տօն սահմանեցին ի յիշատակ այդ թարգմանութեան։

Եգիպտոսի թագաւոր Պտղոմէոս Եղբայրասէրը, որ Քրիստոսից առաջ 284—247-ին էր ապրում, թարգմանել տուաւ Հրէաների օրէնագրքերը գլխաւորապէս իւր գրադարանի համար, ինչպէս պատմում է թարգմանիչներից մէկն՝ Արիստէյ ոմն [1]։ Ասում են՝ այդ թարգմանութեան համար նա դիմեց Երուսաղէմի քահանայապետ Եղիազարին և խնդրեց հմուտ թարգմանիչներ։ Սա էլ ընտրեց իւրաքանչիւր ցեղից վեց վեց դպիրներ, յանձնեց նոցա մի մագաղաթեայ ոսկետառ ընտիր օրինակ և ուղարկեց Եգիպտոս։ Պտղոմէոսը այդ 72 դպիրներին նստացրեց 72 վրաններում Փարոս կղզու վրայ և 72 օրում թարգմանել տուաւ։ Երբ դոքա վերջացրին թարգ-

---

1) Համտ. Գ. Մակ. Գիրքը. Կիւրեղ Երուս, Կոչ. ընծ. 81—82. Նոյնն են ասում և Յովսեպոս Փլաւիոս, Փիլոն Եբրայեցի, Յուստին, Կղեմէս Աղեքսանդրացի և այլք)։

Digitized by Google

մանութիւնը, թագաւորը կարդալ տուաւ ժողովրդի առաջ, ժողովուրդն էլ լսելով՝ այդ գիրքն ընդունեց իբրև Սուրբ Գիրք։

Այս թարգմանութիւնը այժմ էլ կոչւում է եօթանասնից (LXX) և այնքան նշանաւոր է, որ նոյն իսկ առաքեալք ոչ թէ եբրայական բնագիրն էին գործածում, որպէս յիշեցինք վերը, այլ այդ պարզ ու դիւրահասկանալի թարգմանութիւնն, որ փոքր ժամանակ յետոյ ամբողջացրել են Աղեքսանդրիայի հելլենագէտ Հրէաները մինչև 130 տ. Ք. ա. (տես. Իմաստ. Սող. Բ, 12. Ես. Գ, 10. Սիրաք՝ վերջաբանը)։ Համեմատութիւնը ցոյց է տալիս, որ այս թարգմանութիւնը մի հազար տեղ ունի համաձայն Սամարացոց բնագրին, որոնք համաձայն չեն եբրայերէնին և հազարի չափ տեղ վերջինիս՝ հակառակ առաջինին։

Սակայն այդ տարբերութիւնք վարդապետական նշանակութիւն չունին. ասորական սեպագրները ցոյց են տալիս, որ Եօթանասնիցը մանաւանդ անունների արտասանութեամբ առաւել ճիշդ է, քան մազորեթներինը. հետևաբար նոցա թարգմանած բնագիրը հնագոյն օրինակ է եղել և թարգմանիչները աւելի հմուտ են եղել եբրայական լեզուին և ընթերցանութեան։ Աննշան սխալները յառաջացել են ձայնաւորների ու կէտադրութեան պատճառով շփոթ ընթերցումից և կամ արտագրողների անուշադրութիւնից։

Եօթանասնից թարգմանութեան *գրչագրները*, որոնք հասել են մեզ, Դ. դարից հին չեն։ Նշանաւոր օրինակներն են հետևեալները.

ա. Աղեքսանդրեան օրինակ։ Այս գրչագիրը 773 բարակ թերթեր ունի, որոնք շինուած են այծի կաշուից, 37 սանտիմետր երկարութեամբ ու 27 ս. լայնութեամբ։ Գրութիւնը երկու սիւնակով է և երկու երեսի վրայ։

Digitized by Google

Գրչագիրը կազմուած է չորս հատորում և պահպանւում է ապակու տակ, իսկ գիտնական հետազօտութեանց համար պահւում են լուսանկարուած օրինակներ, որպէսզի բնագիրը գործածութեամբ չաղչատուի։ Այս օրինակն ամենալաւն է և ըստ աւանդութեան պատկանում է եղել յունական Թեկղա կնոջ Աղեքսանդրիայում, որտեղից Ժէ. դարում այնտեղի Կիւրեղ պատրիարքը բերաւ Կ. Պօլիս և 1624-ին ծախեց Անգլիոյ դեսպանին. սա էլ ընծայեց իւր թագաւոր Կարլ Ա-ին։ Ապա Գէորգ Բ. թագաւորը նուիրեց Լոնդոնի Բրիտանական թանգարանին։ Այս օրինակում պակասում է Յով. Աւետարանից 2 թերթ, Բ. Կոր. 3 թերթ և Մատթ. աւետարանից մեծ մասը։

բ. Միւս գրչագիրն է Վատիկանեանը, որ Դ. դարուց է, պահւում է Վատիկանի գրատան Հռոմում 1540 թուից։ Նապոլէօնը տարաւ այդ գրչագիրը Պարիզ, բայց յետոյ 1815 թուին փռանկները դարձրին։ Սկզբում այս օրինակն ամբողջ էր, սակայն յետոյ կորաւ ծննդոց գրքի սկիզբը և ապա նաև Սաղմոսը, թղթերը և Յայտնութիւնը։ Ընդամենը 759 թերթ է և ճիշդ օրինակ է։

գ. Սինայեան օրինակը Դ. դարից է, որ գտել է Տիշենդորֆ գիտնականը 1859-ին Ս. Եկատերինեան վանքում Սինայի վրայ Աղեքսանդր Բ. կայսեր հովանու տակ։ Այդ երկաթագիր գրչագիրը, որից միայն 388 թերթ է անկորուստ մնացել, գտնւում է մասամբ Պետերբուրգի կայսերական մատենադարանում և մասամբ Լայպցիգում։

դ. Եփրեմեան գրչագիրը գտնւում է Պարիզի ազգային գրատան, կրկնագիր է, Եփրեմ Ասորու գրուածներն է պարունակում, բայց յետոյ գտան՝ որ տակը գրուած է եղել Ե դարում Ս. Գիրքը։ Այդտեղ կան հին-

Կտակարանից 64 թերթ և Նորից 145։ Կան և ուրիշ երկաթագիրներ, որոնք այնքան էլ նշանաւոր չեն։

Եօթանասնից թարգմանութեան բազմաթիւ հրատարակութիւններ եղան, որոնցից նշանաւոր են Տիշենդորֆինը և այժմ Օքսֆորդի գիտնական հրատարակութիւնը (1892—93. Ed. Hathh and H. A. Redpath)։

2. Եօթանասնից յետոյ յունաց մէջ զանազան հրէական վէճերի պատճառով ուրիշ թարգմանութիւններ էլ յառաջ եկան։ Այսպէս քրիստոնէութիւնից մերժուած ու հրէայացած *Ակիւղաս Սինոպացին* քրիստոնէութեան դէմ մաքառելու միջոց տալու համար Քրիստոսի 128 թուին մի *բառացի* եբրայաբանական թարգմանութիւն արաւ Յունաց մէջ ապրող Հրէաների համար և ընդունելութիւն գտաւ։

3. Բ. դարի վերջում եբիոնեան աղանդաւոր *Սիւմմաքոսը* (193—211) հակառակ Ակիւղայի թարգմանեց Ս. Գիրքը ոչ թէ բառացի, այլ ըստ իմաստին մաքուր յունարէն, որ և ընդունելութիւն գտաւ քրիստոնեաների մէջ իբրև ամենապարզն ու ճիշդը։

4. *Թէոդիտոն Եփեսացին*, Մարկիոնի աշակերտը, հրէութիւն ընդունելով մօտ 160-ին նոյնպէս մի նոր թարգմանութիւն արաւ գլխաւորապէս հետևելով Եօթանասնից և Ակիւղային, միայն թէ անճիշդ համարուած կամ վրիպուած տեղերն ուղղելով, իսկ չհասկացածները յունարէն տառադարձնելով։

5. Այս տարաձայնութիւնք պատճառ եղան, որ Գ. դարի սկզբում Որիգինէսը Եօթանասնիցը ճշդելու և եբրայականին հետ համեմատելու համար ջատագովական նպատակով Հրէաների դէմ իբրև ձեռնարկ մէկ վեցիջեան գիրք գրեց (գրեթէ 50 հատոր), տեղաւորելով ա. սիւնակում եբրայերէն բնագիրը, բ. յունարէն տառադարձութիւնը. գ. Ակիւղայինը. դ. Սիւմմաքոսինը. ե. Եօթանասնիցը, իւր քննութիւններով հանդերձ. և զ.

Digitized by Google

Թէոդիտոնինը։ Յետոյ աւելացրեց Նոր գտած ուրիշ թարգմանութիւններ ևս, դարձնելով իննիչեան։ Այս մնում էր Զ. դարում Կեսարիայի գրատան, որ և Պարսից յարձակման կամ Արաբացոց Պաղեստին մտած ժամանակ կորել է։ Այդ օրինակից միայն Եօթանասնից սեւնակըգտնուել է ասորական թարգմանութեամբ, որ գիտնական նշանակութիւն ունի, զի յունարէնի առանձնայատկութիւնք պահպանած է։ Բայց կտորներ կան Ս. Հայրերի գրուածներում։

Որիգինէսի աշխատութեան նմանողութեամբ այժմ ևս կան բազմալեզուեան հրատարակութիւններ (պոլիգլոտ), որոնցից նշանաւոր է Լոնդոնի վեց հատոր տպագրութիւնը (1600)։

6. *Պեշիտտօ*։ Ասորերէն թարգմանութիւնն ամենահինն է յունարէնից յետոյ, որ թարգմանուած է բնագրից ու Ս. Գրքի յունարէն մասերը Եօթանասնից օրինակից և կոչւում է պեշիտտօ, այսինքն պարզ կամ բառացի։ Ասորական թարգմանութեան փորձեր եղել են Քրիստոսից առաջ, սակայն անյաջող, իսկ պեշիտտօն նշանաւոր է իւր հարազատութեամբ, որ բովանդակում է նաև Նոր Կտակարանը ու թարգմանուել է՝ Հինը Ա. դարում, իսկ Նորը Բ. դարում։ Ասորոց աւանդութիւնն ասում է, որ այս թարգմանութիւնն արուած է Աբգար թագաւորի և Ադդէ առաքեալի ժամանակ։ Այս թարգմանութեան կտորներ հասել են մեզ Դ. դարից, իսկ ամբողջ գրչագիր ունինք Ե. դարից։ Ասորական մի թարգմանութիւն ևս կայ միայն Նոր Կտակարանը, որ արուել է 508-ին Փելիքսեն Յերապօլսեցու եպիսկոպոսութեան օրով Պողիկարպոս քորեպիսկոպոսի ձեռքով։ Այս թարգմանութիւնը սրբագրեց յետոյ Թովմաս Խարքելացին 616 թուին։

7. Լատին եկեղեցին երկար ժամանակ գործածեց

Եօթանասնից ու միայն Ա—Բ. դարում նորանից թարգմանուեց լատիներէնը։ Վերջինս կոչւում է Վուլգատա, այսինքն ժողովրդական. կոչուեց նոյնպէս Իտալա։ Այս այնքան էլ ճիշդ թարգմանութիւն չէր, ուստի և Հերոնիմոսը (+420) քսան տարի աշխատելով սրբագրեց ըստ Եօթանասնից ու բնագրին։ Սակայն այս ևս հաւատարիմ չէր, ուստի և երկար ժամանակ ընդունելութիւն չգտաւ, մերժուելով իբրև կեղծուած։ Միայն երեք չորս դար յետոյ փոքր ի շատէ սրբագրուեց և ընդունուեց Լատին եկեղեցում և ի վերջոյ Տրիդենտեան ժողովը ճիշդ և սուրբ թարգմանութիւն յայտարարեց իւր հետևողների համար։ Վուլգատայի մէջ կայ և Գ. Եզր, որ ոչ մի ուրիշ տեղ չկայ։

8. *Քաղդէարէն* թարգմանութիւնն, որ իսկապէս մեկնութիւն է, արուած է Քրիստոսի ժամանակներում եբրայերէն չգիտեցող Հրէաների համար և կոչւում է Թարգում՝ այսինքն թարգմանութիւն։ Թարգումը թուով եօթը հատ է։ Այժմ յայտնի է Օնկելոսի Թարգումը։ Օնկելոսը Պօղոսի աշակերտակից է եղել Գամաղիէլի մօտ ու թարգմանել է միայն Հնգամատեանը։ Նշանաւոր է նոյնպէս Քրիստոսի ժամանակակից՝ Հիլլելի աշակերտ Յովնաթանի Թարգումը, որ բովանդակում է Յիսուսի, Դատ., Թագաւորաց, Եսայ., Երեմ., Եզեկ. և 12 մարգարէների գրքերը։ Այսոնք արձակ ու մեկնողական թարգմանութիւններ են, որոնք հարազատութեամբ մեզ չեն հասել։ Ս. Գրքի մնացած մասերի թարգումները յետին ժամանակից են, Զ. դարից հին չեն և նշանաւոր չեն ընդհանրապէս։

9. *Հայոց թարգմանութիւնը։* Դ. դարի վերջում Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը ձեռնարկեցին Ս. Գրքի հայերէն թարգմանութեան։ Նոքա Յովհան Եկեղեցացու և Յովսէփ Պաղնացու օգնութեամբ նախ թարգմանեցին

Digitized by Google

եբրայերէն բնագրում յայտնի 22 գրքերն ու Նոր Կտակարանը, վերստին ճշդեցին Կ. Պօլսից բերուած ստոյգ օրինակների համեմատ և ապա Նոյա աշակերտները, հմտանալով Ասորոց, Եբրայեցոց և Յունաց լեզուին այդ ազգերի երկրներում, լրացրին այն գրքերի թարգմանութիւններն, որոնք որ և իցէ կերպով դուրս էին մնացել հայերէն օրինակից։

Հայերէն թարգմանութիւնը նշանաւոր է մանաւանդ այն պատճառով, որ արուել է ըստ Եօթանասնից, Եբրայական բնագրին և կամ ըստ Որիգինէսի վեցիջեանին ու պեշիտտօին, ուստի և այդոնց հետքերն էլ երևում են մեր Ս. Գրքում։ Հայերէն թարգմանութիւնն իւր գեղեցկութեամբ ու հաւատարմութեամբ հին թարգմանութեանց մէջ թագուհի է կոչուել առ գիտնականաց, այնպէս որ մեզ համար սիրելի է թէ իբրև Ս. Գիրք, թէ իբրև Հայոց Ս. Հայրերի ու հայերէն լեզուի անդրանիկ գրութիւն և թէ իբրև ամենագեղեցիկ թարգմանութիւն։

Հայոց Ս. Գիրքն ունի իւրաքանչիւր գրքի սկզբում նաև ընտիր նախադրութիւն ու գլխակարգութիւն, որոնք անշուշտ մեր ս. Հայրերի աշխատութիւնն են և քաղուած են Ե–Զ դարում ժամանակակից գրողների տեսութիւններից։ Իսկ Նոր Կտակարանի նախադրութիւնները թարգմանութիւն են յունարէնից և հեղինակ համարւում է Եւսեբիոս Կեսարացին, մինչդեռ առաքելական թղթերի նախադրութիւնները Աղեքսանդրացի Եւթաղ սարկաւագինն են Ե. դարուց, որ և գլխատել ու տնատել է այդոնք։ Նոր Կտակարանում կայ և չորս Աւետարանաց համեմատութիւնն, որ վերագրւում են նախապէս Տատիան ասորուն (170 թուից), ապա Ամմոն Աղեքսանդրացուն, սակայն կարգաւորել է Եւսեբիոս Կեսարացին։

Հայերէն գրչագիր ամբողջ Ս. Գիրքը ԺԲ. դարից

հին չէ. այդ ժամանակից սկսած կան բազմաթիւ ընտիր գրչագրներ Ս. Էջմիածնի՝ նոյնպէս և ուրիշ հայ մատենադարաններում։ Աւելի հին են Նոր Կտակարանի գրչագրները. այսպէս մէկը 887 թուից է Աշոտ Բագրատունի իշխանաց իշխանի ժամանակից, որ պահւում է Լազարեան ճեմարանի գրատան և հրատարակուեց նորերս լուսատիպ տպագրութեամբ։ Այս գրչագիրը մագաղաթեայ է, երկաթագիր, 227 թերթ, 2 թիզ երկարութեամբ, 1 թիզ ու 4 մատ լայնութեամբ։ Մի հատ էլ կայ Վենետկում Մխիթարեանց վանքում 906 թուից, մագաղաթեայ, երկաթագիր 460 թերթերով, 1 թիզ ու 5 մատնաչափ երկարութեամբ և 1 թիզ ու 2 մատնաչափ լայնութեամբ։ Այս գրչագիրը ընծայել է 1068 թուին Հայոց Մլքէ թագուհին Վարագայ Ս. Նշանին։ Այդոնց ժամանակներից են Ս. Էջմիածնի փղոսկրեայ և նման ընտիր օրինակներն, որոնք թանգագին զարդ են մատենադարանում։

Այս փղոսկրեայ երկաթագիր Աւետարանը գրուած է 989 թուին ոմն Յովհաննէսի ձեռքով Տեառն Ստեփաննոսի անունով և 1193 թուին նուիրուել է Հին-Ջուղայի հանդիպակաց Մաղարթու Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքին Վահրամայ որդի Գուրծիի կողմից։ Իսկ 1848 թուին հանգ. Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանի առաջադրութեամբ և երջ. Ներսէս Ե- ի հրամանով բերուեց Ս. Էջմիածնի գրադարանը։ Այս գրչագիրը որի գինը հնագէտ Կոմս Ուվարովի գնահատութեամբ նշանակուել է 50,000 ռուբլ, բայց և անորոշելի է, ունի երկայնութեամբ 8 1/2 վերշոկ, լայն. 7 7/8 վ., հաստ. 2 1/6 վ., և կազմուած է տասը կտոր փղոսկրից. երկու կազմերն էլ զարդարուած են Աւետարանից վերցրած քանդակագործ պատկերներով։

Հայերէն Ս. Գիրքն առաջին անգամ տպագրուեց

1666-ին Ամստերդամում Յակովբ կաթուղիկոսի հրամանով, Ոսկան վարդապետ Երեւանցու ձեռքով «ի տպարանի Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի զօրավարի»։ Ապա 1705-ին տպուեց Ոսկանի օրինակից Նորա ազգական Պետրոս Լատինացու ձեռքով։ Այս հրատարակութիւնը գլխատուած ու տնատուած է Վուլգատայի համեմատ և այնքան էլ հարազատութիւն չունի։ Նոյնը սրբագրելով հրատարակեց Մխիթար վարդապետ Սեբաստացին 1733-ին Վենետկում։ Գիտնական հրատարակութիւն է Յ. Զոհրապեան վարդապետի քառահատոր տպագրութիւնը (Վենետիկ 1805)։ Հինգերորդ տպագրութիւնը եղաւ Պետերբուրգում 1817-ին Ռուսաց աստուածաշնչի ընկերութեան ջանքով և վեցերորդը 1860-ին Վենետկում։ Իսկ վերջին՝ մի քանի գրքերով պակաս հրատարակութիւնն է Կ. Պոլսում Լոնդոնի Բիբլիական ընկերութեան տպագրածը։ Շուտով նորը կտպուի Ս. Էջմիածնում։

Աշխարհաբար հրատարակութիւն ևս եղել է Նոր Թարգմանութեամբ մէկ ի Զմիւռնիա 1847—1850 և մէկ Նոր Եօրքում 1859 Բիբլիական ընկերութեան ծախքով։

10. Իններորդ դարում ս. Կիւրեղ ու Մեթոդիոս եղբայրները թարգմանեցին Ս. Գիրքը սլաւոներէնի։ Սլաւոնական այբուբենի գիւտի պատիւը կրտսեր եղբայր Կիւրեղինն է, որի համար ըստ աւանդութեան նա աշխատեց Կ. Պոլսում ու թարգմանեց Նոր Կտակարանը։ 862 թուին Կ. Պոլիս եկաւ սլաւոնական մէկ դեսպանութիւն՝ թէ Մորաւի իշխան Ռոստիսլաւը խնդրում էր կայսրից մի ուսեալ մարդ տալ իւր երկրում քարոզելու Ս. Գիրքն իւրեանց լեզուով և կարդալ սովորեցնելու։ Երկու եղբայրներն ուղարկուեցան։ Մորաւացոց մէջ գերմանները քրիստոնէութիւն տարածելով մտցրել էին լատին լեզուն։ Երկու եղբայրները թարգ-

Digitized by Google

մանեցին պատարագամատոյցը, Սաղմոսը և Նոր Կտակարանը, իսկ Կիւրեղի մահից յետոյ (✝ 868) Մեթոդիոսը իւր աշակերտակիցներով թարգմանեց մնացածը Եօթանասնից օրինակից։ 120 տարի յետոյ Վլադիմիր իշխանի ժամանակ այդ թարգմանութիւնն ընդունուեց Ռուսաց մէջ։ Այդ թարգմանութիւնը լիովին չէ մնացած, այլ թերատ է։ Միայն այդ ժամանակից են համարում Օստրոմիրեան մագաղաթեայ գրչագիրը, որ գրուած է Նովգորոդում Օստրոմիր պաշտօնակալի համար 1056—1057-ին։

ԺԵ. դարում (1499-ին) աշխատութեամբ Նովգորոդի արքեպիսկոպոս Գեննադիոսի թարգմանուեց առաջին լիակատար սլաւոնական Ս. Գիրքը Ռուսաստանում։ Սակայն թարգմանիչները յունարէն օրինակ չունէին, ուստի և շատ գրքեր լատիներէնից թարգմանեցին։ 1581-ին Կոստանդին Օստրոժսկի իշխանը տպել տուաւ այս Ս. Գիրքը մասամբ ըստ բնագրին ուղղել տալով։ Ապա 1663-ին Ալեքսէյ Միխայլովիչը տպել տուաւ նոյնը մասամբ ուղղել տալով Մոսկվայում։ Երկար նեղութիւններ քաշեցին այդ թարգմանութեանց անճշդութեան պատճառով, մինչև որ վերջապէս մի առանձին մասնաժողովի քննութեամբ և Ռուսաց Ս. Սինոդի վճռով ու Եղիսաբեթ Պետրովնա կայսրուհու հրամանով հրատարակուեց 1751-ին, որ և այնուհետև օրինակելի դարձաւ տպագրութեանց համար։ Սակայն այս թարգմանութիւնը բաւական չէր, պէտք էր և ռուսերէն թարգմանութիւն, ուստի և շատերն էին աշխատում թարգմանել։ Այս յաջողուեց «Ռուսաց աստուածաշնչի ընկերութեան», որ 1818-ից սկսաւ հետզհետէ մաս առ մաս հրատարակել. սակայն 1825-ին փակուեց այդ ընկերութիւնը և գործը մնաց։ Վերջապէս 1868 ին ս. Սինոդի վճռով սկսան հրատարակել Ս. Գիրքն, որ և

աւարտուեց 1875-ին և կայ այժմ գեղեցիկ ու պատկերազարդ տպագրութեամբ ևս։

11. Հին թարգմանութիւններ կան և կոպտերէն, եթովպերէն, գոթերէն, արաբերէն, պարսկերէն և վրացերէն (Զ դարից)։ Նորումս էլ Ս. Գիրքը թարգմանուել է բազմաթիւ ուրիշ լեզուների, որոնց թիւը այժմ հասնում է 395 բազմատեսակ տպագրութիւններով։ Ուրեմն Ս. Գիրքը աշխարհի վրայ ամենայայտնի, ամենասիրելի և ամենատարածուած Գիրքն է։ Միմիայն անգլիական ընկերութիւններն, որոնց նպատակն է՝ տարածել Ս. Գիրքը, ծախսել են զորօր. 1894 թուին 14 միլիոն ռուբլի և մինչև այժմ տարածել են սեփական գործարանի ազնիւ թղթի վրայ մաքուր տպուած օրինակներ մօտ 150 միլիոն։ Աստուածաշնչի ընկերութիւնը սկսել է իւր գործունէութիւնը 1450-ին, իսկ Ս. Գրքի տպագրութիւնը 1569-ին։

ԺԸ.

ՀՐԷԱԿԱՆ ՏՈՄԱՐԸ

Ս. Գրքում շատ յաճախ պատահում են ժամանակի մասին արտայայտութիւններ, որոնք հասկանալու համար հարկաւոր են հարևանցի ծանօթ լինել Հրէական տոմարին։

Օրը հաշւում էին Հրէայք արևի մուտքից մինչև միւս մուտքը (Ղևտ. ԻԳ, 32), ինչպէս տօնում է և Հայաստ. ս. Եկեղեցին։ Առաւօտ ու երեկոյ անելով հաշւում էին մի օր՝ այսինքն 24 ժամ։ (Ծն. Ա, 5—)։ Օրը բաժնւում էր առաւօտ, երեկոյ և կէսօր. կամ վեց մասերի՝ արշալոյս (սահար), արևագալ, ցերեկուայ շոգ կամ արևակէզ (մօտ 9 ժամին.), կէսօր, հովք (արև

մուտքից առաջ) և երեկոյ (մուտքից սկսած), որ երկու մաս ունէր՝ մուտքի ժամանակն ու վերջը (Ել. ԺԲ, 6. ԻԹ, 39)։

Ժամը կարճ էր (Դան. Գ, 6. Դ, 16. 30. Ե, 5. Մատթ. Ը, 13. Ղուկ. ԺԲ, 39)։ Քրիստոսի ժամանակ օրը բաժնում էին 12 ժամերի (Յովհ. ԺԱ, 9), որ չորս մաս ունէր իւրաքանչիւրը երեք ժամով, այն է՝ առաջին ժամ արևի ելքն էր. երրորդ ժամ՝ ժամի 9-ին, վեցերորդ ժամ՝ կէսօրին և իններորդ ժամ՝ երեկոյեան 3-ին։ Այս բաժանման է հետևում և եկեղեցին իւր ժամերգութեան մասերով։ Ժամերն էլ նայելով տարուայ եղանակին՝ կամ կարճ կամ երկար տևողութիւն էին ունենում։

Հրէայք ունէին և *պահերի* բաժանումն, որ գերութիւնից առաջ երեք էր. մէկը արևի մուտքից մինչև կէս գիշեր. միւսը գիշերային պահը մինչև հաւախօսը և երրորդը առաւօտեան պահը մինչև արևի ելքը։ Յիսուսի ժամանակ չորս պահ էր, իւրաքանչիւրը երեք ժամ. մէկը արևի մուտքից մինչև ժամի 9-ը, միւսը (մէջ գիշերի Մատթ. ԻԵ, 6. Մարկ. ԺԳ, 35) տևում էր մինչև կէս գիշեր. երրորդը կոչւում էր հաւախօս (Մարկ. ԺԳ, 35. Գ. Մակ. Ե, 25) մինչև առաւօտեան 3 ժամը և չորրորդը մինչև լոյս (Յովհ. ԺԸ, 28)։

Եօթնեակը կամ շաբաթը եօթն օր էր և եօթներորդ օրը Տիրոջն էր նուիրուած, կոչւում էր շաբաթ, թէև եօթնեակն էլ նոյն անունն ունէր (Ղուկ. ԺԸ, 12)։ Միւս օրերը կոչւում էին միաշաբաթ, երկուշաբթի և այլն, այսինքն շաբաթուայ առաջին օր, երկրորդ օր և այլն։ Միմիայն վեցերորդ օրը հելլենագէտ Հրէաների մէջ կոչւում էր պարասկեվի (Մատթ. ԻԷ, 62. Մարկ. ԺԵ, 42. Ղուկ. ԻԳ, 54. Յովհ. ԺԹ, 14. 31. 42.) այսինքն պատրաստութիւն, որ հարկաւոր էր շաբաթը պահելու համար։ Ոմանք էլ անուանում էին շաբաթա-

Digitized by Google

մուտ (որպէս մենք կիրակամուտ) կէսօրից յետ ժամի 3-ից։

Ամիսը ըստ լուսնի փոփոխութեանց էր տարբերւում և տեւում էր 29 կամ 30 օր (պակասաւոր և լիակատար ամիս)։ Ամիսները կոչւում էին ըստ կարգին (Ծն. Է, 11. Ը, 4—5. Ղեւտ. ԻԳ, 34. Գ. Թագ. ԺԲ, 32. 33). և միայն գարնան ամիսը կոչւում էր Աբիբ և յետոյ Նիսան կոչուեց (Ել. ԺԳ, 4. ԻԳ, 15. ԼԴ, 18. Բ. Օր. ԺԶ, 1)։ Բայց Բաբելական գերութեան ժամանակից սովորական դարձրին քաղդէական ամիսները, որոնք են.

1. Նիսան (Աբիբ) 30 օր. Մարտի և Ապրիլի մէջ.
2. Զիու կամ Իար (ամիս ծաղկաց). 29 օր Ապր.—Մայ.
3. Սիվան . . . . 30 օր Մայ.—Յուն.
4. Թամուզ . . . . 29 օր Յուն.—Յուլ.
5. Աբ . . . . . 30 օր Յուլ.—Օգ.
6. Էլուլ . . . . . 29 օր Օգ.—Սեպտ.
7. Թշրի (կամ Էթանիմ) . . 30 օր Սեպ.—Հոկ.
8. Բուլ (կամ Մարսեւան) ամիս անձր. 29 օր Հոկ.—Նոյ.
9. Քասղեւ. . . . . 30 օր Նոյ.—Դեկ.
10. Տեբեթ . . . . 29 օր Դեկ.—Յուն.
11. Սեբաթ . . . . 30 օր Յուն.—Փետ.
12. Ադար . . . . 29 օր Փետ.—Մարտ

Լուսնական տարին արեգակնայինի հետ հաւասարեցնելու համար իւրաքանչիւր 3 տարին մի անգամ աւելացնում էին և 13-դ ամիս Վէադար 29 օրով։

Կրօնական տարեմուտն էր Նիսանը ի յիշատակ Եգիպտոսի ելքին, իսկ քաղաքականը Թշրի ամսում ըստ Բաբելական ժամանակի աւանդութեան, որ իբր թէ ստեղծագործութիւնը Աշնան է եղել։ Թուականն էլ սկսում են աշխարհի ստեղծումից ըստ իւրեանց նոր հաշուին և այժմ է՝ 5661։ Մինչդեռ Ս. Գրքում գործ է ածուած իշխողների գահակալական տարեհաշիւը և կամ նշանաւոր դէպքերից։

Digitized by Google

ԺԹ.

ԿՇԻՌ, ԴՐԱՄ ԵՒ ՉԱՓ

Կշռի ճշդութեան համար Մովսէսը սրբութեան մէջ կշիռք դրաւ (կշիռք սրբութեան Ղևտ. Իէ, 25. Թիւ. Գ, 47. Ա. Մնաց. ԻԳ, 29), որոնք հաւանօրէն գազանների ձև ունէին, որպէս Ասորոց ու Եգիպտացոց մէջ։ Դրամն էլ սկզբում կշռով էր և առևտուրը փոխանակութեամբ, ուստի և դրամները կշռով են կոչուած։

138 թուին Ք. ա. Սիմոն Մակաբէն իրաւունք ստացաւ Անտիոքոս VII-ից դրամ կտրելու (Ա. Մակ. ԺԵ, 6)։ Հրէայք դրամ կտրելու իրաւունքը գործադրեցին մինչև Հռովմայեցոց տիրապետութիւնը, որոնք աւերելով Երուսաղէմը՝ հրամայեցին շարունակել դրամահատութիւնը ոչ թէ ըստ սովորութեան՝ Երուսաղէմի կամ Սիոնի ազատութեան նշանով, այլ արմաւենու մօտ նստած կնոջ պատկերով, որ ներկայացնում էր գերուած Հրէաստանը։

Ս. Գրքում յիշուած են.

1. Կերատ (Ել. Լ, 13. Ղևտ. Իէ, 25). $^1/_4$ դրախմ., արծաթը 26 փարա. 15, 86 դանկ. (դոլի), 4 կոպէկ։

2. Պէգա. (Ել. ԼԸ, 26), 10 կերատ. $2^1/_2$ դրախմ., 1 մսխալ 65, 20 դանկ. 40 կոպ.

3. Սիկղ. (Ել. Լ, 13), 2 պէգա, 3 մսխ. 34, 40 դանկ. արծաթը 80 կ. ոսկին 12 ռուբլի 50 կ. (4 մսխ. 6 դոլի)։

4. Մնաս. (Գ. Թագ. Ժ, 17. Բ. Մնաց. Թ, 16), 60 սիկղ, 2 գրվ. 9 մսխ. 48 դանկ, արծաթը 48 ռուբլի, ոսկին 1,250 ռ. (4 գրվ. 22 մսխ. 23)։

5. Տաղանդ. (Ել. ԻԵ, 39. Գ. Թագ. Ի, 39), 60

մնաս, 3 փութ, 5 գրվ. 90. արծաթը 2,400 ռուբլի, ոսկին 125,000 ռուբլի (10 փ. 23 գրվ. 15 մսխ. 92)։

6. Դրախմ (պարսկական դարիկ Ա. Եզր. Բ, 69) 6 ռուբլի 25 կ.։

Նոր Կտակարանում յիշւում են.

1. Արծաթ (եբրայական)—80 կ.
2. Լումա—$^1/_4$ կոպ. (2 փարա)։
3. Նաքարակիտ—կէս կոպ.։
4. Դանկ 4 նաքար.—2 կ.
5. Դահեկան, 10 դանկ. (դրախմ, դենար) 20 կ., որ և գլխահարկի դրամն էր։
6. Երկդրամեան, 2 դահեկան—40 կոպ.
7. Ստեր, 2 երկդրամեան,—80 կոպ. (հաւասար սիկղին)։
8. Մնաս, 100 դահեկան—25 ռուբլի։
9. Տաղանդ (կամ քանքար) ատտիկեանը 1,500 ռուբլի, կորնթականը 2,500 ռուբլի։

Չափ.

1. Ուղուկ, 4 մատնաչափ, 2 վերշոկ։
2. Թիզ. 3 ուղուկ—6 վերշոկ։
3. Կանգուն, 2 թիզ—12 վերշոկ։
4. Գրկաչափ, 4 կանգուն—1 սաժ. 1 արշ. 8 վերշ.
5. Եզեկիէլի եղէգը (Եզեկ. Խ, 3)—6 կանգ.
6. Ասպարէզ, 400 կանգ.—90 սաժէն
7. Շաբաթ օրուայ ճանապարհ, 5 ասպարէզ—1 վ.
8. Մղոն, 10 ասպարէզ—$1^1/_2$ վերստ։
9. Մէկ օրուայ ճանապարհ—24 մղոն։

Հեղուկների չափ.

1. Ճաշակ (Ղևտ. ԺԴ, 10) 100 դրախմ. 0,32 լիտր.
2. Հիմէն, 12 ճաշակ կամ 3 քաշ. 3,83 լիտր.
3. Մար, 6 հիմէն. 22,97 լիտր, կամ 1 դոյլ.
4. Քոռ 10 մար 229,68 լիտր մօտաւորապէս 16 դոյլ։

Digitized by Google

Արմտեաց չափ․

1․ Կապիճ մէկ քաշ ․	1,27	լիտր	կամ $^1/_3$	գարն․
2․ Գրիւ, 6 կապիճ ․	7,65	—	— 2	գարն․
3․ Արդու, 3 գրիւ ․	22,97	—	— 6	գարն․
4․ Քոռ, 10 արդու ․	229,97	—	— 60	գարն․
5․ Օմեր, արդուի $^1/_{10}$	2,30	—	— $^1/_2$	գարն․

Ի․

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Աստուած կամենալով փրկել մարդկութիւնն ու դէպի երանութիւն առաջնորդել, ուզեց ոչ միայն բերանացի, այլ և գրաւոր կրթութեամբ ու յայտնութեամբ նախապատրաստել իւր ընտրեալ ժողովուրդը Քրիստոսի բերած աստուածային արքայութեան համար։ Իսրայէլը պէտք է Հին Կտակարանի անխաբ ճանապարհով իմանար թէ ի՞նչպէս Աստուած ի սկզբանէ մարդկանց ողեւորել է և առաջ տարել, թէ ի՞նչպէս անհնազանդ և մեղանչական մարդուն քայլ առ քայլ նախապատրաստեց Փրկչին հանդիպելու և մանաւանդ թէ ի՞նչպէս Աստուած Իսրայէլում օրէնքով ու մարգարէութիւններով քարոզեց, որ Քրիստոս պէտք է հաստատէր երկնաւոր արքայութիւնը մարդկանց մէջ։ Իսրայէլը պէտք է ճշգրիւ գիտենար թէ Աստուած ի՛նչ էր սպասում իւր արքայութեան որդիներից և ի՛նչ էր տալիս նոցա իբրև ամենաբարձր պարգև։ Ուստի և Հին Կտակարանն ոչ միայն Իսրայէլի, այլ և մեզ ամենքիս համար ամենաբարձր նշանակութիւնն ունի (Հռ. ԺԵ, 4), վասն զի մենք նորանով Աստուծոյ ճանապարհները, մարդկային ճշմարիտ պարտաւորութիւններն ու յոյսերն ամենագեղեցիկ կերպով սովորում ենք։

Digitized by Google

Հին Կտակարանի պատմական գրքերը մասնաւորապէս ցոյց են տալիս մեզ, թէ ի՞նչպէս մարդկութիւնն ըստ պատկերի Աստուծոյ ստեղծուեց, անհաւատարիմ եղաւ իւր այդ բարձր կոչման և մեղքի ու մահուան ճանապարհը բռնեց. սակայն Աստուած ողորմելով նոցա, ընտրեց նոցանից մէկ մարդու՝ այն է՝ Աբրահամին, նորա հետ ս. Ուխտ դրաւ, կրթեց Իսրայէլի ժողովուրդը օրէնքով և սեփական ժողովուրդ դարձրեց. այս ամենը պատմուած է Մովսէսի գրքերում։—Այնուհետև ցոյց է տրւում թէ ի՞նչպէս Իսրայէլը չնայելով Աստուծոյ ամենողորմ խնամածութեան, թողեց իւր Տիրոջը, ուստի և արհամարհուեց Նորանից, աքսորուեց ու վերստին դառնալով՝ էլի չդիմեց դէպի աստուածային արքայութեան ճանապարհը. այս ամենը պատմուած է Հին Կտակարանի պատմական մնացեալ գրքերում։ Այս բոլոր պատմութիւնը տևում է աշխարհի ստեղծագործութիւնից մինչև գրեթէ Քրիստոսի ժամանակները, կամ ըստ սովորական հաշուին Քրիստոսից 5198 տարի առաջ սկսւում է և Քրիստոսից մօտ 200 տարի առաջ վերջանում։

Մարգարէական գրքերն ևս ցոյց են տալիս թէ Աստուած ի՞նչպէս Ս. Հոգուց ոգևորուած մարդկանց միջոցով դարձեալ իւր ժողովուրդը կրթում է, չարերին խրատում դատաստանի սպառնալիքներով, բայց դարձեալ յիշեցնում է ամենքին ապագայ փրկութիւնը։

Վերջապէս վարդապետական գրքերը ցոյց են տալիս թէ ի՞նչպէս Հին Ուխտի երկիւղած մարդիկ մտածել են Աստուծոյ յայտնութեան վրայ, խելամտել Աստուծոյ ճշմարտութեանց մէջ, իմաստութիւն սովորել և ուսուցանելով ու խրատելով իւրեանց ժամանակի ժողովուրդը՝ նախապատրաստել են Քրիստոսի գալստեան համար։

Այս ամբողջ նախապատրաստութիւնը լրանում է

Digitized by Google

վեց շրջանում կամ դարում. առաջին դար է կոչւում նախամարդուց մինչև ջրհեղեղ, այն է՝ մինչև 2937 տ. Ք. ա.։

Երկրորդ դարը տևում է մինչև Աբրահամի կոչումը 1917 Ք. ա.։

Երրորդը շարունակւում է մինչև Եգիպտոսից ելնելը 1487 Ք. ա.։

Չորրորդը—մինչև Սողոմոնի տաճարի հիմնարկութիւնը 1007 Ք. ա.։

Հինգերորդը լրանում է Բ. տաճարի շինութեամբ 531 Ք. ա. և

Վեցերորդը կատարւում է Քրիստոսի գալստեամբ, որով սկսւում է եօթներորդ դարը, որ է վերջինը։

Առաջին շրջանում Աստուած տալիս է նախամարդկանց ապագայ փրկութեան յոյս։ Այս շրջանում բարեպաշտութեամբ փայլեցան Ենովք ու Նոյ (տես. Ծն. Ե, 21—24. Եբր. ԺԱ, 5. Յուդ. 14. Ծն. Զ, 9. Ը, 21. Թ, 13. Բ Պետր. Բ, 5)։

Երկրորդում անկեալ մարդկութիւնից Աստուած ընտրում է Նոյի ընտանիքը ու նորա հետ յաւիտենական ուխտ դնում (Ծն. Ը, 21. Թ, 13)։

Երրորդում Աստուած այդ Նոյեան ընտանիքից հետըզհետէ զատում է ու դաստիարակում մի հաւատացող ցեղ ըստ Աբրահամի հաւատքին, որի համեմատ հաստատուն աւետեաց ուխտ է դնում Փրկչի գալստեան նկատմամբ և այդ ուխտը քանիցս կրկնում նորա հաւատարիմ ժառանգ հաւատացող նահապետների հետ և փորձութեանց մէջ զօրացնում նոցա. (Ծն. ԺԸ, 18. ԻԲ, 16—18. ԻԶ, 3. ԻԸ, 14. ԽԹ, 8—12)։

Չորրորդ՝ Աստուած՝ ի նախատիպ ճշմարիտ փրկագործութեան՝ ազատեց նոցա Եգիպտոսի փորձաբովից և անապատական կեանքում կրթելով՝ բերաւ Աւետեաց

Digitized by Google

երկիրն, ուրտեղ և հաստատեց Նոցա ազգային միութեան գործօններով—մարգարէութեամբ, քահանայութեամբ ու թագաւորութեամբ։

Հինգերորդ՝ Աստուած տաճարով ու Սողոմոնի փառքով բաց արաւ ժողովրդի աչքը դէպի յաւիտենական խաղաղութեան Թագաւորի իսկական տաճարն ու յաւերժական փառքը։

Եւ վեցերորդ՝ Բաբելական գերութեամբ Նորոգեց ժողովրդի անձնավստահութեան ոչնչութիւնն ու խորտակելով այս շրջանի մարդկային շլացուցիչ բոլոր ճիգ ու ջանքերը, յուսակտուր վարեց դէպի փրկութեան միակ յուսատեղին՝ Քրիստոս։

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՈՒԽ-ՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՕՐԻՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ՄՈՎՍԷՍԻ, ՅԵՍՈՒԻ ՈՒ ԴԱՏԱՒՈՐԱՑ ԳՐՔԵՐԸ

ԻԱ.

ՄՈՎՍԷՍ ՄԱՐԳԱՐԷԻ ՀՆԳԱՄԱՏԵԱՆԸ

Մովսէս մարգարէի հնգամատեանն ըստ իւր բովանդակութեան կոչւում է Օրէնսգիրք կամ Գիրք Օրինաց (Բ. Օր. ԼԱ, 26. Յես. Ա, 8), կամ Օրէնք (Նեեմի Ը, 2.), եբրայերէն Թօրա, որ նշանակում է՝ հրահանգ։ Ըստ իւր ծագման այս հնգամատեանը կոչւում է «Գիրք Օրինաց Տեառն» (Բ. Մնաց. ԺԷ, 9. Նեեմի Թ, 3), եբրայերէն՝ «Թօրա Եհովայի» կամ «Գիրք Օրինաց Մովսիսի» (Յես. Ը, 31) կամ կարճ՝ «Գիրք Մովսիսի» (Բ Մնաց. ԻԵ, 4. Ե, 12)։ Հրէաների մէջ այդ գրքերը կոչւում են «Թօրա» կամ «Թօրայի հնգամատեան». իսկ եօթանասունից թարգմանութեամբ «պենտատուխ» այսինքն հնգամատեան։

Հնգամատեանն, ինչպէս անունը ցոյց է տալիս, բաժանւում է հինգ գրքերի։ Հրէաները կոչում են այդ գրքերից իւրաքանչիւրն իւր սկզբի բառով, զորօր. Ծնընդոց գիրքը կոչւում է բերեշիթ այսինքն՝ «ի սկզբանէ», թէև ունին ուրիշ անուններ ևս։ Եօթանասնից թարգմանութեան մէջ կոչուած են ըստ գլխաւոր բովանդակութեան, որպէս և մեր թարգմանութեան մէջ. այն է՝

Digitized by Google

Գիրք Ծննդոց, Գիրք Ելից, Գիրք Թուոց և այլն, կամ Ծնունդք, Ելք, Թիւք, Ղևտական և Երկրորդ Օրէնք կամ Երկրորդումն Օրինաց. (Յունարէն՝ Գենեզիս, Էկզոդուս, Լևիտիկուս, Նումերի, Դոյտերօնօմիում)։

Այս գրքերը կոչւում են Մովսէսի գրքեր, զի նորա միջոցով Աստուած յայտնել է Իսրայէլին իւր օրէնքն և այդ անձն է այդ օրէնքն աւանդել․ ըստ որում Մովսէսն է օրէնքները մի գրքի մէջ ամփոփել, որպէս զի պահպանուի Ուխտի տապանակի մօտ և տաղաւարահարաց տօնին կարդացուի ժողովրդի առաջ (Ել. ԺԷ, 14. Թ—ԻԳ, ԻԴ, 3. ԼԴ, 27. Թիւ. ԼԳ, 2. Բ. Օր. ԼԱ, 9—13. 24—26)։ Մովսէս մարգարէն այն ժամանակ ամենից ընդունակ էր Աստուծոյ խօսքը մարդկանց յայտնելու և այդ երևում է Աստուծոյ խօսքից թէ՝ «Լուարուք բանից իմոց. եթէ լինիցի մարգարէ ի ձէնջ Տեառն, տեսլեամբ երևեցայց նմա, և երազով խօսեցայց ընդ նմա։ Ոչ այնպէս՝ որպէս ծառայն իմ Մովսէս, որ յամենայն տան իմում հաւատարիմ է. բերան ի բերան խօսեցայց ընդ նմա, երեսօք և ոչ առակօք. և զփառսն Տեառն ետես. և ընդէր ոչ երկերուք բամբասել զծառայն իմ Մովսէս»։ (Թիւք. ԺԲ, 6—8)։ Այդ երևում է և Աստուծոյ վարմունքից Մովսէսի հետ, զորօր. Սինայի վրայ (Ել. ԼԳ, 11. 18. Բ. Օր. ԼԴ, 10). ըստ որում և ասուած է. «Եւ ոչ ևս եկաց մարգարէ յԻսրայէլի իբրև զՄովսէս, այր՝ զոր ծանեաւ Տէր դէմ յանդիման...»։

Մովսէսի այդ մեծ պատիւն ու նշանակութիւնը վկայուած է և Նոր Կտակարանում մասամբ այնով, որ նա Քրիստոսի պայծառակերպութեան միջոցին Թաբոր լերան վրայ երևաց առաքեալներին (Մատթ. ԺԷ, 3) և մասամբ բառացի վկայութեամբ (Գործք. Է, 22—35)։ Մարդկային արուեստով ու գիտութեամբ ևս Մովսէսը

Digitized by Google

զարգարուած էր, ուստի և իւր վկայութիւնը աւանդեց նաև գրով։ Նորա մասին Գործք Առաքելոցում ասուած է. «Եւ վարժեցաւ Մովսէս ամենայն իմաստութեամբ Եգիպտացւոցն, և էր զօրաւոր բանիւք և գործովք իւրովք»։ Նորա գրուածներից իսկ տեսնում ենք թէ քանի նա հմուտ էր և մինչև անգամ բանաստեղծական լեզուին քաջածանօթ։

Մովսէսն ի հարկէ հեղհետէ գրել է ամենը մինչև իւր մահուան ժամանակն, իսկ իւր մահն ու յաջորդ գործերը գրել է անշուշտ Յեսուն ու գիրքն ամբողջացրել (Բ. Օր. ԼԴ)։ Հարկաւ նորա գործակիցներն ու յաջորդներն ևս կօգնէին նորան։ Ամբողջը գրի է առնուել Աստուծոյ հրամանով ու հովանաւորութեամբ, այնպէս որ այդոնց կրօնական բովանդակութիւնն աստուածային յայտնութեան հաւատարիմ պատկերը կամ արձանագրութիւնն է (Յովհ. Ա, 17). իսկ ժողովրդին վերաբերեալ պատմութիւնը հաւաքել է Մովսէսն իւր բարեպաշտ ցեղակիցների պատմածներից և այդ ամենն Ս. Հոգու հովանաւորութեամբ արձանագրուել է Աստուծոյ ս. Ուխտի հանգամանքները յառաջադրելու համար։ Ուրեմն այդ գրքերի բովանդակութիւնը թէ աստուածային յայտնութիւն ու թէ պատմութիւն լինելով, շատ հետաքրքրական և խրատական է մեզ համար։

ԻԲ.

ՀՆԳԱՄԱՏԵԱՆԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Հնգամատեանն այն աղբիւրն է, որում գտնում ենք Աստուծոյ արարչութեան ու տնօրինութեան վերաբերեալ յայտնութիւնն, որով Աստուծոյ և Իսրայէլի մէջ սուրբ Ուխտ է հաստատուել և իրականացել։ Ու-

Digitized by Google

ըեմն այդ գրքերի մի առանցքն է կազմում Ուխտի գիրքը Ելք ԺԹ—ԻԴ, որից առաջ գրուածներն Ուխտի նախապատրաստութիւն են, իսկ յաջորդը Ուխտի օրինական զարգացումն է, այսինքն թէ Աստուծոյ Ուխտի ժողովուրդն ինչպէս և ինչ օրէնքների համաձայն պէտք է ապրէր և Աստուծոյ պատուիրաններից դուրս չգ̀ար։

Ըստ այսմ Հնգամատեանը նոյն հիմնադրական նշանակութիւնն ունի Հին Կտակարանի համար, ինչ որ Աւետարանն առաքեալների գրուածների համար։ Նոյն իսկ ամբողջ Ս. Գիրքը առանց Հնգամատեանի անհասկանալի է, որպէս և Քրիստոսի գալուստն ու փրկագործութիւնը լրումն է Հնգամատեանի մէջ բացատրուած մարդկային մեղանչման և Աստուծոյ սուրբ Ուխտին։ Ուստի և Հնգամատեանը քրիստոնէական դաւանութեան հիմնական աղբիւրն է, որ մեզ տեղեկութիւն է տալիս ոչ միայն Աստուծոյ միութեան, այլ և արարչագործութեան, նախախնամութեան, տասնաբանեակի, Աստուծոյ ուխտադրութեան ու ճշմարիտ հաւատքի որպիսութեան և այլ նշանաւոր կէտերի մասին։

Նոյն իսկ իբրև պատմական գրուածք Հնգամատեանը բացառիկ տեղ է բռնում մեր առաջ, վասն զի այն ամենահին աղբիւրն է կամ յիշատակագիրն, որ պատմում է մեզ աշխարհի ծագումը, ջրհեղեղը, մարդկանց տեղափոխութիւնը, ազգերի բաժանուիլն ու պետութեանց հաստատուիլը, գիտութեան և արուեստի սկզբնաւորութիւնը, ճշմարիտ օրէնսդրութիւնն ու մանաւանդ օրէնսդրութեան այն դաստիարակչական ուղղութիւնն, որ իւր աստուածայնութեան մէջ հաշտեցնում է խստութիւնն ու ողորմութիւնը։

Այս գրքերումն է բովանդակուած և աստուածահաճոյ նահապետների՝ Նոյի, Աբրահամի, Իսահակի, Յա-

կովքի և իւրեանց նմանների կեանքի պատմութիւնն, որ կրթում է մեզ՝ խուսափել տալով չարից ու մղելով դէպի բարին։ Նահապետական այս աշխարհն ամեն ժամանակ և ամեն հասակում ամենակատարեալ կրթական օրինակն է մարդու համար։

Իւր բովանդակութեան համեմատ Հնգամատեանն ունի նաև գրական աննման գեղեցկութիւն, որ արտայայտւում է իւր պարզութեան մէջ իսկ։ Ոչ միայն Նահապետաց կեանքի նկարագրութիւնը մեր մէջ վսեմ զգացմունքներ է յառաջ բերում, այլ և Մովսէսի ճառերը, Յակովբի բանաստեղծական մարգարէութիւնը, Բաղաամի մարգարէութիւնը, Մովսէսի երգերն ու օրհնութիւնը և այլ աննման կտորներ ուղղակի ոգևորում են ընթերցողին և վեհ զգացմունքների մէջ զօրացնում։

Բնական է, որ քրիստոնէութեան թշնամիներն ամենից շատ աշխատէին ժխտել այս գրուածների հարազատութիւնը նոյնպիսի թունաւոր և վրէժխնդրական քննադատութեամբ, որպէս և Քրիստոսի Աւետարանները։ Վասնորոյ և աւելի ևս ուսումնասիրութեան նիւթ պէտք է դառնայ ամենքիս համար, որպէս զի պարզապէս տեսնենք մեր թշնամիների խօսքի արուեստակութիւնը։

Հրէայք ճանաչեցին Հնգամատեանի մեծ նշանակութիւնն, ուստի և տարուայ բոլոր շաբաթներին ու տօներին կարդում էին ժողովարանում, մի մաս այնտեղից և մէկը մարգարէներից. (Գործք. ԺԳ, 14 – 15. ԺԵ, 21). ըստ որում և Հնգամատեանը բաժանւում էր 54 փարաշոթի (բաժին), իսկ մարգարէք հափթարօթի (արձակմունք)։

Քրիստոնէական եկեղեցին ևս սկզբներում Հնգամատեանը մտցրեց ժամասացութեան մէջ, որպէս և Հայաստանեայց ս. Եկեղեցին կարդում է առաւել սրբոց

Digitized by Google

տօներին, մեծ պահքի չորեքշաբթի և ուրբաթ և աւագ շաբաթի մի քանի օրերում գլխաւորապէս հետեւեալ ընթերցուածքները. Ծննդ. Ա, 1—Գ, 24. Դ, Զ, 9—Թ, 17. ԺԸ, 1—ԺԹ, 30. ԻԲ, 1—18. Ելք. Ա, 1—Բ, 10. Բ, 11—Գ, 22. Դ, 1—Ե, 3. ԺԲ, 1—24. ԺԳ, 22—26. ԺԴ, 24—ԺԶ, 1. ԺԹ, 9—20. Ի, 17—21. ԻԴ, 12—18. ԻԵ, 10—14. Լ, 22—29։ Թիւք գրեթէ միայն ԺԱ, 24—27. Ի, 23—30. Ղևտ. ԺԲ, 6—8. Բ Օր. Դ, 5—12. Զ, 4—Ը, 1. Ը, 11—Թ, 25. Ժ, 1—15. ԺԱ, 10—25։

ԻԳ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՑՔ ՀՆԳԱՄԱՏԵԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Հնգամատեանի առաջին Գիրքը պատմում է թէ ինչ է արել Աստուած մարդկութեան համար ստեղծագործութիւնից մինչև Յովսէփի մահը 5199—1631 տ. Ք. ա։ Այդտեղ պատմուած է մարդու մեղք գործելը կամ պատուիրազանցութիւնը, հետևանքը և յետոյ Իսրայէլի բարեպաշտ նահապետների ընտրութիւնն, որոնց միջոցով Աստուած ճշմարիտ ճանապարհ ցոյց տուաւ բարեպաշտութեան համար։ Ուրեմն առաջին գրքի գլխաւոր նպատակն է՝ ցոյց տալ թէ ինչպէս Աստուած հետզհետէ ընտրեց մարդկութիւնից իւր Ուխտի ժողովուրդը, կրթեց, Եգիպտոսում նեղութեան փորձի ենթարկեց և հասունացրեց իւր ուխտի համար։ Այս գիրքը բովանդակում է ընդամենը 3568 տարուայ պատմութիւն։

Երկրորդ գիրքը պարունակում է Աստուծոյ ուխտադրութիւնը։ Ժողովուրդը Եգիպտոսից ազատուում ել-

նում է և ստանում է Սինայի վրայ Աստուծոյ օրէնքները և Ուխտի վերաբերեալ ուրիշ կարգադրութիւնները. այս է՝ 146 տարուայ պատմութիւն։

Երրորդը նկարագրում է աստուածպաշտական կարգերը, որոնք վերաբերում են քահանայութեան, զոհերի, տօների և այլն, ընդ ամենը մէկ ամսուայ պատմութիւն տալով։

Չորրորդը պարունակում է ժողովրդի անապատական կեանքի պատմութիւնը, որի ընթացքում Աստուած զարգացնում է ժողովրդի մէջ հաւատարմութիւն դէպի ինքն զանազան դէպքերով ու փորձերով. սակայն ժողովուրդն օր ըստ օրէ անհաւատարմութեան ապացոյցներ է տալիս, ենթարկւում է Աստուծոյ դատաստանին և վերջապէս նոր սերունդը բերւում է մինչև Աւետեաց երկրի դուռը։ Այս էլ 39 տարուայ պատմութիւն է։

Եւ հինգերորդ գրքում բովանդակուած է Ուխտի նորոգումը և Աստուծոյ օրէնքի վերահաստատութիւնը, որ և վերջանում է Մովսէս մարգարէի մահուան պատմութեամբ, օրհնութեամբ ու երգով։ Այս գիրքն ունի երկու ամսուայ դէպքերի պատմութիւն։

Բոլոր հինգ գրքերն ունին ընդամենը մինչև Մովսէսի մահը 3752 տարուայ պատմութիւն, որ վերջանում է 1447 տարի Քրիստոսից առաջ ըստ Հայոց թարգմանութեան հաշուին։

Այս համառօտ բովանդակութիւնը պարզ ցոյց է տալիս, որ Հնգամատեանն իսկապէս մէկ գիրք է և իր պարունակած պատմութեամբ սկզբից մինչև վերջը որոշ ծրագրով կանոնաւորապէս ընթացող մի միութիւն է։ Այս միութիւնն ու կանոնաւոր ընթացքն առաւել ևս նկատուի, երբ կուսումնասիրենք իւրաքանչիւր գրքի բովանդակութիւնն ու մասերը և երբ կտեսնենք թէ ինչպէս հեղինակը զարգացնում է պատմութեան այն

Digitized by Google

գծերն ու դէպքերն, որոնք անմիջապէս կապուած են Աստուծոյ փրկագործութեան տնօրէնութեան հետ և ինչպէս հետղհետէ դուրս է ձգում ու միայն հարևանցի յիշատակում այն բոլոր անձանց ու տեղերի կեանքն, որոնք այդ տնօրինութեան գործակից չեն։

ԻԴ.

ՀՆԴԱՄԱՏԵԱՆԻ ՀԱՐԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Քանի որ Հնգամատեանը մի բացառիկ և հիմնադրական նշանակութիւն ունի թէ Ս. Գրքում և թէ քրիստոնէական եկեղեցում, անհրաժեշտ է ներկայացնել այնոր հարազատութեան ապացուցութիւնը։

Ոչ մի հին գիրք այնքան ապացոյցներ չունի իւր հարազատութեան համար, որքան այս։ Ապացուցական գրերթէ բոլոր միջոցները ծառայում են մեզ այստեղ, որոնք և մի առ մի համառօտապէս յառաջ կբերենք, սկսելով նոյն իսկ հեղինակի վկայութիւնից։

Նախ Հնգամատեանն ինքն վկայում է, ինչպէս նախընթացում ևս տեսանք, որ Մովսէսն է իւր հեղինակը։ Այդտեղ կարդում ենք՝ որ Աստուած հրամայեց նորան՝ գրել մի որոշ գրքում Ամաղեկացոց դէմ մղած պատերազմը (Ելք. ԺԷ, 14)։ Յետոյ էլ կարդում ենք, որ Մովսէսը գրեց Աստուծոյ խօսքերը (Ելք. ԻԴ, 4. 7.) և կարդաց ժողովրդի առաջ, ինչպէս յետոյ ևս վկայում է (ԼԴ, 27. Թիւք. ԼԴ, 1–2)։ Նա իւր գրածը յանձնեց Ղևտացոց (Բ. Օր. ԼԱ, 9–26. ԺԷ, 18–19, ԻԸ, 58-61. ԻԹ, 20–27. Լ, 10)։ Իսկ Մովսէսի մահուան պատմութիւնը մի յաւելուած է վերջում, որ անշուշտ գրել է իւր յաջորդը— Յեսու Նաւեան։

Երկրորդ. յաջորդ ժամանակի պատմական գրքերն

Digitized by Google

և ս նոյնն են վկայում, որ Մովսէսն է Հնգամատեանի հեղինակը։ Յեսուայ գիրքը շատ յիշատակութիւն է անում (Ա, 7. 8. Ը, 31. 34. ԻԳ, 6. ԻԳ, 26)։ Դատաւորացը շատ յաճախ օգտւում է Հնգամատեանից. (զոր. Դատ. Բ, 1—3. Ելք ԼԳ, 12. 13. Դատ. ԻԳ, 32. 33. Թիւք ԼԳ, 55 Բ Օր. Է, 2. 5. 16. ԺԲ, 3.—Դատ. ԺԱ, 15 Հմմտ. Թիւք Ի, 14—21. ԻԱ, 21—24 և այլն)։ Թագաւորաց Ա. ու Բ. գրքերն, որոնք Սամուէլինն են, պարզ ցոյց են տալիս, որ այդ ժամանակ Իսրայէլացիք վարւում էին ըստ Հնգամատեանի օրինաց. (զորօր. Ա. Թագ. Ա, 3. Բ, 13. Հմմտ. Բ. Օր. ԺԸ, 3։ Ա Թագ. ԺԵ, 29. Հմմտ. Թիւք. ԻԳ, 19 և այլն)։ Ապա և միւս պատմական գրքերը վկայում են Հնգամատեանի հարազատութեան համար, որպէս Գ. Թագ. Բ, 3. Զ, 12. Թ, 11. ԺԱ, 33. Դ. Թագ. Ժ, 31. ԻԲ, 8. ԻԲ. 21. և այլն. Նոյնպէս և Մնաց. գրքի առաջին ութը գլուխները կրկնութիւն են Մովսէսի ազգաբանութեան։ Եւ եթէ Հընգամատեանը մի կողմ թողնենք, չենք հասկանալ Իսրայէլացոց մնացեալ բոլոր պատմութիւնը, որ հիմնուած է Մովսէսի պատմութեան վրայ, որպէս ցոյց է տալիս Սինայի և անապատական կեանքի բանաստեղծական յիշատակութիւնն անգամ Դեբովրայի երգում ու սաղմոսներում (Դատ. Ե, 5. Սաղմ. ԿԷ, 8. 18. Գ. Թագ. ԺԹ, 8)։ Եւ Իսրայէլացոց արդարութիւնը նոյն իսկ Հնգամատեանի օրինաց հաւատարմութիւնն էր և Սինայից ստացուած պատուիրանների կատարումը, որ միշտ պահանջւում էր յանուն Աստուծոյ և յանուն Մովսիսի միջոցով ժողովրդի հետ դրուած Ուխտի։

Երրորդ՝ բոլոր մարգարէները՝ սկսեալ սաղմոսներից՝ լիովին սնուած են Մովսէսի պատմութեամբ և յենւում են ըստ ամենայնի նորա վրայ։ Թէ սաղմոսերգուների և թէ մարգարէների մեծերը՝ Դաւիթն ու Եսային

իւրեանց բանաստեղծութեամբ ու գրական վսեմութեամբ Մովսէսի աշակերտներն են և Նոցա գրուածները Մովսէսի գրքերով են հասկանալի դառնում։ Մովսէսի երգերն ուղղակի սնունդ են տուել յաջորդ ժամանակի երգերին, որպէս Դեբովրայինն ու Սաղմոսները։ Իսկ մարգարէներն ոչ միայն յիշում են Մովսէսի պատմած դէպքերից շատերն, այլ և բառացի վկայաբերում են Աբդիուն, Եսային, Երեմիան և այլ հնագոյն մարգարէները (տես. զորօր. Աբդ. 18—19 և Թիւք ԻԴ, 18—19. Ելք ԺԵ—ԺԶ. Երեմ. ԿԸ. Աբդ. 4. և Թիւք ԻԴ, 21. Յովէլ Բ, 3. և Ծն. ԺԳ, 10 և այլն)։

Զորրորդ՝ Նոր Կտակարանում ևս թէ Քրիստոս ու թէ իւր առաքեալները հաստատում են հնգամատեանի հարազատութիւնը, որպէս յիշեցինք և նախընթացում (տես. Մարկ. Ժ, 5. ԺԲ, 17. 26. Մատթ. ԺԹ, 7. Յովհ Ա, 45. Ե, 45—46. Ղուկ. ԻԴ, 27. 44. Հռ. Ժ, 5. Գործք ԺԵ, 21. Եբր. Զ, 13—14. ԺԲ, 21)։ Այդպէս և ոչ Հրէայք և ոչ քրիստոնէական եկեղեցին բնաւ չեն կասկածել որ հնգամատեանը Մովսէսի հեղինակութիւնն է։

Վերջապէս հնգամատեանի բովանդակութիւնն ևս հաստատում է իւր հարազատութիւնը. Նախ բովանդակութիւնից տեսնում ենք, որ գրուած է Աւետեաց երկրի գրաւումից առաջ, որպէս և լեզուի յատկութիւններն այդ ժամանակին են յատուկ։ Իսկ եթէ երկրի գրաւումից յետոյ գրուած լինէր, պէտք է յիշուէին և այն քաղաքներն, որոնք այդ ժամանակ յայտնի դարձան և հռչակուեցան, զորօր. Տիւրոսն ու Երուսաղէմը։

Երկրորդ՝ Սամարացոց հնգամատեանն, որ գրուած է Փիւնիկեան տառերով, պարզ ապացոյց է իւր հնութեան, վասն զի անշուշտ պետութեան բաժանուած ժամանակներումն են նոքա վերցրել այդ գրուածքն,

Digitized by Google

որին և հաւատարիմ մնալով՝ հակառակուել են Իսրայէլացոց մարգարէներին։ Ուստի և յետուան մարգարէների գրուածները չընդունուեցան։

Երրորդ՝ Հնգամատեանում նկարագրուած Եգիպտոսը, այդ երկրին վերաբերեալ անունները, պետական միութեան ու սահմանի քաղաքների յիշատակութիւնը և այլն միմիայն այդ ժամանակի Եգիպտոսն են ներկայացնում, որպէս ցոյց են տալիս եգիպտական նորագիւտ արձանագրութիւնք ու հնութիւնք և ոչ յետուան ժամանակինը։ Հնգամատեանից Ծն. ԼԹ մինչև Ելք. ԺԵ գլուխների ու Եգիպտոսի արձանագրութեանց համեմատութիւնը ուղղակի զարմացնում է եգիպտաբաններին իւր նմանութեամբ ու համապատասխան բովանդակութեամբ։ Նոյնն են ցոյց տալիս և Բ. Օրինաց մէջ յիշուած շատ կարգադրութիւններ, որպէս Դ, 15—18. ԺԱ, 10. ԺԷ, 16. Ի, 5. ԻԷ, 1—8. ԻԵ, 2. ԻԸ, 60. և այլն։ Եգիպտական բառեր ևս կան Հնգամատեանում, որոնք ուրիշ հնացած բառերի հետ այլ ևս յետին ժամանակի գրութեանց մէջ չեն գործածւում։

Այսքան ապացոյցներն արդէն ինքնախօս վկաներ են Հնգամատեանի հարազատութեան։

ԻԵ.

ՀԵՐՔՈՒՄՆ ԳԼԽԱՒՈՐ ԱՌԱՐԿՈՒԹԵԱՆՑ

Արդէն «Ս. Գրքի բացասական քննաբանութիւնը» գլխում համառօտակի յառաջ բերինք հակառակ քննաբանների հիմնական հայեացքները։ Դոցա վերջնական եզրակացութիւնը յանկաւ այն կէտին՝ որ Հին Կտակարանի շատ գրուածներ՝ մանաւանդ Հնգամատեանը զանազան գրութիւններից խմբագրուած է, ըստ որում և

Digitized by Google

Հալլէի պրօֆեսոր Կաուչը իւր համընթաց դասախօսների հետ հրատարակեց Հին Կտակարանի մի նոր թարգմանութիւն այդպիսի քննադատական ոգևորութեամբ և նշանակելով լուսանցքի վրայ իւրաքանչիւր երեսի, պարբերութեան և նոյն իսկ տողի ու բառի աղբիւրը, որոնցից հիւսուել է իբր թէ ամբողջովին խմբագրուելով։ Այս տեսութիւնը կամ ենթադրութիւնն, որ ոչ միայն հազարաւոր դարեր առաջ մեծ գիտնական հմտութիւն կպահանջէր, այլ և թերևս այժմեան գիտնականաց ձեռքում մի անիրագործելի աշխատանք կլինէր, ձգտում է ուղղակի ցոյց տալ, որ Հնգամատեանը Մովսէս մարգարէի գրածը չէ և ըստ ոմանց Մովսէսն էլ գոյութիւն չէ ունեցել։

Այս առասպելական քննաբանութիւնն այնքան ծիծաղելի երևաց, որ յիսուն տարի առաջ անգլիացի մի արքեպիսկոպոսի տուած գաղափարով մի բանասէր հրատարակեց Comme quoi Napoléon n'a jamais existé պատկերազարդ գրուածքը։ Հեղինակը ցոյց է տալիս նոյնպիսի քննաբանական փաստաբանութեամբ, որ Նապօլէօն մեծը գոյութիւն չէ ունեցել։ Նա ապացուցանում է թէ Նապօլէօնը արեգակն է ու նորա պատմութիւնը արեգակի չաստուծոյ պատմութիւնն է Յունաց առասպելաբանութեան նմանողութեամբ շինուած, ըստ որում և Նապօլէօն նշանակում է ճշմարիտ Ապօղօն։ Այդ պարզ է, քանի որ նա միջերկրական ծովի մի կղզում է ծնուել, մօր անունը Լետիցիա յունական Լետօ կամ Լետօնա է. նորա երեք քոյրերը քոյրեր չեն, այլ երեք շնորհներ, չորս եղբայրները տարուայ չորս եղանակները, 12 զօրապետները 12 կենդանակերպեր, ինքն էլ սկսում է իւր պատերազմական ընթացքը արևելքում և արևմտեան ծովի մի կղզում մայր մտնում և այլն և այլն։ Հետևաբար նորա պատմութիւնը մի առասպել է

Digitized by Google

և ուրեմն նորա կարծեցեալ 12 տարուայ գահակալութեան վերջին տարին 1814 թիւը պաշտօնական թղթերում կոչւում է Լիւդովիկոս ԺԸ-ի տասնիններորդ տարին։

Սրամիտ հեղինակն այս երգիծական գրութեամբ ցոյց է տալիս նորագոյն՝ մանաւանդ Հնգամատեանի՝ քննադատների հակառակ ուղղութեան ծիծաղելի վիճակն, որում իւրեանց նշանաբան են դրել Հնգամատեանի հարազատութեան ժխտումը։ Այս միայն ի դէպ յիշելով, յառաջ բերենք դոցա գլխաւոր առարկութեանց անտեղութիւնը, որքան ներում է այս համառօտ դասագրքի ծաւալը։

I. Առարկութիւն Աստուծոյ տարբեր անունների հիմամբ։

Հակառակորդները նախ ասում են, որ բնագրում Ծննդոց գրքում ու Ելից առաջին հինգ գլուխներում երբեմն գործ է ածուած Աստուծոյ համար միմիայն Էլոհիմ (Աստուած) անունը և երբեմն Եհովա (Տէր) և հետևցնում են որ տարբեր հեղինակների գրութիւններ են, մէկն այս անունով, միւսն այն [1]։

Այս նկատել են և Հին Հայրերից ոմանք, ինչպէս Տերտուղիան, ս. Յովհան Ոսկեբերան և այլք, սակայն այդ ապացոյց չէ, որ իբր թէ Մովսէսի աւանդածը չէ, քանի որ նորա ժամանակ այդ երկու անուններն էլ յայտնի էին (Տես. Ելք Զ, 3. որպէս և կազմուած է Մովսէսի մօր անունը Զ, 20. Թիւք. ԻԶ, 51. Համտ. ԾՆ.

---

[1]) Ս. Գրիգոր Տաթևացին հաշուել է, որ Հնգամատեանում Հայոց թարգմանութեան մէջ «Աստուած» պատահում է 505 անգամ. «Աստուծոյ» 291, «Աստուծով» 1, իսկ «Տէր» 1105 անգամ, «Տեառն» 1083, «ի Տեառնէ» 46։

Digitized by Google

ԻԲ, 2. 14. Մորիահ նշանակում է՝ Եհովատես. Բ Մնաց. Բ, 25. Գ, 1. Է, 8 և այլն)։ Նոյն իսկ Ելք Զ, 3 ասուած է, որ Արարիչը յայտնուել է նահապետներին Էլ-Շադդայ (ամենակալ) անունով, մինչդեռ Մովսէսին յայտնուեց Եհովա («Է») անունով, ուստի և Մովսէսն այդ յայտնութիւնից յետոյ առաւելապէս այդ նոր անունն է կիրարկում։ Բնական էր, որ նա միշտ այդ անունը չգործածէր, զի Հրէաների մէջ աւանդաբար երկիւղածութեամբ էին վերաբերւում առ Աստուծոյ անունը, կարդալով «Եահվէն» «ադոնայ» (Տէր). Մասորետներն էլ ձայնաւորաց սխալ կէտադրութեամբ դարձրել են Եհովա, որ չկարդան։ Մովսէսը սկսում է յաճախ գործածել այդ անունը միմիայն յայտնութիւնից յետոյ։ Ոչ մի տեղից չենք տեսնում, որ մի առանձին հակադիր տարբերութիւն լինէր Եհովա և Էլոհիմ անունների մէջ։ Այդպիսի տարբերութեան նշանակութիւն կայ միմիայն Էլ-Շադդայի և Եհովայի մէջ, ուստի և Մովսէսը առանց ընտրութեան գործ է ածում թէ Եհովա ու թէ Էլոհիմ, որոնցից առաջինը Ուխտի Աստուծոյ անունն է նշանակում, իսկ երկրորդը գործ էին ածում նաև չաստուածների համար և հետևաբար նայելով տեղին՝ մէկն կամ միւսն է կիրարկուած։

Կարող ենք ընդունել ևս այս, որ Մովսէսը կունենար իւր ձեռքի տակ իւր գրաւոր աւանդութիւններըն, որոնց մէջ այս կամ այն անունը լինէր տրուած Աստուծոյ և նա գործածելով այդ յօդուածները՝ անփոփոխ թողնէր, զորօր. արարչագործութեան ու ջրհեղեղի պատմութիւնը կար Աբրահամի ծննդավայրում, որպէս ցոյց են տալիս նորագոյն գիւտերը։ Եթէ գրաւոր աղբիւրներ էլ եղած չլինէին, Մովսէսն անշուշտ կլսէր իւր նախորդներից բերանէ բերան աւանդածները նախկին մարդկանց կեանքի և ունեցած տեղեկութեանց մա-

Digitized by Google

սին։ Չէ՞ որ Աստուած երկար կեանք տուաւ նահապետներին որդւոց որդի յայտնելու նախնական գործերն, ուրեմն ինչ պէտք է արգելէր Մովսէսին գրի անցնելու այդ աւանդութիւնք մինչեւ անգամ անփոփոխ։

Այս կէտը հաստատւում է նաեւ Հնգամատեանի լեզուով, որ նոյն է սկզբից վերջը, բայց ունի բառեր, որոնք Մովսէսի ժամանակից յետոյ այլ եւս չեն գործածւում։ Երկրորդ՝ հաստատւում է եւ այն փաստերով, որ «խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի» խօսքերը կրկնւում են միմիայն Ծննդոց գրքից յետոյ, երբ Աստուած յայտնում էր նորան «բերան ի բերան»։ Եւ երրորդ՝ Մովսէսը աւանդում է իւր լսածներն այնքան, որքան իմանում է եւ յաճախ չէ վերջացնում, որպէս Ղամէքի ու Նեբրովթի պատմութիւնը (Ծն. Դ, 23 - 24. Ժ, 9)։

Արդ՝ մեծ մասամբ այդ երկու անուանք խառն են գործածւում եւ չի էլ կարելի մէկ կամ միւս անունը պարունակող կտորներից փոքր ի շատէ կապով ամբողջութիւն կազմել, որ կարողանանք ասել թէ Մովսէսն այդպիսի ամբողջութիւններ ի մի է ձուլել։

II. Առարկութիւն կարծեցեալ հակասութիւններով։

Երկրորդ. Հակառակորդներն իւրեանց առարկութիւնը հիմնում են իբր թէ Հնգամատեանի մէջ գտած հակասութեանց վրայ։ Դոցա նկատած գլխաւոր հակասութիւնք այսոնք են.

Նախ ասում են թէ Ծն. Ա եւ Բ, 4—25 իրար հակադիր պատմութիւններ են մի եւ նոյն արարչագործութեան մասին. սակայն Բ. գլուխը ոչ թէ նորից է այդ պատմում, այլ յառաջ է բերում մարդու ստեղծման մանրամասնութիւնը, որպէս զի հասկացնէ նախամարդու պատուիրազանցութիւնը։

Digitized by Google

Հակառակորդները տարբեր տեղերի մէջ նոյն անուններըը գտնելով նոյնպէս հակասութիւն են համարում, զորօր. Քամի և Սեմի ցեղերում (Ծն. Ժ, 7. 13. և Ժ, 22. 28. 29. ԻԵ, 3). մինչդեռ դոքա տարբեր մարդիկ են նոյն անուններով։

Հակասութիւն չէ և այն, որ Ռեբեկան ըստ Ծն. ԻԷ, 42—45 խորհուրդ է տալիս Յակոբին փախչել Միջագետք, իսկ ԻԷ, 46. ԻԸ, 1—5 ասուած է, որ Յակոբը գնաց ամուսնանալու։ Յակոբն անշուշտ երկու նպատակ ունէր Լաբանի մօտ գնալիս։

Հակասութիւն չէ, որ ըստ Ծն. Լ, 25—43 Յակոբը իւր հմտութեամբ է հարստանում, իսկ ըստ ԼԱ, 5—16 Աստուծոյ օրհնութեամբ, վասն զի առանց Աստուծոյ օրհնութեան չի օգտիլ հմտութիւնը և Աստուած չէ օրհնում անաշխատ մարդուն (հմմտ. ԼԱ, 42)։

Հակասութիւն չկայ Ծն. ԼԲ, 3 և ԼԶ, 6—8. (հմմտ. ԼԴ, 14—16) մէջ, որ ասում է թէ Եսաւը նախ քան Յակոբի գալը Եդոմումն էր և յետոյ այնտեղ հաստատուեց, վասն զի առաջ իբրև թափառական հովիւ գալիս էր Պաղեստին, իսկ յետոյ բոլորովին չեկաւ։

Երկու տեղ Եսաւի կանանց տարբեր կոչուիլն էլ հակասութիւն չէ (Ծն. ԻԶ, 34. ԻԸ, 9. և ԼԶ, 9). այլ կարող է գրութեան սխալ լինել և կամ մի և նոյն անձը կարող էր և ուրիշ անուն կամ մականուն ունենալ։ Այդպէս և հակասութիւն են համարել, որ իբր թէ Մովսէսի աները մի տեղ Յոթոր է կոչուած, մի տեղ Ռագուէլ և մի տեղ Յոբաբ (Ելք. Գ, 1. Գ, 18. ԺԸ, 1. և Բ, 18. 21. Թիւք. Ժ, 29), մինչդեռ Ռագուէլը Յոթորի հայրն է, իսկ Յոբաբը հաւանօրէն Մովսէսի քենեկալը, զի եբրայերէն քոթեն թէ աներ է նշանակում և թէ քենեկալ։

Digitized by Google

Հակասութիւն չէ և Յովսէփի ծախուելը ըստ Ծն. ԼԷ, 25. 27. 28. և ԼԹ, 1. Իսմայէլացոց, իսկ ըստ ԼԷ, 28. 36. Մադիամացոց, զի Իսմայէլացիք էին կոչւում Բեդուինները և նոցա մի ցեղն են Մադիամացիք։

Այդպէս և Եզք Դ, 20 ու ԺԸ, 2–4. կարծեցեալ հակասութիւնը լուծւում է Եզք ԺԸ. 2 միջոցով։ Ըստ այսմ և ուրիշ տեղերից հակառակորդները հակասութիւններ են հնարում, որոնք լուծւում են ուշադիր ընթերցանութեամբ հասկանալով։ Նոքա ուզում են օգտուել իւրեանց առարկութեան համար, յառաջ բերելով Հնգամատեանից և կրկնութիւններ, սակայն տարբեր ժամանակ ու տարբեր կամ նոյնանման հանգամանքներում միշտ կարող են նոյն դէպքեր պատահել, որպէս ցոյց է տալիս և պատմութիւնը։ Ինչպէս և յաճախ մի և նոյն անունով երկու քաղաք է պատահում, կամ երկու տեղ և կամ երկու անձն (զորօր. Դան, Սողոմոն և այլն Ծն. ԺԴ, 14. Յես. ԺԹ, 47. Դատ. ԺԸ, 29. Բ Թագ. ԻԴ, 6.—Ծն. ԼՁ, 35. Համա. Գ Թագ. ԺԱ, 14.)։ Հարկաւոր է միայն հաւատքով կարդալ թէրև Աստուծոյ մարգարէի գրուածք և ամենայն աներևոյթ հակասութիւն ու տարակուսանք կփարատուի։

ԻՁ.

ՀՆԳԱՄԱՏԵԱՆԻ ԲԱՐՁՐ ՔՆՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Բացասական քննաբանութիւնը կատարելով իւր դերը, մեծ զարկ տուաւ Ս. Գրքի և մասնաւորապէս Հնգամատեանի ուսումնասիրութեան։ Արևելքին անծանօթ կամ կիսածանօթ այդ քննադատները պատճառ եղան, որ շատ գիտնականք լրջութեամբ զբաղուեցան Պաղեստինով և զարմացան Ս. Գրքի հակառակորդների դատո-

Digitized by Google

ղութեանց վրայ։ Զորօր. Անգղիացի Գոնդար գիտնակա-
նը գրում է 1891-ին, երկար ժամանակ Պաղեստինում
ապրելուց յետոյ. «Ես շատ ուսումնասիրեցի այն, ինչ որ
գրել են Կոլենզօ, Էվալդ, Կիւնեն Վելհաուզեն։ Աւագ.
այդ հեղինակների քննութեան եղանակը, որոնք գրել
են առանց արևելքը երկարատև ու գործնականապէս
հետազօտելու, իսկոյն երևան է հանում թէ ինչ թե-
րութիւն ունին։ Դոցա քննաբանութիւնը դատարկ գըլ-
խացաւանք է։ Այն առարկութիւններն, որոնք դոցա սե-
փական աչքի առաջ այդքան ուժեղ են կարծւում, գրե-
թէ նշանակութիւն չունին այն մարդու աչքում, որ
ճանապարհորդել է Արևելքը»։

Այդպիսի ձայները արդէն բաւական էին, որ լուրջ
գիտնականներ ելնէին և այդ քննադատների ամբար-
տակները խորտակէին։ Մի շարք գիտնականներ, որպէս
Ռամսէյ, Ռոլինսոն, Սէյս, Հոմմել և այլք լեզուաբա-
նական ու հնագիտական նորանոր գիւտերով մեծ հա-
րուած տուին այդ բացասական քննաբանութեան, ըստ
որում և դոցա գործը յայտնի դարձաւ «Բարձր քննա-
բանութիւն» կոչումով։ Եւ մինչդեռ բացասական քննա-
բանները ուղղակի մերժելով ամենայն յայտնութիւն,
քննաբանում են Հնգամատեանն իբրև մի աշխարհային
գրուածք ըստ բնական զարգացման, դոցա հակառակ
լուրջ ու ճշմարտասէր քննաբանները գիտնական ճանա-
պարհով հերքում են դոցա ասածները և պատմական
շաւղով ապացուցանում Հնգամատեանի հարազատու-
թիւնն և աստուածայնութիւնը։ Եթէ Հոմմելը լեզուա-
բանական հետազօտութեամբ և հնաբանական արձանագ-
րութեանց գիւտերով է այդ հաստատում, ցոյց տալով
որ Հնգամատեանի հնաբանական յիշատակներն իւրեանց
ժամանակին են պատկանում, ամերիկացի Գրին պրոֆե-
սորը ապացուցական շաւիղն է բռնում, հերքելով հա-

Digitized by Google

կառակորդների առարկութեանց հիմքերը. իսկ Ճեմս Ռոբերտսոնը պատմական փաստերն է յառաջ բերում մինչև անգամ Հին Կտակարանի ամենահին ճանաչուած գրողների՝ ինչպէս Ամովսի, Ովսէի, Դեբովրայի և այլոց վկայութիւններից, որոնք իւրեանց մշակուած լեզուով հաստատում են Մովսիսեան ժամանակի ծաղկած գրականութեան գոյութիւնը և այդ հին կեանքի պատմական դէպքերի վրայ հիմնուելովը վաւերացնում են Հնգամատեանի հարազատութիւնը։

Այս քննաբանութեան մէջ նշանաւոր է այն, որ Հնգամատեանի հարազատութիւնը հաստատւում է ոչ միայն Ս. Գրքի ներքին փաստերով ու գիտնական ապացուցութեամբ, այլ մանաւանդ արտաքին աղբիւրների օժանդակութեամբ, ըստ որում Աբրահամի պատմութիւնը կապւում է Բաբելոնի հետ և այնտեղի սեպագրներով հաստատւում, Յակովբինն ու Յովսէփինը Եգիպտոսի յիշատակներով, իսկ Մովսէսինը Եգիպտոսի և Արաբիայի հնաբանական հետազօտութիւններով։ Այսպիսի քննական հաստատութեան առաջ այլ ևս սնանկ է հրատարակւում բացասական քննադատների օդային ամրոցների ամրութիւնը։ Ըստ որում և Հոմմելը գեղեցկապէս ասում է. «ճշմարտութիւնը պէտք է յաղթէ։ Յուշարձանները շատ պարզ լեզուով են խօսում և այժմ արդէն նոր ժամանակ է սաւառնում, երբ պէտք է Հնգամատեանի՝ այսպէս կոչուած՝ նոր քննաբանութեան յառաջադրածներն իբրև հնացած մոլորութիւն թողնեն և օրուայ հարցերին անցնեն»։ Ապա յիշելով Ռոբերտսոնի «Հրաշալի» գրքի ծանր հարուածները բացասական քննադատութեան գլխին և Սուէդացի Ֆրիզի իւր հետ համաձայն հայեացքը, խորհուրդ է տալիս Հին Կտակարանի պատանի աստուածաբաններին, որ փոխանակ ապարդիւն աշխատանքի մատնուելու, պրպտելով ու կրկտելով՝ թէ Հնգամա-

Digitized by Google

տեանի այս ու այն տողն ու կէս տողը որպիսի աղբիւրից է վերցրած, փոխանակ այդ դատարկ պարապմունքին, նուիրել իւրեանց երիտասարդական ոյժերն ասորա-բաբելական և Հարաւ արաբական արձանագրութեանց արդիւնաւէտ ուսումնասիրութեան, որոնց անսպասելի արդիւնքներով կարող կլինին մեծ ծառայութիւն մատուցանել Ս. Գրքի գիտութեան։

ԻԷ.

Ծ Ն Ո Ւ Ն Դ Ք

Հնգամատեանի առաջին գիրքը Ծննդոցն է. Մովսէսը իւր գրքերին անուն չէ տուել, բայց Հրէայք իւրաքանչիւր գիրք առանձին անուանելու համար սկսան գրքի առաջին բառով կոչել, ուստի և այս գրքի անունը մնաց բերեշիթ՝ այսինքն՝ «իսկզբանէ»։

Հրէայք այս գիրքը կոչում են նաև «սեփեր գեցիրա», այսինքն ‹գիրք արարածոց› (Ծն. Բ, 4), որ յունարէն թարգմանութեան մէջ կոչուեց գենեզիս՝ այսինքն գիրք ծագման կամ ծննդոց։

Անունն արդէն ցոյց է տալիս, որ այս գրքի գլխաւոր բովանդակութիւնն աշխարհի ստեղծումն և մանաւանդ Հին Կտակարանի եկեղեցու ծագման մասին է, որ հիմնուեց Մովսէսի օրով և հետզհետէ կազմակերպուեց։ Այս գրքի ամբողջ պատմութիւնը վերաբերում է մի երկար ժամանակի՝ այն է՝ մարդու անկումից մինչև Յովսէփի մահը Եգիպտոսում, որպէս տեսանք։

Ծննդոց գրքի նպատակն է ցոյց տալ Աստուծոյ եկեղեցու սկիզբը երկրի վրայ և Աստուծոյ այն տնօրինութիւնն, որով նա կամեցաւ մեղքի մէջ թաւալուած մարդկանց միջից ազատել և պահպանել մի սուրբ ճիւղ։

Digitized by Google

Այսով միաժամանակ ցոյց է տալիս Հրէաներին, որ նոքա են այն ժողովուրդն, որին Աստուած ընտրել է հեթանոսաց միջից ապագայ մեծ տնօրինութեան համար նշանակելով։ Նա յայտնում է Հրէաներին, որ Աստուած նոցա տիրապետութեան է տալու Աւետեաց երկիրը (Ծն. ԻԲ, 17)։

Ամբողջ գիրքը բաժանւում է երեք մասերի. նախ մի կարճ ներածութեամբ (Ա – Բ, 3) պատմուած է աշխարհի և մարդու ստեղծումը, որով պատրաստւում է Աստուծոյ եկեղեցու հաստատութիւնը։ Երկրորդ՝ Աստուծոյ եկեղեցու պատմութիւնը նահապետաց ժամանակ, այսինքն դրախտի մէջ եկեղեցին հաստատելուց մինչև Աբրահամի կոչումը (Բ, 4—ԺԱ, 26). և երրորդ՝ եկեղեցու պատմութիւնը գաղթող նահապետների ժամանակ, այսինքն Աբրահամից մինչև Յովսէփը Եգիպտոսում (ԺԱ, 27—Ծ)։

Այս երկու բուն մասերը Հրէաների մէջ տրոհւում են տասը մասերի, որոնք կոչւում են թոլդոթ այսինքն՝ ծագումն, ծնունդք, որ բառով սկսւում է բնագրում իւրաքանչիւր մասը։ Ուրեմն

1. Ծնունդք երկնի և երկրի Բ, 4—Դ, 26։
2. Ծնունդք Ադամի և իւր զաւակաց Ե—Զ, 8։
3. Ծնունդք Նոյի Զ, 9—Թ, 29։
4. Ծնունդք Նոյի որդւոց Ժ—ԺԱ, 9։
5. Ծնունդք Սեմի ԺԱ, 10—26։
6. Ծնունդք Թարայի և Աբրահամի ԺԱ, 27—ԻԵ, 11։
7. Ծնունդք Իսմայէլի ԻԵ, 12–18։
8. Ծնունդք Իսահակի ԻԵ, 19—ԼԵ։
9. Ծնունդք Եսաւի ԼԶ։

և 10. Ծնունդք Յակովբի ԼԷ – Ծ։

Ըստ այսմ սկզբի գլուխը մի տեսակ յառաջաբան է Աստուծոյ ընդհանուր արարչագործութեան մասին,

Digitized by Google

որ կոչւում է «Գիրք արարածոց». իսկ յետոյ իւրաքան-չիւր մասի վերնագիրն է՝ «այս են ծնունդք»՝ այսինքն ազգաբանութիւն կամ պատմութիւն Նոյի և այլն, որոն-ցից իւրաքանչիւրը պատմելուց յետոյ Հեղինակը ամփո-փում է իւր ասածներն և այս անցնում միւս ազգա-բանութեան։ Այդ պատմութեանց մէջ ևս նա պատմում է միմիայն էական ճիւղագրութիւններն ու նոցա կեան-քի դէպքերը, իսկ Աստուծոյ եկեղեցու հաստատութեան համար առանձին նշանակութիւն չունեցած անձերին, դէպքերն ու կեանքը դուրս է ձգում իւր ծրագրից։ Այդ-պէս և Ա. գլխում մարդը կրաւորական դիրք ունի իբ-րև Աստուծոյ լոկ արարածը, իսկ ապա նա պատմւում է իւր ներգործական դիրքով, որպէս իւր ազգաբանու-թեան գլուխ։

Դասարանական ընթերցանելիք.

1. Աշխարհի ստեղծումը Ա.—Բ, 3.

2. Դրախտ և Եկեղեցու սկզբնական վիճակը. Բ, 4—25.

3. Մարդու մեղանչումը, Աստուծոյ դատաստանն ու աւետիքը. Գ.

4. Կայէն և Հաբէլ. Դ, 1—16.

5. Մարդկանց ապականուիլն ու Նոյի ընտրուիլը. Զ, 1—22.

6. Ջրհեղեղ. Է.

7. Աստուծոյ օրհնութիւնն և ուխտադրութիւնը. Ը, 1—Թ, 19.

8. Բաբելոնի աշտարակաշինութիւնը, լեզուախառնումը և մարդկանց ցրուիլը. Թ, 1—9.

9. Աբրահամ, Աստուծոյ ութ անգամ երևալն ու ուխտադրութիւնը. ԺԲ, 1—9. ԺԳ, 13—18. ԺԴ,

Digitized by Google

14—ԺԵ, 18. ԺԷ, 1—27. ԺԸ, 1—21. ԻԱ, 9—14. ԻԲ, 1—19։

10. *Աստուծոյ ուխտը Իսահակի հետ.* ԻԵ, 21—24. ԻԶ, 1—5. 23—25.

11. *Աստուծոյ ուխտադրութիւնը Յակովբի հետ.* ԻԸ, 10—22. ԼԵ, 1—15. 24—32։

12. *Յակովբի մարգարէական օրհնութիւնը.* ԽԸ, 1—22. ԽԹ։

13. *Յակովբի թաղումն ու Յովսէփի յուսադրութիւնը Իսրայէլացոց դարձի մասին.* Ծ։

ԻԲ.

ԵԼՔ

Հնգամատեանի երկրորդ գիրքը կոչւում է Հրէաների մէջ Վէէլլեշեմոթ՝ այսինքն «Այս են անուանք». իսկ Եօթանասունք կոչեցին Էկզոդոս՝ այսինքն՝ Ելք, վասն զի այս գրքում պատմուած է Իսրայէլացոց ելքը Եգիպտոսից և նոցա կեանքը մինչև Սինա սարը հասնելը։ Այս պատմութեան ժամանակը տևում է մօտ 145 *տարի, այսինքն Հրէաների պատմութիւնը Յովսէփի մահից մինչև վկայութեան խորանի հաստատութիւնը Սինայի մօտ։ Սոյն ժամանակի հաշիւը տալիս է և Պօղոս առաքեալը* (Գաղ. Գ, 16—18)։

Ելից գրքի նպատակն է՝ հաստատ դրոշմել Աստուծոյ հաւատացեալների մտքի մէջ Հին Ուխտի եկեղեցու վերջնական կազմակերպութիւնը և տալ ժողովրդին մի օրինագիրք, որ կանոնաւորէ ու ճշդէ նորա եկեղեցական-բարոյական և հասարակական կեանքն, ուղղելով դէպի Աստուծոյ տնօրինութեան զարգացումը։

Գրքի բովանդակութիւնը բաժանւում է երեք ո-

Digitized by Google

րոշ մասերի։ Առաջին մասը (Ա—ԺԲ, 36) պատմում է ելքին նախընթաց դէպքերը, այն է՝ նախ. Ժողովրդի նեղութիւնները Եգիպտոսում (Ա). 2 Մովսէսի 40 տարուայ պատմութիւնք (Բ). 3. Մովսէսի կոչուիլն ու Եգիպտոս դառնալը (Գ—Դ). 4. Նորա ջանքերը Իսրայէլացոց ազատութեան համար (Ե—Զ) 5. ինը պատիժները Փարաւոնի վրայ. (Է—Ժ). 6. Զատկի կարգադրութիւնը և տասներորդ պատիժը (ԺԱ—ԺԲ, 36)։

Երկրորդ մասը ԺԲ, 37—ԺԸ) ներկայացնում է բուն ելքը։ Այս ևս պատմում է 1. Առաջին բանակետղը, զատկի կարգը, անդրանկաց նուիրումը և ամպէ սիւնը (ԺԲ, 37—ԺԳ). 2. Անցումը Կարմիր ծովով (ԺԴ—ԺԵ, 21.). 3. Իսրայէլացոց ճանապարհորդութիւնը անապատում և հրաշապէս կերակրուիլը (ԺԵ, 22—ԺԷ, 7) 4. Յաղթութիւն Ամաղէկացոց վրայ և Յոթորի այցը. (ԺԷ, 8—ԺԸ)։

Իսկ երրորդ մասը (ԺԹ—Խ) պարունակում է օրէնսդրութիւնն ու վկայութեան խորանի կազմակերպութիւնը, որ է 1. Աստուծոյ ուխտագրութիւնը և ժողովրդի գալը Սինայի մօտ (ԺԹ—Ի). առաջին օրէնքները և զգուշացումն Քանաան մտնելու համար (ԻԱ—ԻԳ), 19. ԻԳ, 20—ԻԴ, 11). 2. կարգադրութիւնք ուխտի տապանակի ու կվայութեան խորանի համար. (ԻԴ, 12—ԼԱ, 18). 3. Ժողովրդի ուրացութիւնն ու հետևանքները. (ԼԲ—ԼԴ). և 4. վկայութեան խորանի շինութիւնը (ԼԵ—Խ)։

ԻԹ.

ՕՐԷՆՍԴՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՀԻՄՔԵՐԸ

Իսրայէլն ընկնելով Եգիպտոս, պէտք է այնտեղ սովորէր հառաչել ու փափաքել փրկութեան, այն ծանր լծի տակ, որը դրուեց նորա վրայ Յովսէփի մահից յե-

Digitized by Google

տոյ։ Այդ ժամանակ նա պէտք է լքէր իւր առաջուայ փառաւոր կեանքը և յուսալից աւետիքներն, որոնց հակառակ էր նորա այն ժամանակի դրութիւնը. նա պէտք է լքէր այդ ամենն և նուիրուէր Աստուծոյ կամքին։ Ժողովուրդը Եգիպտացոց հետ յարաբերութիւն ունենալով, շատ անգամ մոլորուեց, շեղուեց ճանապարհից, պաշտեց ձուլածոյ որթը, այլ և նորա մէջ զարգացաւ մարմնասիրութիւն և նա սրտով կպաւ այդ երկրի հարստութեան։ Սակայն Աստուած հաւատարիմ մնաց իւր խոստմանն ու տնօրէնութեան, նա չմերժեց այդ մեղաւոր ժողովուրդը, այլ նոյն իսկ այդ ժողովրդոյ կամեցաւ կատարումն տալ իւր աւետիքին։ Աստուած հանեց դորա Եգիպտոսից, սեփական ժողովուրդ դարձրեց, ըստ որում այդ ելքը Իսրայէլացոց ծնունդը եղաւ։

Այնուհետև Աստուած իբրև Տէր և թագաւոր ամենամօտիկ ու մտերմական յարաբերութեան մէջ մտաւ Իսրայէլի հետ և որովհետև Իսրայէլը մոլորուած էր կռապաշտական անկեալ ճանապարհի վրայ, Աստուած ձըգեց նորան օրէնքի մէկ խիստ դպրոցի մէջ, որպէս զի դաստիարակէ նորան, արժանացնէ իւր հաղորդակցութեան և ամենքին ցոյց տայ՝ թէ ինչ է նշանակում Աստուծոյ սեփականութիւն լինել։ Ըստ որում այդ օրէնսդրութիւնն Իսրայէլացոց վերածնութիւնը եղաւ։

Աստուած իւր տուած աւետիքով ամենքի հաւատքի առաջ բաց արաւ իւր խոստացած ապագայ փրկութիւնը, իսկ Սինայի վրայ դնելով իւր օրէնքի ուխտը, ցոյց տուաւ թէ ինքը ինչ էր պահանջում իւր սեփական ժողովրդից։ Բայց որովհետև մարդիկ չէին կարող սեփական ոյժերով կատարել Աստուծոյ կամքը, ուստի օրէնքով նոքա մեղքերն աւելի ևս իւրեանց գիտակցութեան էին հասնում. նոքա սկսում են գիտակցութեամբ տեսնել իւրեանց մեղքերն ու հետզհետէ սկսում են ձըգ-

Digitized by Google

տել ու խնդրել այն, որ Քրիստոսից պէտք է ստանային։

Ընդհանրապէս դիտելով այդ օրէնսդրութիւնը երեք սկզբունքների վրայ է դասաւորուած, որոնք բղխում են մի հիմունքից, այն է՝ որ Աստուած իւր սեփականութիւնն է դարձնում Իսրայէլացոց, իւր քահանայական պետութիւնն է շինում։ Այստեղից հետեւում է որ

Ա. Իսրայէլացիք իբրև աստուածպետութեան հպատակներ պարտաւոր էին լսել իւրեանց Աստուծոյ կամ արքային, այն ևս Նորա ծառաների՝ Մովսէսի, Յեսուի, դատաւորաց, մարգարէների ու թագաւորների միջոցով. (Ել. ԺԹ, 5. Դատ. Ը, 22.)։ Այդ է որ շեշտում է նաև Եսայի մարգարէն. «Աստուած իմ մեծ է, և ոչ արտասցէ զանց զինև։ Տէր Հայր մեր, Տէր դատաւոր մեր, Տէր իշխան մեր, Տէր թագաւոր մեր, Տէր Փրկիչ մեր՝ և Նա փրկեսցէ զմեզ» (Ես. ԼԳ, 21)։

Բ. Քանի որ Աստուած թագաւոր է, Նորա հպատակներն ևս պէտք է Նորան հաւատարիմ լինին, աստուածապաշտ լինին. իսկ ով այդ աստուածպաշտութեան ուխտից դուրս գար, ուրիշ չաստուած, առարկայ կամ կուռք պաշտէր, կամ կախարդութիւն անէր, քարկոծ պէտք է լինէր։ Եւ ինչպէս Աստուած սուրբ է, ժողովուրդն էլ պէտք է սրբապաշտ լինէր։ «Սուրբ եղերուք, զի ես սուրբ եմ Տէր Աստուած ձեր». հրամայում է Աստուած. (Ղևտ. ԺԹ, 2)։ Թլփատութիւնն էլ նշանակ էր մաքրութեան, որ կրում էր ամեն Իսրայէլացի իւր կեանքի եօթնօրէքից սկսած, այնպէս որ պէտք է մաքուր լինէին և նոյն իսկ ուտեստի մէջ ընտրութիւն անէին. կամ ընդհանրապէս թէ աշխարհի ու թէ մարդկանց վերաբերմամբ լսէին Աստուծոյ պատուիրանները։

Եւ Գ. Աստուած իբրև ամենայնի Տէր, բարիքներ և պարգևներ, հող ու կալուած, իրաւունք ու դատաս-

Digitized by Google

տան բաշխողն էր իւր ծառաների միջոցով. ամենքը պէտք է նորան լսէին, իւր անունով դատէին ու դատը յայտնէին։ Ուստի և ոչ ոք իրաւունք չունէր երկիրն ընդմիշտ ծախելու, այլ միայն 50 տարով, որից յետոյ հէնը պէտք է նորոգուէր։ Եօթը տարին մի անգամ էլ պէտք է ոչինչ չհնձէին ու բուսածը աղքատին ու եկին լինէր։ Այլ և անդրանիկն ու տասանորդը Աստուծուն էր պատկանում։

Ուրեմն աստուածպետական օրէնքով պայմանաւորուած են երկու կարգի օրէնքներ՝ աստուածպաշտութեան վերաբերեալ և քաղաքացիական կեանքի նկատմամբ։ Առաջին կարգինը զարգացրած է Ղևտացոց գրքում, իսկ երկրորդը Օրինաց։

Դասարանական ընթերցանելիք.

1. Մովսէսի կոչուիլը. Գ—Դ [1])։
2. Մովսէսն ու Ահարոնը յայտնում են Աստուծոյ կամքը Փարաւոնին Ե, 1—13.
3. Փարաւոնի հակառակութիւնը. Է—Ը, 15։
4. Զատկի օրինադրութիւնը. ԺԲ.
5. Անդրանկաց նուիրաբերութեան օրէնք. ԺԳ.
6. Կարմիր ծովն անցնելը. ԺԴ, 10—31.
7. Մովսէսի գոհաբանական երգը. ԺԵ, 1—21.
8. Սինայի օրէնսդրութիւնը. ԺԹ, 1—17. Ի։

[1]) Յովսէփն բարեկամացաւ ԺԷ. հովուական հարստութեան (Հիւքսերի) Փարաւոն Ապապի Բ։ Հալածանք սկսաւ ԺԸ. հարստութեան Փարաւոն Աամէս կամ Ամոզէսը, առաւել ևս Ամենովփթիս Ա։ Թոթմէս Ա. ի օրով ծնաւ Մովսէսը, որին ազատեց Թոթմէս Բ. ի դուստրը Խաթասու։ Թոթմէս Գ. թշնամի Մովսէսի. յետոյ Ամենովփթիս Բ։ Ելքը Թոթմէս Դ. ի օրով, որ և ընկղմուեց ծովում։

9. Աստուծոյ ուխտը ընտրեալ ժողովրդի հետ ու տասնաբանեակի տախտակները. ԻԴ. և ԼԲ.

10. Աստուծոյ երևալը Մովսէսին Սինայի վրայ և այլն. ԼԳ, 11—ԼԴ, 35.

11. Վկայութեան խորանի կարգը. Խ։

Լ.

ՂԵՒՏԱԿԱՆ

Հրէաներն այս գիրքը կոչում են Վայիկրա՝ այսինքըն՝ «Եւ կոչեաց». յունարէն թարգմանութեան մէջ կոչուած է Լևիտիկոն կամ գիրք Ղևտացոց, վասն զի այդոր մէջ են արձանագրուած այն սուրբ պարտաւորութեանց օրէնքներն ու կարգերը, որոնք դրուած էին Ղևու ցեղի վրայ։ Ուստի և Հրէաների ռաբբիները կոչում են այդ գիրքը օրէնք քահանայից։

Ղևտականը պարունակում է իւր մէջ մի ամսուայ պատմութիւն միայն այն է՝ Եգիպտոսից ելած երկրորդ տարուայ առաջին ամսի մէկից մինչև երկրորդ ամսի մէկը (Ել. Խ, 1. Թիւք. Ա, 1)։

Այս օրէնսդրութեան նպատակն է՝ սրբագործել Եբրայեցոց՝ իբրև Աստուծոյ ժողովրդի՝ նոյն իսկ Աստուծոյ անմիջական կառավարութեամբ (Ղևտ. ԺԹ, 2). ուստի և բովանդակում է աստուածպաշտական բոլոր օրէնքները, որպէս զի դոցանով Հին Ուխտի եկեղեցին առաջնորդուէր և ղեկավարուէր դէպի աստուածային ճշմարիտ կեանքը և հաղորդակցութիւնը (Բ. Օր. ԼԱ, 1—13)։ Վասնորոյ և այստեղ արձանագրուած են ժողովրդի սրբագործման բոլոր միջոցներն ու եղանակները։ Ելքում որոշուած է տեղը, ուր պէտք է զոհաբերէին, և կարգակատարումը. իսկ Ղևտականում դրուած են կանոններ՝ զոհերի, սրբութեան և տօների մասին։

Digitized by Google

Ղևտականը բաժանւում է ինքն ըստ ինքեան երեք յիշեալ մասերի։ Առաջին մասում (Ա—ԺԱ) գրուած են կանոններ զոհերի նկատմամբ. 1. զոհաբերութեան տեսակները, նպատակը և կարգերը. (Ա - Է). 2. քահանաների նուիրումը. Ահարոնի կարգազանց որդիների պատժուիլը. (Ը - Ժ). 3. Սուրբ և անսուրբ կենդանիք. (ԺԱ)։

Երկրորդ՝ (ԺԲ—ԻԲ). Սրբութիւն ու պղծութիւն. 1. Ծննդականի օրէնքը (ԺԲ). 2. Բորոտները. (ԺԳ – ԺԴ)։ 3. Ակամայ պղծումն. (ԺԵ). 4. Քահանայապետի մուտքն ի սրբութիւն սրբոց. զուարակ թողութեան և տօնի քաւութեան (ԺԶ). 5. Զոհելու կանոնը և արիւն ու մեռելոտի ուտելու արգելքը. (ԺԷ). 6. Ամուսնութեան օրէնքներ. (ԺԸ). 7. Կրօնական ու բարոյական խրատներ. (ԺԹ—Ի). 8. Կանոններ քահանաների համար. (ԻԱ - ԻԲ)։

Երրորդ՝ (ԻԳ—ԻԷ) տօները. 1. Շաբաթ ու մեծ տօներ. (ԻԳ—ԻԶ). 3. Ուխտ ու տասանորդ (ԻԷ)։

Ըստ այսմ Ղևտականը որոշում է սրբագործելու կանոնները և ապա թէ ժողովուրդը ի՛նչպէս պէտք է սրբուի և ի՛նչպէս պէտք է վերաբերուի Աստուծոյ և նորա արարածոց հետ։

ԼԱ.

ԱՍՏՈՒԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Սրբութիւնը.

Աստուծոյ ժողովուրդն իւր աստուածպաշտութեան համար պէտք է նախ ունենար մի սուրբ տեղ, բայց որովհետև անապատով անցնում էր ու չէր կարող հաստատուն տեղ ունենալ, ուստի պէտք է ունենար յատուկ վրան, որ միշտ ծալէր հետը վերցնէր։ Այն վրանն,

որում Ժողովուրդը կատարում էր իւր աստուածպաշտու-թիւնը, կոչւում է «խորան վկայութեան». վասն զի այդ-տեղ էր Աստուած երևում իւր փառքով և Մովսէսին տալիս իւր վկայութիւնը կամ յայտնութիւնը։

Այդ խորանի մեծութիւնն ու սարգ ու կարգը մի առ մի կարգադրեց Աստուած ինքն և Մովսէսը կատարեց իւր Տիրոջ պատուէրը. (Ելք. ԻԵ.)։ Գիտենք՝ որ Աստուած տալիս է իւր շնորհներն, իսկ Ժողովուրդը ընդունում է ու գոհանում։ Ժողովուրդը կատարում էր թէ այդ աստուածպաշտական կարգերը միմիայն այդ խորանում և թէ վայելում Աստուծոյ շնորհները։ Մովսէսը շինել տուաւ վկայութեան խորանն ըստ այն նկարագրին, որ ցոյց տուաւ նորան Աստուած (Ելք. ԻԵ—ԻԷ)։ Այդ խորանը շինեցին Բեսելիէլ և Եղիաբը, ինչպէս նկարագրուած է թէ Ելից գրքում (ԼԵ—ԼԸ) և թէ առ Եբրայեցիս գըրած Պօղոսի թղթում (Թ, 1—7;։

Ամբողջ խորանը չորստակ ծածկուած երկար քառանկիւնի էր, որի երկարութիւնը ընկած էր արևելքից դէպի արևմուտք 30 կանգուն (19 արշ. 11 վերշ.), իսկ լայնութիւնը 10 կանգուն. (6 արշ. 9 վերշ.)։ Չորս կողմը տարածւում էր մի բաց բակ նոյն քառակուսի ուղղութեամբ, որի երկարութիւնն էր 100 կանգուն (65 արշ. 10 վ). իսկ լայնութիւնը 50 (32 արշ. 13 վ.)։ Վկայութեան խորանը մէկ վարագոյրով բաժանուած էր երկու մասի. արևելեանը 20 կանգ. (13 ա. 2 վ.) երկարութեամբ և կոչւում էր սրբութիւն, իսկ երկրորդը՝ արևմտեան կողմում 10 կանգուն երկարութեամբ, 10 լայնութեամբ և 10 բարձրութեամբ և կոչւում էր «սրբութիւն սրբոց»։

Բակը վերևից բաց էր և սլատած էր տնկուած սիւներով 5 կանգուն բարձրութեամբ։ Սիւների մէջը ծածկուած էր բեհեզեայ առագաստներով։ Մուտքը արևելքից էր, որ մի բացուածք էր 20 կանգուն և ծածկ-

Digitized by Google

ւում էր տապաստով։ Այդ դրան ներսը դրուած էր ողջակէզի սեղանը, որ մի քառանկիւնի արկղ էր 5 կանգուն երկարութեամբ, 5 լայնութեամբ և 3 բարձրութեամբ։ Այդ արկղը լցնում էին հողով ու քարերով և վրան ողջակէզ էին մատուցանում։ Արկղի շուրջը պատած էր պղնձով և ծայրերը ցցուած եղջիւրներ էին ներկայացնում։ Սեղանի ու խորանի մէջ տեղում կար մի պղնձի աւազան, որի մէջ քահանայք պէտք է նախ լուանային ձեռք ու ոտները և ապա մանէին սրբութիւնը (Ելք. Լ, 18—21)։

Սրբութեան հարաւային մասում գտնւում էր մաքուր ոսկուց եօթնաչեայ աշտանակ, որի մէջ միշտ վառ էր լինում մաքուր ձէթ (Ելք. ԻԵ, 13. ԻԷ, 20)։ Հիւսիսում կար մի սեղան ոսկեպատ, որ կոչւում էր «սեղան հացին երեսաց» կամ «առաջաւորաց սեղան», զի այնոր վրայ ամեն շաբաթ դրւում էին 12 բաղարջ 12 ցեղերի կողմից։ Այդտեղ կային և սպասներ, խնկոց և այլ անօթներ. բոլորն ևս ոսկի (ԻԵ, 23)։ Երկրորդ վարագոյրի դիմաց դրուած էր խնկոց սեղանը, որ ոսկեպատ էր և չորս անկիւններում եղջիւրներ ունէր. այդոր վրայ միշտ խնկւում էր խունկը (Լ, 1—8. 34—38)։

Սրբութիւն սրբոցը բաժանւում էր սրբութիւնից մի վարագոյրով, որի մէջ գործուած էին քերովբէներ (ԻԶ, 31). սորա մէջ տեղում դրուած էր ուխտի տապանակը, որ մի արկղ էր $2\frac{1}{2}$ կանգուն (1 արշ. $10\frac{1}{4}$ վ.) երկարութեամբ, $1\frac{1}{2}$ կանգուն ($15\frac{3}{4}$ վ.) լայնութեամբ և նոյնքան բարձրութեամբ։ Այս արկղը շինուած էր փայտից և ներսից ու դրսից ոսկով պատած։ Ծածկոցը ոսկուց էր և կոչւում էր քաւութիւն, որի վրայ կըպցրած էին երկու ոսկի քերովբէներ իւրեանց թևերը ծածկոցի վրայ տարածած։ Տապանակում դրուած էին տասնաբանեակի տախտակները, մի սափոր մանանա և Ահա-

Digitized by Google

բոնի ցուպը (Եբր. Թ, 4)։ Վերջերում Մովսէսը դրաւ այդտեղ և օրէնսգիրքը. (Բ Օր. ԼԱ, 26)։

Վկայութեան խորանը Եհովայի՝ իբրև Իսրայէլացոց Թագաւորի բնակարանն էր, որտեղ հաւաքւում էր ժողովուրդը Աստուծոյ հետ հաղորդակից լինելու համար (Ել. ԻԵ, 8. ԻԹ, 42.)։ Այդ խորանը ներկայացնում էր Աստուծոյ արքայութիւնը, որի սրբութիւնը Աստուծոյ տունն էր, իսկ բակը նորա իշխանութիւնն էր, որտեղ նորա հպատակները մօտենում էին նորան։ Ժողովուրդը այստեղ էր կատարում իւր աստուածպաշտութիւնը՝ այսինքն ողջակէզ մատուցանում և աղօթում։ Այստեղ ողջակէզի համար կար մի բարձրութիւն կամ սեղան, ուր ողորմութեամբ իջնում էր Աստուած դէպի հաւատացեալները և վերջիններս բարձրանում էին զոհով դէպի նորան։ Սեղանի բարձր եղջիւրները նշան էին կեանքի և ոյժի լրութեան. այդ եղջիւրների միջոցով էին բացւում ժողովրդի փրկութեան համար աստուածային միջոցներ։ Աւազանը նորա համար էր, որ Աստուծոյ սպասաւորները լուացուէին ու մաքուր հոգով մօտենային առ Տէրը և բարէխօսէին ժողովրդի մեղաց համար և անսրբութեամբ չմեռնէին (Լ, 19)։

Սրբութեան մէջ քահանայք պաշտօն էին կատարում (Եբր. Թ, 6), որոնք և պարտաւոր էին հացը դընել, խնկել և աշտանակը վառել։ Սրբութիւնը խորհրդաւոր կերպով ներկայացնում էր քրիստոնէական տաճարի նախատիպը, ուր մտնում են բոլոր հաւատացեալք իբրև «քահանայք Աստուծոյ» (Յայտ. Ա., 6), վայելելու «Տեառն սեղանից», աղօթելու ի խնկարկութիւն Աստուծոյ (Ա Կոր. Ժ, 21. Յայտ. Ե, 8. Ը, 8), Քրիստոսի լուսով լուսաւորուելու և աշխարհը լուսաւորելու համար (Յովհ. Ա., 9. Յայտ. ԻԱ, 23)։

Սրբութիւն սրբոցը Եհովայի առանձին բնակարանն

էր, որտեղ նա նստում էր քերովբէների վրայ և նորա պատուանդանն էր ուխտի տապանակը (Սաղմ. ՀԹ, 2)։ Այս մասումն էր Եհովան երևում ամպերով և յայտնում իւր կամքը քահանայապետին ու քաւութիւն շնորհում ժողովրդին։ Այստեղ մարդիկ իրաւունք չունէին մտնելու և մատչելի էր միմիայն քահանայապետին, որ տարեկան մի անգամ քաւութեան օրին մտնում էր զոհի արիւնով, որպէս զի մաքրէր ժողովրդի մեղքերը (Ղևտ. ԺԶ, 14—16. Եբր. Թ, 1)։ Սրբութիւն Սրբոցը երկնքի նախատիպն էր, ուր մտաւ Քրիստոս իբրև յաւիտենական քահանայապետ և իւր արիւնով փրկագործեց մարդկանց (Եբր. Թ, 11—24)։ Օրէնքի տախտակները մարդկային սրտի ներքին օրէնքի ու հաւատքի պատկերն էին (Բ. Օր. Լ, 11—14. Հռ. Ժ, 8)։ Մանանան Քրիստոսի մարմնի և արեան հաղորդութեան նախատիպն էր (Յովհ. Զ, 48—71. Ա Կոր. Ժ, 3)։ Ահարոնի ծաղկող ցուպը նախատիպ էր Քրիստոսի խաչափայտին, որով առաջուայ անպտղաբեր եկեղեցին կենդանացաւ յաւիտենական կենաց ու փրկութեան համար։ Մեր Եկեղեցում Սրբութիւն Սրբոցը (խորան) սեղանն է, տապանակի տեղ բու նսեղանն է, տասնաբանեակի տախտակը Աւետարանն է, Ահարոնի ցուպը—խաչն է, մանանայի տուփը—հաղորդութեան սկիհն։

Վկայութեան խորանը Աւետեաց երկրում նախ հաստատուած էր Սելովահում, հապա փոխադրուեց Բեթել (Ա Թագ. Ժ, 3). յետոյ Նոմբա (ԻԱ) ու Գաբաւոն (Գ Թագ. Գ, 4. Ա. Մնաց. ԺԶ, 39. ԻԲ, 29). վերջապէս տաճարի շինութիւնից յետոյ Սողոմոն թագաւորը հաւաքեց ու դրաւ տաճարի սենեակում (Գ. Թագ. Ը, 4) 1000 տարի Քրիստոսից առաջ։ Իսկ երբ 584 տ. Ք. ա. աւերուեց Սողոմոնի տաճարը, Երեմիա մարգարէն՝ ըստ աւանդութեան՝ տարաւ քարեղէն տախտակները, Ահարո-

Digitized by Google

նի ցուպը, մանանայի սափորն և Ահարոնի բուրվառը ու ձգեց Սինայի մի քարայրը. (Տես. Ճաշոց Էջ. 566)։

II. Սրբազնեան պաշտօնեայք.

Ղևոա ցեղը նուիրուեց Աստուծուն Մովսէսի հրամանով, սակայն նոքա միայն ստորին պաշտօնեաներն էին և օգնում էին իսկապէս քահանաներին, սարգում էին խորանը, հետները տանում էին, կրկին կանգնեցնում, պահպանում էին Աստուծոյ օրէնքն և ծանուցանում ու հասկացնում ժողովրդին և ըստ այդմ դատում, սրբում, ջուր բերում և այլն։ Նոյնպէս և տաճարի շինութիւնից յետոյ նոցա պարտքն էր հոգալ ստորին գործերը, պահել տաճարը, սրբել, բանալ, կողպել, ս. սպասները կարգին պահել, երեսաց հացը պատրաստել և այլն։

Քահանայք նոքա էին, որոնք Ահարոնի ցեղից էին։ Ահարոնի չորս որդէքն էին՝ Նաբադ, Աբիուդ, Եղիազար և Իթամար, որոնցից Նաբադ և Աբիուդը այրուել էին, երկու միւսները քահանայական ցեղի ներկայացուցիչներն էին, իսկ Եղիազարը բոլորից մեծն էր։ Քահանայութիւնը ժառանգական էր. այդ որոշումը եղաւ Մովսէսի օրով, երբ Կորխայ որդիքը խառնակութիւն ձգեցին ժողովրդի մէջ քահանայական պաշտօնի համար (Թիւք. ԺԶ, 5)։ Աստուծոյ այն հրամանը՝ թէ Ահարոնի որդիքը պէտք է քահանայ լինին՝ եղաւ այնով, որ Ահարոնի գաւազանը ծաղկեց (ԺԷ)։

Քահանաները պարտաւոր էին պահպանել վկայութեան խորանը և ինքեանք մերձենային սրբութեան, առաւօտ ու երեկոյ վառէին, աշտանակները, սրբէին ու ձէթ ածէին, ամեն շաբաթ երեսաց հացը դնէին, սեղանի վրայ միշտ կրակ ունենային (Ղևտ. Զ, 12), գո-

Digitized by Google

հը պատրաստէին, մոխիրը հանէին և ժողովուրդը օրհնէին (Թիւք. Զ, 24)։ Այսպիսով քահանայի պաշտօնն էր մասնաւորապէս միջնորդ լինել ժողովրդի և Աստուծոյ մէջ և հաշտեցնել Աստուծոյ հետ, նախատիպար լինելով Քրիստոսին, որ գալու էր իսկական հաշտութիւնն իրագործելու համար։ Նորա միջոցով Աստուած օրհնում էր ժողովուրդը և նորա միջոցով ժողովուրդը իւր զոհերով ու ողջակէզով մօտենում էր Աստուծոյ։ Ըստ որում քահանայի գլխաւոր գործերն էին նախ զոհը, որ նշան էր հաշտութեան, խնկելն իբրև նշան բարեխօսութեան և օրհնութիւնն, որ ծագում էր այդ երկուսից։ Ինչպէս քահանան Աստուծոյ ժողովուրդի վերաբերմամբ էր, նոյնպէս և Աստուծոյ ժողովուրդը քահանայի վերաբերմամբ։ Ուստի և քահանայք պէտք է ոչ մի մարմնական պակասութիւն չունենային (Ղևտ. ԻԱ, 16—24), պաշտօնի ժամանակ չպէտք է խմիչք խմէին, մեռելոց դպչէին և այլն։ Եւ որպէս զի ժողովրդի կամայականութիւնը դեր չխաղար քահանայական պաշտօնում, վերցրած էր ընտրողական սկզբունքը և քահանայութիւնը ժառանգական դարձրած։

Քահանան չպէտք է ունենար կալուածք, այլ իւր յոյսը Աստուծոյ վրայ պէտք է դնէր (Թիւ, ԺԸ, 20)։ Եւ որովհետև Աստուած էր հողի տէրը, ուստի ամեն մի կալուածատէր պարտաւոր էր հարկ վճարել նորան բերելով անդրանիկներն ու տասանորդները, որոնցից և Աստուած մասն էր տալիս իւր պաշտօնեաներին։ Ամբողջ ցեղի բնակութեան համար 48 քաղաք էր տրուած, որոնց 13-ը միմիայն քահանաներին Երուսաղէմի մօտերքում, վեցն էլ ազատ քաղաքներ էին սպանութեան վրէժխնդրութիւնից փախչողների համար։ Բայց Ղևտտոհմը իւր երեք որդիների՝ Գեթսովն, Կահաթ և Մերարի անունով՝ բաժանւում էր երեք ցեղերի, որոնցից իւ-

րաքանչիւրը առանձին սպասաւորութիւն ունէր։ Սպասաւորել կարող էին միմիայն 30—50 տարեկանները, որոնց թիւը հասնում էր ըստ Թուոց գրքին 8480-ի։ Երբ բանակը ճանապարհ էր ընկնում, քահանայք փաթաթում էին տապանակը վարագոյրի ու ծածկոցների մէջ, նոյնպէս և զանազան սպասները փաթաթում էին և ապա Ղևտացիք համարձակւում էին մօտենալ ու վերցնել։ Առ հասարակ Կահաթեանները այդ էին վերցնում, Գեթսովեանները գորգերը, իսկ Մերարեանք տախտակներըն ու սիւները։

Քահանայական *օրհնութեան ձևն* էր. «Օրհնեսցէ զքեզ Տէր և պահեսցէ զքեզ, երևեցուսցէ (Տէր) զերեսս իւր ի քեզ, և ողորմեսցի քեզ. ամբարձցէ Տէր զերեսս իւր ի քեզ, և տացէ քեզ խաղաղութիւն» (Թիւ Զ, 24)։ Այս օրհնութիւնը շատ նշանաւոր է, զի այդոր մէջ բովանդակուած է ս. Երրորդութեան խորհուրդն և այն փրկութեան սաղմերը, որին պէտք է հասնէր մարդկութիւնը։ Սորանով Աստուած ուզում էր ժողովրդի մէջ սերմանել Աստուծոյ էութեան այդ վեհ գաղտնիքը և զարգացնել ս. Երրորդութեան դաւանանքը։ Այստեղ երեք անգամ յիշւում է Աստուծոյ անունը, իսկ երկու անգամ Նորա երեսը, այսինքն՝ յայտնուող էութիւնը։ Ըստ այսմ երեք անգամ յիշելով, օրհնութիւն ու հովանաւորութիւն է խնդրւում Աստուծուց, որ յաւիտենական և անտեսանելի աղբիւր է ամենայն օրհնութեան, կեանքի ու փրկութեան։ Իսկ երկու անգամ յիշուած երեսը արտայայտութիւն է աստուածութեան, որ ինքն ինքեան յայտնում է մարդկանց իբրև «լոյս ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ» (Յովհ. Ա, 9)։ Վերջում խաղաղութիւն է խնդրւում Աստուծոյ երեսից, որ իբրև Աստուած յայտնւում է մեզ, տալով մեզ փրկութիւն։

Digitized by Google

Իսկ քահանայապետը պէտք է տարեկան մի անգամ մտնէր Սրբութիւն Սրբոցը և իւր ժողովրդի մեղաց համար հաշտութեան մեծ զոհն անէր ի խորհուրդ Քրիստոսի փրկարար պատարագին։ Նա էր միայն Սուրբն Տեառն և նա միայն կարող էր մտանել Սրբութիւն Սրբոցին, ուստի և նա էլ պէտք է քահանայական բարձր սրբութիւն պահպանէր։ Նորա պաշտօնն էր նաև լսել Աստուծոյ վկայութիւնները և յայտնութիւնները Սրբութիւն Սրբոցում (Ել. ԻԸ, 30)։ Նորան էր պատկանում տաճարի գանձերի և աստուածպաշտութեան վերահսկեցողութիւնը, նա էր լինում ծերակոյտի նախագահը, նոյնպէս և նա էր Պաղեստինից դուրս ապրող ժողովուրդի պետը։ Ուստի և քահանայապետները շատ բարձր պատիւ ունէին ժողովրդի առաջ գոնէ մինչև Բաբելական գերութիւնը։ Նոցա պաշտօնը ցմահ էր և միայն այդ ժամանակից յետոյ երբեմն գահընկեց էին լինում, ուստի և միաժամանակ մի քանիսն էին քահանայապետ լինում (Յովհ. ԺԱ, 49. ԺԸ, 13. Ղուկ. Գ, 2), թէև միմիայն մէկն էր պաշտօնի տէրը։

Բեսելիէլ ու Եղիաբը, որոնք շինեցին խորանը, պատրաստեցին նաև քահանայական զգեստ։ Նշանաւոր է քահանայապետական զգեստաւորութիւնը. Նա կրում էր սպիտակ բրդէ կապայ ի նշան մաքրութեան, վրան մի երկար կապոյտ վտաւակ բեհեզեայ պճղնաւոր, որի ծայրին նռնանկար ու ոսկի բոժոժներ կային, որ ձայնից ժողովուրդը իմանար և ուշադիր լինէր, երբ քահանայապետը գնում էր դէպի Սրբութիւն Սրբոց։ Վրայից նա հագնում էր մի պատմուճան ոսկեթելից ու սպիտակ բրդէից (եփուտ)։ Նոյն նիւթից էր և գօտին։ Եփուտը զարդարած էր քարերով։ Ուսերի վրայ նա կրում էր վակաս երկու քարերով, իւրաքանչիւրի վրայ վեց ցեղերի անունները քանդակուած ի նշան, որ նա միջնորդ է 12 ցե

ղերի։ Կրծքին կոճկուած էր պաշտօնական վահանը երկու ոսկի շղթաներով ու երկու կապոյտ թելերով։ Այդտեղը զարդարուած էր 12 ակներով չորս շարքի մէջ, իւրաքանչիւրը մի ցեղի անունով, և վրան «յանդիմանութիւն ու ճշմարտութիւն» գրուած։ Այս կոչւում էր տախտակ դատաստանի ի նշան, որ նորանով է Աստուծոյ թագաւորական վճիռը։ Գլխին դնում էր սպիտակ բրդեց խոյր, որի ճակատին ոսկի թիթեղ և այս նշան էր քահանայապետի իշխանական ու թագաւորական արժանիքին։ Այդ թիթեղի վրայ քանդակուած էր «Սրբութիւն Տեառն»։ Նա հագնում էր կտաւի անդրավարտիք, ոտերը բաց էր թողնում և միայն պաշտօնից դուրս կարող էր սանդալներ հագնել, որոնք երիզներով էին կապւում։

Ձեռնադրութիւնը (Թիւք. Ը, 5) լինում էր զոհաբերութիւնից յետոյ հրապարակապէս ձեռնադրուողի ընծայուելով Աստուծոյ սպասաւորութեան։ Սպասաւորները պէտք է բոլոր ցեղերի անդրանիկները լինէին ի յիշատակ Եգիպտացոց անդրանկաց կործանման, ընտրեալ—անդրանիկ ժողովրդի ազատութեան և ի նախատիպ Աստուծոյ անդրանիկ Որդուն (Ել. ԺԳ, 15. Դ, 22. Ղուկ. Բ, 22. 23)։ Դոցա ևս նախ լուանում էին ու մազերը սափրում ի նշան մաքրութեան, յետոյ ծերերը ձեռք էին դնում նոցա վրայ իբր ժողովրդի կողմից, շրջեցնում էին վկայութեան խորանի առաջ գլուխ տալ տալով չորս կողմը ի նշան որ պէտք է նորան պատկանէին և պարտաւորեցնում էին սպասաւորել նորա մէջ բնակուողին ամենայն ոչ քահանայական պարտաւորութեամբ։

Առաւել հանդիսաւոր էր քահանայական ձեռնադրութիւնը. (Ել. ԻԹ. Ղև. Ը)։ Քահանան հանդիսապէս լուացւում, հագնւում, օծւում էր, ապա զոհաբերելով՝ զոհի արիւնը սրսկում էին սեղանը և մասամբ ձեռնադրուողի ականջը, ձեռքն ու ոտքը և ապա զոհի ճաշ

Digitized by Google

էին տալիս։ Ականջը, ձեռք ու ոտքը օծւում էին ցոյց տալու համար, որ նորա կեանքի գործունէութիւնը սրբուած ու նուիրագործուած պէտք է լինի. ականջինը նշան էր, որ պէտք է հնազանդութեամբ ընդունէր Աստուծոյ յայտնութիւնը և հրամանը, ձեռքերինը՝ որ պէտք է Աստուածանից ստացածը ժողովրդին բաշխէր, և ոտքինը՝ որ սուրբ պէտք է լինէր Աստուծոյ առաջ նորա կենցաղն և վարքը ու բարքը։

Վերջերում Դաւիթ թագաւորի կարգադրութեամբ քահանայական դասը բաժանուեց 24 հերթակալ կարգի, որոնք կատարում էին իւրեանց պաշտօնը մի մի շաբաթ և այդ ժամանակ մնում էին սրբութեան մօտ։ Դոցանից 16-ը Եղիազարի, իսկ ութը Իթամարի ցեղից էին։ Նոյնպէս և Ղևտացիք բաժանւում էին որոշ կարգերի իւրեանց որոշ պարտաւորութիւններով։

Հոգևոր կարգին էին պատկանում նաև նոքա, որոնք ժամանակաւորապէս կամ ցմահ կամովին ուխտում էին նուիրուել Աստուծոյ և կոչւում էին նազիր՝ այսինքն նուիրուած, ջոկուած, ճգնաւոր, ուխտաւոր (Թիւք. Զ, 1—21. Ծն. ԽԹ, 26)։ Նոքա պէտք է որոշ մաքրութիւն պահէին, որոշ ուտելիք ունենային և քրիստոնեայ աբեղաների պէս աշխարհային զուարճութիւններից հեռու մնային։ Դոքա ուրեմն նախ գինի չպէտք է խմէին ի նշան ճգնաւորական կեանքի. երկրորդ՝ մազերը պահում էին և այդ նշան էր խոնարհութեան ու կատարեալ հնազանդութեան Աստուծոյ կամքի առաջ, ըստ որում մազերը համարւում էին Աստուծոյ թագը իւր ստրկի գլխին (Թիւք. Զ, 7, Եր. Է, 22. Բ Թագ. ԺԴ, 25. Ես. Գ, 17. Դ Թագ. Բ, 23. Ա Կոր. ԺԱ, 4—10)։ Երրորդ՝ մեռեալներից նոքա պէտք է հեռու մնային և բնաւ չմասնակցէին ողբական ծէսերի. այս էլ նշան էր բարձր հոգևոր մաքրութեան (Ղևտ. ԻԱ, 10. 11)։

Digitized by Google

Պատահում էր որ երկիւղած Իսրայէլացիք ի ծնէ նուիրում էին իւրեանց որդիներին այս կարգով Աստուծոյ ծառայելու, ինչպէս Սամփսոնը (Դատ. ԺԳ, 3), Սամուէլը (Ա Թագ. Ա, 11) և Յովհաննէս Մկրտիչը (Ղուկ. Ա, 15)։ Ուխտի լրանալուց յետոյ նոքա մազերը խուզում էին, կրկին մտնում աշխարհ, իսկ խուզածը գոհութեան զոհով այրում էին սրբութեան մէջ։

Կանայք չէին կարող առանց ծնողաց համաձայնութեան ուխտել։

III. Տօներ.

Ա. Հանգստեան տօներ

1. Շաբաթ ըստ տասը պատուիրանաց ի նմանութիւն Աստուծոյ հանգստութեան և ի յիշատակ Հրէաների ազատութեան Եգիպտական ծառայութիւնից. (Ելք. Ի, 8—11. Բ Օր. Ե. 12—15)։ Այս տօնը բոլոր միւս տօների հիմքն է կազմում։ Այս տօնին նախ՝ հանգիստ էին մնում աշխարհային գործերից, ըստ որում՝ շաբաթ նշանակում է հանգստանալ գործերից, տօնել. երկրորդ՝ այդ օրը ողջակէզ էին մատուցանում (Թիւք. ԻԸ, 9), որ նշանակում էր թէ պատրաստ էին զոհուելու Աստուծուն, և առաջաւորաց հացն էին դնում, որով իւրեանց գործոց պտուղն էին նուիրում Աստուծոյ (Ղևտ. ԻԴ, 8)։ Ուրեմն այս տօնի նշանակութիւնն է, որ ժողովուրդը մասնակից էր լինում երանական հանգստութեան և վայելում էր Աստուծոյ արարչական տնօրինութեան բարիքները։ Այլ և այս տօնը նշանակում էր՝ որ «կայ մնայ շաբաթումն ժողովրդեանն Աստուծոյ» փառաց թագաւորութեան մէջ (Եբր. Դ, 1—3. 9—10)։ Եւ երրորդ՝ որ այդ վայելումը կարելի էր ձեռք բերել միմիայն ա-

Digitized by Google

ռաքինութեամբ և աստուածպաշտութեամբ և ուրեմն մարդկային մեղաւոր բնութիւնը սրբագործելով։ Այստեղից արդէն պարզ երևում է՝ որ Հրէական տօների էական սրբագործութիւնը արտայայտւում էր չորս գործում.

Ա. Հանգստութեամբ կենսական աշխատանքներից.

Բ. Աստուածային պաշտամունքների մասնակցութեամբ.

Գ. Նուիրաբերութեամբ Աստուծոյ տան ու պաշտօնեաների համար. և

Դ. Բարեգործութիւններով։

Ուստի և Հրէաների բոլոր տօները շաբաթ են կոչւում (Ղևտ. ԻԳ, 32. ԺԹ, 3. 30 և այլն). և այդ անունը տարածւում է մինչև անգամ եօթնեակի վրայ, որ մենք էլ ենք գործածում. (Ղևտ. ԻԳ, 16. Ղուկ. ԺԸ, 12)։ Այդ օրը իբրև եօթներորդ որ նոյնպէս առանձին նշանակութիւն ունէր, ըստ որում և մնացած տօների մէջ միշտ եօթով է հաշիւ լինում։

Թէ այս օրը և թէ քաւութեան տօնին մահուան պատժով արգելուած էր որ և իցէ աշխարհային զբաղմունք (Ել. ԼԱ, 14. Ղևտ. ԻԳ, 3. 28. 30. 31)։ Իսկ միւս տօներին հասարակ հանգստութիւն էր հրամայուած՝ այսինքն՝ պէտք է պաշտ կենային ծանր աշխատանքներից (Ղևտ. ԻԳ, 7—8)։ Վերջերում Փարիսեցիք ծայրայեղութեան էին հասցրել շաբաթուայ հանգստութիւնը, արգելելով մինչև անգամ բարեգործութիւնը, որոնց դէմ քարոզում էր Քրիստոս (Ղուկ. ԺԳ, 10—16. Յովհ. Ե, 9—10)։

2. Ցիշատակ փողոց, եօթներորդ ամսուայ (Թշրին—սեպտ.) առաջին օրը, որ կատարւում էր նոյնպէս հանգստութեամբ ու զոհաբերութեամբ (Ղևտ. ԻԳ, 24. Թիւ. ԻԹ, 1—6)։ Այս տօնին քահանայք զոհաբերութեան ժամանակ փող էին փչում և այդ փողի ձայնը,

Digitized by Google

տր նշան էր Աստուծուն յիշեցնելու իւր ժողովրդի մասին, որ խնդրում էր նորանից ողորմութիւն իւր գործերի համար (Թիւք. Ժ, 10)։ Եւ որովհետեւ ռաբբիները համարում էին աշխարհի ստեղծագործութիւնը եօթներորդ ամսի սկզբում, ուստի և այս օրը համարւում էր աշխարհի արարչագործութեան նորալուսինը։ Այդ տօնին էր քաղաքական նոր տարին (Թիւք. ԻԹ, 1)։

3. Շաբաթ Տեառն եօթը տարին մի անգամ, որ տօնւում էր ինչպէս սովորական տօները, միայն թէ սորա հանգստութիւնը ոչ միայն մարդկանց, այլ և ամբողջ արարածական աշխարհի համար էր, ըստ որում ինչպէս որ բոլոր արարածները մարդու հետ մասնուել էին ապականութեան, պէտք է նաև փառակից լինին Աստուծոյ որդիներին (Հռ. Ը, 19—21)։ Ռաբբիները ասում են թէ մինչև անգամ որս անելու իրաւունք չըկար։ Այս տօնին հանգստութիւն էին տալիս բոլոր աշխատաւորներին, եկւորներին, ստրուկներին և մինչև անգամ պարտապանների պարտքի ժամանակը յետաձգւում էր (Բ. Օր. ԺԵ, 1)։ Այդ ժամանակ տաղաւարահարաց տօնին եւս օրէնքը կարդացւում էր ժողովրդի առաջ (Բ. Օր. ԼԱ, 10)։ Երկիրն էլ թողնում էին անվար և ազատ բերքերը պատկանում էին եկւորներին, ծառաներին, աղքատներին և այսպիսեաց։ Պարզ է, որ այս տօնի նշանակութիւնը կրօնական էր, այն է՝ որ հաւատացողը իւր հանգստութիւնը և վայելչութիւնը Աստուծոյ մէջ գտնէր և գիտենար՝ որ իւր երանութիւնը Աստուծոյ ս. կամքի կատարման մէջ է։

4. Տարեկան կամ տարի թողութեան, յիսնամեակ յօբելեան իւրաքանչիւր 50 տարին մի անգամ, որի առաջինը եղաւ 1391 տ. Ք. ա.։ Այս տօնը նախընթաց տօնի ընդարձակ ձևակերպութիւնն է։ Այդ ժամանակ երկիրը հանգստանում էր երկու տարի շարունակ, այն

է՝ 49-դ և 50-դ տարին։ Այդ տօնին Աստուած խոստանում է ժողովրդին բերքերի մեծ առատութիւն, որպէսզի երկու տարի չվարելով՝ ժողովուրդը ապահովուած լինի (Ղևտ. ԻԵ, 21. 22)։ Այդ ժամանակ ազատւում էին բոլոր ստրուկները, չքաւորւածները ստանում էին իւրեանց առաջուայ անշարժ կայքը, այս մասին փողի ձայնով հաղորդւում էր քաւութեան տօնին ու բոլոր հաւատացեալք Աստուծուց ստանում էին մեղքերի թողութիւն։ Այս տօնի միտքը մեղքերից և ապականութիւնից ազատուելն էր և հոգևոր բարեաց վայելումը Աստուծոյ արքայութեան մէջ։ Ուստի և տարեկան տօնը նախատիպ էր Քրիստոսին, որ Նա, այսինքն Աստուծոյ ճշմարիտ Օծեալը գալու էր՝ «քարոզել գերեաց զթողութիւն և կուրաց զտեսանել, արձակել զվիրաւորս ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեառն ընդունելի» (Ես. ԿԱ, 1—2. Ղուկ. Դ, 17—22)։

Բ. Ամսական տօներ։

Ամեն ամսամտին (լուսնի առաջին օրը) պէտք է ողջակէզ ու զոհ մատուցանէին, միասին ժողովուէին և Աստուծոյ պաշտէին (Թիւք. ԻԸ, 11—15. Ա. Թագ. Ի, Ե, Ա, 13)։

Գ. Տարեկան տօներ։

1. Ի յիշատակ եգիպտական ծառայութիւնից ազատուելուն և մանաւանդ որ խեղդող հրեշտակը ներողամտաբար անցել էր խորայէլացոց վրայով, դրուած էր զատիկը, որ նշանակում է ազատութիւն, կամ պասաս՝ այսինքն անցումն։ Այս տօնն էր նաև եկեղեցական նոր տարին ու հունձի առաջընթաց տօնը։ Տօնա-

Digitized by Google

կատարութիւնը սկսւում էր Նիզանի 14-ին երեկոյեան զոհի ընթրիքով և զատկական գառով. տօնը տեւում էր 7 օր, որի ընթացքում պէտք է միայն բաղարջ ուտէին. այդ եօթ օրուայ առաջին և վերջին օրերը առանձնապէս հանդիսաւոր էին լինում և տօնի կատարումն եղաւ Քրիստոսով: Զոհի արիւնը փոխանակ դըռները քսելու սրսկում էին սեղանի վրայ: Լուսնի լրումը նշանակում է լրումն ժամանակի ու երկնքի փառքը. այսպէս և այդ օրը աստուածային շնորհք ու փառք է տարածւում աշխարհի վրայ: Այսով էր Իսրայէլի նոր կեանքն և հեթանոսներից հեռանալը: (Համա. Թիւ. ԻԸ, 16. Ել. ԺԲ, 6. 18. Ղևտ. ԻԳ, 5. Թ, 3. Բ. Օր. ԺԶ, 1. Ա. Կոր. Ե, 6—8. Ժ, 16—21):

2. Տօն եօթներորդաց՝ զատկից 50-դ օրը (պենտեկոստէ), մի օր հանդիստ էր տօնւում աստուածպաշտական ժողովով, նոր ալիւրից երկու հացի զոհաբերութեամբ և այլն: Սկզբում հնձոց գոհացողական տօնն էր և վասն զի առաջին ծնունդ ու բերքերը պէտք է զոհաբերէին, ուստի կոչւում է նաև տօն Նորեաց: Այս տօնի տեղ մենք ունինք Հոգեգալուստը: Յետոյ այդ տօնի հետ կապուեց և Սինայի օրէնսդրութեան յիշատակը, որ նախատիպ է Ս. Հոգու Նոր Ուխտի օրէնսդրութեան, որ գրուեց ոչ թէ քարետախտակների, այլ հաւատացելոց սրտերի վրայ (Եբր. Ը, 10. 11):

3. Տօն տաղաւարահարաց. այսպէս է կոչւում, վասն զի այս տօնի ընթացքում մնում էին կանաչ տաղաւարների մէջ Թշրին ամսի 15 ից եօթն օր շարունակ: Այդ օրերում յիշում էին անապատով անցնելը, այնտեղ վայելած շնորհները և ուրախութեամբ գոհութիւն էին յայտնում Աստուծուն իւրեանց ստացած մրգեղէնի և արմտիքների համար. (Ել. ԻԳ, 16. Ղևտ. ԻԳ, 34. Թիւք. ԻԹ, 12. Բ. Օր. ԺԶ. 13): Եօթն օ-

Digitized by Google

րուայ ընթացքում զոհում էին 70 զուարակ։ Այս տօնի տեղ այժմ մենք ունինք Եկեղեցու տօնը։

Երեք այս մեծ տօներին պէտք է իւրաքանչիւր Իսրայէլացի երևար Աստուծոյ առաջ և անպատճառ նուէրներով, ուստի և կոչւում են ուխտի տօներ։ Ինչպէս տեսնում ենք՝ այդոնք թէ պատմական նշանակութիւն ունէին և թէ տնտեսական։ Առաջին ու երկրորդը ուրախութեան ու միաբանութեան տօներ էին և նոյն իսկ օտարները ժողովւում էին գոցա հետ (Բ. Օր. ԺԶ, 11. 14)։

4. Տօն քաւութեան, որ տևում էր 5 օր Թշրինի 10-ից. այս տխրութեան ու սուգի օրեր էին, որում պէտք է ապաշխարէին զոհաբերութիւններով, շաբաթ ունենային և պահք (Ղևտ. ԺԶ, 1—34. ԻԳ, 26—32. Բ. Օր. ԻԹ, 7—11)։ Այդ օրն էր և քահանայապետի մեծ պաշտօնը։ Բոլորն էլ քաւում էին իւրեանց մեղքերը երկու նոխազով։ Քահանայապետը մտնում էր Սրբութիւն Սրբոցը մեղաց զոհի արիւնով, որի իսկական կատարումն է Քրիստոսով, որպէս և այդ տօնի տեղ դրրուած է խաչի տօնը։ Ուստի և առաքեալն ասում է. «Քրիստոս եկեալ քահանայապետ հանդերձելոցն բարեաց, մեծաւն և կատարելով և անձեռագործ խորանաւն՝ այ սինքն է որ ոչ յայսց արարածոց։ Եւ ոչ արեամբ նոխազաց և զուարակաց, այլ իւրով արեամբն եմուտ միանգամ ի սրբութիւնսն յաւիտենականս գտեալ զփրկութիւն»։

5. Բացի սոցանից յետին ժամանակներում աւելացան տօն հանգստեան կամ պուրիմ ի յիշատակ ազատութեան Համանի բռնութիւնից (Եսթ. Թ, 24. 26) և տօն նաւակատեաց, որ կատարում էին տաճարի վերջում ութը օր շարունակ ի յիշատակ տաճարի օծման ու սրբագործման (Ա Մակ. Դ, 53. Յովհ. Ժ, 22)։

Digitized by Google

IV. Զոհեր.

Զոհը ծառայում է մեր հոգին Աստուծոյ հետ հաշտեցնելու համար, ինչպէս և Քրիստոս փրկեց մեզ և հաշտեցրեց Աստուծոյ հետ իւր սուրբ արիւնով և անմեղ չարչարանքով ու մահով։ Հաշտութիւնն այնտեղ է լինում, որտեղ թշնամութիւն է եղել, իսկ Աստուծոյ դէմ թշնամութիւն մեղքն է (Հռ. Ը, 7)։ Ուրեմն ով զոհում է, նա այդ անում է մեղքի գիտակցութեամբ կամ զղջալով։ Բայց զոհն էլ Իսրայէլացոց մէջ զանազան էր. այն է՝ իսկական զոհեր և նուիրաբերական։

Ա. *Իսկական զոհեր.*

Այդոնք են այն զոհերն, որոնք կենդանեաց մորթուելով են մատուցանւում, զոհւում էին անպակաս կենդանիներ եօթնօրականից մինչև երեք տարեկան—եզ, այծ ու ոչխար և տատրակ և աղաւնի աղքատների համար։ Զոհի սկզբունքն է. «Զի շունչ ամենայն մարմնոյ արիւն իւր է. և ես ետու զայն ձեզ ի սեղանն՝ քաւել վասն անձանց ձերոց, զի արիւն նորա փոխանակ անձին նորա քաւեսցի» (Ղևտ. ԺԷ, 11)։ Այս զոհերն են իսկական զոհերը, իսկ որոնք առանց արեան են, միայն ընծայ կամ նուիրաբերութիւն են։ Եթէ Սիոնը կամ Իսրայէլի ժողովուրդը շնորհ է վայելում Աստուծոյ կողմից, այն ժամանակ բոլոր զոհերը ընդունելի են Աստուծոյ առաջ, իսկ եթէ ժողովուրդը մեղաւոր է, նորա զոհը ընդունելի չէ։ Շնորհաց տակ ժողովուրդը կարող էր զոհաբերել՝

1. Ողջակէզ, այսինքն այն զոհն, որ միշտ ժողովրդի համար պէտք մատուցուէր անշէջ. այդ ողջ այրում էին առանց կաշու (Ղևտ. Ա.) և ողջ այրելը նը-

Digitized by Google

շանակում էր՝ բոլորովին և ամբողջովին նուիրուել Աստուծուն թէ հոգւով ու թէ մարմնով, ըստ որում և ամենքը պէտք է ու կարող էին մատուցանել։ Այդպիսի ողջակէզներ մատուցանում էին Հաբել, Նոյ և Աբրահամը, ուստի այդ զոհը ամենահինն է և ամենից գեղեցկապէս է ներկայացնում մարդու յարաբերութիւնն առ Աստուած։ Զոհողը դնում էր ձեռքը կենդանու վրայ, ապա մորթում էին և այրում, իսկ արիւնը սըրսկում սեղանի վրայ։

2. Խաղաղութեան զոհ, որ մատուցանում էին ի նըշան գոհաբանութեան կամ փրկութեան կամ փառաբանութեան՝ ընդհանուր բարեաց համար։ Այս զոհի արիւնըն ու ճարպային մասերը մատուցանում էին, իսկ մնացածը զոհի ճաշ էր դառնում։ Այս թերևս դրուեց Նոյի ժամանակից, երբ Աստուած թոյլատրեց կենդանեաց ու թռչնոց միսն ուտել և խաղաղութեան ուխտ հաստատեց ամենայն մարմնոյ հետ։

Շնորհազուրկ ժամանակ մատուցանում էին՝

1. Հաշտութեան զոհ, որ լինում էր մեղքի համար և ծառայում էր հաշտեցնելու։ Օրէնքը հրամայում էր թէ՝ «Իւրաքանչիւր ոք ի մեղս իւրում մեռանիցի» (Բ Օր. ԻԴ, 16. տես. Եզեկ. ԺԸ, 20. Հռ. Զ, 23) բայց որովհետև մեղքը գործւում է կամ ակամայ կամ չարութեամբ, (Թիւք. ԺԵ, 27), ուստի եթէ մէկը չարութեամբ էր մեղք գործում, պէտք է բոլորովին ոչնչանար ժողովրդի միջից (ԺԵ, 30), իսկ եթէ անգիտութեամբ, նորա համար Աստուած տնօրինել էր հաշտութեան զոհը, այնպէս որ մեղաւորի մարմնի փոխանակ այրւում էր կենդանու մարմինը և նորա հոգու տեղ թափւում էր կենդանու արիւնը, որ և սրսկում էին զոհի սեղանի վրայ ի նշան մեղաւորի հոգու քաւութեան։

2. Զոհի մի այլ տեսակն է զուարակը, որ մատու-

Digitized by Google

ցանում էին նոքա, որոնք դէպի սրբութիւնը կամ դէպի մարդիկ անհաւատարիմ էին գտնւում. այդ զոհի հետ նոքա վնասի փոխարէնը հատուցանում էին, իսկ արիւնը սրսկում էին սեղանի շուրջը և քսում եղջիւրները։ Ընդհանրապէս արեան ու ճարպի ուտելը մահուան սպառնալիքով արգելուած էր, վասն զի հաշտութեան միջոց էին (Ղևտ. ԺԷ, 11)։ Հաշտութեան իրագործման համար մեղաւորի զոհի մսից ուտում էր քահանան, վասն զի այդ մսի մէջ էր մեղաւորի մեղքը. այդպիսով քահանան քաւում էր զոհողի մեղքը։ Իսկ խաղաղութեան ժամանակի զոհից կարող էին ուտել և մարդիկ, քանի որ այդպիսի մսի մէջ մեղք չկար։ Այդ միսն ուտելով՝ հաւատացեալք հաղորդակցութեան մէջ էին մտնում Աստուծոյ հետ (Բ Օր. ԺԲ, 18) և այդ մի նշան էր, որ հաւատացեալք մասնակցելու էին Մեսիայի արքայութեան երանութեան (տես. և Առ. Թ, 1—6)։ Իսկ երբ զոհը բերւում էր քահանայապետի կամ ամբողջ ժողովրդի համար, այն ժամանակ արիւնը սրսկւում էր սրբութեան մէջ և տարին մի անգամ սրբութիւն սրբոցում (Ղևտ. ԺԶ, 11—29). մարմինն էլ այրւում էր դուրսը մի բաց տեղ, վասն զի այդպիսի մեղաց համար միջնորդ չկար և միայն արեան սրսկումը ցոյց էր տալիս, որ Աստուած պէտք է քաւէր նոցա։ Մսի դուրսը այրելը նախատիպ էր, որ Մեսիայի զոհը բերուելու էր բոլոր մարդկանց համար և որ Մեսիան Երուսաղէմից դուրսը պէտք է մեռնէր (Եբր. ԺԳ, 11—13)։

Բ. Նուիրաբերական զոհեր.

Այսոնց մէջ նշանաւոր էին ուտելիքի զոհերը, որպէս երեխայրիք, հացահատիկներ, ալիւր, ալյ և ձէթ ի նշան Ս. Հոգու շնորհաց, և աղ ի նշան որ ուխտի հաստատութիւնը չփչանայ բարոյապէս, ըստ որում զո-

հը ընդունելի չէր Աստուծոյ առաջ առանց շնորհաց, աղօթքի և ուխտից դուրսը։ Եթէ հաց էին բերում, պէտք է անխմոր լինէր։ Բերում էին և գինի, որ ածում էին սեղանի շուրջը. իսկ ծխելու համար բերում էին խնկեղէն, մանաւանդ կնդրուկ՝ ի նշան աղօթքի և ուխտադրութեան։ Գինին էլ նշան էր Աստուծոյ շնորհաց վայելման ուրախութեան և նորա հետ արեամբ հաշտուելուն (Թիւք. ԻԸ)։ Երկու բան արգելուած էր զոհաբերելու. նախ խմորուն հացը, որ նշան էր անմաքրութեան՝ այսինքն հեթանոսական խմորի և մեղրը իբրև նշան մարմնական ցանկութեանց։

Աստուած պահանջում է մի բան՝ որ ասուած է օրէնքում. «Եւ արդ Իսրայէլ, զինչ խնդրէ ի քէն Տէր Աստուած քո. այլ երկնչել ի Տեառնէ Աստուծոյ քումմէ, և գնալ յամենայն ճանապարհս նորա և սիրել զնա և պաշտել զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ. և պահել զպատուիրանս Տեառն Աստուծոյ և զիրաւունս նորա՝ զոր ես պատուիրեմ քեզ այսօր, զի բարի լիցի քեզ» (Եր. Ժ, 12)։ Բայց Աստուած հրամայում է նոյնպէս՝ «ոչ երևեսցիս առաջի իմ դատարկաձեռն» (ԻԳ, 15. ԼԴ, 20. Բ. Օր. ԺԶ, 16)։ Ուրեմն նա պահանջում է և զոհաբերութիւններ, սակայն այսոնք նշան են հաւատքի ու սիրոյ, որ մարդ պատրաստ է ամենայն ինչ Աստուծուն զոհելու և ուզում է հոգևոր կերակուր. իսկ որտեղ չկայ հաւատք ու սէր, այնտեղ ոչինչ նշանակութիւն չունին զոհերը. «լաւ է ունկնդրութիւն՝ քան զզոհ ընտիր, և հնազանդութիւն քան զճարպ խոյոց». ըստ որում և «Պատարագք ամբարշտաց պիղծ են առաջի Տեառն, քանզի անօրէնութեամբ իսկ մատուցանեն զնոսա» (Ա Թագ. ԺԵ, 22. Առ. ԻԱ, 27. Սաղմ. Խ, 7. Ծ, 18. ԽԹ, 8. Ես. Ա, 11. և այլն)։ Այս բոլորից երևում է, որ Հին Ուխ-

Digitized by Google

տի զոհը նշանակում էր հաւատքի խորհուրդը և ուխտադրութեան ծէսը, որոնցով մեղաւոր մարդը պէտք է հաշտուէր Աստուծոյ հետ և քաւուէր խոստացեալ զաւակի՝ այսինքն՝ Քրիստոսի աննման պատարագով (Եղ. ԻԴ, 8. Եբր. Թ, 16—22)։ Վասնորոյ և մեզ համար Քրիստոս ամիով պատարագաւ կատարեաց զսրբեալսն ի մշտնջենաւորս (Եբր. Ժ, 14)։ Եւ այժմ ևս մենք զոհաբերում ու նուիրաբերում ենք ի հաճոյս Աստուծոյ միայն յօգուտ Եկեղեցու և աղքատների ու կարօտեալների, որպիսի զոհն ու նուէրները նշանակութիւն ունին միմիայն այն ժամանակ՝ եթէ մենք Աստուծոյ սիրուց ու ճշմարիտ հաւատքով ենք բերում։

V. Լուացումն։

Հաշտութեան զոհի հետ պէտք է յիշել և լուացումը։ Ըստ Մովսիսական օրինաց՝ մարդու բնական կեանքի մէջ զանազան դրութիւններ պիղծ էին և ուրեմն այդպիսի դրութեամբ չէր կարելի մօտենալ սրբութեան։ Այդ դրութեան նշանաւոր տեսակն էր մահը և նորան հետևող ապականութիւնը կամ փտումը։ Որովհետև մահը մեղքի արդիւնք է մարմնի վերաբերմամբ, դորա բոլոր արտաքին երևոյթներն ևս զգուելի կերպով պատկերացնում են այն, ինչ որ հոգու վերաբերմամբ պատահում է իբր մեղքի հետևանք. արտաքին երևոյթներն են՝ մարմնի կապերի խզուիլը, փտիլը և ցրիւ գալը։

Բայց կար մի դէպք, որում կենդանի մարմինը նմանութիւն էր ունենում մեռած մարմնի ապականութեան, ուստի և պիղծ էր համարւում։ Այդ դէպքն էր բորոտութիւնը, որի վէրքերը համապատասխան էին մեռածի փտութեան և որի հետևանքը լինում էր մարմնի փտելը՝ յար և նման դիակի փտելուն։ Մարդու ծնընդաբերութիւնը մեղքով էր սկսուել, նոյնպէս և մահը

այդ մեղքի հետեւանք էր եղել, ուստի եւ մարդու կեանքի թէ սկիզբը, թէ վերջը եւ թէ դոցա հետ կապուած բոլոր գործողութիւնները պիղծ էին համարւում եւ ուրեմն սրբուելու կարօտ (Սաղմ. Ծ, 7)։ Այսպիսով ինչպէս որ բոլոր տեսակ մեղքերը՝ իբրեւ արտայայտութիւն մեղանչականութեան՝ պէտք ունէին քաւուելու, այնպէս էլ մահուան նման դրութիւնները՝ ինչ տեսակի էլ լինէին՝ պէտք է սրբուէին, թէեւ ի հարկէ օրէնքի մէջ զանազանւում են ծանր ու թեթեւ տեսակներ։

Առանց լուացման ու սրբուելու ոչ ոք արժանի չէր Աստուծոյ սրբութեան մօտենալու։ Թեթեւ տեսակները կարելի էր մի օրում հասարակ լուացումով սըրբել, իսկ ծանրը միմիայն զոհաբերութեամբ։ Թեթեւ տեսակներից էին եւ այն պղծութիւնները, որոնք յառաջանում էին պիղծ անձանց կամ իրերի դպչելուց։ Ծանր տեսակի էր բորոտութիւնը, որ թէ եկեղեցական ու թէ քաղաքացիական կեանքից բաժանում էր։ Երբ բորոտը բժշկւում էր, վերստին ընդունւում էր մի օրինական արարողութեամբ, որ կատարւում էր երկու աղաւնիներից մէկի զոհելով ու միւսի արձակելով եւ զոհուածի արեան օրինական սրսկմամբ (Ղեւտ. ԺԴ)։ Այնուհետեւ բժշկուած բորոտին ընդունում էին իբրեւ մեռելութիւնից յարուցուածի։ Այդպէս եւ դիակի դպած ու պղծուած մարդը կամ անօթը պէտք է եօթն օրից սրբուէր։ Այդ նպատակով զոհում էին կարմիր կով, որ կարմրութիւնը կեանքի զօրութեան ու լիութեան նշան է, այրում էին եղեւնու հետ, որ անփտութեան նշան էր, որդան կարմիրի՝ որ կեանքի նշան էր, եւ զոպայի հետ, որ նշան էր սրբարարութեան (Սաղմ. Ծ, 9), մոխիր էին շինում, ջրով խառնում, մոխրաջուր շինում եւ այդով պէտք եղած ժամանակ լուանում պղծուածներին (Թիւք ԺԹ)։

Digitized by Google

Այս բոլոր արարողութիւնք գեղեցիկ միջոցներ էին, որոնցով հեշտութեամբ կարելի էր ժողովրդի մէջ ներշնչել հոգու վսեմութեան նշանակութիւնը և այն, որ նաև մարմինը պէտք է համապատասխան սրբութեամբ և հեթանոսական անհաւատութիւնից հեռու պահել։

Դասարանական ընթերցանելիք։

1. Զոհաբերութիւնք ու քահանայագործութիւն. Ղևտ. Ա—Է։
2. Ահարոնի օծումը և նորա որդիների նուիրումը. Ը—Ժ։
3. Քաւութեան տօնի կարգերը. ԺԶ։
4. Քահանաների սրբակեցութիւնը և ապրուստի միջոցները. ԻԱ—ԻԲ։
5. Տօներ. ԻԳ։
6. Շաբաթ Տեառն և Տարի թողութեան. ԻԵ։
7. Ուխտ ու տասանորդ. ԻԷ։

ԼԱ.

Թ Ի Ւ Ք

Այս գիրքը Հրէաների մէջ կոչւում է Վայդաբբեր, որ գրքի առաջին խօսքն է՝ այսինքն՝ «Եւ խօսեցաւ», իսկ այժմեան մասորական օրինակներում կոչւում է «Անապատում»—բե-միդբար—. այս բառը վերցրած է առաջին տնից և շատ յարմար է, վասն զի այս գրքում պատմուած է Իսրայէլացոց կեանքը Արաբական անապատում։ Թիւք կամ «արիթմօյ» յոյն թարգմանութեան անունն է և այդպէս է կոչուել, վասն զի սկզբի գլուխներում թուած են ժողովուրդը, Ղևտացիք և անդրանիկները։ Այս անունը վերցրած է հին հրէական անունից, որ է՝ «սեփեր միսպարիմ»—գիրք թուոց։

Digitized by Google

Գրքի նպատակն է՝ պատմել այն ծանրագին ճանապարհորդութիւնը, որ տանում էր դէպի Աւետեաց երկիրը, ի խրատ և ի յիշատակ ապագայ սերնդի, որպէս զի լաւ հասկանան թէ անհրաժեշտ է անպայման հնազանդ լինել Աստուծոյ կամքին՝ նորա արքայութեան բարիքները վայելելու համար։ Ըստ այսմ այս գիրքը մի նախատիպ նկարագրութիւն է մեր այս անապատական կեանքին, որ հաւատարմութեամբ անցնելով կհասնենք երկնաւոր արքայութեան։

Թիւքը պարունակում է այն բոլոր օրէնքների ու եղելութեանց նկարագրութիւնը, որոնք տրուել են ժողովրդին 39 տարուայ մէջ, այսինքն ելքի երկրորդ տարուանից մինչև 40-դ տարուայ 11-դ ամիսը (Բ. Օր. Ա, 3)։ Ինչպէս որ Եգիպտոսից դուրս հանուելով՝ իսրայէլացիք ձուլուեցան ու մի ժողովուրդ դարձան և Աստուծոյ օրէնսդրութեամբ մի հոգևոր վերածնութիւն ունեցան, այնպէս էլ թէ անապատական կեանքով և թէ աստուածային կարգադրութիւններով պէտք է դաստիարակուէին (Բ. Օր. Ը, 5)։ Թուոց գրքում պատմուած կարգադրութիւններից նշանաւորը այս է, որ մինչդեռ առաջ անդրանիկները նուիրւում էին Աստուծոյ ծառայելու, այժմ կարգադրւում է՝ որ միմիայն Ղևտացիք Աստուծոյ նուիրուածը լինին։ Աստուած այստեղ կարգադրութիւն է անում նաև ուխտաւորների համար, որոնց մանրամասնութիւնք արդէն յիշեցինք Հոգևոր դասի վրայ խօսելիս. Նշանաւոր է և այն կարգադրութիւնը, որ տրուեց ազատ քաղաքների նկատմամբ, և այն գլուխը, որտեղ պարունակուած է քահանայական օրհնութիւնը և այլն։

Թուոց գրքում նկատւում են երեք մասեր։ Առաջին մասն է. Պատրաստութիւն դէպի Սինա ուղևորուելու համար (Ա — Ժ)։ 1. Ժողովրդի համարակալու-

Digitized by Google

թիւնը և բանակի կարգաւորումը (Ա—Բ)։ 2. Ղևտացոց համարակալութիւնը (Գ—Դ). 3. Մասնաւոր օրէնքները (Ե—Զ)։ 4. Ցեղապետների նուիրաբերութիւնները (Է)։ 5. Ղևտացոց սրբագործումը (Ը)։ 6. Զատկի տօնը Սինայի վրայ (Թ, 1—14)։ 7. Հրեղէն և ամպեղէն սիւնը և կոչման փողերը (Թ, 15 - Ժ, 10)։ 8. Սինայ հասնելը (Ժ, 11—36)։

Երկրորդ մասը (Թ—ԺԹ). *Ժողովրդի խռովութիւնները անապատում*. 1. Ժողովրդի խռովութիւնը և հրայրեաց լինելը. լորամարգ և գերեզման ցանկութեանց (ԺԱ)։ 2. Մարիամի և Ահարոնի բամբասանքը (ԺԲ)։ 3. Քանան յղուած լրտեսները և ժողովրդի խռովութիւնը նոցա դարձից յետոյ (ԺԳ—ԺԴ)։ 4. Զոհերի և այլ օրէնքներ. (ԺԵ)։ 5. Կորխայ և Դաթանայ խռովութիւնն և պատժուիլը (ԺԶ - ԺԷ)։ 6. Այլ և այլ պատուէրներ. (ԺԸ—ԺԹ)։

Երրորդ մասը (Ի - ԼԶ). *Քառասներորդ տարուայ առաջին տասը ամիսների դէպքերն ու կարգերը*։ 1. Սին անապատ գալը և Մարիամի ու Ահարոնի և այլոց մահը (Ի)։ 2 Յաղթանակ Քանանացոց Արադի վրայ, օձերը և յաղթանակ Սեհոնի և Ովգի վրայ (ԻԱ)։ 3. Բաղաամ և իւր մարգարէութիւնը (ԻԲ—ԻԴ)։ 4. Իսրայէլացոց կռապաշտութիւնը և պատժուիլը. (ԻԵ)։ 5. Նոր համարակալութիւն Աւետեաց երկրի բաժանման համար. Սաղբաադի դուստրների ժառանգութիւնը և Յեսու Նաւեայի յաջորդումը. (ԻԶ—ԻԷ)։ 6. Տօներ և ուխտագրութեան կարգեր (ԻԸ—Լ)։ 7. Մադիամացոց նուաճումը (ԼԱ)։ 8. Ռուբէնի, Գադի և կէս Մանասէի ցեղերի հաստատուիլը Յորդանանի արևելեան կողմում. (ԼԲ)։ 9. Իսրայէլացոց բանակետեղերը և Աւետեաց երկրի սահմանները. (ԼԳ—ԼԴ)։ 10. Ղևտացոց քաղաքները և ապաստանարանք (ԼԵ)։ 11. Ժառանգաւոր կանանց ամուսնութեան օրէնքները. (ԼԶ)։

Digitized by Google

Դասարանական ընթերցանելիք

1. Ուխտաւորութիւն. քահանայական օրհնութիւն. Զ.
2. Ղևտացոց սրբագործումը. Ը, 5—26։
3. Զատկի տօնումը. Թ. 1—14.
4. Ահարոնեան ցեղի ընտրութիւնն ի քահանայութիւն. ԺԶ—ԺԷ։
5. Կարմիր երինջի գոհը և լուացման ջուրը. ԺԹ։
6. Պղնձի օձը. ԻԱ, 4—9։
7. Բաղաամի մարգարէութիւնը ԻԲ—ԻԴ։
8. Ապաստանի քաղաքները և Ղևտացոց վիճակը. ԼԵ։

ԼԲ.

ԱՒԵՏԵԱՑ ԵՐԿԻՐԸ

Անունը։ Աւետեաց երկրում Աբրահամի ժամանակ ապրում էին Քանանացիք, ուստի և երկիրը կոչւում է Քանան՝ Քամի որդու անունով։ Քանան իսկապէս նշանակում է ցածր երկիր կամ դաշտ, որ Յորդանանի արևմտեան մասն է, թէև ընդարձակ մտքով է այդպէս կոչուած (Թիւ. ԺԳ, 30. ԼԳ, 51. Ելք. ԺԶ, 35. Յես. ԺԱ, 3)։ Աստուած ուխտ է դնում, որ այդ երկիրը պէտք է լինէր Աբրահամինն ու իւր որդիներինը, ուստի և կոչւում է Ուխտի երկիր կամ Աւետեաց երկիր (Եբր. ԺԱ, 9)։ Կոչւում է նոյնպէս Եբրայեցոց երկիր, վասն զի Հրէաները Եբրայեցի են կոչւում իւրեանց մի նախահօր՝ Եբերի անունով. (Ծն. Խ)։ Կոչւում է նաև Իսրայէլի երկիր (Ա Թագ. ԺԳ, 19), այլ և Պաղեստին այսինքն՝ Փղշտացոց երկիր (Սաղմ. ԺԹ, 10), որ սկզբում բուն Փղշտացոց երկրի անունն էր ծովեզրի վրայ, բայց յետոյ Յունաց մէջ այդպէս կոչուեց Յորդանանի ջրաբաշխը

Digitized by Google

որ յաճախ Ասորիքի մասն էր համարւում։ Մարգարէների գրուածներում կոչւում է նոյնպէս սուրբ երկիր, Տիրոջ երկիր և այլն (Զաք. Բ, 12. Ովս, Թ, 3)։

Դիրքը։ Այդ երկիրը տարածուած է Միջերկրական ծովի արևելեան եզերքում 31 – 33 $^1/_2$° հիւս. լայնութեան և 52—54 $^1/_2$° արևելեան երկայնութեան մէջ և Հարաւարևմուտքում կպած է Աֆրիկէին։

Սահմանները։ Արևմուտքում Միջերկրական ծովն է, հիւսիսում Լիբանանի և Անտիլիբանանի լեռնաշղթայք, հարաւում և արևելքում՝ արաբական անապատը. սակայն քաղաքական սահմանները միշտ միևնոյն չեն եղել, այլ փոփոխուել են։

Աշխարհագրական նշանակութիւնը։ Դիրքն ու սահմանները դիտելով տեսնում ենք՝ որ այդ երկիրը առանձնացած է լեռնաշղթաներով, անապատով և բաւական անմատչելի ծովեզերքով, բայց միևնոյն ժամանակ այնպիսի մի տեղ է գտնւում, որ բոլոր երկրների և ազգերի հետ կարող է յարաբերութեան մէջ մտնել, ուստի և շատ յարմարապէս ընտրուած է քրիստոնէութեան տարածման համար։ Այստեղ Իսրայէլացիք ջոկւում են աշխարհի ժողովուրդներից, որպէս զի պահեն ճշմարիտ հաւատք և Աստուծոյ յայտնութիւնը մաքուր ու հաստատ, մարդկանց ապագայ փրկութեան համար (Ծն. ԺԲ, 1—3)։ Բայց նա պէտք է լինէր նաև ազգերի համար մի ճրագ, խաւարի մէջ մի լոյս. այդպէս և կռապաշտութեան մէջ պայծառ էր նորա հաւատքը։ Չորս կողմը գտնւում էին հին աշխարհի մեծ ազգերը՝ ինչպէս Բաբելացիք, Ասորեստանցիք, Մեդացիք, Պարսիկները, Փիւնիկեցիք, Եգիպտացիք, Յոյն ու Հռովմայեցիք։ Ուստի և Աստուած ասում է Եզեկիէլի բերանով. «Այս այն Երուսաղէմ է, զո եդի ի մէջ հեթանոսաց զդա, և որ շուրջ զդովաւ գաւառք» (Ե, 5) և նոյն երկիրը «սուրբ

Digitized by Google

երկրի» է կոչւում (ԼԸ, 12), որ որոշուած է ազգերի լուսաւորութեան ու դատաստանի համար։

Մեծութիւնը։ Երկրի երկարութիւնը հիւսիսից մինչև հարաւ՝ այն է՝ Դանից մինչև Բերսաբէ և իւր կողմերը 31—32 մղոն է. իսկ լայնութիւնը արևմուտքից մինչև արևելք հասնում էր՝ նեղ տեղերը 6 մղոն ի. լայն տեղերը 23 մղոն։ Ըստ այսմ ամբողջ երկիրը մօտաւորապէս 460—480 քառակուսի մղոն է։

Հողի կազմութիւնը։ Պաղեստինը ամբողջապէս բաժանուած է մի ճեղքուածքով կամ խոռոչով երկու մասի՝ արևելեան և արևմտեան։ Այդ խոռոչով անցնում է Յորդանանը, ուստի և այդտեղը կոչւում է Յորդանանի վայրը կամ Գոր։ Գետն անցնելով կազմում է մի հովիտ, որի երկու կողմերում տարածւում են կրաքարի ժայռեր։ Այդոնց մէջ գլխաւորապէս արևելեան մասում տեղ տեղ կայ հրաբղխային երկաթակուճ կամ բասալդ։ Հովտի յատակը հիւսիսից դէպի հարաւ շարունակ գնալով լայնանում է։ Այս հովիտը նշանաւոր է այնով, որ ամբողջ երկրի վրայ ամենախոր ճեղքուածքն է, դէպի հարաւ հետզհետէ խորանում է նոյն իսկ ծովի մակերևոյթից, այնպէս որ ամենախոր տեղում հասնում է 800—900 մետրի։ Այդ հովիտը կազմում է երեք ծովաւազաններ, որոնցից հարաւայինը ամենամեծն է։ Երկու կողմերից էլ բազմաթիւ հուներ կան, որոնք մեծաքանակ ջուր են բերում ներս, թէև մեծ մասամբ ամառը չորանում են։

Մեռեալ ծովի հարաւում այդ ճեղքուածքը շարունակւում է մինչև Կարմիր ծովի արևելեան խորշը, որ և կոչւում է Արաբա։ Այստեղ Իսրայէլացիք 38 տարի անցկացրին իւրեանց քառասնամեայ թափառական կեանքի ժամանակ։ Այդ ամբողջ տեղը ունի 42 ժամուայ երկայնութիւն, իսկ լայնութիւնը 2 ժամ. հարաւում և

Digitized by Google

12 ժ. հիւսիսում, որ և արևելեան կողմից կտրւում է Սէյիր լեռնաշղթայով և արևմտեան կողմը փակում է Ազազիմէ բարձրաւանդակը։ Արաբայի հովտի յատակը փոքր առ փոքր բարձրանում է դէպի հարաւը և վերջում անցնում է ծովի մակերևոյթի բարձրութիւնից, ապա վերստին իջնում է դէպի Կարմիր ծովը, այնպէս որ անցնելով չորս մղոն դէպի հիւսիս՝ բաժանում է երկու ծովերի ջրաբաշխը։

Յորդանանի արևելքում և արևմուտքում տարածւում են բարձրաւանդակներ, որոնցից արևելեանը 400—600 մետր ծովի մակերևոյթից բարձր է. այդտեղ երկիրը չորային է, օդը ջերմ, ամառը տօթ և ձմեռը սառն, իսկ ջրով և անտառներով աղքատ։ Արևմտեան մասը նոյնպէս բարձրաւանդակ է և այդ է իսկական Քանանը, որի բարեխառնութիւնը մօտակայ ծովի ներգործութեամբ առաւել մեղմացած է։ Միջերկրականի ծովեզրը դարձեալ շատ խոր է և ունի բազմաթիւ հուններ։ Այդ ծովեզրի հիւսիսային կողմը կոչւում է Սարոն դաշտավայր, իսկ հարաւայինը Սեփելա։

Լեռները։

Տեսանք, որ Պաղեստինը մի տեսակ լեռնային երկիր է, որի սարերը կազմուած են մեծ մասամբ կրաքարից իւրեանց անթիւ այրերով։ Արևելեան Յորդանանի երկիրը հարուստ է բասալտով. Մեռեալ ծովի հարաւում Սէյիր լեռնաշղթան խայտակուճից է (պորփիւր) և աւազաքարից, արաբական անապատը կրային հող ու կայծքար ունի և միմիայն Սինան է հատաքարից ու խայտակուճից։

I. *Պաղեստինի հիւսիսում կան հետևեալ լեռնաշղթաները.*

ա. Լիբանան, այսինքն՝ Սպիտակը։ Այսպէս է կոչւում այդ լեռնաշղթան թէ իւր ձիւնապատ գագաթով-որ տարուայ մեծ մասը չէ բացւում, և թէ կրաքարէ ժայռերի պատճառներով։ Այս լեռնաշղթան Մակմել և Սաննին կոչուած տեղերում հասնում է 2,500 մետր բարձրութեան։ Այդտեղի առաջուայ մայրի անտառներից միայն չնչին մնացորդներ կան այժմ, որոնց ամենահին ծառերը թերևս հազարաւոր տարեկան են և գուցէ Դաւթի ու Սողոմոնի ժամանակներից են։

բ. Հակալիբանան. այս լեռնաշղթան Լիբանանին զուգահեռաբար բաժնուած է Լէօնտէս գետով և միջոցը կոչւում է Ասորոց հովիտ։ Հակալիբանանի հարաւային շղթան շարունակւում է և դառնում է մի մեծ լեռնաշղթայ, որ կոչւում է

գ. Մեծ Հերմոն, որ նոյնպէս անուանւում է Սիրիոն ու Սենիր։ Այս է Ասորիքի ամենաբարձր լեռը և հասնում է 2200 մետր բարձրութեան, որ տարուայ մեծ մասը ծածկուած է լինում ձիւնով։ Հերմոնը շատ գեղեցիկ տեսարան ունի և իւր ջրերով ոռոգում է շըրջակայ հովիտները, այլ և Յորդանանի ակունքների ջրաւազանն է (Սաղմ. ՃԼԲ)։

II. *Յորդանանի արեւմտեան մասի լեռնաշղթայք*։ Յորդանանի արևմտեան երկիրը տարածւում է մինչև ծովեզրը և մի բարձրաւանդակ է 630 մետր ծովի մակերևոյթից վեր։ Այս բարձրաւանդակը բաժանում է արևելեան և արևմտեան ջրաբաշխը, ունի մի քանի լեռնագագաթներ և երեք գլխաւոր մասեր (Յես. Ի, 7)։ Նեփթաղիմի լեռներ հիւսիսում, Եփրեմինը մէջ տեղում և Յուդայինը հարաւում։ Այս կողմով էին շատ հին ժամանակ Եգիպտոսից զօրքեր շարժւում դէպի Ասորիք։

ա. Նեփթաղիմի լեռնաշղթան կոչւում է և Գա-

Digitized by Google

լիլիայի բարձրաւանդակ, որ յայտնի է իւր գեղեցկութեամբ ու պտղաբեր հովիտներով և հարաւում վերջանում է Յեզրայէլի դաշտավայրով։ Ամենագեղեցիկ սարն է Թաբորը, որ գտնւում է Նազարէթի արևելքում, ծովի մակերևոյթից 550 մետր, զարդարուած է սիրուն անտառներով և գագաթում ունի մի հարթավայր, որտեղից բացւում է մի հրաշալի տեսարան։ Այս լեառն է Քրիստոսի պայծառակերպութեան տեղը և շատ է յիշւում Հին Կտակարանում (Յես. ԺԹ, 22. Դատ. Դ, 6. 12. 14. Ը, 18. Սաղմ. ՁԸ, 13. Եր. ԽԶ, 18. Ովս. Ե, 1)։ Վերջերում այստեղ բերդեր կային, իսկ խաչակրաց ժամանակ շինեցին մի եկեղեցի ու մի վանք, որոնցից աւերակներ կան։

Նեփթաղիմ լեռնաշղթայի միւս լեռներն են՝ Փոքր Հերմոնը Թաբորից սակաւ ինչ հեռու, որ մի շղթայ է երկու մղոն երկար, և Եօթն երանութեանց լեառը, Գեննեսարէթի արևմտեան ափին, որտեղ Քրիստոս յաճախ շրջում էր և իւր քարոզը տուաւ (Մատթ. Ե)։

Բ. Եփրեմի լեռնաշղթան կամ Սամարիայի բարձրաւանդակը բաժանւում է Նեփթաղիմից Յեզրայէլի դաշտով և կապուած է Յուդայի լեռների հետ։ Այս լեռնաշղթան արեւելեան և արեւմտեան կողմերում ունի գեղեցիկ հովիտներ. իսկ սարերն են՝ 1. Գարիզին, որտեղից մի ժամանակ օրհնութիւն ասուեց ժողովրդին և որտեղ Սամարացիք տաճար շինեցին, բայց աւերեց Յովհաննէս Հիւրկանոսը (Բ. Օր. ԻԷ. Բ. Մակ. Զ, 2. Յովհ. Դ, 20)։—2. Գեբաղը Սիւքեմի հիւսիսում, որ և անիծից լեառն է (Բ. Օր. ԻԷ. Յես. Ը, 30)։ 3. Սելմոն (Դատ. Թ, 48). 4. Սոմորոն (Բ. Մնաց. ԺԳ, 4). 5. Գեղբուէ՝ Թաբորի հարաւում (Ա Թագ. ԻԸ. 4. ԼԱ, 1. Բ. Թագ. Ա, 21)։

Հիւսիս արևմտեան ուղղութեամբ եւս տարած-

Digitized by Google

ւում է Կարմել՝ այսինքն պտղատու լեռնաշղթան, որ մտնում է Միջերկրական ծովը, կազմում է մի կիսա-լուսին, որի վերջումն է Աքքա կամ Պտղոմայիս։ Սորա հիւսիսային ստորոտումն է Կիսոն գետակը, որտեղ Եղիան կոտորեց Բահաղի քրմերին (Գ. Թագ. ԺԸ)։

Նեփթաղիմի լեռներին կպած է հարաւում՝

4. Յուդայի լեռնաշղթան, որի վրայ է Երուսաղէմն ու Քեբրոնը։ Այս լեռնաշղթան հարուստ է բերքերով ու քաղաքներով և միայն Մեռեալ ծովի կողմերում անապատ է դառնում։ Քեբրոնի արեւելեան կողմը բաժանւում է մի հովիտով, որի մէջ կորւում են և ուրիշ հովիտներ, որոնցում թերեւս Զորն-Ողկուզոյ կամ Էսկօլ (Թիւք ԺԳ, 24)։ Այդ հովիտով անցնում է մի գետ, որ Բեսոր անունով թափւում է Միջերկրական ծովը։ Յուդայի լեռնաշղթայի նշանաւոր լեառն է Ձիթենեաց լեառը Երուսաղէմի մօտ։

Յորդանանի արեւմտեան երկրի լեռները իջնելով Պաղեստինից դուրս, կազմում են Ամովրացոց լեռնաշղթան, որ տարածուելով կորչում է Յինն անապատում։

III. *Յորդանանի արեւելեան երկրի լեռնաշղթաները*։ Հաւրան բարձրաւանդակ, որ ունի նոյն անունով կամ Բասան կոչուած լեռնաշղթայ և որ տարածւում է Գեննեսարէթի արեւելքում և հարաւային մասում բաժանւում է Հիերոմաքս կամ Յարմուկ գետով իբր մի սահմանագծով։ Այս բարձրաւանդակի բարձրութիւնը հասնում է 700 մետրի։ Արեւմտեան մասում նա բարձրանում է մինչեւ 941 մետրի դէպի Հայշ սարը, որ հարուստ է կաղնիներով և խոտաւէտ է։ Դէպի հարաւարեւելք բարձրանում է Հաւրան լեռնաշղթան իւր 1883 մետր գագաթով, որ կտրտուած է բազմաթիւ հովիտներով։ Սորա միակ քարը հրաբղխային բասալտն է, ըստ որում հին ժամանակ այդոր հրաբուղխ-

ներից հրափրփուր է դէպի արեւմուտք հասել և Տրախոնիտիս կամ Լեճա դաշտը ծածկել։ Այս բարձրաւանդակը բերրի հող ունի և մի ժամանակ Ասորիքին հաց էր մատակարարում։

Գաղաադի բարձրաւանդակը անտառային է և տարածւում է Հիրոմաքսի ու Հեսբանի միջև և Ցաբովկ կամ Ցերկա գետակով բաժանւում է հիւսիսային և հարաւային մասերի։ Այստեղի կազմութիւնը կրաքարային է և ունի թէ բնական և թէ արհեստական այրեր, որոնցում ապրում են այդ կողմի բնակիչները։ Սոյն տեղը ստացաւ Գադի ցեղը։ Յաբոկից դէպի հարաւ է տարածւում Գաղաադ լեռնաշղթան, որ այժմ կոչւում է Ճելադ։

Աբարիմի բարձրաւանդակը տարածւում է Գաղաադից դէպի հարաւ մինչև Առնոն գետը, զուրկ է անտառից, կրաքարային է, բայց բերրի և եղել է Ռուբէնի ցեղի բնակութեան տեղը։ Մեռեալ ծովի արևելեան կողմում Աբարիմ կամ Պիսգա լեռնաշղթան մի գագաթ է կազմում Նեբօ կամ Նաբաւ անունով, որտեղից Մովսէսը միանգամ նայեց Աւետեաց երկրի վրայ իւր մահից առաջ։

IV. Պաղեստինի հարաւային սահմանից դուրս լեռնաշղթան։ Սուէզեան խորշի և իւր հիւսիսային կողմում Ակաբահ ծովախորշի ու դէպի հիւսիս Արաբահի ու Միջերկրական ծովի մէջ տարածուած է Պետրեան Արաբիայի թերակղզին։ Այստեղ Իսրայէլացիք թափառեցին աւելի քան 38 տարի և իւր անունը Պետրա կամ Սելահ մայրաքաղաքից է ստացել։ Ոմանք անունը թարգմանելով (պետրա—քար), երկիրը քարքարոտ են կարծել և թիւրիմացութեամբ անուանել՝ քարային Արաբիա։

Թերակղզու մէջ տեղը տափարակ է, արեւմտքում ցածրանում է, հիւսիսում տարածւում է Էթամ անապա-

Digitized by Google

տը, մէջ տեղում Սինն անապատը և հարաւում էլ—Կաա ավազադաշտը։ Ակաբահ ծովածոցի արևմտեան եզերքը լեռնային է, հիւսիսում տարածւում է Արաբա, որի սահմանը հասնում է դէպի արևելք մինչև Սեյիր կամ Եդովմ։ Այստեղ է և Հովր գագաթը, որի վրայ մեռաւ Ահարոնը (Թիւք. Ի, 22—29)։ Այս սարը բարձրանում է իր շրջակայքից 1340 մետր, ունի լաւ բարեխառնութիւն, ուստի և Հռովմայեցիք կոչում էին այս տեղը՝ առողջարար Պաղեստին։

Թերակղզու հարաւում գտնւում է մի բարձր լեռնաշղթայ, որի կազմութիւնը հատաքար ու խորտակուած է և որ յայտնի է Ս. Գրքում ընդհանրապէս Քորեբ անունով։ Այս լեռնաշղթան բաժանւում է երկու խմբերի. հիւսիս-արևմտեանը կոչւում է Սերբալ և հարաւ արևելեանն է իսկական Սինայը։ Սինայի լեռները կազմում են երեք ահագին ու բազմահովիտ լեռնաշղթաներ։ Արևմտեան գծի գլխաւոր գագաթն է Կատարինեան սարը, արևելեանը՝ Էդ—Դէյիր՝ այսինքն վանասարը և մէջ տեղումն է Մովսիսասարը (Ջեբել Մուսա)՝ որի հիւսիսային գագաթը Սինա սարն է։ Այս սարը մի ահռելի սեղան է կազմում 628 մետր բարձրանալով հովտի վերայ, այնպէս որ իւր ամբողջ բարձրութիւնը հասնում է 2227 մետրի։ Հիւսիսային մասը այժմ կոչւում է Քորեբ։ Սինայի ստորոտումն էր կանգնում ժողովուրդը, երբ Աստուած տալիս էր իւր օրէնքները։ Այժմ Մովսիսեան սարի արևելեան լանջի վրայ գտնւում է հռչակաւոր Կատարինեան վանքը։

Դաշտավայրները.

Պաղեստինը լեռնոտ լինելով չունի այնքան մեծ դաշտավայրներ։ Բոլորն էլ յիշուեցան արդէն, միայն դասաւորելով ի միասին կունենանք.

Digitized by Google

Գալիլեայի և մեռեալ ծովի մէջ սփռուած դաշտավայրի անունն է Յորդանանի հովիտ կամ Գոր։ Մեռեալ ծովից դէպի հիւսիս, Յորդանանի արևմտեան կողմը կոչւում է Երիքովի դաշտ, իսկ արևելեանը՝ Մովաբի դաշտ։

Միջերկրական ծովի եզերքում տարածւում է մի դաշտավայր, որ Կարմելից դէպի հարաւ հետզհետէ լայնանում է։ Այս տեղը Կարմելից մինչև Յոպպէ կոչւում է Սարոն՝ այսինքն Դաշտ, որ յայտնի էր իւր վարդերով (Երգերգոց Բ, 1), իսկ Յոպպէից դէպի հարաւ կոչւում է Սեփելա կամ Լեռնակողմն (Դատ. Ա, 9), որտեղ ապրում էին Քանանացիք։ Այդտեղից բացւում են բազմաթիւ հովիտներ, որոնց ջրերը ոռոգում են պտղաբեր դաշտը։

Կարմելից դէպի արևելք ձգւում է տարածւում Յեզրայէլի դաշտը կամ Եզդրելոմ, որ յայտնի է իւր պտղաբերութեամբ և պատերազմների վայր է եղել դատաւորաց ժամանակից մինչև անցեալ դարը, երբ Նապոլէոնը ջարդեց տաճիկներին (1799-ին)։

Ջրեր.

Պաղեստինի ջրերը երկու ջրաբաշխ ունին՝ Միջերկրական ծովինը և Յորդանանինը։

I. *Միջերկրական ծովը*, որ Ս. Գրքում կոչւում է *Մեծ ծով* (Թիւ. ԼԴ, 6), *ծով արեւմտից* (Բ. Օր. ԺԱ, 24) կամ *ծով Փղշտացոց*, ամենամեծ ծովն է Եւրոպայի, Ափրիկայի և Ասիայի մէջ։ Այս ծովը չունի ոչ մի լաւ նաւահանգիստ, այնպէս որ մի անմատչելի սահման է դարձնում Պաղեստինի համար և կտրում է յարաբերութեան կարելիութիւնը։ Միակ նաւահանգիստը Յոպպէն էր (Յովն. Ա, 3)։ Թէ առաջին և թէ երկրորդ տաճարի շինութեան գերանները բերում էին մին-

Digitized by Google

չև Յոպպէ ծովով (Բ Մնաց. Բ, 16. Եզր. Գ, 7)։ Խաչակիրներն էլ այստեղով էին գալիս և մինչև օրս էլ ուխտաւորները նոյն ճանապարհով են Երուսաղէմ գընում։ Հերովդէսը մի արհեստական նաւահանգիստ շինեց Կեսարիայի մօտ, որ սակայն շուտով էլի ընկաւ։ Խաչակիրների գլխաւոր իջևանը Աքքա կամ Պտղոմայիսն էր, իսկ այժմ գլխաւոր նաւահանգիստ է դէպի հիւսիս գընուած Բէյրութը։

Արևելեան կողմից թափւում են այս ծովը բազմաթիւ գետակներ ու վտակներ, որոնցից նշանաւոր են՝ Պաղեստինից դուրս, հիւսիսային Ասորիքում *Օրոնտէս*, որ տանում է Լիբանանի ջուրը դէպի հիւսիս և հանում է Անտիոքի մօտերքը, և *Լէոնտէս*, որ տանում է Լիբանանի ջուրը դէպի հարաւ և հանում է մինչև Տիւրոս։

Իսկ Պաղեստինում այդ ծովը թափւող գետերն են. *Սիհովր* (Յես. ԺԹ, 26) կամ Բելոս, այժմ Նաաման գետ, որ թափւում է Աքքայի մօտ և որի ափին Փիւնիկեցիք գտել են ապակին, ըստ որում և Սիհովր նշանակում է ապակեգետ։ Վենետիկեցիք այստեղից էին տանում խիճը կամ աւազը մինչև ԺԸ դարը, որից և շինում էին ապակի։—*Կիսոն* (այժմ Մակուատա—գետ), որ անցնում է Յեզրայէլի դաշտով և թափւում է Կարմելի հիւսիսային ստորոտում։ Այս գետի մօտ ջարդուեց Սիսերան (Դատ. Դ, 7. Ե, 19) և Եղիան կոտորեց Բահաղի քուրմերին (Գ. Թագ. ԺԸ, 40)։—*Բոսոր* (այժմ Մադի-Ճերիահ), որ տանում է Յուդայի լեռների ջուրը և թափւում է Գազայից դէպի հարաւ։ Այստեղ Դաւիթը յաղթեց Ամաղեկացոց (Ա. Թագ. Լ, 9. 10. 21)։ Սորա մի հովիտը պէտք է լինի Քեբրոնից փոքր ինչ հեռու Ձոր-Ողկուզոյ կամ Էսկոլ (Թիւք. ԺԳ, 29)։

Եգիպտոսի սահմանում նշանաւոր է *Սեհովր* կամ

Digitized by Google

Սիխոր, որ է Զոր կամ Հեղեղատ Եգիպտոսի (Յես. ԺԵ, 4. 47. Ծն. ԺԵ, 18). այժմ կոչւում է Մագի էլ Արիշ, որ և Դաւթի օրով պետութեան սահմանն էր ու թափւում է 31° հիւսիսային լայնութեան և $52^{1}/_{2}$° արևելերկայնութեան վրայ, այնպէս որ սովորաբար չէ նշանակւում Պաղեստինի քարտէզում։

II. *Յորդանանը իւր երեք լճերով:* Յորդանանը, որ նշանակում է *մռնչող*, Պաղեստինի ամենամեծ գետն է, հոսում է Միջերկրական ծովին զուգահեռաբար, երկրի ամենախոր ճեղքուածքով և բնաւ չէ ծւում իւր ուղղութիւնից։ Նա սկիզբն է առնում Հակալիբանանից երկու ճիւղերով, որոնցից արևմտեանը կոչւում է Հասբանի գետ և աւելի երկայն է, իսկ արևելեանը— Բանիաս գետ, որ ելնում է Հերմոնից, գլխաւորապէս Բանիասի (Կեսարիա Փիլիպեցոց) մի խոր այրից և մռընչալով յառաջ վազելով ընդունում է իւր մէջ շատ վտակներ։ Մի հին աւանդութիւն կայ թէ Յորդանանը իսկապէս բղխում է արևելեան փոքրիկ Փիալա լճակից և գետնի տակով երկու ժամ ճանապարհ հոսում է մինչև Բանիասի ակունքը։ Այս գետը հոսելով $2^{1}/_{2}$ մղոն, սրընթաց իջնում է և կազմում՝

Մերոմ լճակը (այսինքն բարձրութեան ջուր), որ կոչւում է նոյնպէս Սամոխոնիտիս և այժմ Հուլէհ ծով։ Սոյն լիճը երկու ժամուայ երկայնութիւն ունի, $1^{1}/_{2}$ ժամուայ լայնութիւն, դէպի հարաւը նեղանում է, պղտոր ու տղմուտ է և առաւելապէս մի մեծ ու շամբոտ ճահիճ է քան թէ լիճ, ըստ որում գարնան շատ լցւում, իսկ ամառը քաւական ցամաքում է։ Զնայելով այդ պակասաւորութեան նորա վրայ լինում են վայրենի սագեր ու բադեր և այլ և այլ ջրային թռչուններ, եղեգնուտում եւս ապրում են վարազներ և օձեր։ Յե-

տուն այստեղ մի գեղեցիկ յաղթանակ տարաւ Քանանացոց վրայ (Յես. ԺԱ, 5. 7)։

Յորդանանը հոսելով այստեղից դէպի վայր և մօտ մի ժամուայ տարածութիւն անցնելուց յետոյ հասնում է Յակովբեան կոչուած բազալտի կամուրջը, որով գընում է Դամասկոսի ճանապարհը մինչև Աքքա, կոչւում է *ճանապարհ ծովու* (Յես. Թ, 1. Մատթ. Դ, 15) և միացնում է Դամասկոսից դէպի հարաւ գնացող ճանապարհը Միջերկրական ծովի հետ։ Այս կամուրջը ունի 50 քայլ երկայնութիւն և 30 քայլ լայնութիւն։ Յորդանանը այստեղից ճիւղաւորւում է և հոսում խիտ անտառի ու գափնեվարդի մացառների միջով և 2½ մղոն անցնելուց յետոյ իջնում է

Գեննեսարէթի կամ Տիբերիասի լիճը, որ իւր այդ անուններն ստացել է իւր ափի քաղաքներից։ Կոչւում է նոյնպէս Քեններեթ այսինքն Տաւիղաձև ըստ իւր ձեւին և մի այլ քաղաքի անունով (Յես. ԺԹ, 35), այլ և Գալիլիայի ծով։ Այս լիճն ունի 2—3 մղոն երկայնութիւն, մէկ մղոն լայնութիւն, 37—50 մետր խորութիւն, առատ է ջրով ու ձկներով և առաջ շրջապատուած էր գեղեցիկ քաղաքներով՝ ինչպէս Կափառնաում, Քորազին, Բեթսայիդա, Մագդաղա, Տիբերիաս, միւս Բեթսայիդա։ Քրիստոս շատ էր սիրում սորա գեղեցիկ ափերը, որոնցից արևելեան կողմերը շրջապատուած են 314 մետր բարձրութեամբ բազալտեան ժայռերով, որոնք մերկ ու սև գերծերով մտնում են լճի մէջ և ահռելի կերպարանք կազմում։ Արևմտեան կողմի գելծերը ցածր են ու թեք։ Մագդաղայից դէպի հիւսիս տարածւում է Գեննեսարէթ գեղեցիկ դաշտը մի ժամուայ երկայնութեամբ։ Լճի մակերևոյթը խաղաղ է և միայն երբեմն ենթակայ է լինում սաստիկ բուքերի և ալեկոծութեան։ Շրջակայ քաղաքները այժմ աւերակ են, դաշտերը տաճիկ-

Digitized by Google

ների հալածանքով անապատացած են և պատկանում են աւազակ Բեդուինների կամայականութեան։

Յորդանանը այստեղ զառուելով անցնում է, լայնանում ու հոսում է կեռմանով կաւճային ժայռերի միջով 30 ժամուայ մի ճանապարհ և հետզհետէ խորանում է ծովի մակերևոյթից։ Այդ ընթացքում նա ընդունում է շատ վտակներ, որոնցից նշանաւոր են ձախ կողմից Հիրոմաքս կամ Ցարմուկ, որ Ս. Գրքում յիշուած չէ և հոսում է Հաուրանից։ Մօաբքում հրաբղխային ժայռոտների մէջ բղխում են տաք ծծմբաջրեր, որոնք լողարաններ ունին։ Այստեղ է և Եդրա (Դերատ) քաղաքը, ուր Հասան Իսրայէլացիք և Բասանի թագաւոր Ովգին ջարդեցին (Բ Օր. Գ, 11)։

Միւս գետակն է Ցորոկ, որ անցնում է Գաղաադ լեռնաշղթան, սահման է կազմում Գադի և կէս Մանասէի, որտեղ և Յակովբը ունեցաւ իւր գիշերամարտը (Ծն. ԼԲ, 22)։

Աջ ափի վրայ ևս թափւում է Քռաթ (Կրիթ. Գ. Թագ. ԺԷ, 3), որ պէտք է Երիքովի մօտի Մադի-Կելտ կոչուածը լինի։

Յորդանանը հոսելով և 30 մեծ ջրվէժներ կազմելով, Բեթաբարայի մօտ 25—30 մետր լայնութիւն է ստանում և 3—4 մետր խորութիւն։ Ամեն տարի ուխտաւորները գալիս են զատկի տօներին Երուսաղէմից Երիքովի վրայով և այստեղ աստուածակոխ ջրում լողանում։

Երիքովից ցածր Յորդանանը թափւում է Մեռեալ ծովի մէջ, որ կոչւում է նոյնպէս Աղի ծով, Դաշտային ծով և Ղովտի ծով։ Սորա մէջ ջուրը մեծ մասամբ գոլորշիանում է, ըստ որում երեկոյեան դէմ սպիտակ, կապոյտ կամ մանուշակի գոյներով բարձրանում են շոգու սիւներ ու գեղեցիկ տեսարան ներկայացնում։ Այս ծովը

Digitized by Google

10—12 մղոն երկայնութիւն ունի, 2—3 մղոն լայնութիւն և շրջապատուած է 600—940 մետր ժայռոտ ու մերկ լեռներով։ Արևելեան ափում կայ մի մեծ թերակղզի։ Հիւսիս-արևելքում կայ մի քաղաքի աւերակ, որ համարում են Զոարա քաղաքը (Ծն. ԺԳ, 10), ուր փախաւ Ղովտը։ Թերակղզու մօտ ջուրը բոլորովին ծանծաղանում է։

Մեռեալ ծովի ջուրը 25% ի չափ աղ է պարունակում, այնպէս որ շատ ծանր է և միջում լողանալ անհնար է։ Ջուրը մութ գոյն ունի և մէջը ձգած իրերը պատում է աղաշերտով։ Ձուկն էլ չունի և եթէ Յորդանանից ձկներ են ներս գալիս, իսկոյն անշնչանում են։ Ջրի մակերևոյթը խաղաղ է, սակայն երբեմն հիւսիսից ալեկոծւում է։ Այդ տեղի յայտնի ձիւթը կամ ասֆալտը կարծրանալով լողում է ջրի վրայ։ Ծովի եզերքներում գտնում են մեծ մեծ ծծմբակտորներ և կպրոտ կրաքարեր։

Այս լիճը ամենախոր լիճն է աշխարհի վրայ, վասն զի յատակը 780—940 մետր խոր է ծովի մակերևոյթից։ Շրջակայքը մեծ մասամբ անպտուղ է և անապատ։ Ծովի աւազանի մի մասը մի ժամանակ լաւ հովիտ է եղել Սիդդիմ կամ *Չորաղի* կամ *ծով աղտից* (Ծն. ԺԴ, 3), որտեղ գտնւում էին Սոդոմ ու Գոմոր և ուրիշ քաղաքներ, որոնց սոսկալի կործանումը պատմուած է՝ Ծն. ԺԹ։ Այդ տեղերում բուսնում է և Սոդոմախնձոր ասուածը, որ նման է նարնջի, հուպ տուած ժամանակ տրաքում է և միջից մազմզուկ ու փոշի է ելնում։

Մեռեալ ծովի մէջ են թափւում *Կեդրոն* (Բ Թագ. ԺԳ, 23) արևմտեան կողմից, որ հոսում է Երուսաղէմի կողքով, մի սարսափելի խորութեան տեսարան է կազմում և սրընթաց թափւում է լիճը։ Արևելքից հոսում է *Առնովն* և Հարաւ-արևելքից *Մարզա*։

Digitized by Google

Մեռեալ ծովի հարաւ-արևմուտքում 3 ժամուայ հեռաւորութեան վրայ մի աղահանք կայ, որի արևելքումն տարածւում է Աղաձորը և նորանից յետոյ է արդէն Արաբա։

Բացի այս ջրերից Պաղեստինը առատ է ջրհորներով, վասն զի չունի ամեն տեղ աղբիւրներ կամ խմելու ջրեր ու գետեր։ Ջրհորները մասամբ ջուր էին բղխում և մասամբ անձրևի ջրամբարներ էին (Ծն. ԻԱ, 25. ԻԶ, 15—25,։ Սովորաբար այդոնց բերանը նեղ էր լինում և ծածկւում էին տափակ քարով, իսկ ցամաքած ժամանակ գործադրւում էին իբրև բանդ, ուր և ձգեցին Յովսէփին ու Երեմիային։ Երուսաղէմի մօտ կային Սելովմ (Յովհ. Թ, 7) ու Բեթհեսդա (Ե, 2), Սիւքեմի մօտ Յակովբի ջրհորը (Յովհ. Դ), Բերսաբա (Ջրհոր-երդման. Ծն. ԻԱ, 31. ԻԶ, 32. 33). և ջրհոր տեսլեան (Ծն. ԺԶ, 14. ԻԴ, 62. ԻԵ, 11.)։ Էմմաուսը ունէր ջերմուկներ, որպիսիք կային Գալիլիայում և Մեռեալ ծովի մօտերքում ևս։

Աւետեաց երկրի բարեխառնութիւնը և պտղաբերութիւնը

Պաղեստինը 8—10 աստիճան հեռու է տաք գօտուց, ուստի և մեղմ օդ ունի և միայն ամառը տօթագին է, բայց գիշերը զով։ Ձմեռն այստեղ անցնում է անձրևով, իսկ ձիւնը դաշտավայրներում հազուադէպ է և կարճատև։ Հրէաները սկսում էին իւրեանց քաղաքական Նոր տարին աշնան (մեր Սեպտ.—Հոկտ.), երբ անձրևային եղանակ էր լինում և հողը ընդունակ էր դառնում սերմանուելու։ Փետրուարին արդէն գարուն էր լինում (Երգերգոց Բ, 11—13), սերմերը զարգանում էին ու Մարտի անձրևը հասցնում էր։ Ապրիլ ու Մայիսում ցորենը հնձում էին և ամառուայ սերմը ցանում, որ մի կարճ ժամանակից յետոյ հասնում էր։ Տօթագին օրերը

սկսւում էին Յունիսից և տեւում մինչև Սեպտեմբեր, երբ անձրև չէ գալիս, թէև գիշերները հով են լինում (Ծն. ԼԱ, 40)։ Տաքն այնքան սաստիկ է լինում, որ բոյսերը թառամում են և միայն Սեպտեմբերի անձրևով վերակենդանանում։

Առհասարակ Քանանը լաւ մշակուելով դրախտ էր դառնում, ուրտեղ մեղր ու կաթ էր բղխում. այսպէս մի գեղեցիկ երկիր խոստացաւ Աստուած Իսրայէլացոց (Բ Օր. ԺԱ, 10. 11. Ը, 7 - 9)։ Այդ հրաշալի երկիրը այժմ անէծքի է մատնուած մանաւանդ տաճիկների գազանութեան տակ բոլորովին փչացած է։ Իսկ առաջ եղել են միայն մանր մունր անապատներ, որոնցից ամենամեծն է Յուդայինը, որ տարածւում է Յուդայի լեռնաշղթայի ու Մեռեալ ծովի մէջ մինչև Երիքով. այդ անապատն ունի բազմաթիւ մանր հովիտներ, որտեղ շատ քիչ է խոտ պատահում։ Նորա մասերն ունին և զանազան անուններ՝ որպէս Մաւոն, Զիփ, Թեկով, Ենգադիս (Յես. ԺԵ, 55) և այլն։ Երիքովից դէպի հիւսիս էլ կայ մի անապատ, որ այժմ կոչւում է Քառասնօրեան (Քառանտանիա) Քրիստոսի 40 օր այդտեղ պահելուն համար (Մատթ. Դ)։ Սամարացու դէպքն ևս այստեղ է պատահել (Ղուկ. Ժ)։

Պաղեստինը ունէր և չարիքներ, որոնց հանդիպում էր ժողովուրդը, այն է՝ երկրաշարժ, ջերմ քամիներ, երաշտութիւն, մորեխ, բոր ու ժանտախտ։

Նշանաւոր բերքերն ևս շատ են Պաղեստինում, թէև երկրի դրութիւնն, ինչպէս տեսանք, այնքան էլ բարեյաջող չէ։ Հանքային հարստութիւն են կազմում աղ, կուպր, կաւ, ծծումբ, բասալտ, կրաքար, պղինձ, երկաթ, բայց պակասում են բոլոր թանգագին հրահալելիքները։

Բուսական հարստութիւնն է՝ ցորեն, գարի, գինի, ձէթ, թուզ, արմաւ, նուշ, փստուկ, դեղձ, նուռն, թութ,

Digitized by Google

եղջիւրենի և զանազան փայտեղէն՝ մայրի, բևեկն, կաղնի, նոճի, մուրտ, տօսախ։ Տնկում էին և զմուռսի ու պալասանի ծառերն իւրեանց թանգագին խէժի պատճառով։ Սովորական էին և սեխը, լոբին, սիսեռ, ոսպ և այլն։

Կենդանիներից նշանաւոր են՝ ոչխարը, տաւարը, այծ, էշ, ջորի, ձի, ուղտ, ցիռ, եղջերու, յամոյր (անտիլոպ), վայրի գոմէշ, նոխազ, վիթ, նապաստակ, ոզնի. Թռչուններից — արծիւ, ջայլամ, արագիլ, հաւալուսն (պելիկան), լոր, թովբալ, կաքաւ, սագ և այլն։ Հարուստ է նաև ձկներով ու մեղուներով, ինչպէս և պակաս չեն գազաններ, զորօրինակ՝ առիւծներ, որոնք այժմ չկան, արջ, գայլ, յովազ (պանթեր), շնագայլ (շակալ), աղուէս, օձեր ու կարիճներ։ Բազմաթիւ են և զեռունները, որոնց մէջ կային և ուտելու տեսակներ, որպէս մորեխներ (Տես. Ղևտ. ԺԱ)։

Քանանի և շրջակայքի բնակիչները Յեսուի ժամանակ։

Քանանում նախ քան Իսրայէլացոց գալուստը ապրում էին Քամի և Սեմի ցեղերը։

I. *Քամի ցեղից կային՝*

Ա. Քանանացիք ընդհանրապէս, որոնք եօթը ազգեր էին (Յես. Գ, 10) Քամի որդի Քանանից սերուած (Ծն. Ժ, 15) և ապրում էին Միջերկրական ծովի և Յորդանանի միջև։ Դոցա գրեթէ իւրաքանչիւր քաղաքը Յեսուի ժամանակ ունէր իւր սեփական թագաւորը, այնպէս որ յիշւում են նախ 31 թագաւոր (Յես. ԺԲ, 9—24) և յետոյ 70 (Դատ. Ա, 7)։ Քանանացոց 11 ցեղերից (Ծն. Ժ, 15—19) վեցը կենում էին Իսրայէլից դուրս դէպի հիւսիս և հիւսիս-արևելք։

Digitized by Google

Քանանում ապրում էին յետոյ, որպէս յիշւում են.

1. Բուն Քանանացիք ծովեզրին և Յորդանանի վրայ (Թիւ. ԺԳ, 30)

2. Քետացիք, որոնք Աբրահամի ժամանակ գլխաւոր ժողովուրդ էին, ըստ որում և երկիրը երբեմն կոչւում է Քետացոց երկիր և նոքա մասամբ կային նոյն իսկ Դաւթի ժամանակ։

3. Գերգեսացիք (Յես. ԻԴ, 11)։

4. Ամովրացիք, որոնցից մի մասը մնում էր արեւելեան Յորդանանի կողմերում և դուրս մղելով Մովաբացոց, խլել էր նոցա Եսեբոն քաղաքը (Թիւ. ԻԱ)։ Աբրահամի ժամանակ դոքա ապրում էին Քեբրոնի և դէպի հարաւ իւրեանց անունով կոչուած լեռնաշղթայի մօտ։

5. Փերեզացիք, որոնք ըստ երեւոյթին բազմացեղ ժողովուրդ էին (Ծն. ԺԳ, 7)։

6. Խեւացիք ապրում էին Լիբանանի վրայ (Յես. ԺԱ, 3. Դատ. Գ, 3. Բ Թագ. ԻԴ, 7) և միայն նոցա մի քանի ցեղերը կենում էին հարաւային Պաղեստինում՝ զորօր. Սիւքեմում և Գաբաւոնում (Ծն. ԼԳ, 19. ԼԴ, 2. Յես Թ, 3. 7. 17. Ժ. 1. 2)։

7. Յեբուսացիք, որոնց մայրաքաղաքը Յեբուս կամ Երուսաղէմ նուաճեց Դաւիթը (Բ Թագ. Ե)։

Բ. Փղշտացիք՝ Քամի որդի Մեստրեմի ցեղից (Ծն. Ժ, 13. 14), որոնք եգիպտական ծագումն ունէին։ Նոքա բնակւում էին Սեփելա դաշտավայրում՝ Քանանի հարաւ-արեւմտքում։ Նոքա պաշտում էին Դագոն (ձկներե կամ հացի չաստուած) և Բաալզեբուլ։ Նոցա քաղաքները էին Ակկարոն, Ասեդովթ, Գէթ, Ասկաղոն, Գազա և Գերարա։ Պէտք է որ դոքա վաղուց գաղթած լինին այդտեղ Կրետա կղզուց, ըստ որում և Աբրահամը դաշն կապեց դոցա Աբիմելէքի հետ Գերարայում, Իսահակն էլ յարաբերութիւն ունեցաւ դոցա հետ (Ծն. ԻԱ, 22. ԻՁ)։

Digitized by Google

Դոքա շատ պատերազմներ ունեցան Իսրայէլացոց հետ մանաւանդ Դատաւորաց ժամանակ, և մերթ յաղթում էին ու մերթ յաղթւում։ Բայց Դաւիթը նուաճեց դոցա և յետոյ վերստին զօրանալով անհետացան մարգարէների կանխասացութեան համաձայն (Ես. ԺԴ, Եր. ԽԷ, Եզեկ. Ի. Ամովս. Ա. Զաք. Թ. Սոփ. Բ)։

Գ. Փիւնիկեցիք՝ Քամի թոռն Քանանի անդրանիկ Սեդոնի ցեղից, բնակւում էին Քանանի հիւսիսային ծովեզրի վրայ՝ Լիբանանից դէպի արևմուտք, և ըստ իւրեանց տեղին զբաղւում էին նաւագնացութեամբ, առևտրով, արուեստով և արհեստով (Ծն. Ժ, 15)։ Դոցանից էին նշանաւոր նաւագնացները և դոքա գտան ապակին ու ծիրանին և գուցէ նաև տառերը կամ նշանագրները։ Դոցա քաղաքներն էին Տիւրոս կամ Ծիւր, Սիդոն կամ Ծայդան և Սարեպտա (Զարպաթ)։

Ո. *Սեմի ցեղից կային։*

Դ. Աբրահամի ցեղից էին 1. Մադիամացիք՝ Աբրահամի և Քետուրայի որդի Մադիանից (Ծն. ԻԵ, 2—4), որոնք թափառական էին և կարաւանի առևտուր ունէին։ Դոքա յիշւում են նախ Սինայի թերակղզու վրայ բնակուելիս, (Ել. Գ, 1), որոնցից էր Մովսէսի աներ Յոթորը, յետոյ արևելեան Յորդանանում (Թիւ. ԼԱ), որտեղ և նուաճուեցան Իսրայէլացիներից։ Վերջին ժամանակները դոքա յաճախ յարձակւում էին Քանանի վրայ (Դատ. Զ)։

2. Եդովմայեցիք՝ Իսահակի որդի Եսաւից կամ Եդովմից (Ծն. ԼԶ, 9)։ Սոքա առաջ թերևս ապրում էին Պաղեստինի հարաւում, յետոյ անցան դէպի հարաւ արևելք՝ Կարմիր ծովի ու նորա ծովախորշի մէջերքը, խլեցին Խևացոց Սէյիր լեռնաշղթան և այնտեղ բնակուե-

Digitized by Google

ցան։ Այստեղով անցնելիս Իսրայէլացիք թոյլտուութիւն
խնդրեցին, բայց մերժուեցան, ուստի և ստիպուեցան
Սէյիրով պտտել (Թիւք. Ի, 14)։ Դոքա նուաճուեցան
Սաւուղից, Դաւթից (Ա Մնաց. ԺԹ, 12. 13) և Յովսա-
փատից, յետոյ խաբեցին թոյլ թագաւորներին, ապստու-
թիւն ձեռք բերին ու միացան թշնամիների հետ Հրէա-
ների դէմ. այդ պատճառով մարգարէները աստուածա-
յին դատաստան են սպառնում դոցա (Եր. Թ, 26. ԻԵ,
21. Իէ, 2. ԽԹ, 7. Եզեկ. ԻԵ, 8. ԼԲ, 29. ԼԵ. Յովէլ
Գ, 24. Ամովս. Ա, 11. Թ, 12. Աբդիու. Մաղ. Ա, 2.
Սաղմ. ՃԼԶ, 7)։ Դոքա էին, որ օգնեցին Քաղդէացոց
աւերել Երուսաղէմը։ Բաբելական գերութիւնից յետոյ
դոքա յառաջ եկան և գրաւեցին մինչև Քեբրոն (Եզեկ.
ԼԵ, 10. ԼԶ, 5. Ա Մակ. Ե, 3). ուստի և այդ ժամա-
նակից այդ երկիրը կոչուեց Եդովմայեցոց երկիր։ Նոցա
թողած Սէյիրը գրաւեցին յետոյ Նաբատացիք, որոնց
գլխաւոր քաղաքը Պետրա (Սելա) մեծ փառք ստացաւ
և երկիրն էլ նոյն անունով Պետրէյեան Արաբիա կոչուեց։
Մակաբայեցի Յովհաննէս Հիւրկանոսը յաղթեց Եդով-
մայեցոց և ստիպեց ընդունել թլփատութիւն։ Սակայն
նորա թոյլ յաջորդների ժամանակ Եդովմայեցի Անտի-
պատերը Հռովմէական կուսակալ դարձաւ Յուդայի երկ-
րի վրայ և նորա որդի Հերովդէս մեծը թագաւոր եղաւ
Հրէաստանի։

3. Ամաղէկացիք՝ Եսաւի թոռն Ամաղէկից (Ծն. ԼԶ,
16), բնակւում էին Քանանի հարաւում. Իսրայէլացոց
ելքի ժամանակ գտնւում էին Սինայի թերակղզու հա-
րաւում, թշնամացան նոցա, յարձակուեցան յոգնած հե-
տևորդների վրայ, Ռափիդիմում ջարդուեցան և մի քա-
նի դար յետոյ Սամուէլի հրամանով ու Սաւուղի ձեռ-
քով ոչնչացան (Բ. Օր. ԻԵ, 17—19. Ել. ԺԷ, 8—16.
Ա Թագ. ԺԵ)։

Digitized by Google

4. Արաբացիք կամ Իսմայէլացիք՝ Աբրահամի և Ա-գարի որդի Իսմայէլից, մի մեծ թափառական ժողովուրդ էր, որոնք այժմ էլ Արաբիայումն են ապրում իւրեանց հայրական սովորութիւններով։

Ե. Ղովտի ցեղից. (Ծն. ԺԹ, 37. 38). 1. Մովաբացիք, Ղովտի որդի Մովաբից, ապրում էին Մեռեալ ծովի արեւելքում Մադիամացոց մօտ, որոնց սահմանը յետոյ եղաւ Առնովնը (Թիւք. ԻԲ)։ Նոցա մայրաքաղաքն էր Արոյեր առիւծաքաղաքը և Զոորա (Բ. Օր. Բ, 29)։

2. Ամովնացիք՝ Ղովտի որդի Ամմոնից, բնակւում էին Առնովնի ու Յաբովկի միջի լեռնաշղթայի վրայ, որոնց դաշտավայրը նուաճել էին Ամովրացիք։ Դոցա նուաճեց Յեփթան (Դատ. ԺԱ)։ Դոցա գլխաւոր քաղաքն էր Ռաբաթ Ամովնա, որի դէմ կռուեց Դաւիթը վրէժխնդրութեամբ (Բ Թագ. ԺԲ, 26)։

Զ. Ասորիք։

1. Ասորիք Սուբայի կամ Միջագետացոց, որոնք կոչւում են նաև Քաղդէացիք, ապրում էին Եփրատի ու Տիգրիսի մէջ տեղ և նոցանից էր Աբրահամի ծագումը (Ծն. ԼԱ, 20. 24)։

2. Ասորիք Դամասկոսի, որոնք ապրում էին Քանանի հիւսիսում և հիւսիս արեւելքում։

Իսրայէլացիք։

Իսրայէլացիք՝ որոնց նախնական պատմութեան արդէն ծանօթ ենք, կոչւում են այդ անունով Յակովբ—Իսրայէլից յետոյ (Ծն. ԼԲ, 29)։ Ինքեանք ինքեանց կոչում են բընէ Իսրայէլ—*որդիք Իսրայէլի*։ Կոչւում են նաև *Հեբրայեցի* (Հեբրիմ) իւրեանց մի նախահօր անունով. այլ և *յըհուդիմ* Յուդայի ցեղի տիրապետութեամբ, որ և օտար ազգաց մէջ դարձել է *յուդի*, *ջհուդ*, *ժիդ*, իսկ հայկական լեզուի ոգով ստացել

է Հրէայ ձևը, ըստ որում Հրէաստան է կոչւում թէ բուն Յուդայի ցեղի մասը և թէ ամբողջ այդ ազգի երկիրը։

Երբ Իսրայէլացիք վերջնականապէս հաստատուեցան Պաղեստինում և երկիրը նուաճեցին, այդ 12 ցեղերը տեղաւորուեցան այսպէս. 1. Ռուբէնը, Գադը և Մանասէի կէս ցեղը մնացին Յորդանանի արևելեան կողմում։ 2. Շմաւոն, Յուդա և Բենիամինը արևմտեան կողմի հարաւում. 3. Դան, Եփրեմ ու Մանասէի միւս կէսը հաստատուեցան միջին մասում. և վերջապէս 4. Իսաքար, Զաբուղոն, Նեփթաղիմ և Ասեր հիւսիսում։ Իսկ Ղևու ցեղը 48 քաղաքներ ունէր ամբողջ երկրում, որոնցից 13 ը քահանաներինն էին։

Ապաստանի ազատ քաղաքներն էին Կադէս, Սիւքեմ, Արբոկ կամ Քեբրոն, Բոսոր, Ռամովթ, Գովղան (Յես. Ի)։ Յեսուն էլ ժառանգութիւն ստացաւ Թամնաթսարա Եփրեմի լեռներում, իսկ Քաղեբը Յուդայի երկրում Քեբրոնի լերան Ենակայ մայրաքաղաքը՝ Կարիաթարբոկը (ԺԹ, 49. ԻԱ, 11)։ Վկայութեան խորանն ևս հաստատեցին արևելեան Յորդանանի երկրի մէջ տեղ՝ Սելովում։

Աստուած հաստատեց Իսրայէլացոց հեթանոսների մէջ, որպէս զի նոցանով աստուածային ճշմարիտ լոյսը տարածուի ու սփռուի բոլոր հեթանոսաց մէջ։ Իսրայէլացոց այս գեղեցիկ դիրքը տալուց յետոյ է, որ Աստուած Եսայի մարգարէի բերանով ասում է առ Երուսաղէմն իբրև կեդրոնի. «Լուսաւորեաց լուսաւորեաց, Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն ի վերայ քո ծագեցին։ Զի ահա խաւար ծածկեաց զերկիր, և մառախուղ զհեթանոսս. բայց ի քեզ Տէր յայտնեսցի, և փառք նորա ի քեզ երևեսցին, և գնասցեն թագաւորք ի լոյս քո, և հեթանոսք ի ծագել լուսոյ քո» (Ես. Կ, 3. Եզեկ. Ե, 5)։

Digitized by Google

Հրէաստանի բաժանումները Բաբելոնեան գերութիւնից յետոյ։

Արեւմտեան Հրէաստանը երեք մեծ նահանգների էր բաժանւում և այդ բաժանումը մնաց մինչև Քրիստոս եւս։ Այդոնք էին Յուդայի երկիր (կամ բուն Հրէաստան), Սամարիա և Գալիլեա. (Գործք. Թ, 31)։

Ա. *Յուդայի երկիրը* բռնեցին Բաբելական գերութիւնից դարձածները և որովհետև դոցա մեծ մասը Յուդայի ցեղից էին, երկիրն էլ նոցա անունով կոչուեց։ Յուդայի երկիրն աւելի ընդարձակ էր՝ քան թէ նախկին Յուդայի թագաւորութիւնը և տարածւում էր Պաղեստինի հարաւային սահմանից մինչև Բեթելից դէնը և Յորդանանից մինչև Միջերկրական ծովը։ Այս երկրի նշանաւոր քաղաքներն էին *Երուսաղէմ*, որ առաջին անգամ Սաղիմ անունով է յիշւում (Ծն. ԺԴ. Սաղմ. ՀԵ, 3) և Աբրահամի ժամանակ տիրապետում էր այստեղ Մելքիսեդեկը։ Յետոյ կոչուեց Յեբուս։ Դաւիթը խլեց այս քաղաքը Յեբուսացիներից, անուանեց քաղաք Դաւթի՝ թէև Բեթղեհէմն էլ է այդպէս կոչուած, կոչուեց նոյնպէս Սիոն (պահապան, ամրութիւն, ամրոց) իւր Սարի անունով կամ Դուստր Սիոնի (Զաք. Թ, 9), քաղաք Աստուծոյ (Սաղմ. ԽԵ, 5. ՁՁ, 3), քաղաք Եհովայի (Ես. Կ, 14), Սուրբ քաղաք (Ես. ԾԲ, 1. Նեեմի. ԺԱ, 1. Մատթ. Դ, 5. ԻԷ, 53)։

Երուսաղէմը գտնւում է Յուդայի բարձրաւանդակի ամենաբարձր տեղը, շրջապատուած է լեռներով (Սաղմ. ՃԻԴ, 2) և պէտք է այնտեղ գնալու համար բարձրանալ։ Լեռների մէջ նշանաւոր է Ձիթենեացը, որ Միջերկրական ծովից 2,500′ բարձր է, իսկ հովիտից 600′։ Նա երեք գագաթ ունի, որոնցից հարաւայինը կոչւում է *լեառն զայթակղութեան*, զի այդտեղ Սողոմոնը կուռքերին զոհեց (Գ. Թագ. ԺԱ, 7. Դ. Թագ.

ԻԳ, 13)։ *Հիւսիսայինը՝ լեառն Գալիլեացոց* (Գործք. Ա, 10. 11), իսկ միջինը *Համբարձման լեառն* է, որտեղ և շինուած է Համբարձման վանքը։ Արևմտեան ստորոտումն է գտնւում Գեթսեմանը իւր ութ հատ թերևս 2,000 տարեկան ձիթենիներով։

Քաղաքը շրջապատուած է երկու մեծ հովիտներով—հիւսիս և արևելեան կողմից Կեդրոնի, իսկ հարաւ և արևմուտքից՝ Գեհոնի հովտով։ Այդ հովիտները միանում են քաղաքի հարաւ-արևմտեան մասում և գեղեցիկ պարտէզների յարմարութիւն տալիս, յետոյ այդ հովիտը ահռելի և անմատչելի տեսարանով հասնում է Մեռեալ ծովին և այդպիսով բերդ դարձնում Երուսաղէմը։ Կեդրոնի հովիտը մինչև այդ միացման տեղը կոչւում է և Յովսափատու հովիտ, որտեղ Հրէայք սպասում են վերջին դատաստանին (Յովէլ, Գ, 7)։ Այն միացման տեղն է գտնւում և Ռովգեղ աղբիւրը կամ ջրհորը (Յես. ԺԵ, 7. ԺԸ, 16)։ Գեհոնի հովիտն էլ կոչւում է նոյնպէս ձոր Ենովմայ, Տոփեթ՝ այսինքն ողջակէզի տեղ, վասն զի այստեղ մի ժամանակ Մոլոխին զոհում էին մանուկներ, իսկ Նոր Կտակարանում կոչւում է գեհենի իբրև համանուն դժոխքի. (Մատթ. Ե, 22, ԺԸ, 9)։

Երուսաղէմը գտնւում էր չորս բլուրների վրայ, որոնց ձորերը այժմ լցուած են։ Հարաւ արևմուտքումն էր Սիոն լեառը, նորանից հիւսիս—Ակրա, հարաւ-արևելքում Մօրիահ—տաճարի լեառը, որից դէպի հիւսիս Բեզեթա։ Տիւրոպէօնը կամ Պանրագործաց հովիտը բաժանում է Սիոնը Ակրայից, ծռւում է դէպի հարաւ, բաժանում է Սիոնը Մորիայից և անցնում. այդտեղ էր գտնւում Սելովահ կամ Սելովամ աւազանը։ Սիոնի վրայ էր Դաւթի աշտարակը և քաղաքի վերին մասը, Ակրայի վրայ ներքին մասը, Բեզեթայի վրայ Նոր քաղաքը,

Digitized by Google

իսկ Մորիայի վրայ տաճարը։ Քաղաքը պատած էր երեք պարիսպներով, իսկ որ կողմ անմատչելի էր՝ միայն մէկ պարիսպով։ Տաճարի հիւսիսում մի գերծի վրայ էր Անտոնիա աշտարակը, որտեղ գտնւում էր Հռովմայեցոց բանակը Քրիստոսի ժամանակ. (Գործք. ԻԲ, 24)։

Տաճարը իւր շինութիւնից 34 տարի յետոյ կողոպտուեց Եգիպտոսի Սիսակ թագաւորի ձեռքով, հրոյ ճարակ եղաւ Բաբելացոց Նաբուքոդոնոսորի միջոցով 588 թուին Ք. ա.։ Ապա Զօրաբաբելը նորոգեց (531). իսկ 168 թուին Ք. ա. Անտիոքոս Եպիփանէսը ողջակէզի սեղանի վրայ Արամազդի պատկերը կանգնեց, որ և մաքրեց Յուդա Մակաբէն 165 թուին Ք. ա.։—Այժմ Երուսաղէմն ունի 15—20 հազար բնակիչ՝ Հրէա, Տաճիկ ու քրիստոնեայ։ Տաճարի տեղ մի տաճկական մեչիդ է։ Ս. Գերեզմանի վրայ շինուած է եկեղեցի։ Հայերն ունին այդտեղ մեծ իրաւունք Յունաց և Լատինացոց հետ համահաւասար։ Հայոց տեղական վարչութիւնը Ս. Յակովբայ վանքն է, որտեղ բնակւում է Երուսաղէմի միաբանութիւնը իւր պատրիարքով։ Միաբանութեան սեփականութիւն են չորս ուրիշ վանքեր քաղաքում կամ մօտիկ, փառահեղ պատրիարքարանը և հարուստ կալուածներ։

Երուսաղէմը եղել է բազմաթիւ պատերազմների տեղ. 70 թուին աւերուեց Հռովմայեցոց Տիտոս զօրավարի զօրքով և ապա նորոգուեց Հադրիանոս կայսրի հրամանով, 635 թուին ընկաւ Արաբացոց ձեռքը, 1075-ին տաճիկներին մատնուեց, 1099-ին խաչակիրներից նուաճուեց և 1187-ին վերստին ընկաւ Տաճկաց ձեռքը։

Բեթղեհէմ այսինքն՝ տուն հացի, Դաւթի, որպէս և Քրիստոսի ծննդավայրը, գտնւում է Երուսաղէմից դէպի հարաւ և Զաբուղոնի երկրի Բեթղեհէմից տար-

Digitized by Google

բերելու համար կոչւում է Բեթղեհէմ Յուդայի կամ Եփրաթայ։ Այստեղ է թաղուած Հռաքելը, որի գերեզմանի վրայ ցոյց են տալիս մի ինչ որ տաճկական աղօթատուն։ Այս քաղաքումն էին ապրում Եղիմելէք, Նեեմի, Հռութ, Բոոս, Յեսսէ ու Յովաբ։ Այժմ այդտեղ ապրում են 3,000 մեծ մասամբ քրիստոնեայ ժողովուրդ։ Այստեղ Հեղինէ կայսրուհին շինել տուաւ Ծնընդեան Եկեղեցին մի վերտառութեամբ թէ՝ «Աստ ծնաւ Յիսուս Քրիստոս ի Մարեմայ Կուսէն»։ Այդ եկեղեցու շուրջը շինուած են երեք վանքեր՝ մէկը Հայոց, մէկը Յունաց և մէկը Լատինաց։

Բեթանիա՝ այսինքն տուն աղքատաց կամ թշուառութեան, գտնւում է Երուսաղէմից դէպի արևելք, որտեղ ապրում էին Ղազարոսը, Մարիամ ու Մարթան։

Բեթփագէ՝ այսինքն տուն թուզերի, Ձիթենեաց լերան վրայ։

Էմմաուս՝ Երուսաղէմից դէպի հիւսիս արևմուտք (Ղուկ. ԻԴ)։

Երիքով, այսինքն՝ քաղաք արմաւենեաց, մի գեղեցիկ այգի է անապատի մէջ, 417 ոտնաչափ ցածր Միջերկրական ծովի մակերևոյթից։ Այժմ անապատացած է, վասն զի ջրաբեր առուները քանդուած են։ Յեսուն աւերեց այս քաղաքը (Յես. Զ.) և վերստին Աքիէլը շինեց (Գ Թագ. ԺԶ, 34)։ Այստեղ սպանուեց Շմաւոն Մակաբայեցին (Ա Մակ. ԺԶ)։ Սորա անապատում քարոզեց Յովհաննէս Մկրտիչը, այլ և Քրիստոս պահեց ու փորձուեց։

Գաղգաղա՝ Երիքովից դէպի Յորդանան, որտեղ Յեսուն բանակեց ու զատիկը տօնեց։ Այստեղ ժողովներ էին անում Սամուէլն ու Սաւուղը։

Բերսաբէ, որ է երկրի հարաւային սահմանաքաղաքը։

Digitized by Google

Յետտա՝ քահանայական քաղաք Յուդայի բարձրաւանդակի վրայ (Յես. ԻԱ, 16). ոմանք այս են համարում Յովհաննէս Մկրտչի ծննդեան քաղաքը, իսկ այլք Քեբրոնը։

Քեբրոն՝ աշխարհի ամենահին քաղաքներից մէկն է (Յես. ԻԱ, 10. Թիւք. ԺԳ, 23), որտեղ ապրեց Աբրահամն ու թաղուեց, այդպէս և Իսահակն ու Յակովբը։ Այս քահանայական քաղաք էր, որտեղ թագաւորեց Դաւիթը $7^1/_2$ տարի։ Այժմ շատ առատ է բերքերով և 10,000 հրեայ ու տաճիկ բնակիչ ունի։

Ռամա, Սամուէլ մարգարէի ծննդավայրն ու բնակատեղին, բայց ուրիշ քաղաքներ էլ կային նոյն անունով։

Կեսարիա, որ իւր անունը («կայսրաքաղաք») ստացել է Հերովդէս մեծից ի պատիւ Օգոստոս կայսեր։ Սա կոչւում է Կեսարիա Պաղեստինացոց, վասն զի կայ նաև Կեսարիա Փիլիպպեան։ Այս քաղաքն, որ յառաջ կոչւում էր Ստրատոնի աշտարակ, գտնւում է Միջերկրական ծովի եզրին և բնակատեղի էր Հռովմայեցոց կուսակալների՝ Փելիքսի, Փեստոսի և այլոց։ Պետրոս առաքեալն այստեղ դարձրեց Կոռնելիոս հարիւրապետին (Գործք. Ժ.), այստեղ էր ապրում Փիլիպպոս աւետարանիչը (Գործք. ԻԱ, 8) և այստեղ Պօղոսը երկու տարի բանտարկուեց (ԻԴ)։

Յոպպէ (Եաֆֆա), հռչակաւոր նաւահանգիստ, որտեղից Յովնան մարգարէն նաւ նստաւ (տես. և Բ Մակ. ԺԲ. Գործք. Թ.)

Լիւդիա, Յոպպէից դէնը, որտեղ Պետրոս առաքեալը բժշկութիւն արաւ (Գործք. Թ)։

Յարիմաթիա, փոքր ինչ հեռու Յոպպէից, ծննդավայր Յովսէփի։

Բեթէլ, այսինքն տուն Աստուծոյ (Ծն. ԻԸ, 11. Լե. Գ Թագ. ԺԲ, 29. Դ Թագ. ԻԳ, 15. Բ. 23)։

Digitized by Google

Կարիաթարիմ (Ա Թագ. Է, 2), որտեղ երկար ժամանակ մնաց Ուխտի տապանակը։

Գաբաւոն, որտեղ եղաւ Յեսուի պատերազմը (Յես. Թ. Ժ.)

Իսկ Սեփելայի դաշտավայրում գտնւում են նախկին Փղշտացոց քաղաքները՝ *Ակկարոն*, որտեղ առաջներում հաստատուած էր Բահաղ-ճանճիկ (Բեհեղզեբուբ) աստուծոյ կուռքը (Ա Թագ. Ե, 10. Դ Թագ. Ա, 2)։

Գեթ, որ է Գողիաթի ծննդավայրը (Ա Թագ. ԺԷ, 4. ԻԱ, 10. ԻԷ, 2. Ա Մնաց. ԺԹ, 1)։

Ազովտոս, որտեղ էր Դագոն չաստուծոյ կռատունը (Ա Թագ. Ե. Բ Մնաց. ԻԶ, 6. Գործք. Ը, 40)։

Ասկաղոն՝ Հերովդէս Մեծի ծննդավայրը, որի մեծամեծ աւերակները մնում են։

Գազա (Դատ. ԺԶ, 3. Գործք. Ը. Ա Թագ. Դ, 24), որտեղ քաջացաւ Սամփսոնը։ Այս քաղաքն այժմ ևս կայ և բանուկ ճանապարհ ունի դէպի Յոպպէ։

Գերար. (Ծն. Ի, 1. Ժ, 19. ԻԶ, 1.)։

Բ. Սամարիա։

Սամարիան գտնւում է Յուդայի երկրից դէպի հիւսիս, որտեղ ապրում էին Սամարացիք, որոնք Հրէաներ էին հեթանոսների հետ խառնուած։ Այս բաժնի նշանաւոր քաղաքներն էին.

Սամարիա, որ շինեց Ամրին՝ Իսրայէլի թագաւորը Սեմերոն լերան վրայ և դարձրեց իւր պետութեան մայրաքաղաք (Գ. Թագ. ԺԶ, 24)։ Եղիսէի ժամանակ այստեղ սով ընկաւ (Դ. Թագ. Զ). Սաղմանասարը նուաճեց այս քաղաքը երեք տարի պաշարելով (ԺԷ) և Յովհաննէս Հիւրկանոսը աւերեց, բայց Հերովդէս Մեծը վերաշինեց։

Թերսա, որ քանանացոց ժամանակ էլ մայրաքաղաք էր և յետոյ Իսրայէլի թագաւորաց բնակութեան տեղ դարձաւ. (Երգերգոց Զ, 3. Յես. ԺԲ, 24. Գ Թագ. ԺԴ, 17)։

Սիւքեմ, որտեղ ապրեց և Աբրահամը և թաղուեց Յովսէփը (Ծն. ԺԲ, 6. ԼԴ, 19։ Յես. ԻԴ, 32. Դատ. Թ, Գ Թագ. ԺԲ)։ Այստեղ Յակովբայ ջրհորի մօտ հանգստացաւ և Քրիստոս (Յովհ. Դ)։ Այժմ կոչւում է Նաբլուս (Նորքաղաք)։

Սելոն՝ Սիւքեմի մօտ, որտեղ էր Սամուէլի ժամանակ վկայութեան խորանը, բայց վերջերում աւերուեց։

Յեզրայէլ (Գ Թագ. ԻԱ). *Մակեդդով* (Դ Թագ. Թ. Բ Մնաց. ԼԵ, 20). *Այենոն* ու *Սաղիմ* (Յովհ. Գ, 23). *Բեթսան* կամ *Սկիտոպոլիոն* (Ա Թագ. ԼԱ, 10)։

Գ. Գալիլիա։

Պաղեստինի այս հիւսիսային մասը հռչակուած էր պտղաբերութեամբ ու գեղեցկութեամբ և մի ժամանակ շատ մարդաշատ է եղել։ Նշանաւոր քաղաքներն են.

Նազարէթ՝ այսինքն լեռնապատ, ըստ որում մի լեռնագագաթի շուրջն էր գտնւում. այս է բնակատեղ Քրիստոսի ծնողին ու մանկութեան և մնում է այժմ ևս։

Կանա (Յովհ. Բ. ԻԱ, 2)։ *Նային*՝ Հերմոնի ստորոտում, որ կայ և այժմ։

Դան, որ կոչուել է և Լայիս, հիւսիսային սահմանաքաղաքն էր. (Դատ. ԺԸ. Գ Թագ. ԺԲ)։

Պտղոմայիս (Աքքա), որ Միջերկրական ծովի նաւահանգիստն է և խաչակրաց ժամանակ յայտնի էր Ակրէ անունով։ (Ա Մակ. ԺԲ, 48)։

Քորազին և *Բեթսայիդա* (Մատթ. Դ, 18. ԺԱ, 21) *Կափառնայում*, որ գտնւում էր ծովի ճանապար-

Digitized by Google

նի վրայ (Մատթ. Դ, 13. Ը. Թ. ԺԷ, 24. ԺԱ, 23. Դ, 15. Ես. Թ, 1)։ *Մագդաղա*։ *Տիբերիաս*, որ հարուստ էր տաճարներով, թատրոնով ու լոգարաններով և Հերովդէս Անտիպասի մայրաքաղաքն էր (Ղուկ. ԺԳ, 32։ Քրիստոս երբէք այստեղ չեկաւ (Յովհ. Զ, 23 - ԻԱ, 1)։ Այժմեան աւերակները ցոյց են տալիս փառքի յիշատակներ. աւերուել է երկրաշարժով և ունի 2000 բնակիչ։ Շրջակայքում կան ջերմուկներ։ Շատ Հրէաներ գալիս են իւրեանց այս սուրբ տեղերում մեռնելու։

Դիոկեսարիա (Սեփորիս), որ Հերովդէսի ժամանակ Գալիլիայի մայրաքաղաք էր, այլ և Յովակիմ և Աննա-ի ծննդավայրն է համարւում։

Դ. Պերէա։

Արևելեան Հրէաստանի հարաւային մասը Պերէան էր, որ տարածւում էր Առնովնի, Մեռեալ ծովի ու Յորդանանի, Յաբոկի և Արաբական անապատի մէջ։ Սորա բարձրաւանդակի տափաստանները շատ յարմար էին գըլխաւորապէս թափառականների համար։ Այս մասի նշանաւոր քաղաքներն էին.

Մախերոս բերդը, որտեղ Յովսեպոսի ասելով բըռնուած էր Յովհաննէս Մկրտիչը և գլխատուած։

Բեթաբրա, որտեղ քարոզում ու մկրտում էր Յովհաննէս Մկրտիչը (Յովհ. Ա, 28)։

Բոսոր, որ էր ապաստանարան մարդասպանների համար։

Ռամաթ Գաղաադի (Գ Թագ. ԻԲ)։

Ռաբաթ Ամովնայ, որ մի ժամանակ Ամովնացոց մայրաքաղաք էր (Բ Թագ. ԺԲ, 31). այժմ մնացել են միայն մեծամեծ աւերակները։ Քաղաքի հարաւումն էր Գերեզմանք, որտեղ այժմ էլ գտնւում են փառաւոր շիրիմներ։

Նաեռն, որ առաջ թագաւորական և ապա Դետացոց քաղաք էր։ Երգերգոցում (Է, 4) յիշուած գեղեցիկ լիճը այժմ ևս կայ։

Պելլա, որ էր քրիստոնեաների փախստարանը Երուսաղէմի աւերման ժամանակ։

Փնուէլ, որտեղ Յակովբը գիշերամարտ ունեցաւ (Ծն. ԼԲ)։

Ե. Պերէայից վերևը որ այժմ Հաւրանն է, մի քառանահանգ է կամ չորրորդապետութիւն. արևմտեան կողմումն է Գաւուլոնիտիս (Գոլան), Իտուրէա, մէջ տեղում դէպի հիւսիս՝ Տրախոնիտիս, և դէպի հարաւ՝ Աւրանիտիս, իսկ արևելեան կողմում Բատանէա։

Այս չորրորդապետութեան սահմաններ էին Պերէա, Արաբիա, Ասորիք ու Յորդանան։ Արևելեան մասում բնաւ անտառ չկայ, ըստ որում տները շինում էին միայն քարից, նոյն իսկ դռները քարեայ էին լինում, որոնցից զարմանալի մնացորդներ կան և այժմ։ Տներից շատերը շինուած են ժայռերի այրերում կամ փորուածքներում։ Ահագին ժայռերից շինուած քաղաքներից ոմանց փողոցները 100 ոտնաչափ խոր են երկրի մակերևոյթից։ Իսկ երկրի վրայ շինուած քաղաքները ամուր պարիսպներ ու բուրգեր ունէին։ Այս երկու տեսակի հարիւրաւոր քաղաքներ ու գիւղեր կան այժմ աւերակ։

Նշանաւոր քաղաքներն են.

Կեսարիա Փիլիպեան (առաջ Պանէաս, այժմ Բանիաս), որ շինել է Փիլիպպոս չորրորդապետը և Տիբերիոս կայսեր պատուին Կեսարիա անուանել (Մատթ. ԺԶ, 13)։

Բեթսայիդա Յուլիա, որ Փիլիպպոսը այդպէս կոչեց յանուն Օգոստոսի դուստր Յուլիայի. ուրիշ է Գեննեսարէթի Բեթսայիդան։ Այժմ մնում են նշանաւոր աւերակներ (Ղուկ. Թ, Մարկ. Ը)։

Գադոմն, ապաստանարան մարդասպանների (Բ. Օր. Դ, 43)։

Մասեփա, Յեփթայի բնակատեղը (Դատ. ԺԱ, 12)։

Մահանայիմ (Բանակս Ծն. ԼԲ, 1. 2. Բ. Թագ. Բ. Ը. ԺԷ, 24)։

Գերազա, որից զարմանալի աւերակներ կան։

Գադարա գերգեսացոց (Ղուկ. Ը, 26. Մատթ. Ը, 28. Մարկ. Ե, 1)։

Այս և սորա հետ ինը քաղաքներ թերևս՝ Դամասկոս, Փիլադելֆիա, Ռափանա, Սկիւթոպօլիս կամ Բեթսան, Հիպպոս, Դիու, Պելլա, Գերազա և Կանաթա կազմում էին մի դաշնակցութիւն, որ կոչւում էր Դեկապօլիս կամ տասնաքաղաք (Մարկ, Է, 31.)։

ԼԳ.

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՕՐԻՆԱՑ

Այսպէս է կոչւում Հնգամատեանի հինգերորդ գիրքն, որ Հրէայք անուանում են սկզբի բառով։ Սակայն ռաբբիները կոչում էին նոյնպէս *Գիրք սպառնալեաց կամ յանդիմանութեան*, վասն զի այս գրքում պարունակուած է խստաբարոյ ժողովրդի յանդիմանութիւնը անցեալ և ապագայ մեղաց համար։ Սոյն գիրքը կոչւում էր նոյնպէս միշնէ-թօրա—երկրորդումն օրինաց, որ Եօթանասունք թարգմանել են դօյտերօնօմիօն այսինքն՝ Կրկնօրէնք, որ յիշուած է և ԺԷ, 18։ Այսպէս կոչելու պատճառն այն է, որ այս գրքում կրկնուած են Ելից, Ղևտականի ու Թուոց գրքերում արդէն յիշուած օրէնքներն և Ուխտի նորոգումը։

Մովսէսը գրեց այս գիրքը ելքից յետոյ քառասներորդ տարւոյ 11-դ ամսում (Բ. Օր. Ա, 3) իւր մա-

Digitized by Google

հից առաջ (ԼԱ, 9, 24) Մովաբայոց երկրում Երիքովի մօտերքը, ուր հասել էին Իսրայէլացիք և դեռ հրամանի էին սպասում Աւետեաց երկիրը մտնելու համար (Ա, 5)։ Որովհետև Մովսէսն այդ ժամանակ արդէն մահուան մօտենում էր, ուստի նա հոգ տարաւ ժողովրդի և իւր յաջորդների գործունէութեան համար և սկսաւ նոր քարոզութիւններով վերստին ամփոփել Աստուծոյ Ուխտի օրէնքները (ԼԱ, 2—3) և արձանագրել, որպէս զի Իսրայէլացիք Ուխտին հաւատարիմ մնային և Աստուծոյ օգնութեամբ մտնէին Աւետեաց երկիրը։ Ահա այս պատճառով Մովսէսը նպատակ ունէր Իսրայէլացոց ապագայ սերնդին հասկացնել ու յորդորել, որ նոքա հաւատարմութեամբ և անձնուիրութեամբ պահպանէին Սինայեան օրէնսդրութիւնը նոր երկրում։ Նոր սերունդը ականատես չէր եղել այդ օրէնսդրութեան, ուստի Մովսէսը հասկացնում է նոցա այդ աստուածային օրէնքի բարձր նշանակութիւնը, ոգին և ոյժը և վերստին կրկնելով դնում է Իսրայէլի որդիներին նոր կեանքի յարմարութեան մէջ, որպէս զի նոքա գիտենային որ այդ օրէնքը պէտք է պարտաւորիչ լինի անշուշտ մինչև Աստուծոյ Ուխտի բոլոր կէտերի լրման ժամանակը։

Իսրայէլացիք իւրեանց անապատական ծանր կեանքով և իւրեանց յանցանաց պատճառով ստացած բազմաթիւ հարուածներից չէին խրատուել։ Ամբողջ մի սերունդ Եգիպտոսից սկսած մինչև անապատի խորքերը ընթանալով՝ տեսաւ Աստուծոյ մեծագործութիւնները, հարուածն ու ողորմութիւնը, սակայն չխրատուեց ու չուղղուեց, որ արժանանար Աւետեաց երկրի բարիքներին։ Մինչև անգամ Մովսէսն և Ահարոնը տատանուեցան և Աստուած պատժեց նոցա, զրկելով Աւետեաց երկիրը տեսնելու փափաքից (Թիւք. Ի, 12)։ Մի

Digitized by Google

նոր սերունդ միայն պէտք է ոտք դնէր Աւետեաց երկիրը, ուստի և Մովսէսը պէտք է Մովաբացոց դաշտում նորոգէր նոցա հետ Աստուծոյ Ուխտը և այդ Ուխտի օրէնքները խոստացնէր։

Երկրորդումն օրինաց մի ամբողջութիւն է և այնպէս սերտ կապուած չէ Թուոց գրքի հետ, ինչպէս Թիւքը Ղևտականի և Ղևտականը Ելքի հետ։ Այս գիրքը պարունակում է ուղղակի Մովսէսի քարոզները, որոնք երեք հատ են և ունին իւրեանց վերնագիրն (Ա, 1—5) ու պատմական եզրափակումը։

Առաջին քարոզը կամ ճառը մի տեսակ նախաբան է (Ա, 6—Դ, 43), որով Մովսէսը ներկայացնում է այն դէպքերի պատկերը, որոնք անցել են Սինայից յետոյ և յորդորում է պինդ պահել օրէնքները։

Երկրորդ քարոզը գրքի գլխաւոր մասն է, որ ամփոփում է Մովսէսի օրէնքների էութիւնը, յիշատակելով օրէնքն ու տասնաբանեակը (Ե—ԻԶ)։ Այս քարոզի *առաջին մասում* (Զ, 4—ԺԱ) նա յիշեցնում է Հրէաներին թէ ինչու պէտք է հաւատարիմ մնային Աստուծոյ։ Նա յայտնում է որ Եհովան է միակ ճշմարիտ Աստուածը և միակ պաշտելին (Զ, 4—25). ըստ որում նոքա պէտք է ոչնչացնէին կռապաշտութիւնը Քանանացոց երկրից ի նշան գոհութեան այն աստուածային բարիքներին, որոնց ինքեանք իսկ անարժան են եղել (Է—Ժ, 11)։ Ուստի և նզովւում են օրինազանցները (Ժ, 12—ԺԱ, 32)։—*Երկրորդ մասում* (ԺԲ—ԻԶ) ամփոփուած են օրէնքները, այն է՝ նախ կրօնական օրէնքները (ԺԲ—ԺԶ, 17). երկրորդ քաղաքացիական օրէնքները (ԺԶ, 18—ԻԱ, 14). երրորդ անձնական օրէնքները (ԻԱ, 15—ԻԶ, 15). և եզրափակումն իբրև յորդոր օրինաց պահպանութեան (ԻԶ, 16—19)։

Երրորդ քարոզը խորագիր չունի և ունի երեք մա-

Digitized by Google

ներ (ԻԷ—Լ)։ Նախ յայտնուած է այն պարտաւորութիւնը, որ պէտք է ժողովուրդը երկիրը նուաճելուց յետոյ կատարէր Գեբաղի ու Գարիզինի վրայ ի նշան օրինապահութեան (ԻԷ). երկրորդ օրհնութիւն օրինապահներին և նզովք օրինազանցներին (ԻԸ) և երրորդ՝ յորդոր դէպի օրինապահութիւն (ԻԹ—Լ)։

Եզրափակումը (ԼԱ—ԼԴ) ցոյց է տալիս, որ Մովսէսը նշանակում է Յեսու Նաւեային իւրեան յաջորդող, զանազան խորհուրդներ է տալիս ու պատուիրում կարդալ օրէնքը Եաբաթ Տեառն տօնին և պահպանել Ուխտի տապանակում. (ԼԱ)։ Այդոր հետևում է Մովսէսի երգը (ԼԲ), Իսրայէլի ցեղերի օրհնութիւնը (ԼԳ) և Մովսէսի մահն ու թաղումը (ԼԴ)։

ԼԵ.

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Իսրայէլացիք հին աշխարհում մի առանձին տեղ են բռնում այնով մանաւանդ, որ Աստուծոյ հաւատքը և գաղափարը ճշմարտապէս պահել են՝ ինչպէս Աստուած նոցա յայտնել է, մինչդեռ հեթանոս աշխարհը բոլորովին զրկուած էր այդ դաւանանքից։

Մովսիսական օրէնքն իւր բոլոր մասերով հաստատուած է նոյն իսկ այդ դաւանանքի ոգու վրայ, այնպէս որ օրէնքի բոլոր կէտերը բղխում են Աստուծոյ հիմնական պատուիրանների սկզբունքներից.—«Լուր, Իսրայէլ, Տէր Աստուած մեր, Տէր մի է։ Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամենայն զօրութենէ քումմէ» (Բ. Օր. Զ, 4)։

—«Ես եմ Տէր Աստուած ձեր. և սրբիջիք և սուրբք լինիջիք, զի սուրբ եմ ես» (Ղև. ԺԱ, 44)։

Այսոնք են Իսրայէլացոց հիմնական դաւանանքը կազմում։ Աստուծոյ ճշմարիտ գաղափարից ծագում է Իսրայէլացոց բոլոր օրէնքը։ Նոցա այդ կրօնական գիտակցութիւնից բղխում է ճշմարիտ բարոյականութեան և մարդասիրութեան սկզբունքը, որ հակադրութիւն է կազմում ամբողջ հեթանոս աշխարհի դէմ։ Նոքա ընդունում էին որ մի կենդանի, սուրբ, արդար և ամենագէտ Աստուած կայ միայն և մարդ ստեղծուած է նորա պատկերով. այնպէս որ Իսրայէլացիք բարոյական վսեմ բարձրութեան վրայ էին կանգնած հեթանոսաց համեմատութեամբ։

Նոցա համար ոչ թէ լոկ արարքները, շօշափելի նշանակութիւն ունին, այլ միայն սիրտն ու համոզմունքը, որոնցից պէտք է ելնէ և արարքները։ Այդ սկզբունքն է, որ ծագել է Աստուծոյ մի հրաշալի խօսքերը Աստուած անտես է անում Սաւուղին, պատուիրում է Սամուէլ մարգարէին՝ չզգալ նորա հասակն ու տղամարդութիւնը, վասն զի «ոչ եթէ որպէս տեսանիցէ մարդ՝ տեսանէ Աստուած. զի մարդ հայի յերեսս, և Աստուած հայի ի սիրտս» (Ա Թագ. ԺԶ, 7)։

Աստուած հրամայեց նոցա սիրել իւրեան, և այդ սիրուց բղխում է և ընկերասիրութիւնը իւր բոլոր իրաւական ընդարձակութեամբ. «Մի՛ խնդրեսցէ վրէժ ձեռն քո. և ընդ որդւոց ժողովրդեան քո ոխս մի՛ ունիցիս, և սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո, զի ես եմ Տէր»․ (Ղև. ԺԹ, 18)։ Նոյն իսկ ստեղծագործութեան այն ճշմարտութիւնից, որ բոլոր մարդիկ մի զոյգից են, ծագում է Իսրայէլացոց մարդասիրութիւնը հակառակ հեթանոսաց այն տեսութեան, որ աշխարհի սկզբում բազմամարդութիւն է ենթադրում, ըստ որում և տարում էին իրար զանազան ազգեր իբրև իրար հետ ոչ մի մարդկային կապ չունեցողներ։

Այսպէս և պահանջւում էր օրէնքով, որ յարգեն ծերերին կամ մեծերին (Ղև. ԺԹ, 32), ողորմած և արդար լինին դէպի աղքատ ու օտարը և այրին ու որբը (Ել. ԻԲ, 21—23)։ Աղքատը վերստին ապահովւում էր Տարեկան կամ Տարի Թողութեան տօնին. ստրուկը համարւում էր տան անդամ և վեց տարի ծառայելուց յետոյ ազատւում (Ել. ԻԱ, 2. Ղև. ԻԵ, 39). իսկ եթէ կամենում էր ցմահ մնալ, ծակում էին ականջը դրան սեմում ի նշան որ միշտ պատկանում է այդ տան (Ել. ԻԱ, 6. Բ Օր ԺԵ, 16. 17)։ Մինչև իսկ օտարացեղ ճորտը ապահովուած էր բռնութիւններից խիստ օրէնքներով։

Օրէնքը ստիպում էր չսեփականել Թշնամու կայքը (Ել. ԺԲ, 48). այլ և կենդանիները պէտք է խնայուէին և շաբաթ օրը հանգստանային (Ել. Ի, 10,։ Հրամայուած էր կալի եզի բերանը չկապել և ուտելը արգելել (Բ Օր. ԻԵ. 4), Թռչնոց բոյնը չքանդել (ԻԲ, 6. 7). իսկ Շաբաթ Տեառն տօնին ազատ բուսածներից բաժին պէտք է հանէին նաև վայրենի կենդանեաց համար (Ել. ԻԳ, 11)։

Ահա այս և այսպիսի գեղեցիկ օրէնքներով է արտայայտւում Իսրայէլացոց բարոյական ու մարդասիրական ոգին ըստ Աստուծոյ անսուտ յայտնութեան։ Ուստի և Քրիստոս ասում է. «ոչ եկի լուծանել զօրէնս և զմարգարէս, այլ լնուլ» (Մատթ. Ե, 17)։ Այսինքն քանի որ Հին Ուխտի օրէնքը նախապատրաստութիւն է կատարեալ օրէնքի, որ Քրիստոսով պէտք է իրականանար, հին Օրինաց բոլոր Թելերն ևս միանում են Քրիստոսի մէջ և ապա նորանից ճիւղաւորւում մեզ համար իբրև յաւիտենական օրէնք, այնպէս որ Հին Կտակարանի օրէնքը՝ ոչ թէ ինքնուրոյն՝ այլ միայն Քրիստոսով է ստանում իւր նշանակութիւնը։ Հին Կտակարանի օրէնքների մի մասը միայն ստուեր էր, նախատիպ էր, իսկ բուն մարմինը, իսկական տիպը՝ Քրիստոսով եղաւ. մինչդեռ

միւս մասը աւելի ընդարձակ զարգացումն ստացաւ Քրիստոսի խօսքերի մէջ, որպիսիք են տասը պատուիրանները։ Ստուերի ու տիպի կամ Նախապատրաստութեան ու կատարման գեղեցիկ օրինակը զատկական գառն էր, ըստ որում Քրիստոս եղաւ իսկական գառն ու պատարագը։

Դասարանական ընթերցանելիք.

1. Մովսէսի յորդորը դէպի օրինապահութիւն. Դ, 1—40.
2. Աստուածպաշտութեան տեղի կեդրոնացումը. ԺԲ, 1—31.
3. Զգուշացումն սուտ մարգարէներից. ԺԳ, 1—5։
4. Օրէնք դատաստանի և թագաւորի նկատմամբ. ԺԶ, 18—ԺԷ, 20.
5. Ղևտացոց բաժինը և Մովսէսի նման մարգարէն. ԺԸ.
6. Օրինապահների օրհնութիւնը և օրինազանցների անիծումը. ԻԸ.
7. Մովսէսի յաջորդութեան կարգադրութիւնը. ԼԱ.
8. Մովսէսի մարգարէական օրհներգութիւնը. ԼԲ.
9. Մովսէսի մարգարէական օրհնութիւնը. ԼԳ.
10. Մովսէսի վախճանը. ԼԴ։

ԼԶ.

ԳԻՐՔ ՅԵՍՈՒԱՅ

Հնգամատեանի մի յաւելուածն է կազմում Աստուածաշնչի մէջ վեցերորդ գիրքը, որ կոչւում է Գիրք Յեսուայ։ Այս այն Յեսուն է, որ Մովսէսից յետոյ առաջնորդեց ժողովրդին դէպի Աւետեաց երկիրը։ Սա առաջ

կոչւում էր Օսէս (Թիւ. ԺԳ, 17), *Նաւեայ որդին էր, Եփրեմի ցեղից,* 12 *լրտեսների թւից* (Թիւք. ԺԳ), *Մովսէսի մտերիմ ծառան ու գործակից* (Ել. ԻԴ, 13) *և յաջորդը* (Բ Օր. ԺԸ, 15. ԼԱ, 7. 23)։ *Յեսուն անուն հանեց Ամաղեկացոց դէմ քաջութեամբ կռուելով* (Ել. ԺԷ, 8 – 16), *որոնք յարձակուել էին Իսրայէլացոց բանակի վրայ Ռափիդիմի մօտ։ Մովսէսը յաջողապէս ընտրելով նորան զօրավար այդ պատերազմում, ոչ միայն իւր աչքով նկատեց նորա արիութիւնը, այլ և Աստուծոյ յայտնութիւնը վկայեց նորան, որ Աստուած նորա հետ էր։ Այս արդէն բաւական էր, որ Մովսէսը նորան մտերմացնէր իւրեան ու սիրէր, ըստ որում և մարգարէական աչքով նախատես եղաւ, որ նա պէտք է ազատիչ լինէր Իսրայէլացոց իւրեանց թշնամիների ձեռքից. այդ պատճառով փոխեց նորա անունը և դրաւ Յեսու՝ այսինքն ազատիչ.* (Թիւ. ԺԳ, 17)։

Յեսուն իւր բարեմասնութիւններով Մովսէսի մօտիկ անձնաւորութիւնը դարձաւ, այնպէս որ մինչև անգամ նորա հետ Սինան բարձրացաւ, երբ Մովսէսը 40 *օր մնաց և տասնաբանեակի տախտակներն ստացաւ* (Ել. ԻԴ, 13. ԼԲ, 17—18)։ *Այդպէս էլ Մովսէսի խորանից անբաժան էր, որտեղ Աստուած յայտնւում էր ամպերի մէջ* (ԼԳ, 11)։ *Եւ մենք տեսնում ենք, որ երբ* 12 *ցեղերի ներկայացուցիչ* 12 *լրտեսները գնացին Քանանը լրտեսելու և վերադարձան* (Թիւ. ԺԳ, 9), *նոցանից միմիայն Յեսուն և Յուդայի ցեղի ներկայացուցիչ Քաղեբը չվհատեցան և հաւատում էին Աստուծոյ ամենակարողութեան, որ նա յաղթանակը իւրեանց կտայ Քանանի զօրեղ ժողովուրդների վրայ։ Այս պատճառով Եգիպտոսից ելած սերունդից միմիայն սոքա էին որ քսան տարեկանից վեր լինելով հանդերձ՝ արժանացան Աւետեաց երկրի տեսութեան* (Թիւք. ԺԴ. 30)։ *Սակայն Յեսուն*

Digitized by Google

ժողովրդի ղեկավար դարձաւ այն ժամանակ, երբ Իսրայէլացիք հասան Յորդանան և Մովսէսը Աստուծոյ անօրինութեամբ հանդիսաւորէս ձեռնադրեց իւր յաջորդ՝ ոչ միայն Եղիազար քահանայապետի, այլ և ժողովրդի առաջ (Թիւք ԻԷ, 15—33)։ Այդպէս բռնելով Մովսէսի տեղը, Յեսուն եօթը տարուայ ընթացքում գրաւեց Քանանը, ազատեց ժողովուրդը նեղութիւններից և տեղաւորեց Աւետեաց երկրում, բաժանեց ինը և կէս ցեղերի վրայ. կառավարեց նոցա, հանդիսաւորէս յորդորեց նոցա հաւատարիմ մնալ Եհովային և Մովսէսից 17 տարի յետոյ՝ 110 տարեկան հասակում վախճանուեց։ Նա թաղուեց իւր ժառանգութեան մէջ այն է՝ Թամնատաքար քաղաքում (Թամնաթարէս, Թամնաթասրահ)։

Իւր ժամանակի բոլոր պատմութիւնը թողեց Յեսուն իւր անունով մնացած այս գրքում, ըստ որում և որ ինքն է այդ գրքի հեղինակը՝ այդ ապացուցւում է թէ հին ռաբբիների աւանդութեամբ, թէ նոյն իսկ այդ գրքի վկայութեամբ (ԻԴ, 26) և թէ նորա բովանդակութեամբ, որի մանրամասն ու ճիշդ նկարագրութիւնը միմիայն ականատեսի գործ կարող է լինել (ԺԵ, 63)։ Միայն Հրէական աւանդութիւնն ասում է, որ Յեսուն գրել է մինչև ԻԴ, 28, վերջը աւելացրել է Ահարոնի որդի Եղիազարը, իսկ ԻԴ, 34, այն է՝ վերջին տունը գրել է Փենէէսը՝ Եղիազարի որդին։ Բայց յետոյ աւելացրած կտորներ ևս կան, զորօր. ԺԹ, 47. Հմմտ. Դատ. ԺԸ, 1—12։ Յես. Զ, 25. Հմմտ. Գ. Թագ. ԺԶ, 34։ Յես. ԺԵ, 13. և այլն։ Երբայեցիք այս գիրքը համարում են Հնգամատեանի յաւելուած և հետը մի ամբողջութիւն։

Յեսուայ գիրքը բովանդակում է իւր մէջ Աստուծոյ ժողովրդի պատմութիւնը Յեսու Նաւեայի կառավարութեան ժամանակ, որ ըստ մեր թարգմանութեան

Digitized by Google

նախագրութեան պէտք է տեւած լինի 27 տարի, իսկ ըստ Յովսէպոս Փլաւիոսի 25, այն է՝ Մովսէսի մահից, 1447 տ. Ք. ա. մինչեւ Յեսուի մահը եւ ծերերի կառավարութիւնը։ Եւ որովհետեւ այս պատմութիւնը շարունակութիւն է եւ սերտ կապուած է հնգամատեանի հետ, ուստի եւ սկսւում է՝ «Եւ եղեւ յետ վախճանելոյն Մովսիսի խօսքերով։

Ամբողջ գիրքը բաժանւում է երեք մասի. առաջին մասում (Ա—ԺԲ) պատմուած է Աւետեաց երկրի գրաւումը։ Երկրորդում (ԺԳ—ԻԲ) երկրի բաժանումը Իսրայէլացոց ցեղերի մէջ. եւ երրորդում (ԻԳ—ԻԴ), որ մի վերջաբան է, պատմուած է ծերերի ժողովուիլը Յեսուի մօտ եւ նորա կտակը։

Յեսուն գրել է այս գիրքը անշուշտ իւր ծերութեան ժամանակ (Է, 25. Ը, 29. Թ, 27), երբ յետ քաշուելով ծանր գործերից՝ ապրում էր Թամնասաքարում (ԺԹ, 49—50. ԻԱ, 42)։ Գրութեան նպատակն էր ոչ միայն շարունակել Իսրայէլացոց մէջ աստուածային գործերի պատմութիւնը, այլ եւ ցոյց տալ նոր սերունդին՝ թէ ինչպէս այն խոստումը որ տուաւ Աստուած Աբրահամին, Իսահակին ու Յակոբին Աւետեաց երկիրը ժառանգելու մասին, ճշդիւ կատարուեց եւ նոցա այժմեան զաւակները ժառանգեցին նոցա հաւատքի բարիքները։

Յեսուի անձի նշանակութիւնն եւս բարձրանում է մեր առաջ, երբ կարդում ենք Պօղոս առաքեալի խօսքերը (Եբր. Դ, 8—9) նորա նախատիպութեան մասին։ Յեսուն նախատիպ է նախ անունով, որ նա փրկեց ժողովուրդը իւր թշնամիներից, իսկ Յիսուս Փրկիչ է ամենայն հաւատացելոց բոլոր թշնամիներից. եւ երկրորդ՝ Յեսուն խաղաղեցրեց ժողովուրդը եւ բաժանեց Աւետեաց երկիրը նոցա մէջ, իսկ Քրիստոս խաղաղեցնում

Digitized by Google

է հաստատելոյ և [illegible] [illegible] [illegible] [illegible] մէջ [illegible] [illegible] [illegible]

[illegible] է [illegible] [illegible] [illegible] [illegible] են Ա, [illegible] — [illegible] [illegible]. [illegible] — [illegible]. [illegible]. [illegible]. [illegible] — [illegible]։

[illegible]

1. Յեսուն ու իւր յաջողութիւնը Յորդանանն անցնելու համար. Ա. 1—5։
2. Լրտեսները Երիքովում. Բ. 1—24.
3. Յորդանանի անցումը. Գ—Ե, 1.
4. Աւետեաց երկրի գրաւման պատերազմութիւնը. Ե, 2—12.
5. Երիքովի առումը և նուաճումը. Զ. 1—25.
6. [illegible] [illegible] կործանումը, [illegible] ու [illegible]. Ը, [illegible]—35.
7. Յեսուի պատերազմի հրաշքը. Ժ, 1—15։
8. Քանանի բաժանումը. ԺԱ, 23—ԻԱ.
9. Յեսուի կտակը իւր ժողովրդին. ԻԲ—ԻԴ։

Է.

ԴԱՏԱՒՈՐՔ

Հրէական բնագրում այս գիրքը կոչւում է շոֆետիմ, Նօթանասնից մէջ Կրիտայ, որ և մերում թարգմանուած է՝ Դատաւորք։ Այս գիրքը դատաւորաց է կոչւում ըստ իւր բովանդակութեան, այսինքն պարունակում է իւր մէջ Իսրայէլացոց այն ժամանակի կրօնական, բարոյական ու քաղաքական դրութիւնը, երբ մէջ կառավարութիւնը յանձնուած էր դատաւորների ձեռքը։ Դատաւորներ կոչւում են այն անձնաւորու-

Digitized by Google

թիւններն, որոնք Աստուածանից ուղարկւում էին թէ Իսրայէլացոց ազատելու իւրեանց արտաքին թշնամինե- րից և թէ կռապաշտութիւնը վերացնելու նոցա միջից։ Նոքա պէտք է հաստատէին Իսրայէլացոց մէջ Աստու- ծոյ հաւատքը, ներշնչէին նոցա Աստուծոյ պատուիրա- նաց պահպանութիւն և աստուածային ճշմարիտ ճա- նապարհի վրայ դնէին։ Երբ ժողովուրդը իւր միտն էր բերում Աստուծուն և օգնութիւն խնդրում, Աստուած այդ դատաւորների միջոցով ազատում էր նորան օտար իշխանութեանց լծից։ Ազատութիւնից յետոյ դոքա դա- տում էին ժողովրդի գործերը համաձայն Մովսէսի օ- րէնքին և այդ իսկ պատճառով դոքա կոչւում էին դա- տաւորներ։ Այդ դատաւորների շարքը սկսւում է Յեսու Նաւեայից և շարունակւում է մինչև Սաւուղ թագա- ւորը։ Դոքա, որոնց մասին այս գիրքը պատմում է, թուով տասներեք են մինչև Սամուէլ մարգարէն և կառավարել են 300 տարուայ ընթացքում (1439— 1112 Ք. ա.)։

Քանի որ Յեսուն կենդանի էր և դեռ ևս մնում էին Աստուծոյ հրաշքները տեսած ծերերը, ժողովուր- դը ծառայում էր Աստուծուն։ Բայց երբ դոքա վախ- ճանուեցան, եկաւ մի նոր սերունդ, որ տեղեակ չէր Աստուծոյ մեծագործութեանց, ուստի և հետզհետէ մո- լորուեցան՝ հետևելով Քանանացոց չաստուածներին (Դատ. Բ, 7)։ «Յարեաւ այլ ազգ որ ոչ ճանաչէին զՏէր և ոչ զգործսն զոր արար ի մէջ Իսրայէլի»։ Այդոր հե- տևանքը եղաւ Աստուծոյ սպառնալիքի կատարումը (Ղև. ԻԶ, 17)։ Նոքա իւրեանց չարութեամբ չկարո- ղացան Բահաղի և Աստարտի միջոցով վայելչութիւն գտնել. Աստուած մատնեց նոցա շրջապատող ազգերի հալածանքներին։ Միաժամանակ Աստուած գթալով տուաւ նոցա դատաւորներ, որոնք պէտք է ուղղէին

ժողովուրդը։ Մենք տեսնում ենք որ Աստուած գործիք է դարձնում իւր ճշմարիտ նպատակների համար մինչև անգամ մի Սամփսոնի, որ տակաւին երկիւղած կամ արդար մարդ չէր (ԺԳ—ԺԶ)։ Նոյնպէս և Յեփթայէն մի գովելի անձնաւորութիւն չէր, ըստ որում դատաւորաց շրջանը այսքան է մեզ համար օրինակելի, որ Աստուած պատժում է անաստուած ժողովուրդը, բայց անտես չէ անում, երբ նա դառնում է. այլ և նոյն իսկ նորա միջից ու նորա մարդկանց միջոցով վարում է պատերազմները և հետզհետէ դէպի ուղղութիւն տանում։

Գրքի հեղինակութեան վերաբերմամբ Հրէական աւանդութիւնն ասում է, որ Սամուէլ մարգարէն խմբագրել կամ ժողովել է այդ շրջանի մասին հին գրութիւնները։ Բովանդակութիւնից էլ պարզ երևում է, որ այս գիրքը մի խմբագրական ժողովածու է։ Բայց եթէ ԺԸ, 30 ի նկատի ունենանք, որ յիշում է գերութիւնը, այն ժամանակ պէտք է գրուած լինի շատ ուշ։ Սակայն այս ապահովութեան հիմք չէ տալիս, վասն զի Ա, 21 դորան բոլորովին հակառակ հին ժամանակն է շեշտում։ Թերևս վերջին գլուխները յետոյ վերստին խմբագրուած են։ Սամուէլն իբրև վերջին դատաւոր և առաջին մարգարէ կարող էր այս գիրքը գրած լինել, որի համար ունինք հետևեալ հաւաստիացումը։ Նախ՝ ամբողջ այս գրքի մտքերի ընդհանուր ընթացքը կատարելապէս նման է այն ճառին, որ Սամուէլն ասել է Սաւուղի թագաւորելու ժամանակ, համոզելով իւր ժողովուրդը՝ հաւատարիմ մնալ ու ծառայել Աստուծուն և չմոռանալ՝ որ իւրեանց բոլոր դժբախտութիւնները ծագում են իւրեանց առ Աստուած ցոյց տուած անհաւատարմութիւնից և անհնազանդութիւնից. (Ա Թագ. ԺԲ, 7—15. 20—25)։

Digitized by Google

Երկրորդ՝ Նոր Կտակարանի հեղինակներն ասում են, որ Մովսէսից ու Յեսուից յետոյ առաջին գրող մարգարէն Սամուէլն է. (Գործք. Գ, 24. Եբր. ԺԱ, 22)։ Եւ երրորդ՝ գրքի գրութեան ժամանակը պարզապէս ցոյց է տալիս, որ միմիայն Սամուէլը կարող կլինէր հեղինակել։

Սամուէլի անձի մասին առհասարակ պէտք է գիտենանք, որ նա գործում էր թէ իբրև դատաւոր և թէ իբրև մարգարէ։ Այդ կրկնակի պաշտօնի համար Սամուէլը նախապատրաստուեց Աստուծոյ տնօրինութեամբ։ Մի բարեպաշտ Ղևտացի էր նորա հայր Եղկանան և որովհետև սորա կին Աննան ամուլ էր, միասին աղօթեցին Աստուծոյ և ուխտեցին որ Աստուծոյ պարգևելիք երեխային նուիրեն Վկայութեան խորանի սպասաւորութեան։ Այդպէս էլ եղաւ։ Սամուէլը երեք տարեկանից ծառայում էր Վկայութեան խորանում ի Սելով Հեղու քահանայապետութեան օրով և նորա աչքի տակ։ Այդտեղ սա առաջին անգամ յայտնութիւն ստացաւ Աստուածանից և այդ լուրը տարածուեց ամբողջ երկրում։ «Եւ գիտաց Իսրայէլ ի Դանայ մինչև ի Բերսաբէէ թէ հաւատարիմ է Սամուէլ ի մարգարէս Տեառն».—«և հաւատարիմ եղև Սամուէլ լինել ի մարգարէ Տեառն յամենայն Իսրայէլի ի ծագաց երկրին մինչև ի ծագս» (Ա. Թագ. Գ, 20)։ Փղշտացիք ջարդեցին Իսրայէլացոց, ընկաւ Հեղու տունը և Աստուծոյ ժողովուրդը 18 տարի ստրկացաւ նոցա. (Ա. Թագ. Դ.)։ Ահա այդ ժամանակ դուրս եկաւ Սամուէլը և սկսաւ դարձ քարոզել։ Ժողովուրդը զղջաց և այնուհետև մի յաղթանակ տարաւ Փղշտացոց վրայ, նուաճեց շատ քաղաքներ և տարածեց իւր բարոյական ազդեցութիւնը շրջակայ ժողովուրդների վրայ (Ա. Թագ. Է, 1—14)։

Սամուէլը քաջ գիտենալով որ աստուածպաշտութիւնը, աստուածային օրէնքի կատարումը, ներքին խա-

Digitized by Google

դատաւորութիւնը և քաղաքական կեանքը միայն կարող են ժողովուրդը զօրացնել և շրջակայ ազգերից ազատագրել, սրտում կարգ ու կանոն հաստատել նրա մէջ։ Նա ամեն տարի 'նա Հռամայից գալիս էր, ման էր գալիս նշանաւոր սուրբ քաղաքներն՝ ինչպէս Բեթէլ, Գաղգաղա և Մասեփաթ, դատում էր ժողովուրդը և քարոզելով և այս կերպին կառավարում իր ազգը (Է, 16—17)։ Երբ Թագաւորների՝ Սաւուղի ու Դաւթի՝ օծումն էլ նրա ձեռքով եղաւ, այնպէս որ իւր բոլոր գործերում Սամուէլը ցոյց տուաւ կատարեալ անշահասիրութիւն, ինքնազոհութիւն և աստուածահաճոյ գործունէութիւն։ Այդ վկայեց և ժողովուրդը, երբ Սամուէլը հեռանում էր պաշտօնից (ԺԲ, 1—15)։ Բայց պաշտօնից ելնելով էլ չդադարեց գործել իւր ազգի հոգևոր յառաջադիմութեան համար։ Որպէս զի ժողովրդի մէջ զարգանար աստուածպաշտութիւն, կրօնական լուսաւորութիւն, Աստուծոյ օրէնքի ճանաչողութիւն և նախանձախնդրութիւն, Սամուէլը մարգարէական դպրոցներ բաց արաւ շատ քաղաքներում, ինչպէս Հռամայում, Բեթէլում և այլուր։ Այստեղ Հրէայ պատանիները մաքուր բարքով ու վարքով հանդերձ սովորում էին աշխատանքի, Աստուծոյ օրինաց, պերճախօսութեան և երգեցողութեան։ Այդ դպրոցից դուրս եկան եռանդուն հաւատքով և հայրենասէր մարդիկ, որոնք կենդանի խթաններ էին ազգի լուսաւորութեան և յառաջադիմութեան։ Նա մեռաւ խորին ծերութեան մէջ և նորա կեանքի պսակն էր ժողովրդի միահամուռ լացն ու ողբը և նորա բնաւորութեան ճանաչողութեան համար բնորոշ է ժողովրդի վկայութիւնը. «Ոչ մեղար մեզ և ոչ զրկեցեր զմեզ և ոչ նեղեցեր զմեզ, և ոչ առեր ի ձեռաց ուրուք և ոչինչ» (Ա. Թագ. ԻԵ, 1. ԺԲ, 4)։ Նորա գրաւոր գործունէութիւնը վկայուած է Ա. Մնաց. ԻԹ, 29—30։

Digitized by Google

Կարծիք կայ, որ Դատաւորաց գիրքը գրուել է թագաւորաց ժամանակ, Դաւթի թագաւորութեան սկզբից առաջ, երբ սա Եբուսացիներից գրաւեց Սիոնը (Բ. Թագ. Ե, 6—7)։ Եւ որովհետև Դատաւորաց գրքում ասուած է (Ա, 21) թէ Երուսաղէմը գտնւում է Եբուսացոց ձեռքում, պարզ է՝ որ այդ գիրքը գրուած է գոնէ Սաւուղի թագաւորութեան վերջերում։.

Գրելով այս գիրքը՝ Սամուէլը նպատակ է ունեցել ցոյց տալ Իսրայէլացոց, որ Աստուծոյ ծառայելը և պաշտելը բախտաւորութեան միակ հիմքն է, բարեկեցութեան միակ պատճառն է և խաղաղութեան ապահովութիւնը. ըստ որում և կռապաշտութիւնը այն միակ պատճառն է, որով Իսրայէլացիք անթիւ և անդադար դժբախտութիւններ են կրում արտաքուստ (տես Գ, 7 - 15. Զ, 7, Ժ, 6—10. Դ, 1—2. ԺԳ, 1.)։ Եւ մենք տեսնում ենք որ Սամուէլը իւր գրքով գրեթէ լրացնում է Հնգամատեանը ու Յեսուի գիրքը, վասն զի առաջինները բերում հասցնում են մինչև Աւետեաց երկիրը, իսկ այս տալիս է մեզ մի նկարագիր այն խառն ժամանակի, երբ դեռ ևս Իսրայէլացիք իւրեանց նստական կեանքով չէին կանոնաւորուել և գրեթէ թափառական կեանքի շարունակութեան մէջ էին գտնւում։

Այս շրջանի նեղութիւնները պէտք է յիշեցնէին Իսրայէլացոց յաւիտենական անբախտութիւնը, որին արժանանում էին աստուածուրացութեամբ։ Բայց նոքա զղջում էին և հեռանում չար ճանապարհից, տենչալով դէպի աստուածային Փրկիչը. ուստի և ամեն դատաւոր իբրև Աստուծոյ ուղարկուածը, Իսրայէլի ազատիչ նախատիպ էր Մեսիային, մարդկութեան Փրկչին, որ պէտք է ազատէր սատանայից, ազատ կեանք շնորհէր և դատէր նոցա ըստ իւրեանց գործոց (Դատ. Գ, 9. 15. 31. Զ, 14. Ժ, 1. և այլն)։ Աւելի պարզ նախատիպ էր Սամփ-

սոնը, որի անունը նշանակում է արեգակն, մանաւանդ իւր յաւիտենական ուխտով, որով նուիրուած էր Աստուծուն իւր ամուլ մօրից ծնուած օրից (Դատ. ԺԳ, 5. 8. 22)։ Յաղթող Քրիստոսի նախատիպն էր Գեդէոնը, որի անունը նշանակում է ջախջախող և որի յաղթութիւնը նախատիպ է Քրիստոսի թշնամեաց ջարդուելուն (Դատ. Է, 16—22. Եսայի, Թ, 4), ըստ որում Մադիամը ներկայացնում է սատանայի իշխանութիւնը։ Նշանաւոր է նոյնպէս և Գզաթը կամ Գեղմն (Դատ. Զ, 36—40) և այգոր ու երկրի անձրևիլը. Գզաթն իբրև Իսրայէլի եկեղեցին, իսկ երկիրը հեթանոս աշխարհն, որի վրայ իջնում հեղում է Աստուծոյ շնորհը (տես. Դատ. նախադրութիւնն ևս) Հրէաների հաւատքի ցամաքելուց յետոյ, երբ իջնում է Բանն Աստուած և մարդանում Ս. Կոյսից։ Այլ և սափորները Հրէայք են, որոնք երկաթեայ գաւազանով փշրւում են և Երրորդութեան լոյսը Առաքեալների փողով վառում է խաւարը։ «Այլ և ի խորտակել մարմնական գործոց՝ պայծառանայ յաղթութիւն հոգւոյ»։

Ամբողջ գիրքը բաժանւում է երեք մասի։ Առաջին մասը (Ա—Գ, 6) մի տեսակ ներածութիւն է գրուածքին, որի մէջ հեղինակը ներկայացնում է Իսրայէլացոց դրութիւնը դատաւորաց ժամանակ։ Երկրորդ մասում (Գ, 7—ԺԶ) նկարագրուած է Իսրայէլացոց վեց անգամ ընկնիլը այլազգիների լծի տակ և ազատուիլը քաջ դատաւորաց միջոցով։ Իսկ երրորդ մասում (ԺԷ—ԻԱ) պատկերացրած է երկու օրինակով ժողովրդի ծայրայեղ անբարոյականութիւնն ու անկումը։

Դասարանական ընթերցանելիք.

1. Իսրայէլացոց վիճակը Յեսուէից յետոյ (Ա—Գ, 6.

Digitized by Google

2. Դեբովրայի ու Բարակի երգը. Ե, 1—32.
3. Գեդէոնի տեսիլը. Զ, 6—25.
4. Գեդէոնի աղօթքի կատարումը. Զ, 36—40.
5. Յեփթայու ուխտը Թ, 30—40.

ԼԸ.

ՀԻՄՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ջրհեղեղ.	2937	Ք. ա.
Աշտարակաշինութիւն.	2412	—
Ազգերի ցրուիլը.	2371	—
Աբրահամի ծնունդը.	1992	—
— կոչումը.	1917	—
—գնալը Եգիպտոս.	1916	—
Մելքիսեդեկի օրհնութիւնը	1908	—
Սոդոմի կործանումը.	1893	—
Իսահակի զոհումը.	1867	—
Աբրահամի մահը.	1817	—
Յակովբը յԵգիպտոս	1702	—
Մովսէսի ծնունդը.	1567	—
Ելք.	1487	—
Մովսէսի մահը. Յեսու	1447	—
Յեսուի մահը.	1439	—

Դատաւորք.

1. Յեսուն կառավարեց 8 տարի.	1447—1439.
Ծերերը 17 տարի	1439—1422.
Պարապ. 14 տ.	1422—1409.
առաջին ծառայութիւն Ասորոց Քու-սաքայ, ներքոյ 8 տ.	1409—1401.

2. Գոթոնիէլ 40 տ. 1401—1361.
պարապ 22 տ. 1361—1339.
Բ. Ծառայութիւն Մովաբացոց Եգղո-մայ ներքոյ 18 տ. 1339—1321.
3. Աւովդ 20 տ. 1321—1301.
4. Սամեգար 1301—1300.
Գ. Ծառայութիւն Քանանացոց Յաբի-նայ ներքոյ 1300—1281.
5. Դեբովրա և Բարակ 34 տ. 1281—1248.
Դ. Ծառայութ. Մադիամացոց լծով. 7 տ. 1248—1241.
6. Գեդէովն 9 տ. 1241—1231.
7. Աբիմելեք. 3 տ. 1231—1228.
8. Թովղա. 23 տ. 1228—1205.
9. Յայիր 22 տ. 1205—
Ե. Ծառայութիւն Փղշտացոց ներքոյ 18 տ. 1201—1183.
10. Յեփթայի 6 տ. 1183—1177.
11. Եսեբոն. 7 տ. 1177—1170.
12. Եղովն 10 տ. 1170—1160.
13. Լաբդոն 8 տ. 1160—1152.
15. Սամփսոն և Հեղի 20 տ. 1152—1132.
16. Սամուէլ 21 տ. 1132—1112.
Գերութիւն տապանակի և Հեղու մահը։
Սաւուղ թագաւոր 40 տ. 1091 թուին Ք. ա։ [1]

ԼԹ.

Հ Ռ Ո Ւ Թ.

Դատաւորաց գրքից յետոյ Ս. Գրքում գտնում ենք մի փոքրիկ ու սիրուն պատմութիւն Հռութ անունով։

---

[1] Այս Թուակարգութիւնը ըստ մեր Թարգմանութեան

Բովանդակութիւնը վերաբերում է Դատաւորաց շրջանին և պատմում է Դաւիթ թագաւորի նախամայր Մովաբացի Հռութի մասին, որ Քրիստոսի ազգաբանութեան մէջ ևս յիշւում է (Մատթ. Ա, 5)։ Հռութի ամուսնութիւնը Բոոսի հետ Բ. Օր. ԻԵ, 5—կարգադրութեան գործադրութիւնն է, որ սովորական էր դարձել (Մատթ. ԻԲ, 24), ըստ որում եղբայրը պէտք է առնէր իւր այրիացած նուին՝ իւր եղբօր ընտանիքը վերականգնելու համար։ Եւ որովհետև ամբողջ գիրքը վերաբերում է Հռութի կեանքին, ուստի և կոչւում է Հռութ, որ իսկապէս նշանակւում է *սիրուն, նշանաւոր*։

Այս գիրքը թէ հին Հրէաների ու թէ եկեղեցու ս. Հայրերի մէջ համարւում էր Դատաւորաց Գրքի հետ մէկ, ըստ որում և ճշմարիտ, այդոր բովանդակութիւնը կարծես թէ մի տեսակ եզրափակումն է Դատաւորաց գրքին, վասն զի Դատաւորաց ժամանակից մի ընտանեկան դէպք է։ Բայց կարող է համարուել միաժամանակ Թագաւորաց գրքերի նախաշաւիղ, քանի որ ցոյց է տալիս Յուդայի թագաւորական հարստութեան հիմնադիր Դաւթի ազգաբանութիւնը (Դ, 17—22)։ Այժմեան ռաբբիները համարում են այս գիրքը սրբագրեանց թւում։ Հրէաների նշանաւոր տօներին կարդացուող հինգ ընթերցուածներից մէկն էլ Հռութն է։

Սոյն գրքի հեղինակն են համարում Սամուէլ կամ Նաթան մարգարէին, այլ և մինչև անգամ Եզեկիէլին ու Եզրասին։ Բայց որովհետև Հռութի և Թագաւորաց առաջին գրքում նման ոճեր շատ կան (զորօր. Հռութ. Ա, 17—Ա Թագ. Գ, 17. ԺԴ, 44. ԻԵ, 22։ Հռութ. Դ, 4—Ա Թագ. Ի, 2), հաւանօրէն Սամուէլը գրելով

---

*։ Տարեգրական այլ և այլ կարծիքների հիմնական կէտերը մեր առմարական մի ուրիշ աշխատութեան մէջ կտանք։

Digitized by Google

թագաւորաց առաջին գիրքը, մի տեսակ լրացուցիչ ու նախապատրաստական գրուածքի պէտք է ունեցել և գրել է Հռութի պատմութիւնը։

Հռութը գրուած պէտք է լինի Դատաւորաց ժամանակից յետոյ, մանաւանդ որ Ա, 1. յիշուած է արդէն Դաւիթ թագաւորի անունը։ Եւ եթէ գրուած լինէր Դաւթի մահից յետոյ՝ անշուշտ կյիշուէին և նորա ժառանգները։ Բայց քանի որ Դաւթի ժառանգները չեն յիշւում այդ գրքի մէջ և մինչև անգամ Դաւիթը թագաւոր չէ կոչուած (Դ, 18—22), ուստի պէտք է եզրակացնել՝ որ այս գիրքը գրուած է Սաւուղի անկումից յետոյ։

Սամուէլի այս գրքի հեղինակութեան նպատակն էր ոչ միայն Դաւթի ազգաբանութիւնը ցոյց տալ և հասկացնել, որ նա ծագել է հին ազնիւ ընտանիքից, այլ և հաստատել որ Աստուծոյ արքայութեան մէջ բարեգործութիւնը միշտ վարձատրւում է և ազնուութիւնը գնահատւում։ Բարի ընտանիքը չէ կորչում մինչև անգամ ամենասոսկալի սովի ժամանակ այն էլ օտար կռապաշտ երկրում։ Այլ և Թամարի (Ծն. ԼԸ). և Ռախաբի պէս (Յես. Չ) Աբրահամի ազգի մէջ մտնելով, նաև խառնուեց Յուդայի ցեղին «ի նախահայրս մարմնոյն Քրիստոսի։ Եւ նկարեաց նովաւ զառ Քրիստոս կոչումն հեթանոսաց»։ (Մատթ. Ա, 5)։

Այս գրքոյկը չափազանց գեղեցիկ է թէ ձևով ու թէ Իսրայէլացոց կեանքի նկարագրութեամբ և ցոյց է տալիս թէ ինչպէս ծաղկում է իրաւանց կարգը և ընտանեկան կեանքը նոյն իսկ այդ խառն ու վայրենի շրջանում ու հանգամանքներում։ Այլ և այս գրուածքը եզրափակում է Իսրայէլացոց թափառական ու խառն ժամանակները և մտցնում է մեզ այն շրջանի մէջ, որում Աստուած կատարելութեան է հասցնում իւր Ուխտով աւետած մարմնաւոր խոստումներն իւրեանց ամբողջու-

Digitized by Google

թեամբ, որպէս զի յետոյ շնորհէ նաև աննուաղելի հոգևոր հարստութիւնը։

Խ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՑԵԱՑՔ

Հնգամատեանում [1]*) յիշուած անձանց ու նշանաւոր դէպքերի ու կարգերի նախատիպ նշանակութեան վրայ։*

Հնգամատեանի ուսումնասիրութիւնից տեսանք, որ Աստուած տնօրինեց մարդու փրկութիւնը նոյն իսկ նորա անկման ժամանակ աւետելով։ Աստուած հիմնադրեց իւր եկեղեցին այս աշխարհում և սկսաւ իւր տնօրինութիւնը իրագործել թէ իւր առաքած անձանց քարոզութեամբ, թէ նոցա մարգարէութիւններով ու թէ օրէնքներով, որոնցով պէտք է մարդկութիւնը պատրաստուէր Քրիստոսի խսկական փրկութեան հասնելու։ Ուրեմն Աստուծոյ բոլոր կարգադրութիւններն ու գործերը նախապատրաստութիւն էին Քրիստոսի ընդունելութեան և ճշմարիտ հաւատքի համար։ Բայց որպէս զի Հին Ուխտի մարդիկ առանձին ինքնուրոյն նշանակութիւն չտային հին նախապատրաստական շրջանի մէջ յայտնուող սուրբ մարդկանց, կրօնական դէպքերին, աստուածպաշտական ծէսերին և օրէնքներին, ուստի Աստուած այդ ամենը այնպէս լուսաւորեց Քրիստոսի լոյսով, որ դոքա փայլեցան իբրև նախատիպ, իբրև «օրինակ հանդերձելոցն», իբրև նախագաղափար Նոր Ուխտի իրականութեան և երկնաւոր բարեաց ու փառաց ստուեր (Հռ. Ե, 14. Գաղ. Դ, 24. Կող. Բ, 17. Եբր. Ը, 5. Ժ, 1)։ Եւ ինչպէս որ դոքա օրինակական նա-

[1]) Միւս գրքերին արդէն յիշեցինք։

Digitized by Google

խապատրաստութիւն են եղել ընտրեալ ժողովրդի համար, այնպէս եւ մեզ համար նախապատրաստական նշանակութիւն ունին եւ կարող են մեզ հասունցնել Նոր-Ուխտի մէջ հաստատուելու:

Ա. *Անձինք*: Ամփոփելով Հին Ուխտի նախանմանազական նշանակութիւնը ի մի՝ գտնում ենք որ նախ հետեւեալ անձինք նախատիպ օրինակներ են. Ադամ, Աբէլ, Նոյ, Մելքիսեդեկ, Իսահակ, Յակոբ, Յովսէփ եւ Մովսէս:

1. Ադամը իբրեւ առաջին մարդ՝ նախատիպ է երկրորդ Ադամին—Քրիստոսին իւր աստուածանմանութեամբ. (Ա. Կոր. ԺԵ. 45, 47): Նա ստեղծուեց «ըստ պատկերին Աստուծոյ եւ նմանութեան». սա էլ Հօր Աստուծոյ «լոյս փառաց եւ նկարագիր էութեան նորա» (Եբր. Ա, 3): Նա հողից էր եւ հոգի ստացաւ Աստուծոյ փչելով, սա մարդացաւ Ս. Հոգու իջմամբ (Ղուկ. Ա, 35): Առաջին մարդը «նախաստեղծուած է եւ աշխարհի հայրն» է, իսկ երկրորդը «պատկեր աներեւութին Աստուծոյ, անդրանիկ ամենայն արարածոց» (Իմաստ. Ժ, 1. Կող. Ա, 15). «Առաջին պտուղ ննջեցելոց» եւ առաջին «երկնաւոր», որով եւ մենք նորա երկնաւոր որդիքը պէտք է լինինք ծնուելով Աստծուց Ս. Հոգու միջոցով մկրտութեամբ. (Յովհ. Ա, 13. Ա Կոր. ԺԵ, 47): Ադամը տէր էր բոլոր արարածոց, Քրիստոս «ժառանգ ամենայնի», որում «տուաւ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի» (Եբր. Ա, 2. Մատթ. ԻԸ, 8):

Ադամի բնակատեղին՝ երկրաւոր դրախտը նախատիպ էր երկնաւոր դրախտին, որտեղ Աստուծոյ որդիք պէտք է ուտեն «ի փայտէն կենաց» (Յայտ. Բ, 7): Ադամի ու Եւայի պսակը նախատիպ է Քրիստոսի ու իւր եկեղեցու պսակին (Եփ. Ե, 29—32): Ադամը մեղանչելով եւս հակառակ նախատիպ դարձաւ. «Ապա ու-

Digitized by Google

րեմն որպէս միոյն յանցանօք յամենայն մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս և միոյն արդարութեամբ՝ յամենայն մարդիկ արդարութիւն կենաց։ Զի որպէս անհնազանդութեամբ միոյն մարդոյ մեղաւորք բազումք եղեն, նոյնպէս և հնազանդութեամբ միոյն արդարք բազումք եղիցին»։ Ադամից դատապարտութիւն, մեղք ու մահ, Քրիստոսից շնորհք, արդարութիւն և կեանք (Հռ. Ե, 15—21)։ «Եւ որպէս զգեցաք զպատկեր հողեղինին, զգեցցուք և զպատկեր երկնաւորին» (Ա. Կոր. ԺԵ, 48)։ «Որպէս Ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքեան կենդանասցին» (Ա. Կոր. ԺԵ, 22)։ Դրախտը նախատիպ է Եկեղեցու, կենաց ծառը Քրիստոսին, միւս ծառը՝ չարին, չորս գետերը չորս Աւետարանչաց, Եւան եկեղեցուն՝ «որ շինեցաւ ի կողից Քրիստոսի»։

Աստուծոյ այն աւետիքը՝ թէ օձի գլուխը կջախջախուի Ադամի զաւակից, սկսաւ նախատպօրէն կատարուիլ։ Ոչխարների աստուածահաճոյ հովիւ Հաբէլը իւր զոհի համար տանջուեց և սպանուեց Ադամի անդրանիկ որդի նախանձոտ Կայենից, այդպէս և Աստուծոյ անդրանիկ ժողովուրդը չարչարեց և սպանեց Աստուծոյ Որդուն իւր փրկարար զոհի համար և «հեղումն արեան նորա առաւել խօսի քան զՀաբէլին» (Եբր. ԺԲ, 24)։ Եւ ինչպէս Կայենը պատժուեց երերեալ ու տատանեալ շրջելու աշխարհում, այդպէս և Իսրայէլի ժողովուրդը դատապարտուած է թափառելու ուրիշ ժողովրդոց մէջ։

2. Մեղքի ջրհեղեղի մէջ խեղդուող ժողովրդի ցեղի փրկող եղաւ Նոյը, որով նախատիպ է մեղքի հեղեղով ոչնչացող մարդկութեան Փրկիչ Քրիստոսին։ Այդ մարգարէացաւ և նորա հայր Ղամէքը, երբ նորա անունը Նոյ դրաւ՝ այսինքն հանգստութիւն կամ մխի-

Digitized by Google

թարութիւն, ասելով. «Մա հանգուսցէ զմեզ ի գործոց մերոց և ի տրտմութեանց ձեռաց մերոց, և յերկրէ զոր անէծ տէր Աստուած» (Ծն. Ե, 29)։ Նոյը քարոզ էր արդարութեան իւր փչացած ժամանակցաց մէջ, Քրիստոս էլ արդարութեան ու ճշմարտութեան քարոզիչ ու վարդապետ եղաւ իւր ատող Հրեաների մէջ։ Նոյի շինած տապանը նախատիպ է եկեղեցուն, որ հաստատեց Քրիստոս. այնտեղ փրկութիւն մարդկային ցեղի, այստեղ հաւատացեալների։ Ջրհեղեղի ջուրը նորոգեց աշխարհը փչացած մարդկանցից, մկրտութեան ջուրը նորոգեց մարդկութիւնը մեղքից (Ա. Պետ. Գ, 21)։ Այժմ մենք հաւատացեալներս «թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ի մահ, զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառօք Հօր, նոյնպէս և մեք ի նորոգումն կենաց շրջեսցուք» (Հռ. Զ, 4)։ Ջրհեղեղից փրկուողներին աւետիք բերաւ աղաւնին ձիթենու ճիւղով, իսկ մեղաց հեղեղից մկրտութեամբ ազատուողներիս Ս. Հոգու դրոշմը։

Հին աշխարհի վրայ Աստուծոյ դատաստանը ջրհեղեղով եղաւ և այդ ջրհեղեղը տեսանելի նախատիպ է Աստուծոյ ահաւոր դատաստանին (Բ. Պետր. Գ, 6, 7)։ Ուստի և Քրիստոս ասում է. «Այլ որպէս աւուրքն Նոյի, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ Մարդոյ։ Զի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտէին և ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին, մինչև յօրն յորում եմուտ Նոյ ի տապանն։ Եւ ոչ գիտացին մինչև եկն ջրհեղեղն և եբարձ զամենեսին, այնպէս եղիցի և գալուստն Որդւոյ Մարդոյ»։ «Իսկ Որդի Մարդոյ եկեալ՝ գտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի» (Մատթ. ԻԴ, 37. Ղուկ. ԺԸ, 8)։ Իսկ այդ հեղեղից յետոյ «Նորոց երկնից և նորոյ երկրի ըստ աւետեացն հայեցեալ սպասիցեմք յորս արդարութիւն բնակէ». ասում է առաքեալը (Բ. Պետ. Գ. 13)։

Digitized by Google

3. Ընտրեալ ժողովրդի նահապետն էր Աբրահամը՝ Հայրն հաւատոց, որի կեանքի մէջ տեսնում ենք բազմաթիւ դէպքեր, որոնք նախատիպ են թէ Քրիստոսին և թէ նորա եկեղեցուն։ Այսպէս Մելքիսեդեկը, Մեսիայի պարզ նախատիպն է (Ծն. ԺԴ, 18. Սաղմ. ԾԹ, 4). ըստ որում և այս նկատելով Աբրահամը օրհնութիւն ընդունեց նորանից իբրև մեծից հացով ու գինով, որոնք նշանակ են խաղաղութեան և ուրախութեան, և տասանորդ տուաւ նորան։ Մելքիսեդեկը միացնում էր իւր մէջ թագաւորի ու քահանայի կոչումը. այդպէս է և Քրիստոս. Մելքիսեդեկը խորհրդաւոր անձնաւորութիւն է և Ս. Գրքում չէ յիշւում նորան ոչ հայր և ոչ մայր։ Մելքիսեդեք «նախ թարգմանի թագաւոր արդարութեան, ապա թագաւոր Սաղիմայ որ է թագաւոր խաղաղութեան. Անհայր, անմայր, չհամարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն աւուրց և ոչ կատարած կենաց, նմանեալ Որդւոյն Աստուծոյ կայ մնայ քահանայ մշտնջենաւոր»։ Եւ որ Աբրահամը օրհնութիւն առաւ նորանից և տասանորդ տուաւ իբր փոքրը մեծին, ցոյց է տալիս Ղևու ցեղի քահանայութեան ցածրութիւնը Քրիստոսի քահանայութեան առաջ և որ Քրիստոս ոչ թէ Ղևու ցեղից պէտք է լինէր և ստանար քահանայութիւն «ըստ կարգին Ահարոնի», այլ Յուդայի ցեղից՝ «ըստ կարգին Մելքիսեդեքի» (Եբր. Է)։

Աբրահամի ամուսնութիւնը Ագարի և Սառայի հետ «առակ օրինակ» է։ Առաջնից ծնուածը «ըստ մարմնոյ» էր, իսկ երկրորդը «ըստ աւետեաց», որոնք նշանակում են երկու ուխտ կամ կտակարանները. առաջինը նշանակում է Սինայի օրէնսդրութիւնը—Հին Կտակարանը, որ ի ստրկութիւն էր ծնում Իսրայէլացոց, իսկ երկրորդը՝ որ ամուսնութիւն է ազատ և ոչ աղախին Սառայի հետ և ծնում է ազատ Իսահակին,

Digitized by Google

Նոր Կտակարանն է՝ որ Քրիստոսով ծնում է ազատ որդիք։ Այնտեղ Սինան է դէպի Արաբիան նայում, այստեղ Երուսաղէմը դէպի վերինն Երուսաղէմ։ Այդպէս և ըստ մարմնոյ ծնեալ Իսմայէլը հալածում էր Իսահակին, առաքեալների ժամանակ ևս մարմնաւոր Իսրայէլը հալածում էր քրիստոնեաներին։

Ագարը և Իսմայէլը վռնդուեցան Աստուծոյ հրամանով Աբրահամի տնից, անհաւատ Իսրայէլն ևս արտաքսուեց Քրիստոսի եկեղեցուց (Գաղ. Դ.)։ Իսահակն էլ ոչ միայն Աստուծոյ որդւոց, այլ և Քրիստոսի նախատիպն է. նա ծնուեց ամուլ Սառայից Աստուծոյ աւետիքով, Քրիստոս էլ ծնուեց ս. Կոյսից ըստ աւետեաց հրեշտակապետին Աստուծոյ հրամանով (Ծն. ԺԸ, 10—15. Ղուկ. Ա, 26—36)։ Աբրահամը իւր Իսահակի զոհով հաւատաց և իմացաւ Քրիստոսի փրկարար մահը և յարութիւնը, զի Աստուած ուխտեց թէ «Սահակաւ կոչեսցի քեզ զաւակ» (Յովհ. Ը, 56. Եբր. ԺԱ, 19)։ Իսահակը կատարեց իւր հօր կամքը՝ փայտը շալակած հեզութեամբ բարձրանալով զոհի սեղանի մօտ. Քրիստոս ևս կատարեց իւր Հօր կամքը և սիրով ու հեզութեամբ բարձրացաւ Գողգոթա խաչը շալակած։ Սաբեկայ ծառն և կախեալ խոյը նախատիպ էին խաչին և անմահ պատարագին։ Իսահակի ազատուիլը մեռնելուց նոյնպէս նախատիպ է Քրիստոսի յարութեան։ Աբրահամի զոհաբերութիւնից յետոյ Աստուած տարածեց իւր առատ շնորհը նորա սերնդի վրայ. այդպէս և Քրիստոսի քաւիչ և փրկարար մահուամբ ու յարութեամբ թափուեց Աստուծոյ օրհնութիւնը մարդկային ցեղի գլխին։

4. Աբրահամի և Ադամի՝ ըստ զաւակաց կնոջ ու սատանայի՝ մաքառումը նախատիպ է հրէութեան ու քրիստոնէութեան մաքառման։ Այդ ասուած է և Ռեբեկա-

Digitized by Google

յի նկատմամբ, որ նորանից երկու ժողովուրդ կելնեն և «երէցն կրտսերոյն ծառայեսցէ» (Ծն. ԻԵ, 23) և պարզ նախատիպ է ապագային «զի ըստ ընտրութեանն առաջադրութիւնն Աստուծոյ հաստատեսցի», թէ Եսաւի ու Յակովբի և թէ հրէութեան ու քրիստոնէութեան վերաբերմամբ։ Եսաւը իբրև անդրանիկ ու սիրելի—նախատիպ է հրէաներին իբրև Աստուծոյ ընտրեալ ու սիրելի ժողովրդի, սակայն հրաժարուեց անդրանկութիւնից և այդ առաջնութիւնը ստացաւ Յակովբը (Հռ. Թ, 10—12. Եբր. ԺԲ, 16. 17)։ Նոյնպէս և հրէայք մարմնաւորութեամբ հեռացան առաջնութիւնից և հեթանոսք յառաջ անցան, ստացան Հօր օրհնութիւնը և բաժանուեցան հրէաներից։ Եսաւի և Յակովբի հաշտութիւնն էլ նախատիպ է այն հաշտութեան, որ կլինի վերջին օրերը Իսրայէլի և եկեղեցու մէջ Քրիստոսով. (Հռ. ԺԱ, 15—20)։ Յակովբի կռիւը Աստուծոյ հետ նախատիպ էր Քրիստոսի չարչարանաց, գիշերային միայնութիւնը Քրիստոսի միայնութեան Գեթսեմանում, յաղթութիւնը—Քրիստոսի յաղթանակին ի փրկութիւն մարդկանց. կռուից յետոյ Յակովբի մարմնաւոր վնասուիլը Քրիստոսի բևեռների սպիներին։ Յակովբը Իսրայէլ կոչուեց նոր անունով. այդպէս և Հայրն Աստուած «շնորհեաց նմա անուն որ ի վեր է քան զամենայն անուն։ Զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց» (Փիլ. Բ, 9. 10. Յովհ. Ի, 20, 27)։ Վերջապէս Յակովբի սիրելի որդի Յովսէփն ևս նախատիպ է Քրիստոսին թէ եղբայրներից ատուելովը, թէ հեթանոսաց մէջ ընկնելովը, թէ բանդում երկու բանդարկեալներին՝ մէկին ազատութիւն ու միւսին վախճան յայտնելովը և թէ ամբողջ Եգիպտոսի տէր դառնալով։

5. Մովսէսը իբրև Հին Ուխտի եկեղեցու վերջնա-

Digitized by Google

կան կազմութեան հեղինակ Նախատիպ է Քրիստոսին։ Նա Աստուծոյ մեծ մարգարէն էր, նորա տան մէջ հաւատարիմը, որ մօտիկ ու մտերիմ էր Աստուծոյ և փայլում էր երկնաւոր լոյսով, այդպէս և Քրիստոս։ (Եբր. Գ, 1—6)։ Մովսէսն իբրև օրէնսդիր և միջնորդ նախատիպ էր ճշմարիտ օրէնսդիր և միջնորդ Քրիստոսին (Յովհ. Ա, 18. Ա Տիմ. Բ, 55)։ Մովսէսն իբրև մեծ մարգարէ խօսում էր Աստուծոյ հետ «բերան ի բերան», հրաշագործութեամբ փառաւորուեց և նորան չհնազանդուողը պատժւում էր. այդպէս և մի էր Քրիստոս Աստուծոյ հետ և հրաշագործ։ Սոյնպիսի նախատիպ նշանակութիւն ունին նորա գործերի մէջ շատ դէպքեր՝ Եգիպտոսից ազատուիլը—սատանայից ազատուելուն, Կարմիր ծովով անցումը և Փարաւոնի խեղդուիլը իւր զօրքով—մկրտութեան, հրոյ և ամպէ սիւնը՝ Ս. Հոգու իջման, ջուրը քաղցրացնող փայտը—Քրիստոսի խաչափայտին, որ քաղցրացնում է հաւատացելոց փորձութիւնք, մանանան—հաղորդութեան, ջրբուղխ վէմը—Քրիստոսին և նորա յագեցուցիչ ջրին հաւատացելոց սրտում, Մովսէսի ձեռամբարձ աղօթումը Ամաղեկացոց յաղթելու համար—Քրիստոսի ձեռաց տարածումը խաչի վրայ ի յաղթութիւն սատանայի, պղնձի օձի բարձրացումը անապատում օձի խայթոցից բժշկուելու համար—Քրիստոսին խաչի վրայ, որ փրկում է իւրաքանչիւր հաւատացեալին սատանայի մահուան հարուածից. այլ և Մովսէսի և Ահարոնի գաւազանը—ս. խաչին. (Ա Կոր. Ժ, 1—4. Յովհ. Զ, 50. Ել. ԺԷ, 11. Յովհ. Գ, 14. 15. Ընդհ. Էջ. 367—370 Իմաստ. ԺԸ, 3—4. ԺԶ, 25-26. Բ Օր. Ը, 3).

Բ. *Տօները*։ Նախատիպ նշանակութիւն ունին նաև Հին Ուխտի եկեղեցու բոլոր սրբազան ծէսերը, ինչպէս ասում է Պօղոս առաքեալը։ Այդոնք թէ կրօնական նշանակութիւն ունին և ուղղում են ժողովուրդը և թէ

«ստուերք հանդերձելոց բարեացն» են (Եբր. Ժ, 1. Կող. Բ, 16. 17)։ Դոցանից շատերի էութիւնը նոյն իսկ իւրեանց նախատիպ նշանակութիւնն էր և այդ գիտէին Հին Ուխտի պաշտօնեայք. որպէս՝ զոհերը նախատիպ էին իսկական զոհին (Սաղմ. ԼԹ, 7—9. Ես. ԾԳ, 4—7)։ Այդ նախատիպ ծէսերից ու կարգերից նշանաւորներն էին՝ զոհերը, թլփատութիւն, վկայութեան խորանը, քահանաների և մանաւանդ քահանայապետների պաշտօնը, տօներից՝ շաբաթը, զատիկը, պենտեկոստէն և տաղաւարահարքը։

1. Զոհը կարգուեց Ադամի մեղանչումից յետոյ, երբ Աստուած աւետեց կնոջ զաւակի մասին, ըստ որում այդ զոհը նախատիպ լինելով լրացրեց ու բացատրեց այդ աւետիքի նշանակութիւնը, այսինքն որ զաւակի յաղթանակը սատանայի վրայ Փրկչի մահով է լինելու և մեղաց քաւութիւնը նորա արեամբ։ Ուստի և Քրիստոս կոչւում է Գառն Աստուծոյ և այլն (Յայտ. Ե, 5. 6), բարձող աշխարհի մեղաց, զոհ՝ որի արիւնը սրբում է մարդկանց խիղճը «մեռելոտի գործերից». այլ և նոցա զոհերի կաշին, որով Ադամ ու Եւան ծածկուեցան, նախատիպ նշանակութիւն ունին Քրիստոսի շնորհաց, որով հաւատացեալք ծածկւում են, կամ «սպիտակ հանդերձների», որոնք հագնում են Քրիստոսով (Յովհ. Ա, 29. Եփ. ԾԳ, 4. 7. Եբր. Թ, 14. Յայտ. Է, 13, 14)։

2. Թլփատութիւնը դրաւ Աստուած երբ ուխտ կապեց Աբրահամի հետ, որ էր նշանակ Ուխտին՝ «կնիք արդարութեան հաւատոցն» (Հռ. Դ, 11) և նախատիպ էր մկրտութեան խորհրդին, որ վերածնում է մեղանչական մարմինը և սրբում ադամային մեղքից։ Թլփատութիւնը կատարւում էր մանկանց վրայ և չէր կրկնւում. այդպէս և մկրտութիւնը. տուածինով անգամ էին դառնում Հին Ուխտի եկեղեցուն, երկրորդով նորինին։

3. Մովսէսը տեսաւ վկայութեան խորանի պատկերը և հասկացաւ նորա նախատիպ լինելը (Ել. ԻԵ, 40. Եբր. Գ, 8. Ժ, 1)։ Վկայութեան խորանը Եհովայի բնակարանն է և հաւատացեալների պաշտամունքի տեղը, ուստի և նախատիպ է նախ Քրիստոսի «մարմնի տաճարին» որ պաշտում ենք, և երկրորդ՝ Նոր Ուխտի եկեղեցուն (Յովհ. Բ, 19. 21. Ամոս. Թ, 11. Եբր. Թ, 9)։ Վկայութեան խորանում Աստուած էր և Իւրեան ցոյց էր տալիս ամպի մէջ, իսկ Նորում Բանն Աստուած «մարմին եղև և բնակեաց ի մեզ և ի նմա բնակէ ամենայն լրումն Աստուածութեանն մարմնապէս» (Յովհ. Ա, 14. Կող. Բ, 9)։ Ողջակէզի պաշտամունքը նախատիպ էր Քրիստոսի չարչարանաց, պատարագին. քահանաների պաշտօնը յառաջաւորաց սեղանի, խնկոցի և աշտանակի մօտ —Քրիստոսի պաշտօնի նախատիպն էր, որ կազմակերպեց Նոր Ուխտի պաշտամունքը և ինքն է «կենդանարար հացը», «աշխարհի լոյսը» և «հոտ անուշից» (Եբր. ԺԳ, 10. Յովհ. Զ, 51. Ը, 12, Եփ. Ե, 2)։ Քահանայապետի պաշտօնը Սրբութիւն Սրբոցում նախատիպ էր Քրիստոսի բարեխօսութեան Աստուծոյ առաջ երկնքում (Եբր. Թ, 11—24)։ Վկայութեան ամբողջ խորանը նախատիպ է Քրիստոսի եկեղեցուն, Աստուծոյ տանը (Ա. Տիմ. Գ, 15), որտեղ Աստուած բնակւում է յաւիտեան. խորանի բակը Քրիստոսի եկեղեցին է այստեղ, սրբութիւնը—սեղանն է խորհրդով սրբուած, Քրիստոսի խօսքով լուսաւորուած և Քրիստոսով ու սրբերով մաքառող. Սրբութիւն Սրբոցը—յաղթական եկեղեցին է։ (Մատթ. ԻԸ, 20. Բ. Կոր. Զ, 16)։

4. Ղևտացիք էլ երեք կարգ ունէին՝ բուն Ղևտացիք, քահանայք ու քահանայապետը. Նախատիպ նշանակութիւն ունի միայն վերջինը և նորա պաշտօնը (Զաք. Գ, 8. Զ, 12. 13. Եբր. Բ, 17. Գ, 1. Դ, 14—Թ)։

Digitized by Google

Քահանայապետը պէտք է մէկ լինէր, Ահարոնի ցեղից, Աստուծոյ կոչուած և օծուած, այնպէս էլ Քրիստոս «մի միջնորդ է Աստուծոյ և մարդկանց» և ոչ թէ ինքն «անձին ինչ շուք եդ լինել քահանայապետ», այլ Աստուծուց ստացաւ (Ա. Տիմ. Բ, 5. Եբր. Ե, 5.)։ Քահանայապետը պէտք է լինէր անպակաս և սուրբ, և տարին մի անգամ մտնէր Սրբութիւն Սրբոց. այդպէս էլ մեր Փրկիչը սուրբ է և անմեղ, նա գիտէր Աստուծոյ կամքը և ինչպէս իսկական քահանայապետ միանգամ մտաւ երկինք մեզ համար իւր սեփական արիւնով (Յովհ. Ա, 8. ԺԵ, 15. Եբր. Թ, 9. 21 26)։ Այլ և երբ քահանայապետը մեռնում էր, ազատւում էր փախստարանի ապաւինած մարդասպանը, այդպէս և Քրիստոսի մահը սրբում է մեղքից բոլորին և դժոխքի կապանքից ազատում հաւատացող մեղաւորին (Թիւ. ԼԵ, 28. 32)։

Գ. *Օրէնսդրական տօներն* ևս նախատիպ են հանդերձեալի։

1. Շաբաթը կարգադրուեց դրախտում ի յիշատակ Աստուծոյ հանգստութեան վեցօրեայ ստեղծագործութիւնից յետոյ, ըստ որում մարդն էլ մասնակից է լինում աստուածային այդ հանգստութեան (Ծն. Բ, 2, 3)։ Այդ հանգստութիւնից մարդ զրկուեց մեղքով, ուստի Մովսէսի ժամանակին Եգիպտոսից ազատուելու գաղափարը տիրապետեց այդ օրէնքի մէջ և նախատիպ էր Աւետեաց երկրում հանգստանալուն. (Բ Օր. Ե, 15. Սաղմ. ՂԴ, 10. 11. Յովհ. ԺԹ, 30)։ Այնուհետև շաբաթը նախատիպ դարձաւ՝ նախ մեղքից ու սատանայից փրկուելուն, որ կատարուեց Քրիստոսի խաչելութեամբ. և երկրորդ՝ Հրէաների հանգստանալը Աւետեաց երկրում Յեսուի միջոցով նախատիպ է մեզ համար և յաւիտենական հանգստութիւն փառաց արքայութեան մէջ. (Եբր. Գ, 7—Դ, 11. Յայտ. Դ, 13 ։ Շաբաթի տեղ նորումս է կիւրակէն։

Digitized by Google

2. Զատկի կարգադրութեան մէջ նշանաւոր նախատիպը գառն է, ըստ որում «զատիկ մեր զենաւ Քրիստոս» (Եւ. ԺԲ. Ա Կոր. Ե, 7)։ Ինչպէս գառը ըստ օրինաց պէտք է անպակաս լինէր և տասը օր առաջ ջոկուած հեռացրած իւր խմբից, զենուէր և խորովուէր երեկոյեան և ոսկորները չպէտք է ջարդուէին, այդպէս էլ Քրիստոս ի յաւիտենից տնօրինուեց զենուելու, անմեղ էր, ջոկուեց մեղաւորներից, մարդացաւ Ապրիլի 7-ին, չարչարուեց Նիսանի 15-ին ուրբաթ օր և մեռաւ երեկոյեան ժամի 9-ին և նորա ծնկները չփշրուեցան (Եբր. Է, 26)։ Եւ ինչպէս գառան արիւնը ազատեց Հրէաների անդրանիկներին մահից և զատիկը եղաւ ելքի տօնը, այնպէս էլ Քրիստոսի արիւնը փրկեց ամենքին մահից և սատանայի՝ ստրկութիւնից (Յովհ. ԺԹ, 33. 36. և այլն)։

3. Եօթներորդաց տօնը կամ պենտեկոստէն, որ տօնում էին զատկի յիսներորդ օրը ի յիշատակ Աստուծոյ իջման Սինայի վրայ և օրէնսդրութեան, նախատիպ էր Ս. Հոգու իջման առաքելոց վրայ Քրիստոսի յարութեան 50 օրը, որով Նոր Ուխտի օրէնսդրութիւնը եղաւ նոցա սրտերում և քրիստոնէական եկեղեցու հաստատութիւնը։ Հոգեգալստեան գրեթէ բոլոր պարագաները համեմատ են Սինայի օրէնսդրութեան նախատիպ պարագաներին։ Այնտեղ Սինան շարժուեց, այստեղ վերնատունը. այնտեղ փայլակ, որոտ. ու գղրգոց էր, այստեղ իբրև ի հըրոյ բաժանեալ լեզուները խօսեցան և այնտեղի փողի ձայնի տեղ առաքեալները ձայն տուին դէպի հաւատացեալները. (Գործ. Բ, 1—4)։

4. Տաղաւարահարաց եօթնօրեայ տօնը դրուած էր ի յիշատակ Իսրայէլացոց սքանչելի անցման անապատով և տաղաւարաց մէջ ապրելուն և ի նշան ուրախութեան, որով վայելեցին Աւետեաց երկրի աստուածային բարիք.

Digitized by Google

ները (Ղև. ԻԳ, 39—43)։ Այս տօնի հանդէսը նախատիպ էր քրիստոնէական փառաց թագաւորութեան հանդիսին, երբ Քրիստոսի հաւատացեալք կժողովուին երկնաւոր Երուսաղէմում և կտօնեն Քրիստոսի հետ յաւիտենական խաղաղութեան և ուրախութեան տօնը, յաւիտենական յարկում» (Ղուկ. ԺԶ, 9)։ Այսպէս է ասում և Զաքարիա մարգարէն. «Եւ եղիցի որ միանգամ մնասցեն յամենայն ազգաց եկելոցն ի վերայ Երուսաղէմի, ելանիցեն ամ յամէ երկիրպագանել Թագաւորին տեառն Աստուծոյ Ամենակալի, և առնել զտօն տաղաւարահարացն» (ԺԴ, 16)։ Սորա տեղ է եկեղեցու տօնը. այդպէս և քաւութեան տօնն է տօն խաչի և տօն փողոցը՝ տօն առաքելոց։

Ահա այսոնք են գլխաւոր նախատիպները։ Տեսնում ենք որ Հին Ուխտի անձինք, դէպքերը, կարգերն և օրէնքները կենդանի նախատիպներ են Նոր Ուխտի եկեղեցուն և կենդանի կապի նշանակութիւն ունին Աստուծոյ փառաց արքայութեան հաստատութեան համար։ Քրիստոս բերաւ երկնքի արքայութիւնը մեզ համար միայն Հին Ուխտի լրումից յետոյ, սակայն նա այդ լրման համար ևս հոգեպէս փրկարար կերպով գործում էր Հին Ուխտի անձանց և եկեղեցական կարգերի մէջ, այնպէս որ Աստուծոյ տնօրինական գործունէութիւնը ստեղծագործութիւնից մինչև Քրիստոս և Քրիստոսից մինչև Նորա երկրորդ գալուստը միայար և փրկարար ընթացքով տանում է հաւատացեալներին դէպի երանութիւն։

Digitized by Google

ԽԱ.

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՆԱԽԱՑԻՇՈՒԱԾ ԳՐՔԵՐԻՑ

Ծննդոց գրքից.

Ծն. Ա, 1.	Եբր. ԺԱ, 3.	Ծն. ԺԴ, 18.	Եբր. Է, 1.
Գ, 4.	Բ Կոր. ԺԱ, 3.	ԺԵ, 6.	Հռ. Դ, 3.
— 6.	Ա Տիմ. Բ, 14.	ԺԶ, 15.	Գաղ. Դ, 22.
— 15.	Յովհ. Ը, 44.	ԺԸ, 12.	Ա Պետ. Գ, 6.
	Մատթ. Ա, 23.	ԺԹ, 25.	Բ Պետ. Բ, 6.
	Ա Յովհ. Գ, 8.	— 26.	Ղուկ. ԺԷ, 32.
Դ, 4.	Եբր. ԺԱ, 4.	ԻԲ, 1.10.	Եբր. ԺԱ, 17.
— 8.	Ա Յովհ. Գ, 12.	ԻԵ, 33.	Եբր. ԺԲ, 16.
Ե, 24.	Եբր. ԺԱ, 5.	ԽԸ, 15.	Եբր. ԺԱ, 21.
Զ, 12.	Ա Պետ. Գ, 20.	ԽԹ, 10.	Մատթ. Բ, 6.
— 14.	Եբր. ԺԱ, 7.	— —	Ղուկ. Ա, 32.33.
Է, 4	Մատ. ԻԴ, 37,38.	Ծ. 24	Եբր. ԺԱ, 22:
ԺԲ, 1.	Եբր. ԺԱ, 8.		

Ելքից.

Ելք Ա, 32.	Գործք Է.	Ելք ԺԶ, 15.	Ա Կոր. Ժ, 3.
Բ, 2	Եբր. ԺԱ, 33.	ԺԷ, 6.	— — 4.
— 11.	— 34.	ԺԹ, 6.	Ա Պետ. Բ, 9.
ԺԲ, 7.	— ԺԲ, 24.	— 12.	Եբ. ԺԲ, 18—20
ԺԴ, 22,	Ա Կոր. Ժ, 2.	ԻԴ, 6, 8.	— Թ, 19—22.
	Եբր. ԺԱ, 29.	ԻԶ, 35.	— Թ, 2.
ԺԶ, 15.	Յովհ. Զ, 31. 49.	ԼԲ, 6.	Ա Կոր. Ժ, 7.

Ղեւտականից.

Դ, 21.	Եբր. ԺԳ, 11—13.	ԺԹ, 15.	Յակ. Բ, 1.
ԺԲ, 6.	Ղուկ. Բ, 22—24.	— 17.	Մատթ. ԺԸ, 15.
ԺԴ, 1.	Մատթ. Ը, 4.	— 18.	Գաղ. Ե, 14,
ԺԶ, 14.	Եբր. Թ, 13. 14.	Ի, 10.	Յովհ. Ը, 5.
ԺԸ, 5.	Հռ. Ժ, 4. 5.	Ի, 12.	Բ Կոր. Զ, 16.

Digitized by Google

Թուոց գրքից.

Ը, 16.	Ղուկ. Բ, 23.	ԻԱ, 5. 6.	Ա Կոր. Ժ, 9.
Թ, 17—19.	Ա Կոր. Ժ, 1.	— 9.	Յովհ. Գ, 14.
ԺԱ, 4.	— Ժ, 6։	ԻԲ, 21—28.	Բ Պետ. Բ, 15. 16.
ԺԲ, 7.	Եբր. Գ, 2.		Յուդայ 11.
ԺԴ, 2.	Ա Կոր. Ժ, 10.	ԻԵ, 9.	Ա Կոր. Ժ, 8.
— 36.	Եբր. Գ, 17.	ԻԶ, 65.	— — 5.
ԺԹ, 3.	— ԺԳ, 11.	ԻԸ, 9.	Մատթ. ԺԲ, 5.
Ի, 8.	Բ Կոր. Ժ, 4.	ԼԱ, 16.	Յայտ. Բ, 14.

Երկրորդ օրէնքից.

Զ, 13.	Մատթ. Դ, 10.	ԺԸ, 1—3.	Ա Կոր. Թ, 13.
— 16.	— — 7.	— 18.	Յովհ. Ա, 45.
Ը, 3.	— — 4.		Գործք. Գ, 22.
Ժ, 17.	Գործք. Ժ, 34.		Է, 37.
	Հռ. Բ, 11.	ԻԴ, 1.	Մատթ. Ե, 31.
	Կող. Գ, 25.		— ԺԹ, 7.
	Եփ. Զ, 9.		Մարկ. Ժ, 4.
	Յակ. Բ, 1—9.	ԻԵ, 4.	Ա Կոր. Թ, 9.
ԺԷ, 6.	Յովհ. Ը, 17.	ԻԷ, 26.	Գաղ. Գ, 10.
	Եբր. Ժ, 28.	Լ, 11—14.	Հռ. Ժ, 6—9։

Եսուայ գրքից.

Ա, 5	Եբր. ԺԳ, 5.	Զ, 20.	Եբր. ԺԱ, 30.
Բ, 1.	— ԺԱ, 31.	— 23.	— — 31.
	Յակ. Բ, 25.	ԺԴ, 1. 2.	Գործք. ԺԳ, 19.
Գ, 14.	Գործք. Է, 44. 45.	ԻԴ, 32.	— Է, 16.

Դատ. գիրքը յիշւում է Գործք. ԺԳ, 20. Եբր. ԺԱ, 32—40. Հռութը Մատթ. Ա.

ՑԱՆԿ

Երես.

Նախաբան . . . . Է

Ուսումն Ս. Գրոց 9

Ընդհանուր տեսութիւն.

Ա. Սուրբ գիրքը և նորա Աստուածաշնչութիւնը . 12

Բ. Աստուծոյ յայտնութիւնը և նորա Նպատակը . 17

Գ. Սուրբ գրքի գրական արժանիքը . . . 23

Դ. Ս. Գրքի հնութիւնը և պահպանութիւնը. . 25

Ե. Սուրբ Գրքի հարազատութիւնն ու վաւերականութիւնը 28

Զ. Սուրբ Գրքի բացասական քննաբանութիւնը . 33

Է. Մի հայեացք հնաբանական գիւտերի վրայ. . 43

Ը. Սուրբ Գրքի մեկնաբանութիւնը . . . 51

Թ. Սուրբ գրքի մեկնութեան եղանակը . . 55

Ժ. Ի՞նչպէս պէտք է կարդալ Սուրբ Գիրքը. . 68

ԺԱ. Հին ու Նոր կտակարան 70

ԺԲ. Կանոնն ու իւր տեսակները. . . . 73

ԺԳ. Հին Կտակարանի Եբրայերէն լեզուն . , 78

ԺԴ. Հին Կտակարանի գրական աւանդումը . . 80

ԺԵ. Հին Կտակարանի բնագրի գրութիւնը և տպագրութիւնը 85

ԺԶ. Հին Կտակարանի Յունարէն լեզուն . . 87

ԺԷ. Հին Կտակարանի Թարգմանութիւնները . . 88

ԺԸ. Հրէական տոմարը 99

ԺԹ. Կշիռ, դրամ և չափ 102

Ի. Հին Կտակարանի Նպատակն ու բովանդակութիւնը. 104

Digitized by Google

Հին Կտակարանի Նախապատրաստական ուխտադրութիւնը եւ օրինադրութիւնը. Մովսէսի, Յեսուի ու դատաւորաց գրքերը:

ԻԱ. Մովսէս մարգարէի Հնգամատեանը . . . 108
ԻԲ. Հնգամատեանի նպատակն ու նշանակութիւնը . 110
ԻԳ. Ընդհանուր հայեացք Հնգամատեանի բովանդակութեան վրայ 113
ԻԴ. Հնգամատեանի հարազատութիւնը . . . 115
ԻԵ. Հերքումն գլխաւոր առարկութեանց . . 118
ԻԶ. Հնգամատեանի բարձր քննաբանութիւնը. . 124
ԻԷ. Ծնունդք 127
ԻԸ. Ելք 130
ԻԹ. Օրէնսդրութեան նպատակն ու հիմքերը. . 131
Լ. Ղեւտական 135
ԼԱ. Աստուածպաշտութեան կարգերը . . . 137
ԼԲ. Թիւք 159
ԼԳ. Աւետեաց երկիրը 162
ԼԴ. Երկրորդումն օրինաց 195
ԼԵ. Աստուծոյ օրէնքի բարոյական նշանակութիւնը. 197
ԼԶ. Գիրք Յեսուայ 200
ԼԷ. Դատաւորք 204
ԼԸ. Հիմնական ժամանակագրութիւնը . . . 211
ԼԹ. Հռութ 212
Խ. Ընդհանուր հայեացք 215
ԽԱ. Նոր կտակարանում վկայութիւնք . . . 228

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google